

# ՄԱԼԻԳԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ


Ա. Մ Ս Ա. Գ Ի Ռ

№ 7—8 1892 ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՒ 1892 № 7—8

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ


	Եթիս
1 ԶԵԽ, ՄԻԵԱՏՈՓՈԼԿ.	1031
2 ՇԵՎԱՐԻՑ-ԲԱԼՈՒԴԵՍՆ, Զ.	1038
3 ԶԵԽ, ՄԻԵԱՏՈՓՈԼԿ.	1039
4 ԹՈՒՄԱՆԵՍՆՅՅ, ՅՈՎՀԱՆՆԵԼՅ	1045
5 ՆՈՅՆԸ.	1046
6 ՎԱՆՑԵՍՆ, ԳՐԻԳՈՐ.	1047
7 ՇԵՎԱՐԻՑ-ԲԱԼՈՒԴԵՍՆ, Զ.	1065
8 ԱԵՆԻՆԻՔ, ՀԵՆՐԻԿ.	1067
9 ՇՈՒՌՈՒՖ, Գ. Ա.	1105
10 ՈՒՄԻԿԵՍՆ, ՆԵՐՍԼՅ, ԲԺՇ.	1127
11 ՎԱՐԴԱՆԵՍՆՅՅ, ԳՐԻԳՈՐ.	1139
12 ԱՐԱՎՈՒԱՆԵՍՆՅՅ, Ա.ԻԵՏԻՔ.	1145
13 Ա., Ա.	1156
14 ՎԱՆՑԵՍՆ, ԳՐԻԳՈՐ.	1164
15 ԼՈՒՄԻՆԻ.	1169
16 ԶԱ.ՔԱՐԵՍՆ, ՊԵՏՐՈՍ.	1173
17 Ֆ.	1179
18 Օ.	1194
19 Զ..	1215
20 ԻՄՔ.	1241

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:



ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. Ա.ՕՏԻՆԵՍՆՅՅ

1892



# ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 7—8 1892

ՅՈՒՆԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

1892 № 7—8

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԵՆԵԱՆՑԻ

1892

# САДОВЫ

ЗИРЧА САДОВОГО ВІДКРИТКА

САДОВОГО ВІДКРИТКА

Дозволено цензурою. Тифлісъ, 24 Іюля 1892 г.  
Типографія М. Д. Ротніанца. На Гол. просп. соб. домъ № 41.

## ՄԻՍՏԵՐ ՊԼՈՒՄՊՈՒԴԻՆԳԸ ՊՐԱԳՎԱՅՈՒՄ

ՍԻԵԱՏԱՊՈՒԿ ԶԵԽԻ<sup>1)</sup>)

Մի անգամ, պատահմամբ ներս մտայ մէր տեղալաւ հիւրանոցներից մէկի սեղանատունը։ Համեստ նատելով դուն մօտ գտնող մի սեղանի, ձեռքս առայ կերակուրների լայնածաւալցանկի թուղթը։ Լոյսի աղոս նշոյլով ես նրան շուռ տուի ճախ կողմը—բայց այնուեղուցից ոչինչ չը կար։ Ապա, ճնշւած հոգոց հանելով ես սկսեցի աչքի անցնել նրա երեսի, գերմաններէն գրւած կողմը։ Այդ իւր ուսումնասիրութեան միջոցին ուշադրութիւնս գրւաեց քայլերի մօտեյող աղմուկը, և երբ ես անհամարձակ աչքերս վեր ուղղեցի՝ դիմացս կանգնած տեսայ կելներին<sup>2)</sup>, որը իւր՝ հլու, լարւելու չափ կուացած գիրքով, իւր բարակ, շնորհալի մե ֆիզուրով յիշեցնում էր մի մեծ հարցական նշան։ Սրս ետեից կուած էին դէպի ինձ նմանապէս մի քանի այլ հարցական նշաններ զանազան մեծութիւնների։ Այս բազմազէմ տպաւորիչ հարցը ինձ այնովէս շփոթեց որ ևս յանկարծակի դուրս թողի շրթունքներից արգեօք նւնիք վիեննայի րիզկը<sup>3)</sup>։ Զելսերէն այդ խօսքերը բերանիցս դուրս թռէ ոչ—եռ

1) Ա. Զեխ՝ նորագոյն չիխ զրականութեան առաջնակարգ ներկայացոցիչներից մէկն է, ծնւած է 1846 թ։։ Բայցի արձակ զրւածներից ունի նաև բանաստեղծութիւններ, որոնք շատ բարգւած և սիրւած են իւր հայուններում։ Այս մէկ նրա ծաղրը գրւած է 1879 թ։։ Ներկայ թարգմանութիւնը արւած է ռուսերէնից։

2) Ալդպէս են կոչւում հիւրանոցների, ճաշարանների, դարեջուր ծառ խողների սպասաւոր ծառաները գերմանական երկիրներում։

3) Կոստենի մի տեսակը։

ինքս վախեցայ դրանց ձայնից այսպիսի մի տեղում: Դիմացս կանգնած հարցական նշանների վրա իմ արտասանած խօսքերը ներգործեցին մի կախարդական հմայութեամբ: Նրանց կռացած մարմիտ մասերը ուղղեցան բոպէաբար և մի ակնթարթում զիմացս կանգնած էին մի քանի հայցական նշաններ. բայց միայն մի ակնթարթ էր դա: Եւ երբ ես բարձրացրի ամօթից կախ գցած աչքերս—դիմացս կանգնած էր նոցանից մէկը, նա՝ որ ամենից քիչ շնորհալին էր. միւս ները հեռացել էին ասես կախարդութեամբ: Դիմացս կանգնած մնացած օրինակը սիգօրէն ետ գցեց իւր ամբողջ կազմածքը այնպէս որ յատակի հետ կազմեց մի բութ անկիւն: Բարձրից ներքեւ նայում էր վրաս կիսախոռվի շեկաւուն արտևանունքի տակից և նրա բերանի շուրջը խաղում մի արտայացիչ հեգնական ժայռի: Դորա փոխարէն նրա հաճոյակատարութեանը տեղ տւեց մի սիրուն արձակութեան: Վերքաշելով իւր ծնուռը նա կամաց-կամաց քաշքշում էր իւր երկար և բաց գոյնի բակեմբարդը<sup>1)</sup> կամենալով կարծես նրան դուրս քարշել, այնուհետև նոյն գործողութիւնը կատարեց միւս բակենբարդի հետ և վերջապէս արտասանեց արխատոկրատիկական և ոչ չեխական շեշտով—լի՛ մննով: Դէ ի հարկէ լիմոնվ, պատասխանեցի ես, և կուրծքս լցւեց ուրախութեամբ և հայրատութեամբ. հասկանում է եղել չեխուրէն: նոյն իսկ չեխուրէն էլ պատասխանեց:

Այդ ժամանակ հայեացքս ընկաւ հարեւան սեղանի վրա: Այնտեղ նստած էր մի կարճլիկ բայց գէր մի մարդ բոխչաւոր հագուստով, յարթ ածիլած և զերուկ երեսով, լայնլնդերքի վրա գոնուող նոսր ընչանցքով և երկուսի ձեղքւած ծնուռով: Այս մարդու մեծ և կապտագոյն աչքերը յառած էին ուղղակի ինձ վրա: Ես իմերը ուրիշ կողմ զցեցի բայց մի բոպէից յետոյ էլի նացեցի վրան քարշելով այն զօրութեամբ որ ունի յառած հայեացքը:

Զէ, դէ սա արդէն միանդամայն վեր էր քաղաքավարութեան առհմաններից: Այս մարդը ինձ զննում էր բոլորովին անամօթաբար. այսպէս կամաւ զննող հայեացքով նայել կարող է միմիայն նկարիչը իւր կաղապարի վրա կամ մուգէի այցելուն ի ցոյց դրւած էսկիմոսի վրա: Վերջապէս այս յանդուզն ուսումնասիրողի վրա ես

<sup>1)</sup> Սիրուք—ծնուռի տեղը վեր արած:

զցեցի՝ իրաւացի բարկութեամբ լի իմ հայեացքս։ Ակներև է որ նա ըմբռնեց այդ իմ հայեացքի նշանակութիւնը. տեղիցը վերկացաւ և թեթև գլուխ տարով մօտենալրով սեղանիս կոտրտւած գերմաներէն լեզով արտասանեց. թոյլ տւէք Զեզ ներկայանամ՝ Յովնաթան Պլումպուղինդ, Ֆլէկւեօրնից, Անզլիացի Լանկաստեր դքսութիւնից։

Ես գլուխ տւի թեթև կերպով՝ բայց դէմքս պահպանեց սառն արտայայտութիւն։ Նրա ասածը անշուշտ մեղմացնող հանգամանք էր—բայց ամեն բան չի թոյլ տրւած նաև անգլիացուն։

Սակայն առանց քաշւելու միաներ Պլումպուղինդը նստեց կողքիս և շարունակեց։ Դուք զարմանում էիք այն հետաքրքրութեանը որով ես նայում էի ձեզ։ Պարտք եմ համարում ձեզ բացարութիւն տալ։ Դատելով այն խօսքերից, որոնցով դուք այս ըսպէին դիմեցիք կելներին, ես ենթադրում եմ որ դուք Զելու էք։

—Դուք չէք սխալում։

—Ճշմարիս, իսկաման Զելու։

—Ի հարկէ։ Միթէ Զելու ձեզ համար զարմանքի արժանի մի հազլաղիւտ բան է։

—Աւրեմն իսկաման Զելու էք։ Առաջին չեխու որին ես տեսնում եմ երես առ երես, որի ձեռքը կարող եմ իրապէս սեղմել։ Վերջապէս ես գտայ այն ինչ որ ապարզիւն կերպով պտռում էի երկու օր շարունակ քաղաքիս մէջ։

—Այդ Բնչողէս Դուք արդէն երկու օր է ինչ Պրազայումն էք և միայն այժմ էք պատահում առաջին Զելուն։ Զէ, դա անկարելի բան է, անհաւատոալի է։

—Սակայն սա ճշմարտութիւն է։ Այ տեսէք. Հայրենիքումն ծանօթացայ մի երիտասարդ սլաւովիլի հետ, որը մեզ ամենիս հետ վիճում էր թէ Զեխաստանը ամբողջովին գերմանական չէ, թէ, ընդհակառակը, նրա բնակիչների մեծ մասը կազմում է մի առանձին ժողովուրդ որը խօսում է իրան յատուկ չեխ լեզով և որը ունի, նոյն իսկ բաւականին հարուստ, սեփական մի զրականութիւն։ Ուստի ես վճռել էի որ յետագայ ճանապարհորդութեանս պիտի այցելմ անսպատճառ նաև Զեխաստանը անձամբ համոզւելու համար այդ պատմածի ճշմարտութեանը կամ անձշմարտութեանը։ Հէնց այդ պատմառով Դրեզլենից ճանապարհս ու դզեցի դէպի Կա

զան։ ճանապարհին ես հետաքրքրութեամբ էի զննում ճանապարհորդներին և լարւած կերպով ականջ էի զննում նրանց բառբառին — բայց լիզուր։ Ամբողջ ճանապարհի վրա մինչեւ Պրագա ես լսում էի միմիայն գերմաներէն և ֆրանսերէն լեզուները և ոչ մի հատ բառ չեխերէն։

— Ներողութիւն, դուք մը կարգովն էիք դալիս։

—Երկրորդ կարգով. առաջինում չեմ ճանապարհորդում սկզբունքով։ Մի քանի կայարանն Պրագա չը հասած — ներս մասաւ մի ծեր մարդ մի ջահիլ գեղեցիկ տիկնոջ հետ։ Այդ գեղեցիկուհու տիպարը ինձ այնքան ոչ գերմանական թւաց, այն աստիճան բնորոշ սլաւական — որ ես նրան միանգամայն Ալեքսանդրի թոռան թոռ կարծեցի։ Այն սլաւովիլը իմ հայրենիքում սովորցրել ինձ մի քանի չեխական նախադասութիւններից՝ չեխերէն խօսելու համար իմ ենթադրած չեխուհու հետ։ Փորձած փորձիս միակ արդիւնքը այդ իմ համեստ տեղեկութիւններից՝ չեխերէն խօսելու համար իմ ենթադրած չեխուհու համոզւեցի թէ ինչքան նրա՞ կատոյտ աչքերին և ուռած բաց վարդագոյն շրժունքներին սաղում՝ է արհամարողական արտայայտութիւնը։ Եւ վերջապէս միւս ուղեկիցներս էլ նայեցին վրաս զարմանքով, հէզնական ժայռով, կարծես թէ ես յանցանք գործած լինէի, մի չընդունած բան արած լինէի։ Այնու ամենայնիւ ես փորձ փորձեցի իմ չեխական նախադասութիւններից մինով դիմել կոնցուկառին։ Բայց սա էլ նայեց վրաս սկզբում զարմանքով, իսկ յետոյ այնպէս իբր թէ արածս անանդի հանաք լինէր։ Սրանից յետոյ ես այլ ևս վախ էի կրում վայլելու չեխ լեզովս։ Սիրուն սլաւովիլ, մատածում էի ես, սա է ուրեմն քո զբականապէս զարգացած լեզուն որ նոյն իսկ անհամարանք է յարուցանում երկաթուղարին ամենաստոր ծառաների մէջ։

— Օհո — ասացի ես վճռղաբար, — այդքան ցածր դեռ մենք չենք ընկել. բանը շատ պարզ է. մեր երկաթուղիների մեծ մասը գտնուում է գերմանացիների ձեռքին և երկրորդ որ ձեր բռնած կարդով մեղանում գլխաւորապէս օտարներն են ճանապարհորդում։

<sup>1)</sup> Table d'hôte: table=սեղան, hôte=հիւր. Հիւրանոցի ճաշասեղան կամ ճաշասուն։

— Ես պէտք է ձեզ հաւասարմ: Ես ինքս օտար երկրացի եմ և անծանօթ ձեր բարք ու վարքերին: Իսկ Պրագայում Պրագայում կառքից իջայ թէ չէ, բեռնակիրը զիմեց ինձ գերմաններէն լեզով: Հիւրանոցների պատոերից կախած բոլոր յայտարարութիւնները՝ գերմաններէն են: Եկայ հիւրանոց և հիւրանոցի ծառան ինձ բարեեց գերմաններէն: Երգեհոնի փողերը ամենահասաներից սկսած մինչև ամենաբարախները միայն գերմանական հնչիւններ էին հանում: Ճառացողները խօսում էին գերմաններէն. հիւրերից և ոչ մէկը մի հաս բառ չարտասանեց չեխերէն: Տարլ-դուխին<sup>1)</sup> ժողովւած զանազան կարողութեան, հասակի և սեսի մարդիկը խօսում էին գերմաններէն, Վրանիներէն, անզլիերէն, խոալերէն, մի խօսքով ամեն տեսակ լեզով, միայն չեխերէնն էր որ չէր լսում սրանց մէջ:

Ես ներս մնայ ամենամօտ և շքեղ մի սրճառուն. այսուել ևս ինձ զիմաւորեցին զերմանացի կելներներ և ամեն կողմ լսում էր գերմաններէն բառ բառը: Ներս մնայ մի քանի փառաւոր մագաղիներ և սրանց տէրերը, ծախողները, զանձապետները զիմում էին ինձ գերմաններէն: Այցելու զնողները, մի քանի խանութներում ժողովւած տիկինների մի բազմութիւն, հարցնում և սակարգում էին բացառապէս գերմաններէն լեզով: Ես վարձեցի մի ուղեցոյց օտարականի և հետը շրջեցի կառքով բոլոր պլատոր փողոցները: Գերմաններէն լեզով նա դարձնում էր իմ ուշադրութիւնը զանազան յուշարձանների, ցոյց տւեց ինձ գերմանական կազինօն, գերմանական դիմնազիան մի փառաւոր պալատի մէջ, գերմանական գրական ընկերութիւնը, գերմանական համալսարանը<sup>1)</sup> դռան մօտ կանգնած խայտաճամուկ բուրշերով<sup>2)</sup>, գերմանական թատրոնը, գերմանական...

— Բայց չէ որ նա ձեզ ազգային թատրոն էլ ցոյց տւեց:

— Նա ինձ ցոյց տւեց մի շքեղ շինութիւն, ուր չեխ մուսան միայն գալ տարի պիտի քնակութիւն հաստատի. իսկ այդ շինութեան քամակին մի տուն, որի մէջ նա բնակւում է այժմ: Սակայն ես համոզւեցի որ սա, նման բոլոր ուղեցոյց առաջնորդներին, ան-

<sup>1)</sup> 1879-ին Պրագան չունէր չեխ համալսարան:

<sup>2)</sup> Բնուրշէ գերմաններէն նշանակում է մեծ տղակ:

բարեկսիդն ստախոս էր: Ես կամեցայ ներսից տեսնել այդ տունը և նա պատասխանեց որ հենց այդ ժամին բեպետիցիալի<sup>1)</sup> ժամ էր: Բայց ես հաստատ մնացի ասածիս վրա: Վերջապէս—մտածում էի ես, առիթ կունենամ լսելու չեխերէնը: Մենք ներս մոտնք և ես տեսայ բեմի վրա կանգնած զերասաններ և զերասանուհիներ, որանք արձակ համարձակ խօսում էին ըեպետիցիալից առաջ: Ահա մի խումբ աչքի ընկնող զերասանների—ականջ եմ զնում ըովէաչափ և համոզւում, որ այդ չեխ կարծեցեալ զերասանուհիները բարձրաձայն խօսում են զերմաներէն: Նեղացած՝ ես դուրս եկայ թատրոնից և արձակեցի ստախոս առաջնորդիս: Այնուհետև ինքս ինքնազուլս մի քանի փորձեր արի: Ես կարսղացայ մտնել մի քանի քաղաքացիների ընտանեկան սրբարձնները ընակարան վարձելու պատրւակով լրագիրների համաձայն քրահով տրւող տներում: Դուներին կացրած էին չեխերէն անուններ, բայց ներսը մտնելուս պէս տանաշէրը դէն գրեց զերմանսական լրագիրը, տանտիկինը բարեւեց ինձ գերմաներէն, օրիորդ աղջիկները գաշնամուրի ձաշնակցութեամբ զերմաներէն էին երգում և թերթում զերմանական ծաղրական թերթեր... Իսկ մի երիտասարդ պլոտիկներին այցելած ժամանակ — տեսայ նրան զերմաներէն մի գիրք յօրինելիս:

— Այդ ամենը ոչնչից ոչինչ չի ապացուցանում, ասացի ես գրեթէ զայրացած: Դա միայն մի զժբաղդ պատահմունք էր որ դուք ամեն տեղ զերմանական բառբառի էիք հանդիպում: Չեխաստանը և նրա սիրո Պրագան բնակեցրւած է մեծ մասամբ չեխերով: Գերմանացիների հետ մենք չունինք և մեր յարաբերութիւնները լարւած են: Թոյլ տւեք ինձ լինել ձեզ առաջնորդ և ես ձեզ կապացուցանեմ շատ շուտով որ Պրագան չեխ քաղաք է: Անշուշտ մենք չենք գնայ գլխաւոր փողոցով. մենք կը գնայինք քաղաքի հեռութաղերը կողքի փողոցներով: Այնակեղ—այդ կողքի փողոցներից մինչ վրա դուք կը գոնէիք չեխ գեղարւեստակիրական կլուբը, մի ուրիշում—չեխ գրակացին կլուբի մեծ շինութիւնը, քաղաքի ծայրում չեխ մարմնամարզական դահլիճը, ամենահեռու արւարձաններում հիանալի չեխ գպրոցական:

<sup>1)</sup>) Ներկաչացումի փորձը: Բառացի նշանակում է կրկնողաւթիւն:

շէնքսեր. եթէ դուք չէք պահանջում անսպայման շքեղութիւն—ես կը տանեմ ձեզ շատ հիւրանոցներ և սրճարաններ, որոնց յաճախում են միմիայն չեխերը: Անշուշտ, աջնոեղէլ երբեմն կը պատահի գերմանական բառբառը—բայց թէ դրա պատճառը կը լինի ներկայ եղած մի գերմանացի, որի շնորհիւ մնացեալ հասարակութիւնը կը սկսէ զործածել պետական երկրորդ լեզուն: Իրաւ է, հարուստ չեխ գերդաստանները աւելի սիրով խօսում են գերմաներէն, բացառապէս կարգում են գերմանական գրքեր և լրագիրներ, յաճախում են գերմանական թատրոնը, գերմաներէն են կրթում իրանց երեխայոց,—մի քանիսը կարծելով թէ դա է ընդունած լաւ ձեւ, միւաները հետեւելով մողացին, այդ անմիտ մողացին,—բայց թէ դուք պէտք է տեսնէք թէ այդ գերդաստանների սկետերը ինչպիսի համոզամբ իրանց ձայնը, ընտրութիւնների ժամանակ, տալիս են չեխ պատգամաւորին: Իրաւ է մեր գիտնականները իրանց շարադրութիւնների մի մասը հրատարակում են գերմաներէն լեզով, բայց թէ դա անւում է չեխ անւան հոչակլ նաև արտասահմանում տարածելու:

— Շատ շնորհակալ եմ, ասաց վերկենալով իւր տեղից միատեր Պլումպուղինգը, ձեր պատրաստականութեան համար որ դուք առաջարկեցիք առաջնորդս լինելու: Սակայն ներեցէք եթէ ես օգուելու ըլ լինեմ ձեր առաջարկութիւնից: Թէւ ձեր այդ բոլոր յարաբերութիւնները ինձ չեն վերաբերում, սակայն ես վախ եմ կրում մի գուցէ ամեն քայլափոխում մաղձս շարժւի սրտում: Առ երես՝ տաքարիւններիցը չեմ ես. բայց այդպիսի մի անմոռութեան վրա սառնասիրտ նայելը՝ իմ ոցմերից վեր է: Եթէ դուք գերմանացիների հետ անհաշակութիւնիք—ապա ներեցէք ոճիս—դուք կուռում էք նրանց հետ դանակի հակառակ կողմով. բութ կողմովը հարւածում էք թշնամուն, իսկ սուր կողմովը ձեր իսկ կուրծքն էք քերթում: Մնաք բարեւ, վերջապէս ահա և կելները բերում է ձեզ ձեր պատրիած րիզեկը:

## ԲԱԽՏԸ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Շ Ե Լ Լ Ե Ր Ի

Թարգմ. Զ. ԲԱՀԱՄԻԴՅԱՆԻ

Տախտը մի օր իր Սիրելուց նեղացած  
Իմաստութեան մօռը թըրուաւ ու ասաց.  
«Առ այս բոլոր իմ գանձերը, բարիքներ  
«Եւ եկ դառնանք մենք այսօրից ընկերներ.  
«Որքան հարուստ—ես ուարդեներ անհամար  
«Տալիս էի քո Նախորդին մայրաբար,  
«Սակայն էլի նա դըժգոհէր միշտ լինում,  
«Ապերախտը ինձ ժըլատէր համարում...  
«Ե՛կ, քուրիկըս, միանանք սերո կապերով,  
«Քանի տանջւես զու այդ ծանրը գործերով,  
«Թող գութանըդ, արի շուտով համբուրւենք,  
«Տես, ի՞նչ ուրախ և երջանիկ կը լինենք...»:  
Իմաստութիւնն նայեց բախտին ու ժըպտաց,  
Սև քըրտինքը սըրբեց դէմքից ու ասաց.  
«Քո ընկերը գընաց իրան ըսպաննել,  
«Հաշտովիր հեալը... ես չեմ կարող քեզ սիրել»:

## ԿՈՄՄՈՒՀԻ ԲՈԺԵՆԱ

ՍԻԵԱՏՐՊՈԽԻ ԶԵԽԻ

Ես ռամպավարական եմ հոգով և մարմնով, եթէ կամենում  
էք—նոյն իսկ արմատական, բայց լնկերավարականութեան հետ  
հաշտւել բնաւ չեմ կարող: Եթէ մարդկութիւնը իւր ունեցած չու-  
նեցած զոյքը եղբայրաբար բաժանէր իւր մէջ՝ չէ որ կոմսուհի Բն-  
ձենալին մաս չէր հասնիլ և ոչ մէկը այն մարդարիսներից, որոնք  
այնքան հրապուրանքով փայլում են նրա ոսկեգոյն շեկ մազերի վրա:  
Իսկ այդ բանի համար ես իրաւ որ շատ կը տխրէի:

Անշուշտ, նաև հասարակ դաշտացին ծաղիկները գեղեցիկ են,  
բայց այն ևս իրաւ է որ մարդիկ միշտ զմայլելու են՝ արհեստի  
օգնութեամբ ազնւացրած պարաիզացին հազւագիւտ ծաղիկների  
գեղեցկութեամբ: Թողնենք ուրեմն չիթ հազած հասարակ գեղեցկու-  
հիների կողքին սրանց՝ մետաքսերայ և թաւիչեայ խշոշող հագուստ-  
ներովը, հղարտ բայց սիրուն էակներին, որոնց անձի մէջ կեանքի  
բացառական պայմանները կրթեցին իգական գեղեցկութեան մի ծա-  
ղիկը: Այս օդեղէն կերպարանքները, որոնց ոսկիկները միմիացն ողոր-  
մածութիւնից է որ բարեհաճում են կպչել գետնին, որոնց ձեռնիկ-  
ները չեն կոշտացել բանելուց, որոնց հոգիները չեն տեղեկացել հա-  
նապազօրեայ հացի հոգսերի մասին և որոնք շնչում են միմիացն  
բանաստեղծութեան ոսկի շոգիներով. սոքա—բանաստեղծների կերպա-  
րանք առած իդէալներն են, որոնք իրականութեան մէջ հնարաւորու-  
թիւն ունեն փաթաթւել փայլուն, դիւթական հագուստների մէջ:

Դոցա միջից ամենագեղեցիկը է կոմսուհի Բնձենան. և այդ  
հրաշալի ծաղիկը բացւել է հայրենի ցեղազրական ծառի վրա, որի

արմատները խորը գնացել են մեր ժողովրդի փառաւոր անցեալի մէջ, իսկ ճիւղերը կրում են շատ ոսկեփայլ անուններով տերեւներ որոնք լցրել են հաղարտ փայլով նոյնքան էջ մեր պատմութիւնից:

Եթէ այդ ճիւղերի հետ հիւսւում էին երեմն և օտարազզի լնծիւղներ, որոնք դառել են աստւածացին հրեղէն պատիժ մեր նախնիքների համար, այնուամենացնիւ ես ներում եմ Կոմունհի Բնաժենացին այն արխատկրատական հաղարտութիւնը, որով նա նայում էր իւր նախնիքների մեծ շարքերին:

Ներում եմ նրան և այն թեթև կեղծ բարեպաշտութիւնը, որը նրա կերպարանքին տալիս է թեթև սուեր անցած գնացած, մութ բաց միեւնոցն ժամանակ բանաստեղծական միջնադարեան դիշերի:

Այդ ամենը ես նրան այն պատճառով եմ ներում որ նա իսկական չեխունի է:

Եթէ զուք ուզում էք իմանալ այն բոլոր քաղցրահնչիւնութիւնը և շնորհալիութիւնը, որոնց կարող է հասնել չեխ լեզուն, աշխատեցէք նրան լսել Կոմունհի Յոմենացի սիրուն շոթունքներից: Վերլիցիու ալմաստ ոսանաւորը այդ զմբուխս շոթունքների վրա նրբութեան վերին աստիճանն է, որին կարող է հասնել չեխ լեզուն: Ոչ նախապաշարումները և ոչ էլ կապերի բացակայութիւնը արգելք չեն գնում ձեր մուտքի դէպի ինքը: Եղէք զուք չեխ գիտնական, գրող, նկարիչ, քանդակագործ, երաժիշտ - և զուք շատ հեշտ կերպով մուտք կունենաք այդ գեղեցիկուհու ապարանքը: Նրա մեծահոգի հայրը, որը մեծ մասնակցութիւն է ունենում մեր ժողովրդի քաղաքական կեանքի մէջ, աշխատում է լինել նաև աչքի լնինող գործիչ մեր գրական, գեղարվեստական և հասարակական կեանքի մէջ: Այդ ասնկարէզներում ամեն մի առաջադրյանական ձեռնարկութիւն գտնում է նրա անձի մէջ մի երկրպագու և առատաձեռն պաշտպան: Նա մեծահոգի մեկենաս է տաղանդաբար երխասարդ արտիստների հանար: Եթէ մի տեղ յացնուում է մի չեխ նկարչի մի փառաւոր գործը, նա յայտնուում է իբրև գնող, նրա պալատը և ազգիները զարդարւում են չեխ քանդակագործի ստեղծագործութիւններով, նրա զրադարանից բայցակայ չէ և ոչ մէկը թանդագին պառ զներից չեխ զրականութեան: Նրա հիւրանոցներում

արբում է չեխ լեզուն, նրա բոլոր կառավարիները և ծառաները չեխեր են և նրա բոլոր մատեանները և թղթակցութիւնները նրա կալածներում չեխ լեզով են պահում:

Մի խօսքով եթէ ով և է ուզում է չեխ բարձր հասարակութեան կեանքից րոման դրել, թող նա մուտք բայց անի իւր համոր ացդ պալատում՝ կամ կոմիտ ամառաց բնակառեղում՝ մի փառաւոր դղեակ չեխ փարթամ երկրի ծոցում, դղեակ — որի հիմնական և հնադարեան մասերը նորոգւում և պահպանում են խորին յարդանքով, իսկ նոր չէնքսերը կառուցանում են աչքի ընկնող չեխ ճարտարապետների իրաւ որ նշանաւոր ճաշակով։ Երբ որ այնաեղ կոմսուհի հնձենային տեսնէք, որը կատարելիս լինի փոքրիկ անային քեմի վրա Սմետանայի «Վաճառած Հարսի» մէջ Մաժինկայի (Մարիամ) դերը, երբ կոմսի գերդաստանը զւարճանում է հարեւան ազնւականութեան հետ չեխ կատակերգութիւններ և օպերաներ ներկայացնելով, կամ եթէ դուք նրան տեսնելիս լինիք ճեմելիքում հազւագիւտ ծառերի տուերի տակ, խորասուզած նորագոյն չեխ բանաստեղծութիւնների մի շքեղ կազմած հատորի ընթերցումով — այն ժամանակ ձեր աչքերը անշուշտ կլցւեն բերկութեան և հիացմունքի արտասուքներով։

— Հերիք այս երկար ձանձրալի առաջաբանը — կտրում էք դուք անհամբերութեամբ իմ խօսքը։

Աւելի լաւ է որ ասես թէ ուր է ացդ դղեակը, ի՞նչ է ացդ անյայտ կոմսի և նրա հրաշալի աղջկայ անունները որոնք սակացն, դատելով այն բանից ինչ որ դու նրանց մասին պատմում ես, պէտք է որ վաղուց հպարտութեամբ և շնորհակալութեամբ արտասանեէին ամբողջ չեխ երկում։

Ախ, յարգելի լնթերցողներ, ացդ դղեակը գոյութիւն ունի միայն երկափայտթեանս մէջ, իսկ կոմսուհի հնձենան ոչ այլ ինչ է եթէ ոչ իմ իդէալը, որը ես իզուր պատում եմ իրականութեան մէջ։ Նա ներկայանում է իմ հողեղին աչքերիս առաջ իբրև մի որոշ, հրաշալի շքեղութեան տեսիլ, որին ես իզուր եմ պատում հողեղին աչքերովս։ Աակացն ես դեռ յոցարս չեմ կորցրել նրան վերջի վերջոյ գանելու։ Ես այնքան եմ կարգում ացդ բազմաթիւ չեխ ազնւականութեան մասին, որին մեր թշնամի մամուլն իսկ «Ժ

tschechische Adel»<sup>1)</sup> է կոչում, ես լսում եմ որ նա մեզ հետ ընթանում է «առանց կեանք և կալւածք խնայելու», որ նա իսկ կանգնած է մեր ժողովրդական շարժումի զվահն, և ես գիտեմ նոյնպէս որ այդ մեր չեխ ազնւականութիւնը ահազին կալւածների տէր է և իւր հարասութեամբ շատ է գերազանցում տեղական գերմանացի ազնւականութեանը:

Բայց տարօրինակ բան. ըլնայած իմ անվերջ խուզարկութիւններիս - ես ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել այդ չեխ ազնւականութիւնը: Ես ուղել եմ տեղեկութիւններ դրականագէտներից - սրանք ոչինչ չը գիտեն նրա մասին: Ես դիմեցի նկարիչների խորին - սրանք ինձ միանգամայն ծաղրեցին: Անուշաղիր թողնելով սոցածաղրը - ես շարունակում էի պտուել և վերջապէս նրանց միջից գտաց մի երիտասարդ նկարիչ, որը իրաւ վայելում է մի քանի ազնւականների համակրութիւնը - սակայն դժբաղդաբար այդ ազնւականները գերմանացիներ են:

Ցուցահանդիսում յայտնեց չեխ նկարչի մի հոչակաւոր պատկերը. պահապանի նման ժամելով կանգնած էի ես այդ պատկերի մօտ - երես առ երես տեսնելու համար չեխ ազնւականութիւնը: Բայց ծպտուն իսկ ըլլսեց նրա մասին և պատկերը գնաց օտար երկիրներ թափառելու: Առանց հոգս խնայելու ես շրջեցի բոլոր գեղագրական ամսագրերի խմբագրութիւնները - սրանց բաժանորդների ցանկում չեխ ազնւականութիւնը գտնելու համար: Արդիւնքը զրո էր, ինչպէս որ այդ պատահում է շատ յաճախ: Ես ացելեցի չեխ գրավաճառներին. գուցէ նրանք որ և է տեղեկութիւն ունենալին չեխ ազնւականութեան մասին: Գրավաճառները կարծեցին թէ ես իրանց ծաղրում եմ, իսկ շքեղ կազմերով հրատարակողներից մէկը քիչ էր: Մնում ինձ գմատուն ուզարկի:

Մաքովս անցաւ թէ երեի չեխ ազնւականութիւնը գաղանի կերպով է չեխ գրքեր առնում և պաշտպանում չեխ գեղարւեսուները, ծածկելով իւր չեխասիրութիւնը անմատչելի պալատներում և գղեալիներում:

Լրտեսի նման ես թափառում էի ազնւականների տների մօտերքը,

<sup>1)</sup> Գերմաներին նշանակում է «չեխ ազնւականութիւնը»:

կաշառում՝ էի տան ծառաներին և այդեպաններին և յաճախում այն գինեաները, ուր երբեմն ժողովւում են լակեները և աւագ կառավարները։ Բացց շողոքորթութիւնը և խոնահութիւնը, որոնց շնորհիւ ես մուտք գտայ կարմիր ժիլետների և արհամարաբար դէպի վեր ցցւած ծնուների այս փակ շրջանը—ասլարդիւն էին. ես չը լսեցի և ոչ մի հատ արիստոկրատական չեխ տան անւան մասին, ուր իշխէր չեխ բառբառը, ոչ մի չեխ օրիորդի անուն լսեցի, որը չեխ զբքեր կարգալիս լինէր, իսկ երբ ես փորձեցի իմանալ արգեօք կայ այնպիսի մի չեխ տուն ուր տրում լինէին չեխ լեզով ներկայացումներ—արած հարցս յարուցեց համարձակ քրքիջի մի կատարեալ պայմանում լակեների սեղանի մօտ։

Այսպէս ահա բոլոր խուզարկութիւններս բանի տեղ չանցան։ Սակայն, ի սէր Աստծոյ, մւր մնաց չեխ ազնւականութիւնը։ Ուր կորաւ։ Ուր է պահւել։ Նրա մասին տեղեկութիւն չնւնի արգեօք բարի ընթերցողներից մէկը։ Կամ գուցէ այդ բոլոր ազնւականութիւնը երեւակայութեանս նոյնպիսի մի ստեղծագործութիւն է, ինչպիս և իմ կոմսուհի նոմենան։

Սիրոս պահած ունի իւր խորքում մի յոյս ևս։ Երեկոյեան թողնում եմ մրգի վաճառանոցի մօտ գտնւած համեստ բնակարանս և թափառում գերմանական թատրոնի շուրջը, որի մօտ կանգ են առնում երկար շարքերով շքեղ կառքեր, գւնակների վրա ազնւական տոհմալրոշնով իսկ իրանց տեղերում վերոցիշեալ կառավարները և լակեները։ Ազնւացեղ նժոյգները բարձր բարձրացնում են իրանց գեղեցիկ բաշերը և կճղակներով անհամբեր փորում հողը, անիւները ձայներ են հանում, սանդուկիքի վրա երեւում են կանացի օգեղէն։ Փիզուրներ արիստոկրատական չքնաղ գէմքերով, խշիշում են մետաքսեայ շորերը, շողշողում են թանգագին զարգարանքները և լսւում են քաղցր գերմանական հնչիններ...

Նարունակում եմ փողոցով գնալ ազգային մեծ թատրոնի աւարտած շինութեան առաջ։ Հպարտութեամբ նայում եմ այս հրաշալի քարէ հսկայի վրա, այս քարէ մուսաների վրա, որոնց գեղեցիկ ֆիզուրները լողում են բարձրում լուսնեակի արծաթափայլ ճառագայթների մէջ, այս վեհ, փառթամօրէն զարդարւած թատրոնի մուտքին և մի երանելի երազ տիրում է հոգուս...

Ես տեսնում եմ մի խումբ հարուստ էքիպաժների այս պերճ մուտքի մօտ խռնւած. նրանց մէկից մարմարիոնի աստիճանի ոտ է դնում մի չքնաղ ոտիկ և սիլվիդի այդ ոտի վրա վերամբառում է մի աղջկաց հրաշալի պատկերը: Նրա քնեքոյշ դէմքը ժպտում է ձիւնափայլ փետուրների տակից, որոնք շրջապատում են ոսկով ասզ-նագործած հովհարը, իսկ թեթև շղարշի տակից փուած ծա-ծանուում են շեկ ոսկեգոյն մազերը—կոմսուհի բնժենայի... Այս երազի տպաւորութեան տակ ես բոլորում եմ այս շինութիւնը մինչև նրա քամակին գտնուող ժամանակաւոր, փոքրիկ և լուսաւոր-ւած թատրոնը. սրա առջեւ կանդնած են միայն վարձու աղքատիկ, ներկը գնացած զրոժկաներ, քնաթաթախ կամ հայհոյող կառապանը իւր տեղում մաշւած հագուստով և համեստ նիհար ձիով, որը խորին կարեկցութիւն է յարուցանում բոլոր մօտովը անցնողների...

## ՅՈՎԱՆՆԻՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

### I

իմ եղբայրները օտարութեան մէջ  
ինձ ասում էին, — կարօտ ենք, երգի՛;  
Մեր հայրենիքի երդիցն ասա՞.

Քո երգից նորա  
Մայրական զըւարթ  
Հողի ու ջրի  
Եւ մեր հարազատ  
Հայ ժողովրդի  
Համն ու հոտն առնենք,  
Որ միսիթարւենք:

Սիրոս լցւեցաւ, և հառաչեցի...  
Նրանք էլ ինձ հետ սասաիկ ցաւալի  
Աղաղակելով արտասւում էին.

Եւ հոսում էին  
Արտասոկները  
Տխուր աչքերից,  
Եւ մեր ձայները  
Մի ծանօթ կսկիծ  
Ուժեղացնում էր  
Եւ միացնում էր:

Եւ, տիրութեան մէջ կամ թէ խնջոյքի,  
Օտար աշխարհում,  
Մենք այսպէս էինք մեր հայրենիքի  
Երգերը երգում:

## II

Լսում ես դու էլ, թէ ինչ են խօսում  
 Մեր մասին ամբողջ ամարանցում:  
 Աչքների տակից, տեսնում ես, ինչպէս  
 Ծածուկ նայելով հետեւում են մեզ,  
 Մեր ամեն խօսքին ականջ են դնում  
 Եւ կասկածաւոր աչքով են անում...  
 Մեզանից յետոյ էլ մէկը միւսին  
 Կ'ասեն - յիշում էք դուք այն երկուսին,  
 Սզգական չէին, ոչ քոյր ու եղբայր,  
 Ման էին գալիս անլնկեր, անմայր...  
 Եւ զիշերները այս ծառերի տակ  
 Երգ էին ասում՝ ձայնով ներգաշնակ,  
 Եւ նրանց երգը զգացմունքով լի,  
 Որ կախարդանք էր զիշերին տալի,  
 Որ ծաւալում էր այնքան հեշտալուր,  
 Լցւած սրտերի գեղմունք էր մաքուր.  
 Նկատում էիք, անտառի մթին  
 Ստւերում երգը բնդհատում էին.  
 Այն լռութիւնը հասկանում էիք...  
 Մտաբերմամ էք դէմքը գեղեցիկ  
 Վայելչահասակ այն աղջկանը.  
 Երբ երխասարդ օտարականը  
 Ազահ աչքերը վրան յասում էր  
 Խսկոյն շինելով նա խոնարհում էր  
 Սիրուն զլուխը և ձեռքին բռնած  
 Ծաղկափնջին էր նայում շփոթւած...  
 Ուրախ հնչիւնը նորա ծիծաղի,  
 Որ տարածում էր այնքան զիւրալի  
 Այս ամայացած, խուլ շրջակացքում,  
 Եւ սուր ճիշերով սրտերը ծակում...

Յիշում էք արդեօք  
 Այն ախտաբորբոք,  
 Միշտ զւարթ զոյզին.  
 Սիրահար էին...

## ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ<sup>1)</sup>

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

Կովկասի բազմատարր ժողովրդների թւում համարեա մի ամենաաննշան տեղ են բւնում գնչուներն առհասարակ և սակաւաթիւ հայ բոշաներն մասնաւորապէս։ Այս յօդւածովս ցանկանում ենք ընթերցողին գաղափար տալ նոցա կենցաղավարութեան և առանձնաշատկութիւնների մասին առհասարակ։ Մեր յօդւածը վերաբերում է առաւելապէս Ախալքալաքի, Ախալցխացի և Ալեքսանդրապոլի հայ բոշաներին, որոնք 1828-ին հոչակաւոր Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ Բարձր-Հայքից գաղթեցին գէպի Ռուսաստանի նոր տիրած սահմանները։ Նոցա թիւը ճշգութեամբ մեզ յայտնի չէ. և դժւար թէ մէկը կարողանայ նոցա սոոցդ թիւը իմանալ, քանի որ բոշաները իրանց կենցաղավարութիւնով, իրանց թափառական նիստ ու կացով միշտ խուսափում են կանոնաւոր վիճակագրութիւնից։ Նոցա թիւը մօտաւորապէս այս է. Ախալքալաքում 25 տուն, Ախալցխացում 16 տուն, Ալեքսանդրապոլում 40 տուն, Ղարսում 25 տ., Ախալքալաքի գաւառի Եխանելա գիւղում 8 տուն., Ծալկացի վիճակի Դամալայ գիւղում՝ 20 տուն, նոյն վի-

1) «Բոշա» բառը Երզրումի բարբառով տրւում է գնչուների ան ցեղին, որը կրօնով լուսաւորչական է և խօսում է մեծ մասամբ հաֆերէն. այնպէս որ բոլոր ավակրօն գնչուները միշտ կրում են ալլ անուններ, ինչպէս «զարավի», «գնչու», «ցիղան» և այլն. մինչդեռ օր. Ղարաբաղի բարբառով «բոշա» բառը ընդհանուր է բոլոր գնչուներին. Համեմատեցէք բոշաների մասին (Մուլճ. 1890 թ. № 9 – Բոշաները ըստ Կոլոչի (Քոլ. Ա. Արարտսանեսոնցի) և Խաթ-Արբա, վեպ 1), Փափաղեանի 1890, № 9 և 10։

Ճակի Ազըլքիլիսէ զիւ զում 4 տուն։ Աելի մեծ թւով և հին անփոփոխ աստանդական կեանքով ապրող բոշաներ կան վերջին պատերազմով նւաճած երկիրներում, առաւելապէս Աջարայի Փանէկ և Փարտուղ կոչւած զաւառներում։ Այս վերջիններիս թիւը գէթ մօտաւորապէս չեմ կարող զնել, զրբա մասին տեղեկանալու հաստատ աղբիւր չ'ունենալով։ Երևանում և Գանձակում ևս մի ժամանակ եղել են սակաւաթիւ բոշաներ, բայց թողնելով իրանց պարապմունքը բոլորովին մոռացել և խառնել են տեղացի հայերի հետ Կովկասի սահմաններում վերցիշեալերն են այս տեղերը, որտեղ բնակւում են հայ բոշաներ։ Նոյա մեծաղոյն մասը ապրում է Տաճկա-Հայաստանում, գլխաւորապէս Վինոսի և Թոխաթի (Եւգոկիաց) կողմերը։

## I

Հայ-բոշանները, չը նացելով իրանց խիստ սահմանափակ քանակութեանը, իրանց կրօնին՝ ու խմուած գործածած լեզւին, որ միեւնոյնն են ինչ որ մեր լեզուն և կրօնը և որոնց պատճառով ոմանք նոյա հայ-բոշան են անւանում, բայց այդ ժողովուրդը իրան միայն յատուկ սովորութիւններով և բնաւորութիւնով մի զարմանալի ինքնատիպ, ինքնուրոյն ժողովուրդ է, օժտած ուշադրութեան արժանի օտարութիւններով։

Հայ բոշացի ազնիւ յատկութիւնները աւելի աչքի են ընկնում և կշիռ են ստանում մանաւանդ եթէ նոյա համեմատելու լինենք ոչ թէ մի նստակեաց և քիւ թէ շատ քաղաքակիրթ ազգի հետ, այլ իւր ցեղակից և համարեան նոյն միջոցներով իւր ապրուստը հայթայթող զնչուի հետ, որ կրօնով մահմետական է։ Թէկ սոցա կեանքի հանգամանքները, աւանդական պարապմունքը միատեսակ են, թէկ ծաղումով նոքա պատկանում են միեւնոյն ցեղին, բայց հայ բոշան շատ և շատ բարձր է կանգնած թուրք գնչուից։

Մինչ թուրք-զնչուն պատրաստ է յարմար բոպէին առանց առիթը բաց թողնելու թալանել մոտած տունը, գողանալ առեն մի ձեռքը ընկած առարկաց, և թէ նորա այդ գործողութիւնը դիտող չը կայ, հայ-բոշան երբէք, ոչ մի դիպւածում այդպիսի տոտութիւն յանձն չի առնի։ «Զգողանալը» նորա ցեղի աւանդական և ամենասրբազան պատերներից մինն է։ Երբէք, ոչ մի հանգաման-

քում՝ բոշան չի բռնւած գողութեան մէջ. զոնէ ինչքան հետաքրքրւել ենք, չենք պատահել մէկին, որ մեր ասածի հակառակը պնդէր: «Իոշան զողանալ չը գիտէ» այդ է ժողովրդի այն մասի արմատական կարծիքը, որը յարաբերութիւն ունի նոցա հետ: Այդ է պատճառը, որ ոչ մի տեղ արգելած չէ բոշացի մուտքը, ամեն տան տեր վասահ է նորա շխակութեան վերայ, մինչդեռ ոչ մի դնչու ազատ մուտք չունի տներում:

Թուրք զնչուն աւելի գործնական և խորահանկ է, երբ բանը զայխ է մարդկանցից փող կորզելուն: Նա խիստ լաւ զիտէ օգտուել ուսմիկ ժողովրդի մնահաւատութիւնից զանազան խարերացութիւններով: Նոցա կանաչք իրանց «Քալ»-երով, (հայութիւն) եղունդներին նայելով, վհկութեամբ կամ անբարոյական և զրաւիչ կաքաւով տղբուկի նման ծծում են միամիտ ժողովրդի տրիւն-քրախնքով վասառակածը: Հայ բոշան բոլորովին չը գիտէ գործադրել վերոշեալ թէեւ ստոր, բայց գիւրին փող կորզելու միջոցներից և ոչ մինը: Նոյն խակ արտաքին հաղուստից կարելի է դատել այս ցեղակից թափառաշրջիկների տարբերութեան և առաւելութեան կամ պարասութեան աստիճանը. զնչուն կարծես բոլորովին զուրկ է ամօթխածութիւնից և վայելութեան զգացմունքներից: Նա շրջում է համարեա մերկ, առանց քաշելու, մինչդեռ բոշան խիստ խուսափում է մերկութիւնից. նորա հագուստը թէեւ հնոտի, ծածկւած անթիւ և բազմազունի կոտրտանքով, երբէք անվայելուչ և պատառուած չէք տեսնի: Կը չենք ցիշում բոշաների միւս ներքին բարոյական արժանաւորութիւնները, որոնք մեզ շատ կը հեռացնէին յօղւածիս նպատակից: Սակայն պիտք է աչքի առաջ ունենալ, որ այդ համացեղ և համապարապմոնք ժողովրդների մէջ եղած տարբերութիւնը ունի, ինչպէս առնեն բան, խր պատճառը. նոյսանից մինը կրօնով մահմելական է և այդ կրօնի շնորհիւ գուցէ հնուց ունեցած լաւ յատկութիւնները կորցրած՝ պիտք է միայն յետապղիմէր, անալիտանանար. մինչ հայ բոշան, իբրև քրիստոնեաց ժողովուրդ, մշտապէս ապրելով ու շփւելով հացերի հետ, հարկաւ շատ բարձր պիտի լինի առաջնից: Թողնելով սոցա համեմատութեան մանրամասնութիւնները, ես կ'անցնեմ՝ յօղւածիս բուն նպատակին, հայ բոշացի առանձնակի նկարադրութեանը:

## II

**Մի ժողովուրդ,** որ «չի ցանում, չի հնձում, բայց թռչունի պէս ապրում է», որի հայրենիքը աշխարհն է ամբողջապէս, հովանին երկինքը, հարստութիւնը մի աւանակ և մի քանի չուլ ու փալաս,—դա բոշան է։ Հպարտ իւր աղքատութեան մէջ, անկախ և ազատասէր առանց որ և է քաջութեան, աշխարհակալ և հարկառու առանց զէնքի և բոնութեան՝ ահա բոշացի աչքի լնկնող յատկութիւնները։ Նա վտան է, որ ամեն տեղ կ'իշխէ, կը տիրապետել այն մոքով, ինչ մոքով բոշան է հասկանում իշխել և տիրապետել բառերը։ Նա գիտէ, հաւատացած է, որ ամենից կ'ստանաց իւր հարկը, ուստի և նա ամեն տեղ է, ամենուրեք է, ուր մարդիկ կան։ Սարերն ու ձորերը չեն խափանում նորա ընթացքը, ծովն ու անապատը արդելք չեն գառնում նորա անընդհատ թափառելուն։ Եղանակների յանկարծական փոփոխմունք, անձրե, արե, ձիւն կա՞ փոթորիկ երկիւղ չեն ազդում նորան։ տոկունութեամբ յաղթելով բոլոր քնական արգելքներին և սկատահարներին, նա ամառւայ կիզիւ տօթին, կամ խիստ ձմեռւայ բքերին ուրւականի նման երեւում ու անցնում է այս կամ այն գաւառը, այս կամ այն նահանգը։

Չունենալով մասնական սեփականութիւնն, նա բոլոր աշխարհը, բոլոր մարդկանց ունեցածը իւր սեփականութիւնն է համարում, եթէ նոցա կարիք ունի։ Ուստի և սեփականատիրոջ վստահութեամբ անարգել նա մտնում է ամեն մի օտարականի տուն և ըստ երեւոյթին արդարացի սպահանջով, թէւ այդ սպահանջը քողարկած է լինում աղերսախառն բառերով և արտայացտում է խնդիրքի ձեռվ։ Բոշան աղքատի նման մուրալ չը գիտէ, այլ նա գիտէ սպահանջել խնդիրքի ձեռվ և վայ նորան, ովոր չի յարգիլ նորա խնդիրը։ Կարկտի նման կը թափսի բոշացի բերանից նորա անսպառ կծու և ազդու անէծքը՝ մերժող տան տիրոջ զլսին։ Բոշան ապրում է իւր ճարտար լեզւի և ռամիկներին սարսափեցնող ազդքու անէծքով։—

Բոշաների մասին խօսելիս զիւրութեան համար պէտք է ճշշտութեամբ որոշել այր և կին բոշացի զրութիւնը, որոնց փոխադարձ յարաբերութիւնը և կացութիւնը մի տարապայման բնութիւն ունի։ Բոշա հասարակութեան մէջ, կնոջ զերը յատկացրած է

տղամարդոց և, ընդհակառակը, տղամարդկանց զերը յառկացրած է կանանց։ Ինչպէս բոշա հասարակութիւնը մի սպառող ոյժէ, մի պարագիտ է ամբողջ մարդկութեան համար, նոյնպէս ի մասնաւորի այր բոշան մի կատարեալ ձրխակեր է իւր կնոջ վերաբերութեամբ, որի վերայ նա ծանրաբեռնել է բնութիւնից իրան նշանակած հոգսերն ու աշխատանքը։ Վերևը մեր յիշած յառկութիւնների մեծագոյն մասը պէտք է տալ բոշա կնոջ, որին իսկապէս կարելի է իւր ցեղի արժանաւորութիւնների և պակասութիւնների կատարեալ ներկայացուցիչը համարել։ Իոշա-ժողովրդի մէջ, տղամարդը մի տեսակ երկրորդական, կրաւոր զեր է կատարում, նա ապրում է իւր կնոջ աշխատանքի փշրանքով, ուստի իւր հասարակութեան գոյութեան խնդրում նորա զիրքը խիստ աննշան է։ Իոշայի գոյութեան ապահովողը, նորան պահողանողը բոշա-կանացը են։ Ըստանիքի մնունդը, նորա հազուսը և մնացած բոլոր առօրեայ չնչին պահանչները հոգացողը, տոկուն, ոչ մի արգելքի և խոչնդոտի առաջ չ'երկնող բոշա-կինն է։

Ինչքան էլ այդ ընտանիքի պահանջները սակաւ լինին, այնուամենայնիւ դոցա բաւականութիւն տալը շատ դժւար է, եթէ աչքի առաջ ունենանք որ նոքա պէտք է լրացւին ոչ թէ մի արդիւնաբերող ձեռնարկութիւնով, ոչ թէ ունեցածը շահեցնելով կամ ցանածը հնձելով, այլ բոլորովին պատահական, այս ու այն տեղից համարեա զօրով կորզած պատառներով։ Եւ բոշա-կինը վրան առած այդ ծանր պարտականութիւնը կատարում է զարմանալի տոկունութեամբ, որ հերոսութեան է հասնում։ Զրկւած այն բոլոր իրաւունքներից և քնքշութիւններից որ յատուկ է իւր սեռին, նա բացի յիշեալ ծանր հոգսերը լրացնելուց, որով շատ անգամ կերակրում է 4—8 հոդի՝ հաշւելով ամուսնուն, նորա ծնողներին և իւր երեխաներին, նա իւր աշխատութեան վերջին կոպէկներով հոգում է ամուսնու շռայլութիւնների ծախսը—նորա ծխախոտի —և արագի գինը։ Եւ այդ բոլոր ջանքերի համար վայելում է իւր ամուսնուց միայն արհամարհանք։

Ըստանեկան յարկի տակ շատ սակաւ է ապրում բոշա կինը, նա իւր օրերը անցնում է հեռաւոր օտարութեան մէջ, թէեւ նորա համար ոչ մի տեղ օտար չէ։ Այցելում է ամեն մի ազգի, մանոււց

է ամեն մի անհատի տուն, սակայն այդ դեսպում նա միշտ խորի է զնում քաղաքի և զիւղի, հարստի և ազքատի մէջ, միշտ տուաւելութիւնը վերջիններին տալով, որոնցից նա զիւրութեամբ է տառում իւր ազքատիկ պահանջը:

Մանելով ամեն մի տուն, հազիւ է պատահում, որ նա մտած տեղից գատարկաձեւն զուրս ելնէ: Խորի չը զնելով ոչ մէկի տւածի մէջ, նա խնդրում է ամեն բան, ինչ որ իրան պէտք կը դայ: Նորա խնդրած բաները լինում են սովորաբար հաց, ալիւր, ցորեն, գարի, կորեկ, բուրդ, շորեր, զանազան կոտրամնք, հին կոշիկներ, մածոն, սերուցք (արածան), իւղ, կարաղ, պահնիր, թան և այլն. Երբ ամեն բան բացասում են, նա խնդրում է աղ, փայտ, տաշեղ, ուտելու կերակուր... մի խօսքով ամեն բան, որ կարող է ունենալ և տալ տանտեղը: Նորա սուր աշքը տեսնում է տան ամեն անկիւնը, նորա հայեացքից չի խուսափում ոչ մի առարկայ, որ կարող էր իրան սիրական լինել: Եթէ նորա խնդիրը շուտով գոհացում չի ստանում, նա գաւնում է պահանջող: Պէտք է բոշայի հաստատակամութիւն ունենալ, նոյա պահանջածը մերժել կարողանալու համար:

Երկար, առանց ձանձրանալու, հին ու նոր մեռելների ցիշատակով, սիրած տղամարդի, անդին զաւակիների «արև—սատաղով» նա աշխատում է փափկացնել կահակոր տանտիկնոց սիրու և ստանալ «իւր փայլ»: Երբ իւր բոլոր հնարագիտութիւնը զուր է անցնում, նա մանչում է կրծտացնելով իւր առամեները, և մի խիստ անէծը տալով, անմիջապէս հեռանում է: Խակայն բացարձակ անիծելու համարձակութիւն չունի նա. Նորա խիստ սրամիտ անէծքը միշտ արտայացուում է փոխաբերաբար, որով միջոց տալով լաւ բիցունելու իւր ասածի իմաստը, նա ժամանակ է վաստակում անվանգ հեռանալու: Այլապէս նոյա այդ համարձակ վարմունքը շատ էժան չի նոտի նոյա վերայ:

Մի որ ե. է տուն մոնելիս, բոշան իւր ուղածը սկսում է հաճոյախօս նախաբանով. նա ճարտար լեզով աշխատում է գանել տանտիկնոց (նկատենք, որ նոյա գործը միշտ կանանց հետ է) թոյլ երակը, որ շատ գժւար չէ, քանի որ նա փորձով լաւ ուսումնասիրել է բազմաթիւ կանանց թոյլ կողմերը: Գովում է տան-տիկնոց ու սիրունիկ աշքերը, նրա «ըուընդիկ» (զեղեցիկ) քիթն ու

բերանը, նորա մաղերն ու հագուստը, արտաքինից անցնում է ներքին արժանաւորութեան, զովաբանում է նորա ողորմածասիրութիւնը և այլն... Եթէ պատահած կինը ծանօթ է հնուց, կամ ուրիշ տեղից է հարս եկած, նա յօրինում է սուտ բարեներ նորա ծնողներից և բարեկամներից, որով աշխատում է դրաւել նորան: Վայ նորան, ով անձնասուր է լինում բոշայի հաճոյախօսութեան և նոյա հետ մուրհաբար խօսակցում է: Այդ խօսակցութիւնը կամաց, բոլորովին աննկատելի կերպով բոշան ուղղում է գեղի իւր նոպատակը և կարծես քնականաբար նորա ամանի մի պատական մասը տառնորինոջ ձեռով լցւում է իւղով կամ սերուցքով, որ բոշացի ամենաձեռնոտու աշխատանքն է:

Միամիտ գիւղացիներին խարլող չարչի-մանրավաճառներից յետոց, իրաւամբ կարելի է ասել, բոշան առաջի տեղն է բոնում:

Բոշա կանացք սովորաբար շրջում են զով-զովզ, առանց տղամարդի առաջնորդութեան:

Հարսներին և մատուցահաս կանանց առաջնորդում է մի փորձած հասակաւոր, կամ մի պատաւ կին: Նատ սակաւ է պատահում, որ բոշա-աղջիկը շրջի բան խնդրելու, այն էլ երբ հասակն առաւ, զաղարում է շրջելուց: Հարսին առաջնորդող պատաւ կամ ապրիքն առած կինը լինում է կամ նորա սկեսուրը, բարեկամներից մինը և կամ մօտիկ ծանօթ հարեանը, որը իրեւ մենաոր, նորահարսի ամուսնութիւնից չորս-հինգ ամիս յետոց, նորա առաջն ընկած ման է ածում զիւղից գիւղ, քաղաքից քաղաքը շրջելու և իւր ապագայ արւետին վարժեցնելու, որով պիտի հայթալիթէ իւր և իւր ամրողջ ընտանիքի ապրուստը:

Ազգալիսի շրջագայութեան ողջ ընթացքում նոյա ուսերից մշտապէս կախած են լինում միշտ մի կամ երկու ահազին կաշեաց սպարկեր, որոնց մէջ ածում են ստացած իրերը, մի ձեռին քուզա, մէջը իւղ, մածուն, արաժան և այլ հեղուկներ ածելու համար, իսկ միւսին՝ մի խոշոր հովական մահակ, — բոշաների միակ զէնքը զիւղական կառաղի շների և երեխաների դէմ, որոնք հաւասարապէս հալածում ու չարչարում են նոյա: Այնքան բեռը դեռ բաւական չէ, որ նոքա սպարաւոր են օրերով շրջելու. յաճախ գորա վերայ աւելանում են և չորս-հինգ հաստ մաղեր, զիւղացիներին ծա-

իսելու համար, իսկ թերեւ ու կծիկը, երբ երկար ճանապարհ գնալիս մահակը բանեցնելու առիթ չի լինում, բոշա կնոջ ձեռքից համարեա վայր չի ընկնում:

Նա շարունակ կամ նորոգում է հնոտի գուլաներ, կամ նորն է գործում: Հետաքրքրաշարժէ նորա շրջակազայութիւնը մանաւանդ այն ժամանակ, երբ դա լինում է ընտանիքով, կամ խմբովին: Այդպիսի խմբովին շրջկացութիւն բոշաները յանձն են առնում այն ժամանակ, երբ մի գաւառում այլ ևս տեղ մնացած չի լինում, որը այցելած չը լինեն. այնուհետեւ նոքա խմբով անցնում են մի այլ գաւառ կամ նահանդ, տեղաւորւում են մի կենարոնական տեղ և, եթէ կարելի է այսպէս ասել, բաց են թողնում իրանց ասպառակ կանանց շրջակայքը կողոպոելու: Այդպիսի տեղափոխութիւնների ժամանակ, ահա կը տեսնեք բոշա-կնոջ բազմած մի աւանակի վերաց, առաջելը դրած մի երեխաց, յետելից մի ուրիշը, մէկն էլ կախած խորջինի մի աշքից, միւս կողքից էլ քաշ արած մաղեր կամ տոպրակներ, ինքը հանգիստ մանում կամ գործում է, իսկ այրը ահազին մահակով առաջ է վարում հնազանդ անասունին: Այսպէս մի քանի ընտանիք գնում են խառն ի խուռն առանց որ և է կարգ ու կանոնի, իջնում են մի գիւղ, որտեղ աղամարդիկ պարապում են երեխաներ պահելով, որոնց մասին ի հարկէ եթէ նացելու լինենք բոշացի աչքով, շատ չնչին հողատարութիւն է հարկաւոր, արածացնում են իրանց բեւնակիր անասունները, մաղեր են գործում, իսկ կանացք, ինչպէս ասացինք, գնում են շրջելու—«կովի պէս կաթ ժողովելու, որ գան իրիկունը կթւեն», ինչպէս սովոր է ասելու այր բոշան իւր աշխատասէր կնոջ մասին: Այդպիսի առժամանակեաց բանակներում բոշաները հաւաքում են մածուն սերուցք, կախ և այլ բաներ, զոցանից շինում են իւղ, պանիր, ծախում և կամ տանում են իրանց տները: Իսկ հաւաքած հացը, ալիւրը և այլ անհրաժեշտ պաշարեղէնները նոքա բոլորովին չեն ծախում, այլ մթերում են իբրև ձեռւայ պաշար:

Որովհետեւ այժմն բոշա-հասարակութիւնը կիսովին հատուառ-քնակ է գարձել: այդպիսի խմբովին շրջակայութիւնը ներկայում և հազւադէպ է լինում: Հեռաւոր տեղեր շրջողը միայնակ բոշա-կինն է լինում, որը երբեմն ամիսներով հեռանում է տանից:

Այսպէս օրինակի համար Ախալքալաքի բոշաները ոտի տակ տալով Ախալքալաքի, Ախալցիսայի, Ալեքսանդրապոլի գաւառները, անցնում են նաև Թիֆլիս, Թելաւ, Սղնախ, եղբեմն նաև աւելի հեռու, բոլոր ժամանակ ոտով շրջելով։

Զընայելով այդ երկարատև բացակայութեան և այն բազմաթիւ աննպաստ հանգամանքներին, որոնց շնորհիւ մի այլ կի՞ն ակամայ բարոյական անկման պիտի դիմէ, բոշա կի՞նը անցնում է բոլոր պատահած խոչնորոները անձնավատահ ամեն տեղ ցոյց տալով իւր ցեղի ամենամեծ առաքինութիւններից մինը՝ իւր զարմանալի բարոյականութիւնը։

Յօդւածիս սահմանից դուրս լինելով բոշա կանանց մղած հերոսական կոխմաների նկարագիրը, իրանց պարկեշտութիւնը պահպանելու համար, որ իբր բարոյական խրատ պատմեում է ժողովրդի բերանում, մենք հարեանցօրէն ենք անցնում այս աչքի ընկնող առաւելութիւնը, որից համարեա զուրկ են միւս թափառաշրջիկ զնչուների կանայք։ Այս պատճառով զուր չէ այր-բոշայի այն մեծ վատահութիւնը, որ նա ազատ թողնելով իւր կնոջը առանց տղամարդու առաջնորդութեան և հակողութեան հեռաւոր երկիրներ, միանգամայն հաւատացած է, թէ քանի չէ լոել իւր կնոջ բերանում նրա սոււու ու կծու լեզուն, որ կարիճի նման խայթել և օձի նման թունաւորել գիտէ, և քանի որ շարժւում է նրա ձեռքում հաւատարիմ մահակը, իւր պատիւը արատաւորւած չէ։

Ասացինք, որ բոշան գող չէ։ Դա պէտք էր մասնաւորել բոշակնոջ վերաբերութեամբ, որովհետև նոցա տղամարդոց վերայ դէմ նկատած է մի չնչին, շատ սովորական և միմիայն բոշա-տղամարդոց առանձնացատուկ գողութիւն։ սոքա խիստ վարպետութեամբ կարտում են ձիերի աղիները նրանցից մազեր պատրաստելու համար։ Իայց բոշա-կանանց յիրաւի ոչ ոք չի կարող մեղադրել գողութեան մէջ։ Այդպիսի մի կիսավայրենի ժողովրդի մէջ, իրաւամբ զարմանալի է այդչափ գովելի յատկութիւններ տեսնելը, որոնց կարող են շատ քաղաքակիրթ աղքեր ևս նախանձել։ Ամենի գուռը բաց է բոշայի առաջ. ամեն տեղ նա մտնում է անխտիր, շատ անգամ, մանաւանդ ամսու ժամանակ, երբ գիւղացիները դաշտումն են լինում կամ կալումը, նա ոչ ոք չի գտնում տանը, ուրեմն կարող

է վերցնել ինչ որ ցանկայ. բայց նա մնում է հաւասարիմ իւր աւանդական սովորութեանը: «Աչինչ ըլ վերցնել սեփական ձեռքով»— թէև գա տիրոջ թուղարութեանը լինի, այս է պատերում նորա ցեղական պատերը, որ դարերով սրբազործած, խիստ օրէնքի նշանակութիւն է սուցել բոշայի աշքում և որի զանյաւութիւնը աններելի մեղք է համարում նորա համար: Տոշան երբեք անմիջապէս չի վերցնիլ իւր ուզածը, այլ գա միշտ կատարում է միջնորդաբար, տան մի անդամի ձեռքով, որ տւողին «ողորմութիւն» համարւի, խոկ սուցողին, «Հալալ» լինի: Երբ տանտիկինը զբաղւած է, բոշան սպասում է մինչև նորա գործի վերջանալը և ասա սունալով իւր բաժինը, հեռանում է: Մանելով մարդ չեղած տուն, նա մի քանի անդամ կանչում է տանտիկինոց և երբ նա չի երեւում՝ անմիջապէս հեռանում է:

Նկատւած է, որ բոշան կը խաբի. բայց չի զողաճալ. ովեաք է ասել, որ բոշաները սովորութիւն ունեն երեքն հետները ման ածել վաստ տանձ, խնձոր կամ այլ մրգեղին, առաւելապէս զոշաբ, որոնք զարձեալ ձրի հաւաքած են լինում այլ տեղերից և այդ մրգեղինով յանախ խաբում են երեխաներին, երբ մեծերը տանը չեն և նոցա ձեռքով տանից ցանկացած բանը վերցնում են: Ի հարկէ երբ մեծերը վրայ հասնեն, բոշան արդարանալու միջոց կ'ունենաց թէ, ինքը չի վերցը իւր ձեռքով, այսինքն չի զողացել, այլ երեխան է նրան տւել:

Շըշելով երկրէ երկիր, գործ ունենալով առեն տեսակ մարդոց և ժողովրդի հետ, ել ու մուտ ունենալով առեն տան և հասարակութեան մէջ, բոշա կանացք ձեռք են բերում զարմանալի գործնական սրամութիւն, որ առակ է դարձած ժողովրդի մէջ: Այդ է պատճառը, որ շատերը հետամուտ են լինում բոշաներին հարցերով՝ նրանցից ծաղրաշարժ և սրամիտ պատասխաններ ստանալու համար: Եւ ոչ մի խօսք, ոչ մի ակնարկ, ոչ մի հեղնական հարցմունք անպատճախան չի մնում բոշա կնոջ կողմից: Սրամութիւնների իւր անսպասելի բառարանից իւրաքանչիւր հարցմունքի կար ակնարկի փոխանակ՝ նա տալիս է խիստ շուտափոյթ, սրամիտ և կծող պատասխաններ: Այսպիսի հանդարանքներում՝ երբ լիրբ տղամարդիկ նորա հասցէին արատաւոր և անառակ սրախօսութիւններ

են ուղարկում, բոշան ոչ ամաչում է և ոչ էլ վախճառում՝ է հաղմեալ և յարմարաւոր սպատասիսաններ տալուց։ Այդ սրախօսութիւնները սովորաբար արտացայտում են քողարկած, փոխարերական մողերով, որոնք արտաքուստ վիրաւորիչ չեն երևում։ Դորանով բոշան ազատում է շատ անախորժութիւններից, որովհետեւ մինչև հակառակորդը հասկանաց բոշի երկդիմի պատասխանի իմաստը, բոշան արդէն հեռացած լինելու միջոց զատած կը լինի։ Երբ բանը բացարձակ կուի է հասել, այդպիսի նեղ հանգամանքներում նա էղ առիւծի արխութեամբ թէ խօսքով և թէ գործով զիտէ պաշտպանել իւր պատիւը։

Երեւի այգապիսի շուտավոյթ և սրտմիտ պատասխան տալն է պատճառ եղել այն սասցւածքի կազմելուն, որ ժողովուրդը գործածում է հաղմեալ պատասխանող անձանց համար թէ՝ «բոշի պէս խօսքը ձեսնէ» (բոշի նման պատասխանը պատրաստ գրականումն է)։ Կառ հացհոյելուց, շուտ, սրամիտ պատասխան տալուց զատ, բոշան մանաւանդ լաւ անիծել գիտէ գիւղացի չարածճի երեխանների դէմ, որոնք խմբերով քարհոծում են նոցա։ այդ անէծքը միակ զէնքն է։ Բոշացի աղբիւրի նման առատաբուզի բերանից դուրս հոսող հարուստ, բազմատեսակ անէծքը բառերով անհնարին է նկարագրել, գորա մասին լիովին գաղափար կազմելու համար պէտք է անձամբ լսել և զարմանալ։

### III

Գանք այժմ այր բոշացին։ Նա իւր գանգաղաշարժ և անգործ կեանքի մեծագոյն մասը հին խրձիթի ծածկոյթի տակն է անցկացնում։ Նա մասնակից չէ իւր անխոնչ, մշտապէս թափառող կնոջ ոչ աստանդական կեանքին ամբողջապէս, ոչ չարչարանքներին և ոչ էլ նորա ամենօրեաց զրկանքներին։

Այր-բոշան իւր ջանասէր կնոջ աշխատանքի արդիւնքի անհոգ վայելողն է։ նորա վաստակի պաղի տէրն ու ձաշակողն է։ Ինչպէս մի արևելցու ճշգրիտ պատկեր, նա իւր ընտանեկան պէտքերի մեծագոյն մասի հոգացողութիւնը դցելով կնոջ վերաց, ինքը հանդարտութեամբ կլանում է չարարանքի արդիւնքը առանց ինացելու։

Բոշա կինը իւր հաւաքածի տէրը և գործադրողը չէ, նա իւր քաղցը միշտ դուրսը, օտարների տանն է յագեցնում, մինչ իւր «պուտ-պուտ» հաւաքած կաթը, մածունը և կամ իւզը անցնում է իւր մարդու ձեռքը, որի տէրը, գործադրողը կամ ծախսարարն է համարւում նա: Խնչպէս խելքին փչեց աջնպէս էլ կարող է վարւել նա այդ ապրանքի հետ. կարող է ծախել և ծխախոտի կամ արազի տալ, այդ նորա ցանկութիւնից է կախւած:

Բոշայի պահանջները և ձգուումները չափազանց սահմանափակ լինելով, նա զերծ է մնացել նոցա անձնատուր լինելու ցանկութիւնից, որոնք յաճախ դէպի շռացութիւն և ապականութիւնն են տանում մարդոց: Նորա շռացութեան միակ առարկաներն են էժանազին ծխախոտը և օղին են, մանաւանդ վերջինը, որ առանց բայցառութեան խիստ սիրելի է բոշաներին: Առանց տատանուելու կարելի է ասել, որ արբեցութիւնը բոշաների համար հասարակացին ախտ է դարձել: Դոցանից զատ այր-բոշան ուրիշ շռացութիւնները չունի: Նորա ամբողջ կեցութիւնը պարզ, նոյն իսկ աղքատիկ կերպարանք է կրում: Նորա հագուստը իսկ և իսկ համապատասխանում է իւր դրութեանը. արխալուխը ծածկւած անժիւ կարկատաններով, շալեղին չուփան և շալւարը պարզապէս վկաց են մեր առածին: Ներկայումն թէեւ կան բոշաներ, որոնք տնտեսապէս կատարեալ ապահով զրութեան մէջ լինելուց զատ, շահով փող էլ ունին, բայց երբէք նոցանից ոչ մինը չի ցանկանում իւր աղքատիկ հաղուստը փոխել մի քիչ թէ շատ մաքուր և կոկիկ հագուստի հետ. Բոշաները բոլոր հարստութեան մէջ ցախտենական աղքատ է մնում արբողջովին, ոչ մի տնտեսական ապահովութիւն նորա ապրուստը մազաշի չի փոխիլ:

Նա պարապ ժամերը անց է կացնում իւր հասակակիցների հետ այս կամ այն խրճիթում նստած խօսելով և ծխելով: Իրանց թափառական կեանքի արկածները, այս ու այն երկրում, այս ու այն ազգի մօտ տեսածներն ու լածները իրանց կանանց հաղորդած պատմութիւններն ու գէպքերը բոշաների խօսակցութեան անսպառելի աղքիւրներն են: Այդ խօսակցութիւնների ժամանակ մեծ զեր են խաղում բոշա-ժողովրդական երդիները, որոնք անժիւ առական ների, հանելուկների, երպերի և մանա: անդ գովական հէքիաթների

անպասելի պաշար ունեն ժողովրդին զւարճացնելու համար; Եւ այդ բոշան զւարճանում է. ոչ մի հոգս, ոչ մի աշխարհային մտածմունք չեն վրդովում նորա հոգու անդորրութիւնը: Հասկանալի է կարծեմ, որ նորա նիւթական և բարոյական պահանջների խիստ սահմանափակ քանակութիւնով կարելի է բացատրել նորա անհոգ և մշտագւարձ կետանքը:

Արդարատ լինելու համար չը մոռանանք ասելու, որ այր բոշան, ուրիշ ժողովրդի հետ համեմատելով ինչքան էլ ծոյլ, անդործ անւանելլ նորան իրաւացի համարենք, այնուամենայնիւ նաև իւր պարապմունքը, իւր գործը, իւր հոգսն ունի որքան էլ այդ պարապմունքը չափազանց չնչին լինի: Եւ անկարելի էլ է երեւակացել մի մարդ, որ ամբողջ օրը ձեռքերը ծալած, պարապ նստած լինի:

Ինչպէս տեսանք այր բոշան իւր բոլոր պարտականութիւները ծանրաբեռնել է իւր կնոջ վերայ, որի բացակացութեան միջոցին ինչքն է կատարում տան գործերը, երբ տանը մի ուրիշ կին չկայ: Նա կնոջ պէս տանը նստած, հակելով և լինամելով իւր երեխաներին, մեծ մասամբ պարապում է բոշաների ժառանգական և բացառապէս նրանց յատուկ արհեստով—մաղագործութիւնով, որը չափազանց դիւրին, ոչ մի մտաւոր աշխոյժ չը պահանջող և միայն կնոջ վայել ու նոյսա թոյլ ձեռներին մատչելի գործ է: Բոշան խիստ պարծենում է իւր այդ արհեստով. նոյսանից ոմանք, իրանց «մաքրիչ» են անւանում այն պատճառով, որ հասարակաց հացը մաքրելու գործիքը—մաղը նոքա են մատակարարում: «Մեզ ոչ թէ բոշա՝ այլ մաքրիչ պիտի անւանեք» ասում են բոշաներից առաւել պատւասէրները, որոնք հասկանում են բոշա անւան ոչ այնքան համակրելի նշանակութիւնը: Բացի մաղերից, որ պատրաստում են ձիու սովոր մաղերից, և որոնց ծախողը, ինչպէս տեսանք, դարձեալ նոյս կանացքին, բոշաները շինում են երեխայական թմբուկներ, տափեր, որոնց փոխարինում են իրանց պէտքական բերքերի հետո: Մի քանի տեղերի բոշաները, ինչպէս օրինակի համար Մինոպի և առհասարակ Անատոլիայի բոշաները, պարապում են դարբնութիւնով ևս, առելի լաւ կը լինէր ասել նալբանդութիւնով և երկաթեաց մանր իրերի նորոգութիւնով: Բոշան ոչ միջոց և ոչ էլ ցանկութիւն ունի կատարեալ դարբին լինելու, որ մեծ ջանք և խիստ աշխատութիւն է

պահանջում, և որի պարագաները պիտի նորան ստիպեն մշտակեաց լինելու։ Նու պայտում է իւր աւանակը, եթէ, պատահի նաև իւր դրայունը և օտարինը, նորոգում է հին դանակ, մանգաղ կամ զերանդի, հաւաքած երկաթի կտորտանքից շինում է մեխեր կամ՝ պայտեր, ահա այդ է նորա դարբնութեան ծացը։ Այժմ սակաւագէպ արհեստի զիմող բոշաները սովորում են հասարակ ստնամաններ կարել (ոչ կոչկարութիւն), որ դարձեալ չի պահանջում՝ առանձին խելք կամ ոյց։

Ինչպէս ընթերցողը կը նկատի, մեր թւած պարապմունքների մէջ, որոնցով զբաղւում է այր բոշան։ (որոնց հազիւ թէ կարելի լինի արհեստ անունը տալ), ոչ մի արհեստ չկայ որը քիչ թէ շատ մտաւոր կորով, կամ ֆիզիքական ոյժ պահանջէր։ Բոշայի ընտրածը բոլոր արհեստաներից ամենապիւրինը, ամենաքիչ մտաւոր կամ ֆիզիքական ոյժ պահանջողներն են, որոնք կան և միշտ մնում են նոյնը նորա ձեռքում՝ առանց յառաջադիմելու, միշտ կանգնած, ինչպէս որ մշտապէս կանգնած և անփոփոխ է մնում ինքը բոշա-ժողովրդը։

Բոշան միշտ խուսափում է այն բոլոր բաներից, որը պահանջում է խելք, մտածողութիւն, կամ ֆիզիքական ոյժ, աշխատանք, ճակատի քրախնք։ Ո հարկէ զբականապէս չի կարելի ասել, թէ բոշան անընդունակ է որ և է ֆիզիքական կամ մտաւոր աշխատանքի և յառաջադիմութեան՝ թէև փաստերը այդպէս են թելադրում եղալակացնելու։ Այսպանը միայն կարելի է ասել, որ բոշայի թէ մտաւոր և թէ ֆիզիքական ոյժերի գարւոր անդրծադրութիւնը, ձրի ապրուստի հնարաւորութիւնը սաստիկ խոպանացրել են բոշայի մէջ այն ոյժերը, որոնցով ապրում է իւրաքանչիւր անհատ, որ ընդունակ է աշխատելու։

Միակ պարապմունքը, որտեղ քիչ թէ շատ փայլում է բոշայի մտաւոր ընդունակութիւնը, որտեղ արտայացաւում է նորա խելքի արդիւնքը, նորա աշխարհահայեցողութիւնը և զգացմունքները, նորա ճարտարութիւնն և սրամտութիւնը, մի խօսքով նորա հողեական, մտաւոր կեանքը ամբողջովին, դա աշուղութիւնն է, որ ի նպաստ բոշաների, նոյս մէջ շատ տարածւած է։ Բոշաների մէջ կան ընտիր ժողովրդական երգիչներ, որոնք նոյն իսկ հայերի մէջ

մեծ համբաւ են վայելում ոչ այնքան իրանց ինքնուրոյն ստեղծագործութիւնով, որքան իրանց ծիծաղաշարժ սրամառութիւնով։ Նոքա երգում են բոշայերէն (յօդւածիս վերջում իբրև նմուշ դնում եմ մի քանի տուն նոցա երգերից), հայերէն, բայց առաւելապէս թուրքերէն։ Բոշա-երգիչները լաւ հեքիաթներ ասողներ են. նոքա ձմերային երկար գիշերները իրանց վառվառն հեքիաթներով զբաղեցնում են բազմաթիւ գիւղացիների, որոնցից իբրև վարձ որոշեալ քանակութեամբ ցորեն կամ զարի են ստանում։ Հարսանիքների, տօների, հասարակաց խաղերի և զւարձութիւնների ժամանակ այդ երգիչները թէ բոշաների և թէ հայերի մէջ անհրաժեշտ մասնակցողներ են։

## IV

Զարմանալի է բոշաների անուսումնասիրութիւնը. նոցանից ոմանկը ապրելով քաղաքներում, իրանց կրօնակից հայերի հետ, շատ սակաւ է պատահում որ երեխաններին ուղարկեն նոցա ուսումնարանը ուսանելու. նոքա չեն ուզում հետեւել այն ազգին, որի անդամն են համարում իրանք իրանց։ Մի քանի տարի առաջ երկու թէ երեք բոշա երեխայք միայն կային Ախալքալաքի հայոց ուսումնարանում, որոնք չը վերջացրած գուրս գնացին, առաջին և վերջին ուսանող սերունդը գառնալով բոշաների մէջ։ Նոցա այդ անուսումնասիրութիւնը առիթ է տեւել իրաւամբ այն առածի կազմելուն թէ՝ «քուրդուն փաշա, բոշատէն քեշիշ օլմազ» (քրզից փաշա, բոշայից քահանայ չի լինի)։

Բոշան ձգառում չունի նոր բան սովորելու, գուցէ նա անշնդունակ էլ է նորը, լաւը լմբանելու, հասկանալու. մանաւանդ այս կարծիքը ոլետք է ընդհանրացնել այր-բոշայի վերաբերութեամբ, որ ամեն բանով յետ է իւր կնոջից։ Բոշան մի մանուկ է, մի երեխայ, մանկան բոլոր թուլութիւններով։ Սակայն նա մանկան հետաքրքրւելու և շլանալու յատկութիւններից զուրկ է։ Այդ այդպէս լինելով, բնական է, որ բոշան մարդկային յառաջադիրութեան փայլուն առաւելութեան արժէքը ոչ հասկանում է, ոչ էլ հետաքրքրւում է հասկանալու. ուստի և նա կանգնած է միշտ միւնոյն ասովիճանի վերայ

և կարծես թէ ոչ մի ձգտում չունի այդ ստոր աստիճանից բարձրանալու, գէթ տեսնելու համար, թէ ի՞նչ է կատարւում իւր շուրջը, թէև, աւելացնենք, նորա մնաւոր կարողութիւններն էլ դորան հասնելու շանսեր չեն ներկայացնում:

Բաւականանալով իւր կնոջ հաւաքած հացի փշրանքներով, որ խիստ սակաւապետութեան, համարեա աղքատութեան է համնում, բոշան զերծ չէ ինքնազո՞ն հապատութիւնից: Նա իւր շրջակայքի, իւր աչքին երեւցող հարստութեան, բարեկեցութեան և փառացիղութեան վիրայ նայում է դեւրիշի արհամարանքով: Նա երեխայի պարզութեամբ նայում է իւր շուրջը և կարծես չի տեսնում կամ հասկանում ինչ որ կատարւում է այն երկիրներում, այն ժողովրդոց մէջ, որոնց յաճախ նա այցելութեան է զնում: Մի անդամ անցկացած անմատչելի սարը՝ նա միւս անդամ տեսնում է իւր առաջը հարբած, դիրամատչելի ճանապարհ. մի անդամ գնացած հասարակ ուղին դարձել է սլաքնաց երկաթուղի. իւր հարեւանի խրճիթը, բարձրացել, դարձել է երեք-չորս յարկանի փառաւոր պալատ. նայում է այդ ամենի վրայ բոշան և կարծես չի տեսնում, ականջին է համնում այդ զդրդիւնը, որ անընդհատ առաջ զնացող կեանքի նշանն է պարունակում և կարծես չի լսում: Այդ բոլորը նորան երեսում է ինչպէս մի երազական երեղիթ, անհասկանալի մարդկային սատանայութեան մի արդիւնք: Նայում է նա այդ բոլորի վերայ և, զարմանալու տեղ, կարծես արհամարհանքով կրկնում է. «աշխատեցէք, չարչարեցէք, զուր չանք, անօգուտ վաստակ, ես կամ և մնում եմ նոյնը. դուք ձեր ցանկութիւններին յագեցում չէք կարող տալ, իսկ ես կ'ապրեմ հանգիստ ու անզորր»: Իոշան արհամարհում է լուսաւորութիւնը, որովհետև նրանից շատ յետ մնացած լինելով, նորան ըմբռնել չը կարողանալուց զատ, նա կատարելապէս զգում է թէ լուսաւորութիւնը իւր թշնամին է: Լուսաւորութեան մէջ նա իւր ապրուստի կորստեան նշոցներն է տեսնում: այս պատճառով նա խուսափում է այն ամենից ինչ որ լուսաւորութեան հետքեր է կրում: Նա որոնում է նահապետական քնով քնած ժողովուրդ, հեռաւոր, զժւար մատէլի խորշեր, որտեղից նա կարող է ճարել իւր ապրուստը:

Փորձեցէք մանել մի բոշայի. խրճիթ կամ հարցրէք նորա

կեանքից, նորա լեզւից տեղեկութիւններ, աշխատեցէք իմանալ նորա դրութեան մանրամասնութիւնները,—այդ անկարելի, եթէ չ'ասենք անհնարին է։ Քո շետապդ նորան երկիւզ է ազգում, խորամանկութեամբ նա քո առաջը կը քծնի, իւր կեանքի մուր կողմերը արեւեսութեամբ նա կ'աշխատի ծածկել, քեզ կ'աղաչի, որ աշխատէք նորա համար հող ձեռք բերել, նա չունի, թէ չէ ինչպիսի ուրախութեամբ նա երկրագործութիւնով կը պարապի թողնելով իւր զգելի զբաղմունքը, կը խեղճանայ, կը ստորաց նա. բայց երեսներդ դարձնէք թէ չէ նա ձեր յետեից իւր լեզուն կը հանէ։ Բոշան միայն խաբել զիտէ, նա արհամարհում է ամեն մի պարապմունք, դոցա թւում և առաւել սաստիկ այն մարդու պարապմունքը, առանց որին նա ապրել չի կարող։ «Աղքատ ու հպարտ» ահա բոշացի յատկանից կողմը, որը իւր ծագման վերաց նայում է ճիշտ այն հայեացքով, ինչ հայեացքով ազնւականը նայում է իւր հին առհամական ծագման վերայ. ուստի ամեն մի պարապմունք որ բոշացութիւն չէ, անարգելի, ստոր, պարսաւելի է բոշացի համար։ «Իմանաս սալի զազուց, չիմանաս իշու զազուց», ահա այն ամենախիստ անէծքը, որ կարող է մի բոշա մի ուրիշ բոշացի առաջական ասլի (սալի) զազուց, կը նշանակէ զիւղացի, երկրագործ դասնաս, քո պարապմունքդ եղներ և սացլ լինի, քո լսածդ սացլի ճռինչը լինի, որ միայն պարսաւելի, արհամարհում է արժանի ու ոչ թէ մի ազնւիկ բոշացի։ Դու զիւղացի դառնաս, անազատ, սացլի միայն քաշ եկող, նորա անիւներից բարձրացած փոշին ծծող և ոչ թէ մի ազատակամ բոշա, որ զիւղացու նման չարչարանքով չի վաստակում իւր հացը, որի ականջին սացլի անախորժ ճռնչոցի փոխանակ համառում է միայն իշուկի — «նարդոսի» նւիրական, բոշացի համար խիստ քաղցը, շատ դուրեկան ճայնը։ Ահա թէ ուր է համառում բոշացի տածած արհամարհունքը դէպի երկրագործութիւնը և նորա ունեցած կարծիքը իւր պարապմունքի մասին բոշացի համար մի առաւել մեծ զժքաղդութիւն չը կայ իւր իշու, իւր պատական «նարդոսի» զազուցից զրկւելուց աւելի, ուստի վերոցիշեալ բնորոշ անէծքը այդ ամենախիստ, բոշացի անբ սզբութեան ամենապարմատական կեռն է ընտրում նորա վերայ աղղելու համար։ Եւլ, եթէ կարելի է այսպիս ասել,

բոշացութեան սիմբոլն է. իւր ամբողջ կեանքը, իւր բոլոր էռութիւնը կապւած է այդ խոնարհ անասունի հետ, ինչպէս զիւղացու կեանքը կապւած է հողի հետ. ուստի այդ կենդանին, որից զատ ուրիշ ոչ մի կենդանի չի պահում բոշան, նորա ընտանիքի մէջ մի իսկական անդամի տեղ է բռնում:

Նա իւր իշուն պահում է և խնամում է իւր որդուց աւելի, նորան տալիս է այնպիսի քնքոյշ, սիրելի ածականներ, որ իւր կնոջն էլ չի տալ. «Ճաղիկ, նարդոս, թումբուլ, մարալ, ընտանի» (վերջինը կնոջ համար ևս գործածելի է) և այն և այն սովորական անուններն են, որոնք բոշան տալիս է իւր սիրելի աւանակին և որից զրկելը բոշացի համար աշխարհիս ամենամեծ չարիքն է համարում նա:

(Վերջը միւս անգամ)

# ԱՅԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Շ Ե Լ Լ Ե Բ Ի

Թարգմ. Զ. ԲԱԼՈՒԴ, ԵԱՆԻ

«Առեք աշխարհը, դուք էք տէրը այսօրից»,  
Գոշեց Զեսը մարդկանց ցեղին երկընքից —  
«Թող դա լինի ձեր ստացւածքը սեփական,  
«Եղբայրաբար բաժանեցէք միմիայն»:  
Եւ բոլորը ոսքի ելան ըշտապով,  
Ամեն մէկը իր բաժինը ջոկելով,  
Երկրագործը դաշտի բերքը ժողովեց,  
Որսորդն ընկաւ խեղճ երէի յետեից...  
Վաճառականն լրցրեց տահեստն ահազին,  
Աբրան ընտրեց ազնւագոյն հին գինին,  
Թագաւորը կըտրեց կամուրջն ու ճամբէն,  
Պահանջելով, որ տասանորդ վլաճարեն...  
Անց էր կացել շատ ժամանակ այդ օրից,  
Երբ Պոէտը եկաւ հեռու տեղերից.  
Սակայն նորան մի «Ճեղ» անգամ՝ չը տըւին,  
Որովհետեւ տէր կար ամեն մի «Ճեղին»:  
«Վայ ինձ, ուրեմն ես եմ միայն զըրկըւած,  
«Ե՞ս, քո որդին հաւատարիմն ու սիրած» —  
Այսպէս բարձրը գանգատեց նա Զեկսին,  
Նունկ չոքելով նորա գահի առաջին:  
«Գու ուշացար ցընորքների աշխարհում»,

Ասաց Զեսը—«Էլ ինչու ես տըրտընջում,  
 «Ուր էիր, երբ կատարւեցաւ բաժանում»:  
 «Քո մօան էի»—պատասխանեց նա տըրտում—  
 «Իմ հայեացքը բեկուած էր քո դէմքին,  
 «Ուշքըս—երկնից այն ներդաշնակ օրհներգին.  
 «Ներիր ինձ, հայր, յափրշտակւած քո լոյսից,  
 «Ես զըրկւեցայ իմ երկրային բաժինից...»:  
 «Դէ թնչ անեմ»—ասաց Զեսը Պոկոյին—  
 «Ձի պատկանում ինձ այլ երս այդ աշխար...  
 «Թէ ուզում ես, արի, ապրենք միասին,  
 «Իմ երկինքը միշտ պատրաստ է քեզ համար»:

## ԱՐԱՆՑ ԴԱՒԱՆԱՔԻ

Ժամանակակից վեպ Հէնրիկ Սենկեիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵՅՆԻ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Պարիզ, 2 ապրիլի:

Տաս ամսից աւելի կը լինի ինչ յիշառակարանումս ոչինչ չեմ գրել, թէև արդէն այնպէս սովորել եմ այդ աշխատանքին, որ սպակասութիւնը թւալի էր ինձ համար: Իայց ինքս ինձ ասում էի՞ ինչի պէտք է որ: Ինձ ճնշում էր այն գիտակցութիւնը, թէ թէկուզ Պասկալին արժանի մոքեր գրեմ, մոքեր՝ աւելի խոր քան ովկեանի խորքերը ու աւելի բարձր քան Ալպեան սարերը, այնու ամենայնիւ չեմ փոփոխիլ այն մի հատիկ հասարակ իրողութիւնը, որ Անելիան մարդու է զնացել: Այդ իրողութեան առաջ ձեռներս թուլանում էին: Կեանքը երբեմն ամփոփում է մի միակ՝ էապէս աննշան նպատակի մէջ և երբ որ այդ նպատակը պակասում է մարդուս, մարդ չի իմանում թէ էլ ինչու է կատարում ամենահասարակ գործողութիւնները: Տարօրինակ ու ծիծաղելի կը թւի եթէ ասեմ, բայց երկար ժամանակ այնպիսի դրութեան մէջ էի, որ երբ հագնուում էի, տանից դուրս էի դալիս, թատրոն էի

գնում կամ ժողովարան, երբէք չէր պատահում, որ առաջին րոպէում ինքս ինձ հարց չը տայի թէ ինչի է պէտք այդ, և յաճախ երկար ժամանակ էր անցնում մինչեւ որ ազատում էի այդ զգացմունքից, ուշքի էի գալիս ու ինքս ինձ ասում, թէ զեռ նրա հետ չը ծանօթացած հօ ճաշում էի, մօրուքս խուզում ու ուրիշ այդախի զործողութիւններ կատարում։ Առաջին ամիսներում բաւական շատ ճանապարհորդեցի. հասայ մինչեւ անգամ Խալանդիա. բայց շւեղական լճերին, նորւեղիական ֆիորդներին ու խոլանդական գէյզերներին նայելիս սեփական անմիջական տպաւորութիւններ չէի ստանում, այլ միայն աշխատում էի երեւակացել թէ արդեօք Անելկան ինչ կը զգար այս կամ այն տեսարանը տեսնելիս ու ինչ կ'առէր. մի խօսքով տեսնում էի նրա աչքերով, մոտածում էի նրա խելքով, զգում էի նրա սրտով։ Խակ երբ որ յետոյ յիշում էի որ նա անւանում է պանի Կրոմիցկա, ձեռաց նստում էի երկաթուղի կամ նաև ու շարունակում էի ճանապարհս, որովհետեւ տեսածս այլ ևս ինձ չէր հետաքրքրում։ Խոնչ միսիթարութիւն կարող էր լինել ինձ համար այն, որ այդ իմ մէջ կատարւողը այն սովորական ու մինչեւ անգամ ծաղրի առարկաց զարձած գրամաններից մէկն է, որոնք ինձնից առաջ հազարաւոր յիմարների են տանջել։ Մահն էլ ամենքին է տանում և սակայն իւրաքանչիւր վախճանողի թւում է, թէ իւր հետ միասին աշխարհն էլ է ոչնչանում, — և խկազէս ոչնչանում է։

Չը զիտեմ և չեմ էլ ուզում իմանալ, թէ իմ սկզբի ամիսներում զգացածս որ աստիճան անհունութեան մօտեցող յուսահատութիւն էր։ Այդ ամենը համեմատական բաներ են։ Այն զիտեմ միայն, որ իմ ամբողջ էռութիւնս զրաււած էր այդ կնոջով և որ առաջին անգամը հասկացայ, թէ ինչ դատարկութիւն կարող է պատճառել սաստիկ սիրելի էակի մահը։

Սակայն սակաւ առ սակաւ կենւական սովորութիւնները — ոչ հաճոյքները — նորից իրանց սովորական ոյժը ստացան իմ մէջ։ Ինձ թւում է, որ այդ բաւական լնդհանուր երեոյթ է։ Ներքուստ սաստիկ տիտուր մարդիկ եմ տեսել, որոնք սրաներումը ուրախութեան նշով անգամ չ'ունենալով, այնուամենայնիւ արտաքուստ մասամբ ուրախ են մնացել միմիայն այն պատճառով, որ մի ժամանակ ու-

բախ են եղել և սովորել են արտայայտութեան այդ ձեին ինձ համար էլ հօ պէտք է գար մի ժամանակ, երբ ես զաղարէի օրինակ առամանացաւը զգալ միմիայն այն ահաճութեան միջոցով, որ այդ ցաւը կարող էր պատճառել Անելկացին: Բացի այդ, կարճ կտրած՝ թմրել, բթացել էի և վերջ ի վերջոց զարման գտել նոյն իսկ թոյնի մէջ: Մի ժամանակ Ֆարինիի ճանապարհորդութեան մէջ կարգացել եմ, որ Կամբրները կարիճի խայթածը բժշկում են երկրորդ անդամ կարիճին նոյն տեղը խայթել տալով: Այդպիսի կարիճ, այդպիսի դեղթափ նոյն իսկ թոյնից ստացւած՝ էր ինձ համար, ինչպէս ասենք և առհասարակ բոլոր մարդկանց համար՝ «կասարւեց» խօսքը:

Կատարւեց, ուստի տանջւում եմ: կատարւեց պրծաւ, ուստի դադարում եմ աանջւելուց: Այդ գիտակցութիւնը, թէ էլ ճար չը կայ, մասամբ հանգստացնում է մարդուս նարունակ միտքս է դալիս այն Հնդիկը (ամերիկացի), որ նիադարայի հոսանքից տարւելով, սկզբում՝ մաքառել է ջրվէժի ոյժի դէմ այն ծայրացեղ սաստկութեամբ, որ կարող է ներշնչել մարդուս յուսահատութիւնը, բայց յետոյ տեսնելով որ ճար չը կայ կուելու, քցել է թիերը, պառկել է նաւակիի յատակին ու սկսել երգել: Ես էլ այժմ պատրաստ եմ երգել: Նիադարայի յորձանքը գեռ այն լաւ կողմն ունի, որ ում որ տանի մեծ կտորը ականջը կը թողնի. Բայց կան ուրիշ յորձանքներ, որոնք շարաստում են մարդուս աւազու, ամսյի, անջուր ու անբերը ծանծաղքի վրայ: Իմ գլխիս հէնց այդ է եկել:

Իմ կեանքի չար ոգին միայն մի բան չի նախառեսել: Սաստիկ ճնշւած ու սաստիկ դժբախտ մարդը շատ աւելի քիչ բանի տեղ է դնում ինքն իրան քան բախտաւոր մարդը: Դրա առաջ նախանձու ճակատագիրը որոշեալ չափով անզէն է հանդիսանում: Այնպիսի տրամադրութեան մէջ էի և եմ, որ եթէ օրինակ զայրացած ֆորտունան (բախտ) անձամբ գամը ինձ մօտ ու ասէր «Զհաննամը գու», — կը պատասխանէի «Եատ լաւ ես ասում, թող ջնաննամը գնամ եսաւ եւ այգպիս կը պատասխանէի ոչ երբէք Անելկացի համար վշտահար լինելուս պատճառով, այլ սրտումս տիրող խորին անտարբերութեան պատճառով դէպի ամեն բան, որ կայ թէ մէջս և թէ շուրջս:

Այդ մի տեսակ միւած զրահ է, որը ոչ միայն պաշտպանում է

մարդուս, այլ և նրան վտանգաւոր է բարձնում: Պարզ բան է, որ ինքն իրան չը խնայողը, ուրիշներին էլ չի ինայիլ: Մինչեւ անգամ ասուածային պատւիրանն էլ չի հրամացում լնկերոջը իւր անձից աւելի սիրել:

Այդ չի նշանակիլ թէ մտադրութիւն ունեմ մօտ օրերս որ և է մարդու գլուխը թռցնելու: Ասածս զլիաւրապէս թէօրիական նշանակութիւն ունի. կենասկան դործնականութեան մէջ ոչ ոք մեծ վնաս չի կրում դրանից, որովհետեւ եթէ այդ տեսակ անտարբերութիւնը նւազեցնում է ալտրուֆզմը (աէրը գէպի ուրիշները), միւս կողմից նոյնչափ էլ պակասեցնում է եսականութիւնը: Եթէ լնկերոջս հետ մի վերմակի տակ քնելու լինեմ, ամբողջ վերմակը նրան չեմ տալ, բայց միւս կողմից էլ ամբողջը իմ վրայ չեմ քաշիլ: Վտանգաւոր, գուցէ մինչեւ անգամ շատ վտանգաւոր են լինում այնպիսիները միմիացն այն ժամանակ, երբ որ մարդիկ վրդովում են նրանց հանգիստը, որ յենուում է սեփական «ես»-ի սահմանափակման վրայ, և զրդում են նրանց գէպի լարւած զործունէութիւն: Այդ ժամանակ նրանք ունենում են մեքենայի շարժումների անվիպութիւն և միանգամայն մեքենայի անողորմ ոյժ:

Ես էլ եմ ստացել այդպիսի մեքենայական անվիպութիւն, մեքենայական ինքնավտահութիւն: Տաւական ժամանակից ի վեր նկատում եմ, որ իմ մտածելուս եղանակն ու կամքս ուրիշներին շատ աւելի սաստիկ եմ ներշնչում քան առաջ, թէպէտեւ ամենելին ջանք չեմ գործ դնում վրա համար: Տատանմունքի ու թուլութեան անսպառ աղբիւր է ինքնասիրութիւնը, ունայնութիւնը ու ուրիշների վերաբերմանը կոկետութիւն անելը: Մարդս զրեթէ անգիտակցարար առչորւում է զուր զալու, համակրութեան արժանանալու փափառվ և զրա համար հնարքներ վնասուելիս հազար ու մի զիջումներ է անում զոհելով արդարութիւնն ու ճշմարտութիւնը: Այժմ այդ կոկետութիւնը եթէ կատարելապէս չի ոչնչացել իմ մէջ, անչափ նւազել է և իմ անսարքերութիւնը գէպի այն, թէ արգեօք գուր եմ զալիս թէ ոչ, ինձ մասամբ բարձրացնում է ուրիշներից: Այդ նկատում էի ճանապարհորդութեանս ժամանակ և մանաւանդ նկատում եմ այժմ, Պարիզում: Այսաեղ շատ մարդիկ կային, որոնք ինձ վրայ ազդեցութիւն ունեին. այժմ ես նրանց վրայ ազդեցու-

թիւն ունեմ միմիայն նրա շնորհիւ, որ ացդ ինձ աւելի քիչ է հետաքրքրում քան նրանց:

Ընդհանրապէս ինքս ինձ վրայ այնպիսի մարդու տպաւորութիւն եւմ գործում, որ կարող է եռանդուն լինել, բայց չի ուզում; որովհետեւ կամքը ուղիղ յարաբերական է կրքերին, իսկ իմ կրքերը նախ և առաջ բացասական են: Քանի որ մէջս մնացել է առաջւան սովորութիւնս զննել ու մեկնել ամեն բան, ացդ բացարում եմ այսպէս, —որոշեալ պացմաններում կարելի է նոյնքան բուռն կերպով փափադ չը զգալ ասլրելու, որքան որ բուռն կերպով կարելի է ուրիշ պացմաններում տոչորւած լինել ասլրելու փափագով: Հաւանօրէն իմ անսուարբերութիւնը կետրօնացած ատելութիւն է դէպի կեամքը: Դրանից է որ ես ացդ աստիճան քիչ եմ նման Դեմիսին:

Անկասկած ես անհամեմատ աւելի անկախ մարդ եմ դարձել քան առաջ էի և կարող եմ Համբէտի նման ասել, թէ մէջս ինչ որ վանագաւոր քան կայ: Բարեբախտաբար ոչ ոք ճանապարհս չի կարում: Ուրիշներն էլ ամենքը ինձ նոյնչափ խորթ ու անսուարբեր են վերաբերում, որչափ ես դէպի նրանց: Միմիայն հօրաքոյրս է, որ Վարշաւացում առաջւան պէս ինձ սիրում է, սակայն կարծում եմ, որ նրա սէրն էլ պէտք է կորցրած լինի իւր ներգործական բնաւորութիւնը, զոնէ այն չափով, որ ապադայում կարող եմ ազատ համարել ինձ հարսնախօսութիւններից:

### Յ ապրիլ.

Աւազ, իմ անսուարբերութիւնը, որ համեմատում էի անհամ ու անգոյն մաքուր ջրի հետ, միմիայն ըստ երեսյթին է անգոյն: Աւելի լաւ զննելով նկատում եմ, որ երեսին ինչ որ բծեր են լող տալիս, որոնք պղտորում են նրա վճիտութիւնը: Այդ բծերը իդիոսինկրագիաներ<sup>1)</sup> են: Ոչինչ չի մնացել մէջս, բայց ացդ մնացել է: Ոչ ոքի չեմ սիրում և ոչ ոքի ներգործաբար չեմ ատում, բայց սիրոս լիքն է զգւանքով դէպի զանազան մարդիկ: Այդպիսիների

<sup>1)</sup> Օրգանական ատելութիւն ու զգւանք, որի պատճառուը շատ անգամ գժւար է բացարել: Ծովովը ական զարձւածքը՝ պատռելու գալիքը՝ կարծիքն է արտապատում:

թւին է պատկանում օրինակ Կրոմիցկին։ Այժմ արդէն այն չի վաստ թւում, որ Անելկացին ձեռիցս խել է, այլ այն, որ ուները սաստիկ երկար էն, իսկ ծնկների կոճերը շատ հաստ, որ ինքը կարծես ընկոզգ թափ տալու ձող լինի, իսկ ձայնը՝ սրճաղացի ճռճուց է յիշեցնում։ Ասենք նա ինձ միշտ է զգւանք ուստամառելիս եղել, իսկ եթէ այժմ յիշում՝ եմ դրա մասին, այդ զլիսաւորապէս այն պատճառով է, որ զլւանքի զգացմունքս այժմ առհասարակ առանձին կենսունակութիւն է ստացել։ Նարունակ մոտածում եմ այն մարդկանց մասին, որոնցից ջղերս գարշում են։ Եթէ այդ վերաբերեւէր միայն Կրոմիցկուն ու պանի Յելինացին, զեռ հասկանալի կը լինէր, որովհետեւ կարող էի ենթադրել, թէ իմ դէպի նրանց զգացածս՝ զգւանքի գիմակ կրող առելութիւն է, բայց նրանց հետ միասին իմ յիշողութեանս մէջ նոյնչափ յամառութեամբ պատկերանում են ուրիշ կերպարանքներ, որոնք երբ և իցէ կեանքումս իմ մէջ հակակրութիւն կամ զգւանք են զարթեցրել։ Այդ չեմ կարող իմ առողջութեանս վիճակով բացատրել, — երբէք այնքան առողջ չեմ եղել ինչպէս այժմ, — ուստի հետեւեալ կերպով եմ բացատրում, — մարդիկ ինձնից խլեցին սէրս, ժամանակը յամաքացրել է առելութիւնս, իսկ քանի որ մարդս չի կարող առլրել առանց զգալու, ուստի զգում եմ ինչպէս բաշարում եմ, ապրում եմ նրանով ինչ որ մնացել է ինձ։ Պէտք է այն ել խոստովանւեմ, որ բախտաւորութիւնից դժւար թէ կշատանայ նա, որ այդպէս է զգում ու ապրում...

Համարեա բալորովին սառել եմ դէպի այն մարդիկը, որոնց առաջ համակրութեամբ էի վերաբերում։ Պէտքի Սնեատինսկին զգում եմ ուզդակի հակակրութիւն, որ զատողութիւններս չեն կարողանում խեղվել։ Խօսք չը կայ, Սնեատինսկին բարձր արժանաւորութիւնների տէր մարդ է, բայց նա ինքն իրան շատ է զուր զալիս և այդ պատճառով - եթէ նկարիչների լեզով խօսելու լինենք — յաճախ սեթեւեթած (τανιέρέ) է գաւնում։ Իմ կարծիքով, շափաղանց հազիւ է պատահում, որ այն մարդը, որը նկատում է թէ իւր վարւելու եղանակը, իւր անհատական կողմերն ու առանձնայատիկութիւնները զուր են գալիս ուրիշներին, չը սիրահարւի իւր տիսդի վրայ ու վերջ ի վերջոյ չը սկսի աշխատել ինքն իրան գերազանցել։ Սնեատինսկին չափաղանց աստիկ է ցանկանում միշտ և

ամեն տեղ Սնեատինսկի լինել և այդ պատճառով արւեստական է դառնում ու ճոխանքի (rose) համար զոհում է իւր բնածին նրբագլացութիւնը: Դեռ ոչինչ Անելկացի մօտ անցաջող սպատղամաւրութիւնից յետոյ ուղարկած այն կոպիտ հեռագիրը, այն «գնա ճանապարհորդելու»-ն, — որ աւելորդ բան էր, որովհետեւ առանց նրա խորհրդին էլ կ'երթացի ճանապարհորդելու. բայց Անելկացի մարդու գնալուց յետոյ իսկոյն Խրիստինիայում նրանից նամակ ստացաց, որ զրւած էր իրը սրտանց, բայց նոյնպէս կոպիտ էր ու վերին աստիճանի սեթևեթ: Ահա կարնառու կերպով այդ նամակի բովանդակութիւնը, — «Պահնաա Անելկան արդէն պանի Կրոմիցիա է դարձել, — եղաւ պրծաւ, — խղճում եմ քեզ, — սրտապին զրկում եմ քեզ, — կը սիսալւես, եթէ կարծես, թէ ջրհեղեղ կը լինի, — աշխարհքումն զրանից աւելի կարեռը բաներ կան, — թող լեզուս բերնումն չորանց, եթէ ճիշտ չեմ ասում, — հրաշալի երկիր է երեխ նորւեգիան, — վերապարձիր ու գործի կոփիր, — ցանկանում եմ քեզ առողջութիւն և այլն»: Բառ առ բառ չեմ բերում նամակը, բայց տոնը այդպէս էր: Այդ տոնը ինձ սաստիկ գուրք չ'եկաւ, որովհետեւ առաջինը՝ ես չեի խնդրել Սնեատինսկուն որ ինձ արշին տար դժբախտութիւնս չափելու համար, երկրորդը՝ նրան աւելի խելօք մարդ էի համարում և կարծում էի, թէ հասկանում է, որ այն նրա ասած «աւելի կարեռը բաները» միմիայն այն ժամանակը դատարկ խօսքեր չեն, երբ որ նշանակում են առաջուց եղած զգացմունքներ: Մէկ ուղեցի իսկոյն պատասխանել, որ ինձ ազատի իւր հոգեւոր խնամակալութիւնից, բայց լաւ մոածելուց յետոյ ամեննեխն չը պատասխանեցի և կարծում եմ, որ այդ յարաբերութիւնները կտրելու ամենաքիչ նեղութիւն տւող ձեւն է:

Սակայն աւելի խորը խորասուզւելով ինքս իմ մէջ տեսնում եմ, որ իմ դէպի Սնեատինսկին տածած բարեկամական զգացմունքիս սառելու պատճառը միմիայն նրա հեռագիրն ու նամակը չեն եղել: Ճիշտն ասած ես չեմ կարողանում նրան ներել այն, որի համար պէտք է իսկապէս նրան երախտագէտ լինէի, այսինքն նրա միջնորդութիւնը իմ ու Անելկացի մէջ: Ինքս նրան խնդրեցի, որ յանձն առնի այդ միջնորդութիւնը, բայց հէնց այն պատճառով, որ ես նրան խնդրեցի, որ ես նրան հաւատացի բախտոս ու նաւիս զեկը,

որ ես խոստովանեցի նրա առաջ իմ թուլութիւնս ու նրան մասմբ իմ գլխիս խնամակալ դարձրեցի, որ վերջապէս իմ գլխովս անցած զժբախտութիւնն ու ատորացումը մինչև ինձ համնելը նախապէս նրա ձեռքովն անցաւ, հէնց այդ պատճառով, ատում եմ, սրտիս խորքումը ոխ եմ զգում գէպի նա: Խնքս ինձ վրայ չարացած եմ, բայց միեւնոյն ժամանակը Սնեատինսկու վրայ էլ եմ չարացած՝ ամեն բանում մասնակցած լինելուն համար: Գիտեմ, որ այդ անարդարութիւն է, բայց ոչինչ չեմ կարող անել քանի որ իմ բարեկամական զգացմունքս գէպի նա ծրագի նման վառւել պրծել է:

Պէտք է այն էլ ասած, որ ես երբէք շատ էլ հակումն չեմ ունեցել գէպի բարեկամական զգացմունքը: Դուցէ Մնեատինսկու հետ այն պատճառով էի մօտիկ, որ ես նւրողայի մի ծայրումն էի ապրում, նա՝ միւս: Ուրիշ բարեկամ չեմ ունեցել: Ընդհանրապէս վերցրած, ես այն էակների թւին եմ պատկանում, որոնց անւանում են մենաբնակ: Յիշում եմ, որ շատ անդամ զրա մասին միքիչ պարծենկոտութեամբ եմ մտածել, այդ՝ ուժեղութեան ապացոյց համարելով: Յիրաւի, օրինակ կենդանիների աշխարհքում համախմբում են միմիայն թոյլ էակները, իսկ այն կենդանիները, որոնց բնութիւնը զօրեղ ժանիք ու ճանիեր է տւել, մենակ են շրջում, որովհետեւ ուրիշի օգնութեան կարօտութիւն չեն զգում: Բայց այդ սկզբունքը միայն բացառիկ զէպէրում կարող է ճիշտ լինել մարդկանց վերաբերմամբ: Տարեկամութեան անլնդունակ լինելը աւելի յաճախ ոչ թէ մարդուս ուժեղութիւնն է ցոյց տալիս, այլ նրա սրտի չորութիւնը: Իմ մէջ բացի չորսրոտութիւնից այդ բանում նշանակութիւն են ունեցել վերին աստիճանի անհամարձակ ու տափաւորւող լինելու նման էր միողայի, որ մի բան զիազէլիս իսկոյն կուչ է զալիս: Որ երբէք ոչ մի կնոջ հետ բարեկամական զգացմոնքով չեմ կապւ ել, այդ էլ ուրիշ հարց է: Ես ցանկութիւն էի ունենում բարեկամանակ միայն այնպիսի կանանց հետ, որոնցից սիրոս բարեկամութիւնից աւելի բան էլ էր ուզում, այնովէս որ այդ չէր կարող իսկական բարեկամութիւն լինել: Դրա վոխարէն ես շատ անդամ եմ բարեկամ ձեացել այնպէս ինչպէս օրինակ աղւէսը ասակած է ձեանում, որ աղստուերը իրանց ցու շառութիւնը թող-

նեն, և ինքը հեշտութեամբ ճանկի նրանցից մէկին։ Այդ չի նշանակել, թէ ես չեմ հաւատում բարեկամական յարաբերութեան հնարաւորութեանը ազամարդու և կնոջ մէջ։ Նախ և առաջ ես ոչ այն տիմարներիցն եմ, որոնք աշխարհքս իրանց չափովն են չափում, ոչ էլ սրիկաց, ուր միշտ և ամեն բանի կասկածով է վերաբերում, և վերջապէս իմ անձնական դիտողութիւններս ցոյց են տւել ինձ, որ այդ տեսակ բարեկամութիւն բոլորովին հնարաւոր բան է։ Քանի որ իրականութեան մէջ կան այնպիսի զգացմունք ու յարաբերութիւններ ինչպէս եղբօր ու քրոջ, պարզ է, որ այդպիսի զգացմունք ու յարաբերութիւններ կարող են միշտ տեղի ունենալ, երբ որ երկու թէպէտե իրար օտար էակներ իրանք իրանց քրոյր ու եղբայր զգան։ Դիու աւելին կ'ասեմ, — այդ տեսակ զգացմունքներ տածելու ընդունակ են լինում զէսի պլատոնական զրոյցները բնածին ձգտումն ունեցող ընտիր հոգիները, յետոյ բանաստեղծների, փիլիսոփաների և ընդհանրապէս այն էակների հոգիները, որոնք սովորական զերծակային չափով չեն կորւած ձևւած։ Եթէ այդ տղացոյց է, որ իմ մէջ նիւթ չի եղել ոչ բանաստեղծի, ոչ արտիստի, ոչ էլ նշանաւոր մարդու համար, այդ և աւելի վաստէ ինձ համար։ Հաւանորէն չի եղել, քանի որ կարողացել եմ դառնալ միմիացն Աէն Պլոշովսկի և ուրիշ ոչինչ։

Մի ժամանակ զգում էի, որ եթէ Անեկան իշ կինս դառնար, ոչ միայն կին կամ սիրունի կը լինէր ինձ համար, այլ և բարեկամ։ Բայց աւելի լաւ եմ համարում զրա մասին չը մոտածել։ Այդ տեսակ տեսիլքներ առանց այն էլ չափազանց յաճախ են այցելում ինձ և կարծում եմ, որ մինչև որ այդ տեսիլքները մի անգամ ընդ միշտ չը փախցնեմ ու հեռացնեմ ինձնից՝ երբէք կատարելապէս հանդիպաչմ լինիլ։

## Հ պարիլի։

Այստեղ բաւական յաճախ եմ՝ պատահում տիկին Դևիսի հետ, մինչև անգամ լինում եմ նրա տանը։ Եւ ոչինչ։ Բաւականաչափ ատելութիւն ու մի քիչ արհամարհանք մոխիրի հասա շերտի տակ, — այնուհետեւ սովորական քաղաքավարի յարաբերութիւն։ Նա չափազանց գեղեցիկ է, որպէս զի կարելի լինէր նրան զցել իդիոսինկրաղիաների թիւը։ Սիրել նրան չեմ կարող, իսկ առելու նեղութիւն տալ ինձ չեմ ուզում։ Նա այդ ձեռաց հասկացաւ ու չար-

մարւեց զրութեանը։ Աւելրդք է ասել, որ նրան մի քիչ չարաց-նում է իմ աւելացած ինքնավստահութիւնս, անկախութիւնս, բայց հէնց դրա համար է, որ նա բանի տեղ է զնում ինձ։ Ճիշտ որ՝ զարմանալի է այն հեշտութիւնը, որով կանաչք շատ մօտիկ յարաբերութիւնից շուռ են տալիս դէպի առաջւան հասարակ ծանօթութիւնը։ Ես ու Լառւրան ոչ միայն ուրիշների մօտ ենք մեզ այնպէս համդիպում, իբր թէ մեր մէջ ոչինչ չի եղել, այլ և մինչև անգամ այն ժամանակ երբ որ մենակ ենք լինում։ Դժւարութիւն ամենեին չի զգում։ սիի չի երևում, որ ինքն իրան բռնազբռնված լինի. քաղաքավարի է, չափաւոր քաղցր և այդ տրամադրութիւնը այն աստիճան ինձ էլ է հազորդւում, որ մոքովս էլ չի անցնում օրինակ նրան գիմելիս ուղղակի անունը տալ:

Նրա նէապոլսեցի ազգական Մալեսկին, որ սկզբում ինձ վրայ աչքերը այնքան խիստ էր ոլորում, որ ես պարտաւոր համարեցի ինձ հարցնել, թէ ինչու է աչքերը խարաբ անում, աչժմ տեսնելով, որ մեր յարաբերութիւնները հանգարս ընթացք են սուանում, հանգըստացել է ու բարեկամացել ինձ հետ։ Նա աշտեղ Լառւրայի պատճառով արդէն մի մենամարտութիւն ունիցել է, որի ժամանակ, չը նայելով որ իտալիայում սաստիկ վախկոտ մարդու հռչակ է հանել, շատ կարգին է պահել իրան։ Իեղծ Դևիսը արդէն մի քանի ամիս կը լինի որ գնացել է նիրւանա և, կարծում եմ, սուգը հանելուց յետոյ Լառւրան կը պսակւի Մալեսկիի հետ։ Այդ՝ աշխարհքում ամենազեղեցիկ զոյգը կը լինի։ Այդ իտալացին Անտինոյի իրանն ու գլուխն ունի, ոսկեփայլ կաշին, սև սաթի պէս մազերն ու Միջերկրական ծովի ջրի գոյնն ունեցող աչքերն էլ վրադիր։ Շատ կարելի է Լառւրան նրան սիրում է, բայց ինչ որ ինձ անյացտ պատճառներով երբեմն-երբեմն ակներեւ արհամարհանք է ցոյց տալիս դէպի նա։ Մի քանի անգամ իմ ներկայութեամբ նա այն աստիճան անքաղաքավարի է վարւել նրա հետ, որ զարմանքս բերել է, որովհետեւ ես չէի կարող ենթադրել թէ նրա գեղասէր բնութիւնը ընդունակ է այդպիսի բուռն արտայալստութիւնների։ Ակներեւ է, որ Ասպասիայի հետ միասին նրա մէջ ապրում է և Քսանտիպալան<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Ասպագիա—Պերիկլի կինը, Քսանտիպալա—Սոլլաստի կինը։ Առա-

Նառ անդամ՝ եւմ նկատել, որ միմիայն գեղեցիկ, հոգեւկան արժանաւորութիւններից զուրկ կինը, որին մարդիկ ասող են համարում, յաճախ ասաղից աւելի բան է լինում, եթե կարելի է այսպէս ասել, ամբողջ համաստեղութիւն և մինչև անգամ միաժամանակ երկու համաստեղութիւն՝ շրջապատղների համար Մեծ Արջ, իսկ մարդու համար՝ Խաչ, Հաստատ է, որ Լառուրան Դևիաթ համար Խաչ էր, իսկ Մալեսկիի համար Մեծ Արջ։ Գուցէ նա իմ վերաբերմամբ էլ Արջ լիներ, եթե Պարիզի հասարակութեան մէջ իրան մի քիչ օտար զգալիս չը լինէր և նկատած չը լինէր, որ այստեղ ես նրա համար աւելի ձեռնտու կը լինեմ իրբեւ գաշնակից քան իրբեւ թըշնամի։ Զարմանալի է, նա Պարիզում ինձ աւելի քիչ է դուր գալիս քան Խոալիայումն էր դուր գալիս կամ առհասարակ Միջերկրական ծովի ափերում։ Նա չափից աւելի կլասիկական, չափից աւելի գեղեցիկ է Պարիզի համար, ուր ճաշակը որոշ աստիճանաշափ հիւանդառ ճաշակ է, որ արտայայտում է նոյնակս և գրականութեան ու զեղարւեատի մէջ, և ուր բնորոշ անձունիութիւնը աւելի սաստիկ է բորբոքում բժացած ջղերը քան պարզ զեղեցկութիւնը։ Ամեն մարդ հեշտութեամբ կարող է նկատել, որ կիսաշխարհի ամենահըռչակաւոր աստղերը աւելի անձունի են քան զեղեցիկ։ Պալով Լառուրային, մի ուրիշ պատճառ էլ կայ, որ նա Սէնի ափերում համեմատաբար քիչ յաջողութիւն ունի։ Նրա խելքը ճիշտ է սովորական խելքերիցը չէ, բայց միւս կողմից այստեղի յարաբերութիւնների համար չափազանց շիփշիակ է և մանկաւանդ սաստիկ քիչ ձկուն։ Ակատեղ շատ կան վերին աստիճանի լուրջ ու ընդարձակ մոքի աէր մարդիկ, բայց ընկերական յարաբերութիւնների մէջ անիեղծ ծափահարութիւնների կ'արժանանայ առաւելապէս այնպիսի խելքը, որ կարողանում է կազել կախ ընկնել ամեն մի առարկայից այնպէս, ինչպէս կապիկը պրչովը կախ է ընկնում ծառի ճիւղքից, և զլւկոնձի տալ։ Որքան որ այդ զլիսկոնձիները տարօրինակ, յանկարծական ու անակնկալ լինեն, այնքան աւելի հաւաստի կը լինի յաջողութիւնը։

Ծանօթ. թ.

69

Լառուրան այդ հասկանում է, բայց միւլնոյն ժամանակը զգում է, որ այդ իւր համար նոյնքան անհնարին բան է որքան օրինակ լարի վրայ խաղալը: Ինձ նա աւելի ճարպիկ է համարում այդ մտաւոր մարմնամարզութեան մէջ և դրա համար եմ ես նրան հարկաւոր:

Աշխատելով աւելացնել իւր սալոնի «the attraction»-ը (հրապոյը), նա իւր սալոնը երաժշտութեան օթևան է դարձրել: Խնքը երգում է սիրէնայի պէս և յիրաւի երգելով գրաւում է մարդկանց: Նրա մօտ յաճախ տեսնում եմ դաշնակահար Կլարա Հիլտոնն, որ մի ջահէլ, սիրուն գերմանուհի է և այնպիսի բարձր հասակ ունի, որ այստեղի նկարիչներից մէկը նրան բնորոշել է հետեւեալ խոսքերով՝ «C'est beau, mais c'est deux fois grandeur naturelle!»<sup>1)</sup>. Զը նայելով իւր գերմանական ծագման՝ նա վերջին ժամանակներս այստեղ մեծ յաջողութիւն ունէր: Գալով ինձ, ինչպէս երեւում է ես հին դպրոցին եմ պատկանում, որովհետեւ չեմ կարողանում հասկանալ արդի նւագածութիւնը, որ յենուում է ոչի վերաց՝ այսինքն դաշնամուրի առանձինութիւնը: Վերջին անգամը Լառուրայի մօտ Հիլտոնի ածելը լսելիս ինձ ու ինձ մասածում էի, թէ, եթէ դաշնամուրը մարդ լինէր ու նրա քրոջը հրապուրած լինէր, դժւար թէ նրան աւելի թունդ թակէր: Նա ֆիս-հարմոնիա էլ է ածում: Նրա շարադրութիւնները այստեղի երաժշտական աշխարհում մեծ յաջողութիւն ունեն և խորիմաստ են համարւում, երեւի նրա համար, որ տասերորդ անգամը լսելիս մարդ լինքն իրան ասում է, զուցէ տասնըմէկերորդ անգամին մի բան հասկանամ: Խոստովանուում եմ, որ այսպիսի նկատողութիւններ անելը չարախօսութիւն է իմ կողմից և մինչև անգամ յանդգնութիւն, որովհետեւ ես երաժշտագէտ չեմ: Սակայն մոքումն հարց է ծագում, թէ արգեօք այն երաժշտութիւնը, որի հասկանալու համար պէտք է կոնսերվատորիայի պրոֆեսոր լինել և որ անհատէլի է ոչ միայն անուաշ տպէտներին, այլ և մինչև անգամ զարգացած և որոշ չափով երաժշտական դաստիարակութիւն ստացած մարդկանց,—այն է, ինչ որ պէտք է լինի երաժշտութիւնը: Վախենում եմ՝ երաժիշտները այդ ճա-

<sup>1)</sup> Գեղեցիկ է, բայց կրկնակի բնական մեծութիւն ունի,

նապարհով զնալով մի ժամանակ՝ գիտութիւնն ու դեղեցկութիւնը բացառապէս իրանց համար պահող եգիսպական քուրմերի կաստա կազմեն:

Այդ նրա համար եմ ասում, որ, ինչպէս նկատել եմ, Վագնէրի ժամանակից սկսած երաժշտութիւնը, օրինակ նկարչութեան հետ համեմատելով, ուզզակի հակառակ ճանապարհով է ընթանում: Նորագոյն նկարչութիւնը յօժարակամ ասհմանափակում է իւր ձեռն-հասութեան սահմանները, հետզհետէ հրաժարում է գրականական ու փիլիսոփայական գաղափարներից, — չի ձգտում սպառկերացնել մեկնութիւնների կարօտ սպատմական ճառախօսութիւններ, քարոզ-ներ, դէսքեր, մինչև անդամ այնպիսի այլաբանութիւններ, որոնք առաջին հայեացքից իրանք իրանց չեն պարզաբանում, մի խօսքով՝ բոլորովին գիտակցաբար սահմանափակում է ձեւերի ու գու-նաւոր բծերի վերաբարդութեամբ: Երաժշտութիւնը Վագնէրի ժա-մանակից սկսած բոլորովին հակառակն է անում, — ճիգ է թափում լինել ոչ միայն հնչիւնների ներբաշնակութիւն, այլ և այդ ներ-դաշնակութեան փիլիսոփայութիւն: Իմ կարծիքով, շուտով երեան կը գայ մի որ և է երաժշտական մեծ հանճար, որ կ'ասի, ինչպէս մի ժամանակ ասաց Հեգէլը, — «Միայն մէկն էր ինձ հասկանում ու նա էլ ինձ չը հասկացաւ»:

Հիւստը երաժշտութեան մէջ փիլիսոփայութիւն անողներիցն է, որ շատ զարմանալի է, ևս առաւել, որ նրա հողին լի է պարզու-թեամբ: Այդ կարիստական երեխացի ջինջ ու միամիտ աչքեր ունի և երեխացի պէս անկեղծ է ու բարի:

Շատերն են այստեղ փարւան գալիս նրա շուրջը, — նրանց գրա-ւում է թէ նրա գեղեցկութիւնը, թէ այն լուսապսակը, որ շրջա-պատում է ամեն մի կնոջ, որի գլխի վրայ հանդիսաւ է առել գե-ղարւեստի ձեռքը, և սակայն երբէք ամենաչնչին բիծ անգամ չի արատաւորիլ նրա անունը: Կանացք անգամ նրա մասին լաւ են խօսում, — նա նրանց զինաթափ է արել իւր արտասովոր բարու-թեամբ ու ուրախութեամբ: Նա չարաձնի երեխացի նման ուրախ է, — շատ եմ տեսել նրան այնպէս ծիծաղելիս ինչպէս ծիծաղում են փակ դպրոցի աշակերտուհիները — մինչև աչքերից արտասովք գալը, որ կը գալիքակղեցնէր հասարակութեանը, եթէ որ ամեն բան նե-

բելի չը համարւէր նրան իբրև արտիստի: Նա որ, երաժշտական տաղանդը չը հաշւած, գուցէ ոչ շառ հարուստ օժտւած, բայց հիանալի բարոյական տիպ է: Լառւրան, որ խակապէս նրան չի սիրում, մի քանի անգամ ինձ հասկացրել է, թէ «Կարիստիգան» սիրահարւած է ինձ վրայ: Ոմ կարծիքով այդ միշտ չէ, թէ եւ այդպէս կարող էր լինել եթէ որ աշխատէի: Հաստատ է, որ կլորան ինձ շատ է սիրում և որ հէնց առաջին անգամ ողառահելիս համակրութիւն զգաց գէպի ինձ: Ես նրան վերադարձնում եմ փոխարաձը, սակայն միաք չունիմ ոտնձգութիւններ անել նրան կորուստի մատնելու համար: Երբ որ մի որ և է ինոց առաջին անգամ եմ տեսնում, առաջւան սովորութիւններիս շնորհիւ նայում եմ նրա վրայ իբրև ասպազայում հնարաւոր որսի վրայ, բայց այդ աւելի ըեֆլէքսներ են քան դիտակցական մոռքեր: Հետեւեալ մոտածմոնքս արգէն բոլորովին ուրիշ է լինում: Ընդհանրապէս այնպիսի զգացմոնք է մնացել մէջս գէպի կանացք, ինչպիսի զգացմոնք որ կարող է ունենալ առևտուրից հեռացած ոսկերիչը գէպի թանկագին ակոնքները: Մի որ և է թանկագին քար տեսնելիս ինձ ու ինձ ասում եմ, — արմէ ջանք գործ զնել զրա համար, բայց յետոյ միշում եմ, որ խանութս փակել եմ, ու ճանապարհս շարունակում եմ:

Չը նայելով զրան մի օր սկսեցի կէս-կատակով համոզել նրան, որ ես էլ հետը կը զնամ իբրև պատւառոր օմքարտուրուութիւն: Չեմ կարող ասել թէ այդպիսի մի ճանապարհորդութիւն, եթէ երբ և իցէ պլուս գալու լինի, ինձ համար ոչ մի հրապոյք չի ներկայացնում:

Հայրենիք խակապէս գնալու եմ: Հօրաքոյրս Վարշաւայի իւր առունը տւել է ինձ ու կանչում է, որ զնամ սեփականութեան իրաւունքս հաստատեմ: Ասենք առանց այն էլ միշտ ձիարշաների ժամանակ գնում եմ Վարշաւա: Ով կարող է կարծել, թէ հօրաքոյրս, որ այնքան լուրջ կին է և իրան նւիրած տնտեսութեան, աղօթքների ու բարեգործութեան, մի աշխարհային թուլութիւն ունի— ձիարշաւային սպորտը: Այդ նրա մոլորութիւնն է: Նատ կարելի է ժառանգական ասպետական բնազդումները, որ կանացք էլ նոյնքան լաւ են ժառանգում որքան տղամարդիկ, նրա մէջ այդպիսի ելք են գտնել: Մեր ձիանքը Աստծոն է յայտնի թէ քանի տարի է որ արշաւում են և միշտ յետ են մնում: Հօրաքոյրս ոչ մի ճիարշաւ բաց

չի թողնում, կրակ է կտրում. մեր ձիերի արշաւելու ժամանակ նոռ բարձրանում կանգնում է կառքի յետեի նասարանի վրաց՝ կոթնած ձեռնափայտի վրայ ու զիսարկը՝ կողմնակի դրած, իսկ յետոց բարկ ութիւնից կատաղում է ու մի քանի ամիս շարունակ պան Խւաստովսկու միսն ուտում է: Այժմ կարծեմ մի ինչ որ նշանաւոր ձի է մեծացրել և կանչում է ինձ աենաւու իւր մեր ու գեղին նժոյցի յաղթանակը: Կ'երթամ:

Կ'երթամ նոյնպէս և շատ ուրիշ պատճառներով: Արդէն ասել եմ, որ համեմատաբար հանգիստ եմ, ոչնչի փափաղ չեմ զգում, ոչինչ չեմ ակնկալում և ոյժիս զօրածի շափ սահմանափակում եմ սելիական «ես»-ս, մի խօսքով հաշուռում եմ մի տեսակ հոգեկան անդամալուծութեան հետ, որից յետոյ կը գայ ֆիզիկականը ու կը տանի ինձ ինչպէս տարաւ հօրս: Բայց եմ կարողացել մոռանալ, թէ ինչի շնորհիւ է որ իմ անդամալուծութիւնս ոչ կատարեալ է, ոչ ել լիովին: Այն մի հատիկ էակը, որին կեանքումս սիրել եմ, այժմ իմ մէջ բաժանւել է երկուսի: Նրանցից մէկը կոչում է պանի Կրոմիցկա, միւսը՝ Անելիկա: Պանի Կրոմիցկայի համար ես օտար մարդ եմ, նա ինձ անտարբերութեամբ է վերաբերում, բայց Անելիկան այցելում է ինձ ու ընծայ է բերում ինձ գիտակցութիւն, որ մեզաւոր եմ, որ յիմար եմ վարւել, գիտակցութիւն՝ հոգեկան անվօրութեան, վշտի, դառնութեան, հիասթափութեան ու կորուստի: Առատաձեռն ու բարերար ողի: Խսկապէս լաւ կը զգայի ինքս ինձ միայն այն ժամանակ, եթէ կարէին հանէին զլիսիս միջիցը ուղեղիս այն ծալքը, որ յիշողութեանս բունն է: Ի հարկէ այսպէս էլ կարելի է ապրել, բայց այսպիսի կեանքը անտանելի ծանր է, որովհետեւ մարդս շարունակ գիտակցում է, որ ինքը անանիւ կառք է: Ամեն անգամ աշխատում եմ զլիսիցս զուրս քշել այն միտքը, թէ ինչ կը լինէր, եթէ որ բանը ուրիշ ընթացք ստացած լինէր, — բայց այդ ինձ միշտ չի յաջողում: Իմ առատաձեռն ու բարերար հրեշտակը վերադառնում է ու նորից թափ տալիս զլիսիս առատութեան եղջերը: Երբեմն երբեմն ինձ թւում է, թէ պանի Կրոմիցկան կը ապանի իմ մէջ Անելիկային և դրա համար ուղում եմ գնալ, նայել նրա բախտաւորութեանը, նրա կննցազավարութեանը և այն բոլոր անհրաժեշտ փոփոխութիւններին, որոնք անշուշտ պէտք է կատարւած լի-

նեն նրա մէջ ու դարձրած նրան Անելկայից բոլորովին տարբեր մարդք Շատ կարելի է պանի Կրոմիցկային հենց Պլշչովումը տեսնեմ։ Անկարելի է որ տաս ամսւան անջատումից յետոյ հիւտնդ մօրը տեսութեան չը դայ:

Կարծում եմ, որ այդ բանում ես ինքս ինձ չեմ խաբում, անհիմն յոյսով չեմ գրաւեռում, և որ «ceci tuerat cela»։ Յոյս զլիսաւրապէս ջղերիս վրայ է, որոնց ամեն մի չնչին բան վիրաւորում է։ Յիշում եմ, որ Անելկայի հետ նոր ծանօթացած ժամանակս, երբ որ նրա հրապոյըները սկսում էին անդիմադրելի ոյժով թովել ինձ, միմիայն այն միաքը, թէ մի որ և է Կրոմիցկի մօտեցել է նրան, յետ էր մղում ինձ նրանից ու նրան աչքից քցում։ Հապա ինչ կը լինի այժմ, երբ որ նա մի որ և է Կրոմիցկու կինն է, երբ որ նա կրում է իւր մէջ նրան պատկանելու զիտակցութիւնը և երբ նրա հողին ու մարմինն է։ Դրեթէ հաստատապէս կարող եմ ասել, որ նա ինձ ամեն մի քայլափոխում կը վիրաւորի, յետ կը մղի իրանից և որ «ceci tuerat cela»։

Եւ վերջապէս թէկուզ այդ էլ չը լինի։ Ուրիշ կերպ որ լինի, ի՞նչ եմ կորցնելու։ Օգտել չեմ ցանկանում, բայց եթէ մինչեւ անգամ հանգամանկները այնպիսի ընթացք ստանան, որ ապացուցեի թէ մեղքը միայն իմն չէ, թէ ես չեմ միայն պատասխանառու եղածի համար և թէ բեռը պէտք է երկու հոգու շալակին զնել, — գուցէ այդ ինձ մի քիչ գոհութիւն պատճառի Ասում եմ՝ գուցէ, որովհետեւ չեմ կարող երաշխաւոր լինել։ Որ և է վրէժինդրութիւն մոքովս անդամ չի անց կինում։ Խարւած սիրողները միայն բեմի վրայ են վրէժինդիր լինում։ Իրական կեանքում՝ ահաճութեամբ երեսները շուռ են տալիս ու դրանով բանը վերջանում է։ Այժմեան պանի Կրոմիցկային ապացուցանելու համար, որ վատ վարւեց արհամարհերով իմ զղջումն, նախ և առաջ ես ինքս պէտք է անցողողդ կերպով հաւատացած լինէի, որ նա վատ է վարել, մինչդեռ լինում են բոլիներ, երբ՝ ես իմ Աստւածը՝ ոչ մի բանում հաւատացած չեմ լինում։

5 ապրիլի.

**Արդէն հաստատ դիտեմ,** որ պանի Կրոմիցկային կը տեսնեմ։ Հօրաքոյրս դրում է, որ նրա մարդը նրանց Վոլինի կալւածը ծա-

խել է, իսկ ինքը իւր շահաղիտական գործերով զնացել է հեռաւոր արևելեան երկիրը, այնպէս որ Անելկացին ոչինչ չէր մնում՝ անել, բայց եթէ վերադառնալ Պլոշով մօր մօտ Այդ լուրը առաջին րոպէում լնդունեցի, եթէ ոչ անտարբեր սրտով, յամենայն դէպս կատարեալ ներքին հաւասարակշութեամբ, սակայն նկատում եմ, որ ատայած ապաւորութիւնս զնալով աւելի ու աւելի սաստկանում է մէջս: Ասենք այդ իմ՝ հոգեկան կազմակերպութեան առանձնացառկութիւնն է: Այժմ արդէն էլ չեմ կարողանում ոչ մի ուրիշ բանի մասին մոտածել. այդ դէպսը չափից վեր կարևոր նշանակութիւն ունի Անելկացի ու նրա մօր համար: Կրոմիցկին հարսանիքից տաս ամիս անցած ծախել է այն աննման կալւածը, որին Անելկացի ոգագերը չորս հարիւր տարի տիրութիւն են արել և որին սլանի Յելինան նւիրել է իւր ամբողջ կեանքը, որպէս զի ձեռքիցը չը գնայ: Իսկ այդ պան Կրոմիցկին եկել է ու հեշտ ու հանգիստ ծախել միմիացն այն պատճառով, որ նրա համար լաւ զին են աւել և այդ նրան միջոց է աւել ապահովեցնել իւր առեւտրական գործերի յաջողութիւնը:

Ընդունում եմ, որ նա կարող է այդ փողերով միլլոններ վաստակել, բայց այդ ինչ սարսափելի հարւած է խեղճ կանանց համար և ինչ պէտք է մոտածեն նրանք նրա մասին: Հօրաքոյրս դրում է ինձ, որ ինքը այժմ նստած է պանի Յելինացի մահճի մօտ, ուի հիւանդութիւնը այդ լուրը ստանալուց յետոյ կրկնակի սաստկացել է: Տոլորովին հաւատացած եմ, որ Անելկան մարդու անունով ծախելու լիազօրութիւնը ստորագրելիս չի իմացել թէ ինչ է անում: Սակայն ուրիշների առաջ նրան սլաշտապանում է. հօրաքոյրս նամակումը մէջ է բերում նրա հետեւեալ խօսքերը,— «Անբախտութիւն պատահեց, բայց անխուսափելի անբախտութիւն, որի համար Կարոլին չի կարելի մեղաղերել»: Պաշտպանիր նրան, պաշտպանիր, հաւատարիմ, աննենդ ամուսին. սակայն չես կարող արգելել ինձ մոտածել, որ նա քեզ կրկնակի է վիրաւորել և որ անշուշտ սրախիլ խորքումը ամենաաջերմ կերպով արհամարհելիս պէտք է լինես նրան: Նրա զրկախտանութիւններն չեն կարող ջնջել քո յիշողութիւնից այդ մի խօսքը — «ծախսեց»: Իսկ սլանի Յելինան, նրա հովանաւորողը, որ կարծում էր, թէ նրա առաջին գործը

Հարսանիքից յետոյ այն կը լինի, որ իւր միլիոնների օգնութեամբ  
Անելկացի կալւածը պարտքերից կ'ազատի... Ես, յարգելի տիկիններ,  
որ «Քաղաքացիական» Փրազներով ոչ ոքի չեմ աշխատում շլացնել,  
այդպէս չեմ վարւիլ, եթէ ոչ ռւրիշ պատճառներով, գոնէ, նրբա-  
զգայութիւնիցո, գոնէ ձեր սիրուն, գոնէ ձեր սիրով չը խոցելու  
համար: Բայց շահագիտական գործերի համար հարկաւոր է առձեւն  
գումար և պինդ թիկունք: Ձեմ ուզում մարգարէութիւն անել,  
բայց երբեմն-երբեմն այդ միլիոնները ինձ հարցական նշան են  
թւում: Եսա կարելի է Կրոմիցկին այսուհետեւ տիրանաց միլիոն-  
ների, շատ կարելի է կալւածի ծախելուց ստացած փողը նազատի  
այդ բանին, բայց եթէ առաջուց նա միլիոնների տէր լիներ, այդ-  
պէս խորը չեր խոցիլ կնոջ սիրաը ու չեր զրիլ նրան պապենական  
յարկից: Հօրաքոյրս գրում է, որ ծախելուն պէս ճանապարհ է ընկել  
դէպի նաքու, որտեղից յետոյ պէտք է գնայ Թուրքեստան: Անել-  
կան այնքան ջահել է, որ չի կարող մենակ ապրել ուստի մարդու-  
բացակայութեան ժամանակ մօր հետ պէտք է կենայ, իսկ մաշըը  
մնում է Պլոշովում՝ մէկ այն պատճառով, որ հիւանդ լինելով տե-  
ղից շարժւել չի կարող, երկրորդը՝ որ հօրաքոյրս նրան չի թող-  
նում գնայ, իսկ նա չի ուզում, որ հօրաքոյրս նեղանայ իրանից:  
Անելկացին շատ լաւ եմ ճանաչում, այնպէս որ չեմ կարող կասկած  
տանել թէ այդ բանում կարող էին զեր խաղալ որ և է նիւթա-  
կան հաշիւներ: Նրա պէս անշահասէր մարդ դժւար կարող է գտնել  
աշխարհքում: Բայց մայրը, որ, եթէ կարողանայ, ամբողջ աշխարհը  
կը զավթի իւր մի հատիկ աղջկաց համար, անշուշտ յոյս ունի, որ  
հօրաքոյրս կտակումը չի մոռանալ: Ասենք իրաւունք ունի յուսա-  
լու: Հօրաքոյրս, որ երբէք շատ էլ հաւատ չի ընծայել Կրոմիցկու  
միլիոններին, մի քանի անզամ ակնարկութիւն է արել ինձ զրա-  
մասին՝ անհանգստութեամբ ու գրեթէ խոնարհութեամբ, որովհետեւ  
նրա կարծիքով իւր բոլոր ունեցած-չունեցածը պատկանում է Պլո-  
շովսկիներին, այնպէս որ վախենում է, թէ մի զուցէ նրա զիստա-  
ւորութիւնը ես անիրաւութիւն համարեմ դէպի մեր տօհմը: Որ-  
քան քիչ է ճանաչում նա ինձ: Եթէ որ հէնց այսօր Անելկան  
առանց ոտնամանի մնար ու մի զոյգ ոտնամանի համար ուզեին  
Պլոշովը բոլոր ունեցած-չունեցածովս միասին—բոլորը կը տային

Շատ կարելի է այդ վարժունքիս շարժառիթը ինձ Կրոմիցկուն հա-  
կաղրելու չարամիտ ցանկութիւնը լինէր, բայց անշուշտ կը տայի:

Սակայն այժմ բանը գրանումը չէ: Անդադար միոքս զբաղւած  
է նրանով, որ Անելիկան ու մայրը այժմ՝ Պլոշովումն են կենում և  
կը մնան այնաեղ այնքան ժամանակ, որքան որ Կրոմիցկու ճանա-  
պարհորդութիւնը կը տեսի, այսինքն Աստծուն է յայտնի թէ որքան  
ժամանակ: Ամեն օր պէտք է տեսնեմ պանի Կրոմիցկային... Այդոր  
անցնում է մոքովս, վրաս մի տեսակ անհանդսութիւն է զալիս,  
որի մ.ջ համ հետաքրքրութիւն կայ, թէ ինչպէս կը յարդարւեն մեր  
յարաքերութիւնները, համ էլ երեւակացումն զանազան զէպքերի,  
որոնք կը կարողանային տեղի ունենալ, եթէ որ գէպի նա ուրիշ  
կերպ արամադրւած լինէի և ուրիշ զգացմունք տածէի: Ես երբեք  
ինքս ինձ չեմ խաբում: մէկ էլ եմ կրկնում, որ գնում եմ բժշկե-  
լու, որ պանի Կրոմիցկային չեմ սիրում՝ ոչ էլ կը սիրեմ, որ ընդ-  
հակառակը յոյս ունիմ, որ նա ինքը ամեն տեսակ ֆիորդ ու գէ-  
զերներից հազար անգամ լաւ դուրս կը քշի սրախցս առաջւան Անել-  
կային. բայց Էջոն Պլոշովային չէի լինի, շատ ապրած ու շատ մտա-  
ծած մարդ չէի լինի, եթէ որ չը տեսնէի այն վտանգները, որ ուրիշ  
պայմաններում կարող էր յառաջացնել ացդպիսի մի զբութիւն:

Բանը նրանումն է, որ եթէ սիրոս ուզէր վրէժ հանել, եթէ  
որ հէնց միմիայն «աղանի Կրոմիցկա» անունը այնքան զգւելի չը լինէր  
ինձ համար որքան որ է, ինչ կարող էր ինձ արգելք լինել ի՞նչ  
կարող էր ի՞մ ձեռքը բռնել: Մի բան որ այդ խաղաղ, քաղաքից  
հեռու Պլոշովում միայն մենք երկուս էինք լինելու և մեր երկու  
պատաւները, որոնք իրանց անարատ առաքինութեամբ երեխայի  
պէս միամիտ են: Այդ կողմից հօրաքրոջս ու պանի Յելինային շատ լաւ  
եմ ճանաչում: Մեր հասարակութեան բարձր շրջաններում յաճախ  
կարելի է պատահել հիմնութիւն վհացած կանանց, բայց միւս կողմից  
մանաւանդ հին սերնդին պատկանողների մէջ կան և այնպիսիները,  
որոնք իրանց կեանքը անց են կացնում, պարզ կերպով որ ասելու  
լինենք, հրեշտակների նման, առանց երբ և իցէ իրանց մաքերը  
չարի գաղափարով պղծելու: Հօրաքրոջս կամ պանի Յելինայի նման  
կանանց մոքովն անգամ չի կարող անցնել, թէ Անելիային կարող է  
որ և է վտանդ սպասնալ, քանի որ մարդու է գնացել: Անելիկան

ինքն էլ այդ տեսակ կանանցից է: Նա իմ վերջին խնդիրքս չեր մերժիլ, եթէ որ Կրոմիցկուն արդէն խօսք տւած չը լինէր: Այդ տեսակ լինուհիները զերաղասելի են համարում իրանց սիրով կոտրել քան տւած խօսքը: Դրա մասին, որ միաք եմ անում զայրովիս գալիս է: Ես խեղդում եմ սրտումն արդար լինելս ապացուցանելու պահանջը, պահանջ, որ հասկացնէր այդ տեսակ կանանց, թէ անպատճիք կերպով չի կարելի ունակուի անել բնութեան օրէնքները, թէ այդ օրէնքները աւելի զօրեղ են քան բարոյականութեան արւեստական դօկտրինաները, թէ այդ տեսակ վարմունքները իրանք իրանց վրէժը հանում են մարդուց, ես շատ ու շատ բախտաւոր կը զգացի ինձ ձիշտ է, որ Անելկացի զէմ սա տիկ մեղանչեցի, բացց յետոյ ի սրտէ ուզում էի արածս ուզգել և նա գիտէր այդ ու այնուամենայնիւ մերժեց ինձ... Մերժեց երեխ նրա համար, որ կարողանար ինքն իրան ասել, — «Ես Լէօն Պլոշովսկին չեմ. խօսք որ տւել եմ՝ պէտք է պահեմ»: Այդ առաքինութիւն չէ, այլ չորսութիւն. այդ հերոսութիւն չէ, այլ միայն ցիմարութիւն. այդ խղճի ազնւութիւն չէ, այլ խղճի մնափառութիւն: Չեմ կարողանում չեմ կարողանում մոռանալ...

Բայց ինքը պանի Կրոմիցկան կ'օգնի ինձ այդ բանում: Երբ որ տեսնեմ իւր արած հերոսութիւնից զո՞ն, սառը, հետաքրքրութեամբ զիտող, թէ արդեօք ինձ ձնշող դարդը պէտք եղածի չափ է ձնշում, մարդու վրայ սիրահարւած կամ, եթէ ոչ սիրահարւած, զո՞նէ այդ պէս ձեւացող պանի Կրոմիցկային, — այն ժամանակ այդ առաքինի և երջանկութիւնից ու իւր առաքինութիւնից կուշո ամուսինը այն աստիճան զզւելի կը դառնայ ինձ համար, որ գուցէ նորից զնամ հիւսիսացին եղջերուների հայրենիքը: Բայց այն ժամանակ այլ ևս Անելկացի լիշտառակը չի թռչիլ իմ յետելից այնպէս ինչպէս ամարը (ռաւկա) ճախրում է նաւի յետելից:

Նատ կտրելի է՝ պանի Կրոմիցկան իմ տռջեւ մի քիչ իմ անսրութեան զո՞նի զեր խաղայ և առհասարակ իւր վարմունքով քիչ թէ շատ պարզ կերպով ինձ ուզենայ հասկացնել թէ՝ «Անելքը քննն է»: Նատ բարի: Այդպիսի բաներ էլ եմ տեսել կեանքումն: Խնչպէս որ արւեստական ծաղիկներն այն պակասութիւնն ունեն որ անհոռ են, այնպէս էլ արւեստական փշեաց պսակներն այն արժանաւորու-

թիւնն ունեն որ չեն ծակծկում, այնպէս որ շատերը այդ տեսակ պսակներ ուրախութեամբ են կրում զլիներին՝ իրեւ սաղ եկող գըլ-լսարիք: Որքան որ այդպիսի զոհերի եմ պատահել, որոնք իբր թէ յուսահատութիւնից են մարդու գնացել, սրտումս ցանկութիւն է ծագել նրանց ասելու՝ «Սուտ ես ասում, գուցէ և զոհ ես եղել կամ զոնէ անկեղծ հաւատացած ես եղել, թէ զոհ ես, մինչեւ այն ժամանակ, երբ որ նա, այն քո ընտրածը, առաջին անգամ մօտեցել է քեզ զիշերւան հողաթափները հաղած: Այդ բովէից սկսած դու այլ ես կարեշարժ չես, այլ միայն ծիծաղելի ու գուեհկահոգի և նոյնքան աւելի ծիծաղելի ու գուեհկահոգի որքան աւելի որ զոհ ես ձևանում:

## 6 ապրիլի:

**Ի**նչ հիանալի ու խելօք խօսք է յունարէն «Ananke»-ն (ճակատագիր): Առաջուց ճակատիս գրւած է եղել, որ ես այդ կնոջ պատճառով հանգիստ չեմ գտնելու՝ մինչեւ անգամ և այն ժամանակ, երբ որ նրա վրայ այլ ևս ուշագրութիւն դարձնելիս չը մնեմ: Կալւածի ծախսելու ու նրա Պլոշով գալու մասին մոտածմունքս շատ սաստիկ յուղեց ինձ: Գիշերը շատ վատ քննեցի. հազար ու մի հարցեր էին խոնացում զլիսում: Ու պատասխան սպահան չում: Աշխատում էի լուծել այգալիսի մի խնդիր, թէ օրինակ իրաւունք ունեմ արդիօք շեղել պանի Կրոմիցկային պարտականութեան ուղիղ շաւզից թէ ոչ: Ոչ ցանկութիւն ունեմ այդ անելու, ոչ էլ կ'անեմ: Որովհետեւ պանի Կրոմիցկան ինձ չի գրաւում, բայց արդեօք իրաւունք ունեմ: Կեանքս լցնում եմ այգալիսի «Եօ Եօ որ ոտտօե»-ներով, որովհետեւ ուրիշ ոչ մի այնպիսի բան չը կայ, որով ես կարողանացի առվրել: Ասենք այգալիսի խորհրդածութիւնները աշխարհիս ամենաբարձր գւարճութիւնների թւին չեն պատկանում, որովհետեւ մարդս այգալիսի մոքերով զբաղւած ժամանակը մեծ մասամբ նման է լինում իւր սեփական սուսը բռնել ցանկացող շանը,—ձեռքս ոչինչ չի լնենում, ոչինչ չեմ ապացուցանում ու չարչարւում եմ: Բայց ինքս ինձ միսիթարում եմ նրանով, որ մի օր էլ կամ մի զիշեր էլ անցաւ: Բայց այդ նկատեցի, որ չը նացելով իմ ծացրացեղ սկեպտիկականութեանս այնպիսի մանրակրկիա, նախապաշարւած

լողմանք եմ ունեցել, որ իսկապէս սազ կը գար Պլոշովի տէրաէրին: Նորաւուրց մարդս այնքան շատ թեկրից է հիւսւած, որ ինքն իրան արձակել ուղելիս ևս առևլի է իսմաւում: Զուր էի գիշերս ինքս ինձ կրինում, թէ այդ բոլորը ի հարկէ զուտ թէօրիական դատապութիւններ են, բայց իրաւունք ունեմ այդպէս վարւելու: Եկեղեցու գաւթից ինչ որ մի ձայն անընդհատ ասում էր ինձ,—Շ, ՞Շ, ՞Շ: Սակայն պէտք է խղճմաննքիս սահմար քաշեմ, որովհետեւ դրանից է կախւած իմ հոգեկան հաւասարակշութիւնը: Այժմ, երեկոյեան այնպիսի արամադրութեան մէջ եմ, որ կարող եմ ացդ անել: Այսօր կէս օրից յետոյ մի ծանօթ նկարչի մօտ էի, այնտեղ էր նոյնազէս և տիկին Դևիսը, որ մի ժամանակ սկսեց երկու ֆրանսիացի գրողների ապացուցանել, թէ կանացք պէտք է իրանց ամբողջ կեանքի ընթացքում անմատչելի մնան, թէկուզ միայն «pour la netteté du plumage» (իրանց վետուրների մաքրութեան համար): Սալեսկին կրկնում էր՝ «Oui! oui!... du plumage», իսկ ինձ թւում էր, թէ Միջնորդական ծովի բոլոր խեցեամինները պէտք է շուր եկած լինեն մէջքների վրայ ու չափերը ցցած դէպի վեր ինդղելով ջեսին, որ կայծակ թափի տիկին Դևիսի զլսին: Ի դէպ ասել, Դևիսը այդ գարձւածքը ինձնից է սովորել, իսկ ես՝ Feuillet-ից: Սակայն ես ինձ բոլորովին լուրջ պահեցի, չը ժպտացի անգամ, բայց մի տեսակ ուրախ ու ցինիկական արամադրութիւն եկաւ վրաս, որի ցոլքը գեռ մինչեւ այժմ էլ մնում է մէջս և որ ամենալաւ զրահն է խղճմաննքի նախապաշարմոնների դէմ:

Բայց շարունակենք: Արգեօք իրաւունք ունեմ սիրահարացնել ինձ վրայ պանի Վրումիցկային ու սիրահարեցներուց յետոյ խոտորեցնել նրան պարտականութեան ճանապարհոց: Դախ և առաջ, քննում եմ այդ հարցը պատուի տեսակէտից, այդ բաւի այն իմաստով, որով առհասարակ գործ են ածում այն մարդիկ, որոնք իրանք իրանց ջենալմէն են համարում և որոնց ամբողջ աշխարհը այդպիսի մարդ է համարում: Այդ տեսակէտից ոչ մի պրակ չի կարելի գտնել, որ ինձ արգելեր այդպէս վարւել: Ի դէպ՝ առաջին հայեացքից այնպէս է թւում թէ գծւար թէ աշխարհքիս երեսին երբ և իցէ զոյսութիւն ունեցած լինի պատուի կողեքսից աւելի տարօրինակ օրէնսդիրք: Եթէ ես մէկից վող զողանաշ, պատուի մասին ջենալ-

մենների ունեցած գաղափարների համաձայն, արտառը ինձ վրայ կ'ընկնի, որովհետեւ ես եմ գողը, իսկ գողացւած բանը անարաս կը մնայ, բայց եթէ մէկի կնոջը գողանամ, ես՝ գողս մաքուր գուրս կը գամ, իսկ արատը կ'ընկնի գողացւածի վրայ. Ի՞նչ է այդ: Բարոյական զգացմունքի խեղաթթիւրումն է այդ, թէ գուցէ քսակը գողանալու ու կնոջը գողանալու մէջ այն աստիճան մեծ տարրերութիւն կայ, որ այդ երկու վարմունքը մինչև անգամ չի կարելի իրար հետ համեմատել: Նաև անգամ եմ զբաղւել այդ հարցով և վերջ ի վերջոյ եկել եմ այն համոզմունքին, որ քսակ գողանալն ու կնոջը գողանալը միենոյն բանը չեն: Մարդկային էակը չի կարող այնպիսի սեփականութիւն լինել ինչպէս անշունչ առարկան: — կնոջ գողանալը երկիող հանի կարգի գործողութիւն է: Խնչու պէտք է ես ճանաչեմ որ և է կնոջ մարդու իրաւունքները, երբ որ ինքը կինը չի ուզում ճանաչել այդ իրաւունքները: Իմ ինչ հոգս է նրա մարդը: Ես տեսնում եմ մի էակ, որ ուզում է իմա լինել և վերցնում եմ նրան: Նրա մարդը ինձ համար գոյութիւն չունի, նրա առած երդումների հետ ես գործ չունեմ: Ուրեմն էլ ինչ պէտք է ինձ զսպի, — մի գուցէ յարգմնքը դէպի ամուսնական հաստատութիւնը (ИИСТИТУТЬ): Բայց եթէ սիրէի, եթէ կարողանացի սիրել պանի Վրոմիցկային, հոգուս խորքիցը կ'աղաղակէի, — բողոքում եմ նրա ամուսնութեան դէմ, բողոքում եմ այն պարտականութիւնների դէմ, որ ունի նա դէպի Վրոմիցկին: Ինձ այդ ամուսնութիւնը ունասակ է տել, ու տրորում է իրբւ որդնի, ես գալարւում եմ զգացած ցաւից, և երբոր վերջին շունչս տալու բոպէին ուզում եմ խաչմել ինձ տրորող գարշապարը, գուրս են զալիս մարգիկ, որոնք հրամայում են ինձ յարգել նրան: Խնչի համար, ինչնուած Խնչիս պէտքն է այնպիսի հասարակական կազմակերպութիւնը, որ ծծում հանում է մէջս եղած բոլոր արիւնը, որ մեռցնում է սրատում ասպեկու որևէ է յօժարութիւն: Ի հարկէ բնութեան օրէնքն է, որ մարդիկ ձկան միս են ուտում, բայց կարող էք հրամայել յարգել այդ կարգը խեղճ ձկան, որին ողջ ողջ քերթում են ու յետոյ պղնձում խաշում: Բողոքում եմ ու խաչթում, ահա ի՞մ պատասխանը: Ապենա սերի՝ կատարելապէս զարդացած մարդու իդէալը, որի մէջ անհատական ձգտումները բոլորովին ներդաշնակում են հասարակայան

կազմակերպութեանը, միմիայն ողոստուլաւ է: Գիտեմ, շատ լաւ գիտեմ, որ մի որ և է Սնեառինսկի կը կապէր ինձ մի հատիկ հարց տալով—«Ուրեմն ազատ սիրոյ կուսակից ես»: Զէ, ես ազատ սիրոյ սպաշտան չեմ: Ես միայն ինձ եմ պաշտպանում: I am for my self! վերջապէս գլուխը քարը ձեր բոլոր թէօրիաները: Եթէ դու սիրահարւես մի ուրիշ կնոջ վրայ կամ քո կինը մի ուրիշ մարդու վրայ, տեսնենք ինչ պէտք է կարողանան անել ձեր պատւիրաններն ու հասարակական կազմակերպութիւնը յարգել հրամայող պրակները: Ամենավատ գէպքում՝ այդ իմ կողմից անհետւամտութիւն է: Նոյնքան անհետւամտութիւն, ինքնահակասութիւն էր իմ կողմից և այն ժամանակ, երբ որ ես, սկեպտիկս, պատարագ անել տւեցի Աէօնի ու Անելկայի համար և երբ ազօթում էի երեխացի պէս ու արտասուքս կուլ տալիս՝ տիւմարի պէս: Այսուհետեւ ինքս ինձ խոստանում եմ անհետւամիտ լինել ամեն անգամ, երբ ինձ այդ յարմար լինի, երբ յոյս ունենամ որ այգապէս վարելուց յետոյ ինքս ինձ աւելի լաւ, աւելի բախտաւոր կը զգամ: Աշխարհիս երեսին միմիայն մի տրամաբանութիւն կայ—կրքի տրամաբանութիւն: Բանականութիւնը միայն առժամանակ նախազգուշացնում է, իսկ յետոյ, երբ որ ձիանքը սկսում են իրանց կտրատել ու անկարելի է լինում զայել, նստում է կառապանի տեղը ու աշխատում է միայն, որ կառքը ջարդ ու փշուր չը լինի: Մարդու սիրու չի կարող ինքն իրան ապահովեցնել սէրից, իսկ սէրը տարը է այնպէս՝ ինչպէս ջուրը, օղը, կրակը. սէրը այնպիսի ոյժ է ինչպէս ծովի մակընթացութիւնն ու տեղատութիւնը: Մարդուն սիրող կնոջը բեհեղզերուդն էլ չի կարող յաղթահարել, որովհետեւ նրա ամուսնական երդումը սիրոյ նւիրագործումն է միայն, բաց երբոր մարդ ու կնոջ մէջ պարտաւորութիւնից զատ ուրիշ ոչինչ չը կայ, առաջին պատահած կարգին մակընթացութիւնը դուրս կը շպրտի նրանց՝ սառկած ձիների պէս աւազի վրայ: Ես չեմ կարող պարտաւորութիւն վերցնել ինձ վրայ, թէ չեմ ծերանալ կամ թէ միրուքս չի աճիլ և եթէ պարտաւորեմ՝ կենսական օրէնքները ունատակ կը տան թէ ինձ և թէ իմ պարտաւորութիւնները:

Զարմանալի բան է. այս բոլորը, որ գրում եմ, ինչպէս արգէն ասել եմ, զուտ թէօրիա է. ոչ մի այնպիսի դիտաւորութիւն չու-

նեմ, որը հարկ զգացի ինքս իմ առջև արդարացնել, և սակայն ազգական մտածունքները յուղում են ինձ և այժմ այն աստիճան յուղեցին, որ ատխալած եղաց ընդհատել լիշտակարան գրեթե: Ինչպէս տեսնում եմ իմ հանգստութիւնը սաստիկ արևեատական հանդըստութիւն է... Մի ժամկեց աւելի ման էի գալիս սենեակումն և ի վերջո գոտաց, թէ ինչն էր ինձ այդ աստիճան գրգռողը... Այժմ արդէն շատ ուշ է: Սենեակիս պատուհաններիցը երևում է «Les Invalides»-ի գմբէթը, որ փայլվկում է լուսնի շողքով այնպէս ինչպէս մի ժամանակ փայլում էր Սուրբ Պետրոսի գմբէթը, երբ որ յուսալից սրտով ման էի գալիս Պինչիօցում ու մտածում Անեկացի մասին: Ակամայ անձնատուր եղաց այդ լիշտութիւններին: Թող ինչ ուզում է լինի, թող մինչեւ այժմ եղածը այսուհետեւ էլ շարունակւի, սակայն հաստատ է, որ ես կարող էի բախտաւոր լինել, նա էլ կարող էր տասը անգամ, հարիւր անգամ աւելի բախտաւոր լինել: Հենց այժմ էլ, եթէ որ մինչեւ անգամ որ և է գաղտնի դիտաւորութիւն ունենացի, եթէ որ չեմ իմանում որքան ասեմ հրապուրելի լիներ նա ինձ համար, այնուամենայնիւ սիրոս չէր տալ նրան անբախտացնել: Ես, որ ինչ էլ լինի, չեմ ուզում որ նա անբախտանայ: Բաւական էր որ մտածէի թէ կարող եմ նրա անբախտութեան պատճառ դառնալ, իսկոյն ձեռներս կը թուլանացին, մէջ եռանգ ու վճռականութիւն չէր մնալ: Հասկա առաջ որքան գորով է եղել սրտում դէպի նա:

կ, այսի անցած-գնացած բան է: ԽՄ մէջ բազմող սկեսութիւնը  
մի ուրիշ տեսակ հարց է կոլում աչքս, — արդեօք եթէ ացպէս  
լինի, հաստատ է որ նա իրան սաստիկ անբախտ կը զգաց: Կեան-  
քումն բազմաթիւ զիտողութիւններով ստուգել եմ, որ կանացք  
միայն մաքաս ելիս են անբախտ զգում: իրանց: Հենց որ ներքին  
կոիւը վերջանում է, նրանց համար՝ կուի հետևանքից բոլորովին  
անկախ սկսում է անդորր, քաղցր ու երջանիկ կեանք... Այստեղ,  
Պարիզում մի ծանօթ կին ունեի, որ երեք տարի շարունակ սար-  
սափելի տանջում էր իւր զգացմունքների հետ կուելով, իսկ յետոց  
երբ որ վերջ ի վերջոյ զգացմունքները յաղթեցին, բոլորովին հան-  
գըստացաւ և միայն մի բան էր միշտ տանջում նրա սիրութ, — այն,  
որ այնքան ժամանակ զիմազրել էր:

Բայց ի՞նչ օգուտ կայ այսպէս հարցեր դնելուց ու խնդիրներ լուծելուց։ Լաւ զիտեմ, որ ամեն մի բնական բան կարելի է ասպացուցում և ամեն մի ասպացուց կասկածի ենթարկել։ Անցել գնացել է այն երանելի ժամանակը, երբ մարդիկ կասկածով էին վերաբերում ամեն բանի՝ բացի բանականութեան ընդունակութիւնից որոշել ճշմարիտը ստից և բարին՝ չարից։ Այժմ՝ ուղեցոյց ասող չի երևում, ամբողջ երկինքը ամպերով է ծածկւած։ Աւելի լաւ է մտածեմ առաջիկայ ուղերութեանս մասին... Հաստատ է, հաստատ, Կրոմիցկին Անելկայի կալւածը ծախել է ու նրա սիրով խորը խոցել.. Պէտք է այդ ահագին տառերով գրէի յիշատակարանումն, թէ չէ հաւատալս չէր գալիս...

10 ապրիլի

Երեկ գնացի տիկին Դեխսի մօտ՝ մնաս բարե անելու. դուրս եկաւ, որ նրա մօտ կարգին նւագահանդէս էր։ Խնչպէս երևում է Լառւրան իսկապէս սիրահարւել է երաժշատութեան վրայ։ Կլարա Նիլսոն Փիս-հարմնենիա էր ածում։ Նրան տեսնելը ինձ միշտ հաճութիւն է պատճառում, բայց առաւելապէս ինձ դուր է դալիս նա, երբ որ նսոսում է նւագարանի առաջին ակիորդները խփում։ աչքերը քաշ գցած ստեղնարանի (ռ.լաւացյալ) վրայ։ Նրա մէջ Աջութիւն, կետրոնացումն ու արուասովոր անդորրութիւն կայ։ Այդ ժամանակ նա ինձ յիշեցնում է սուրբ Յեցիլիային, որ սուրբերից ամենահամակրելին է ինձ համար և որի վրայ կը սիրահարւէի, եթէ որ նրա ժամանակակիցը լինէի։ Ափսոս որ շատ յաղթանդամ է, բայց երբ որ նա նւագում է, ես այդ մոռանում եմ։ Ժամանակ առ ժամանակ նրա քաշ գցած կոսկերը բարձրանում են գէպի վեր, կարծես թէ նա ուղելիս լինի մտաբերել մի հնչիւն, որ մի ժամանակ՝ ներշընչւած բոպէներին լսել է այնոտեղ՝ բարձունքներում, —և այդ ժամանակ նա ներշնչւածի տպաւորութիւն է գործում։ Նատ յարմար է գալիս նրան Կլարա <sup>1)</sup> անունը, — դժւար է գոնել նրա հոգուց աւելի ջինջ հոգի։ Ասացի, որ սիրում եմ նրան աեսնել, բայց ոչ լսել.

1) Լատիներէն Clarus նշանակում է ողարղ, ջլնջ,

Ծանօթ; թարգմ.

նրա երաժշտութիւնը, աւազ, էլի չեմ հասկանում, կամ գոնէ դժւարութեամբ եմ լրմբոնում իմասոր։ Սակայն կարծում եմ, որ չը նայելով իմ չարամիտ ու յանդուգն նկատազութիւններին, նա արտակարգ տաղանդի տէր է։

Երբ որ նա վերջացրեց ածելը, մօտեցայ նրան ու կէս-կատակով ասացի, թէ հասել է Վարշաւա գնալու րողէն և թէ մեր առաջւան պայմանադրութեան համաձայն յացնում եմ իրան, որ պատրաստի գնալու։ Զարմացմամբ նկատեցի, որ նա իմ խօսքերը լուրջ կերպով ընդունեց Պատասխանեց, թէ արդարեւ վաղուց մտադիր է Վարշաւա գնալ, իսկ գալով պատրաստելուն, դրա համար շատ ժամանակ հարկաւոր չէ, որովհետեւ հետը վերցնելու գրեթէ ոչինչ չունի, բացի իւր ազգական պառաւ կնոջից, որին հետը տանում է ամեն տեղ, և խուլ ստեղնարանից, որի վրայ վարժութիւններ է անում մինչև անդամ երկաթուղու վաղոնում։

Այդ մի քիչ ինձ վախեցրեց։ Եթէ խկապէս հետս դալու լինի Վարշաւա, գոնէ քիչ ու միչ պէսք է օգնեմ կոնցերտ սարքելուն, մինչդեռ ես կ'ուգէի ուղղակի Պլշչով գնալ։ Ակի որ չը լինի նրան կը յանձնեմ Սնեատինսկուն, որ աւելի օգտակար կարող է լինել նրա համար քան ես։ Ասենք Կլարա Հիլտոր մի Փրանկֆուրտցի հարուստ արդիւնագործի աղջիկ է և նիւթական յաջողութիւնը նրա համար ոչինչ նշանակութիւն չունի։ Սակայն ինձ զարմացնում է այն աճապարանքը, որով նա համաձայնեց հետս գնալ Վարշաւա։ Աւաջին րոպէին մինչև անդամ ուզում էի ասել նրան, թէ խուլ ստեղնարանի դէմ ոչինչ չունեմ, բայց պառաւին հետը վերցնելու միտքը շատ էլ յաջող միտք չեմ համարում։ Մենք՝ ազա հարգիկն՝ այն աստիճան սովորել ենք միշտ և ամեն տեղ որոդայթ լարել կանաց, որ մեզնից ոչ մէկը ջահէլ ու սիրուն կնոջ առանց ծուռ մոքի չի մօտենում։ Ով որ հակառակն է պնդում, նա խկապէս ուզում է խաբել կանաց, որպէս զի աւելի ևս հեշտ ընկնեն որոդայթի մէջ։ Գալով ինձ, իմ ուշ ու միտքս այս րոպէիս բոլորովին ուրիշ բանով է զբաղւած և սակայն այդ պառաւ ազգականը առաջին անդամից ինձ վրայ խոչընդուռի տպաւորութիւն գործեց, ևս առաւել որ իմ անձնաւորութիւնը հաւանօքէն որոշեալ դեր է խաղում Կլարայի շտապողական վճռի մէջ։ Պարիզը շատ աւելի ընդարձակ

ասպարէզ է երաժշտական համդէսների համար քան Վարշաւան, իսկ նիւթական օգուտը նոյնալիս նշանակութիւն չունի Կլարայի համար, ել ինչու է ուրեմն ուղում գնալ Վարշաւա: Լառւրան, ինչպէս արդէն ասել եմ, վաղուց է ակնարկներով ինձ հասկացրել, թէ օրիորդ Հիլտոր դէպի ինձ համակրութիւնից աւելի տաք զգացմունք է տածում... Տարօրինակ կին է այդ Լառւրան: Կլարայի անմեղութիւնը նախանձ է շարժում նրա սրտում, բայց միմիայն այնպիսի նախանձ, ինչպիսին կարող էր, օրինակ, շարժել մի հազւագիւտ թանկագին քար կամ մի շքեղ վարսակալ... Միշտ և ամեն ինչ նրան հետաքրքր քըրքըրում է իբրև զարդարանք, աւել ոչինչ: Երեւի նախանձն է պատճառը, որ ուրախութեամբ այդ ահագին երեխային կը զցէր ի՞մ գիրկը: Ես նրա համար ոչինչ նշանակութիւն չունեմ, որովհետեւ այնպիսի զարդ եմ, որ նա արդէն կրել է իւր զգին:

Այդ կինը ակամացից ինձ այնքան չարիք է պատճառել, որ իսկապէս պէտք է ատելութիւն զգայի դէպի նա, սակայն չեմ կարողանում նրան ատել նախ, լիդմա ինձ ասում է, որ եթէ նա ամենեին ըլ յայտնէր էլ իմ կինասկան ճանապարհի վրայ, ես այնուամենացնիւ մի ուրիշ նոյն չափ ազգու միջոց կը գտնէի իմ երջանկութիւնը փշացնելու համար. երկրորդը՝ ինչպէս որ սատանան գահավիժւած հրեշտակ է, այնպէս էլ ատելութիւնը ալլասեռւած տէր է, իսկ ես Լառւրային երբէք չեմ սիրել: Մի քիչ արհամարհում եմ նրան, բայց այդ ուրիշ բան է և, բացի այդ, նա էլ այդ կողմից ինձնից յնտ չի մնում: Մինչև անգամ կարծում եմ, որ նա ինձ աւելի չարականութեամբ է վերաբերում քան ես նրան:

Գալով Կլարայի դէպի ինձ տածած զգացմունքներին, Լառւրայի կարծիքը, ինչպէս տեսնում եմ, պէտք է որ մի քիչ ճիշտ լինի: Այդ այսօր ինձ աւելի պարզ երեւաց քան երբ և իցէ: Եթէ այդ ճիշտ է, շնորհակալ եմ նրանից: Այս առաջին անգամն է կեանքում, որ ցանկութիւն եմ զգում բարեկամութիւն հաստատել կին-մարդու հետ և արդարացնել նրա վստահութիւնը: Իմ հոգուս պէս անհանդիստ հոգին այժմ կարող է հանգիստ դոնել այդպիսի բարեկամութեան մէջ:

Այսօր ես ու Կլարան իսկը բարեկամական խօսակցութիւն ունեցանք: Նրա իսելքը շատ էլ ընդարձակ չէ, բայց դրա փոխարէն-

պարզ է ու շատ լաւ որոշում է չար ու անճոռնի համարածը բարի ու գեղեցիկ համարածից, ուստի և չի խարխափում ու մոլորւմ և վերին աստիճանի խաղաղ է ու պայծառ։ Նրա մէջ նկատելի է մի տեսակ հոգեկան առողջութիւն որ, պէտք է ասած, գերմանացիների մէջ յաճախ է պատահում։ Զանազան տեղերում գերմանացիների հետ շիւելով նկատել եմ, որ օրինակ այն ախպի մարդիկ, որին ես եմ պատկանում, նրանցում շատ քիչ կամ Գերմանացիք ինչպէս և անզլիացիք դրական մարդիկ են, նրանք գիտեն թէ ինչ են ուզում։ Նրանք էլ շատ անդամ խորասուզում են կասկածների անեզր ովկէանի մէջ, բայց նրանք այդ անում են մեթոդաբար, իբրև զիտնականներ, ոչ իբրև զգացող մարդիկ՝ ոչ էլ անպորտվեց հանձարների նման։ ուստի և նրանց վերջին ժամանակների արանսցեղենուալ փիլիսոփայութիւնը, նրանց արդի գիտնական պետական միավորմը, նրանց բանաստեղծական «Weltschmerz»-ը միայն թէօրիական նշանակութիւն ունեն։ Գործնականութեան մէջ նրանք հիանալի յարմարում են կեանքի պայմաններում։ Ըստ Հարտմանի մարդկութիւնը որչափ ուժգին ու զիտակցօրէն ապրի այնչափ աւելի անբախտ կը լինի և միւնոյն Հարտմանը գործնականութեան մէջ հանգիստ սրտով գրգում է գերմանացի-կուլտուրաբէրներին զօրացնել գերմանական կեանքը ի վեսա Պոզնանի բնակիչների (լեհերի)։ Բայց, մի կողմ թողած այդ դէպքը, որ՝ ի միջի ազլոց ասած՝ մարդկացին սոտորութիւնների թւին է պատկանում, գերմանացիք առհասարակ սառնասիրու են վերաբերում թէօրիացին, ուստի և հանգիստ են և լնդունակ գործ կատարելու։ Այդ տեսակ հանգստութիւն կարացի մէջ էլ կայ։ Այն բոլորը, որ կարող է տակն ու վրայ անել մարդուս հոգին, պէտք է որ նրա ականջին էլ հասած լինի, բայց, ինչպէս երեսում է, երեսանց սահ տալով անցել է առանց թափանցելու նրա արիւնի մէջ և դրա շնորհիւ երբէք նրա սրտում կասկած չի ծագել դէպի իւր դաւանած ճշմարտութիւնը ինչպէս և դէպի իւր երաժշտութիւնը։ Եթէ նա դէպի ինձ համակրութիւնից աւելի քնքոյց զգացմունք է տածում, հաւանօրէն այդ այնպիսի զգացմունք կը լինի, որ նա չի գիտակցում և որը ոչինչ չի պահանջում։ Այն բոսէից, երբ այդ զգացմունքը դադարէր այդպէս լինելուց, կ'սկսէր նրա դրաման, որովհետեւ ես անկարող կը լինէի փոխադար-

ձաբար նոյն տեսակ զգացմունք տածել դէպի նա. Ես կը կարողանացի միայն շահւել նրա այդ զգացմունքից այն ձևով, որ նա կ'անբախտութեար: Ես այն անձնապատճան մարդկանցիցը չեմ, որոնք կարծում են թէ ոչ մի կին չի կարող նրանց գիմադրել. Ես միայն այն կարծիքին եմ, որ ոչ մի կին չի կարող գիմադրել այն տղամարդուն, որին իսկապէս սիրում է: «Պաշարւած բերդը՝ տռնւած բերդ է» գարձաւծքը արդարեն. շատ մաշւած ու անտանելի դարձւածք է, բայց այնուամենայնիւ ճշմարտութեան վերայ է հիմնւած և մանաւանդ հարիւրապատիկ աւելի ճիշտ է, երբ որ վերաբերւում է այնպիսի կնոջ, որ իւր առաքինութեան պարիսպների մէջ իւր սրտի նման դաւաճան է կրում կրծքումը: Բայց կլարան կարող է հանգիստ լինել: Մենք հանգիստ կ'երթանք, — նա, ես, պառաւ ազգականը և խուլ սուեղնարանը:

## 16 ապրիլ:

**Երեք** օր է, որ Վարշաւայումն եմ, բայց մինչեւ այժմ չեմ կարողացել գնալ Պլոշով, որովհետեւ գալուս պէս առամներս սկսեցին. ցաւել ու երեսս ուռեց: Զեմ ուզում այս զրութեամբ ներկայանալ տիկիններին:

Սնեատինսկուն արդէն տեսել եմ. հօրաքոյրս էլ եկաւ ինձ տեսութեան ու ողջունեց ինձ իրեւ անառակ որդու: Անելիան մի շաբաթ է ինչ եկել է Պլոշով: Նրա մայրը այնքան տկար է, որ բժիշկները, որոնք առաջ ուզում էին նրան ուղարկել Վիսբադէն, այժմ տեսնում են, որ ոչ մի ճանապարհորդութեան չի զիմանալ: Այդպիսով՝ նա պէտք է մնայ Պլոշովում մինչեւ որ տկարութիւնը թեքւի դէպի առողջանալը կամ դէպի մահ, Անելիան էլ նրա հետ՝ մինչեւ որ Կրոմիցկին օր առաջ իւր գործերը վերջացնի ու յարհար դատի մի տեղ մշտական բնակութիւն հասաւաել: Բայց հօրաքրոջս ասածներից ես եղակացրի որ Կրոմիցկու ուղեորութիւնը մի քանի ամիս կը քաշի: Աշխատեցի հօրաքրոջիցս որքան կարելի է շատ տեղեկութիւն գուրս քաշել Անելիայի մասին, որ ինձ շատ հեշտ յաջողեց, որովհետեւ հօրաքրոյրս նրա մասին ինձ հետ բոլորովին ազատ է խօսում: Նա ուղղակի չի կարողանում ենթադրել, որ մարդատէր կինը մի ուրիշ տղամարդու կարող է հետաքրքրել այլապէս քան իրեւ-

ազգական, և դեռ աւելի՝ այդպիսի հարց անգամ չի ծագում նկազ դլանում։ Այդպիսով՝ նա անկեղծօրէն խօսում էր ինձ հետ նրանց կալւածի ծախելու մասին, որը նա էլ չի կարողանում ներել Կրոմից կուն։ Վերջումը նա այն ասախճան բարկացաւ, որ վզից կախ տւած շղթան կտրեց ու ժամացոցը վայր ընկառ տախտակամածի վրայ։

—Ես նրա երեսին կ'ասեմ; —ասում էր նա, —որ այդ կրկնակի լրբութիւն է։ Աւելի կր համարէի սպարտքով փող տալ նրան։ Բայց ինչ օգուտ։ Նրա սպեկուլացիան անստակ անդունդ է։ Զը դիտեմ ինչով է վերջանալու, բայց այժմ ինչ կայ չը կայ կուլ է գնում մէջը։ Թող մի աչքիս երեւաց, իսկոյն կ'ասեմ, —սպարոն, Անելկացին էլ գերեզման կը մոցնես, Յելինային էլ և վերջ ի վերջոց կոտր կը նկնես։ Նրանց ինչին են պէտք նրա միլիոնները, երբ որ ամեն մի կուլէկի համար արիւն-արտասուք պէտք է թափեն։ Կարգին մարդը ազգակի բան չի անիլ։ Միշտ սպառուելս զալիս էր այդ չորացրած սունկից, դուրս է գալիս, որ սկի սիսալւած չեմ եղել։

Հարցրեցի նրանից, թէ արդեօք այդ բանի մասին անկեղծ խօսացել է Անելկացի հետ։

—Անելկացի հետ։ Լաւ է դու եկար, գոնէ քեզ հետ կարող եմ ազատ խօսել, սիրտս հովացնել։ Անելկացի հետ դրա մասին անկեղծ խօսել չի կարելի։ Մի անգամ չը կարողացայ զիմանալ, սկսեցի խօսել, նեղացաւ ինձնից ու լացը դրեց։ «Էր կարող չը ծախել, չէր կարող, չէր կարող»—կրկնում էր շարունակ։ Չի թողնում որ մարդ բերան բաց անի նրա մասին։ որ կարողանար նրա բոլոր պակասութիւնները կը ծածկէր ուրիշներից։ Բայց ինձ սպառաւիս խարել չի կարող։ սրտումը նա էլ ինձպէս զատապարտում է նրա այդ վարմունքը։

—Ուրեմն, ձեր կարծիքով Անելկան նրան չի սիրում։

Հօրաքոյրս զարմացած նայեց ինձ վրայ։

—Ի՞նչ։ Հապա էլ ում է սիրելու։ Խեղճը հէնց նրա համար է տանջուում, որ սիրում է նրան։ Բայց կարելի է մէկին սիրել և միեւնոյն ժամանակ տեսնել նրա վաստ կողմերը։

Ես այդ հարցի վերաբերմամբ մի քիչ ուրիշ հայեացք ունեմ, բայց աւելի լաւ համարեցի լսել։ Նա շարունակեց խօսքը։

—Ամենավատն այն է իմ կարծիքով, որ նա ստախօս է։ Հա-

ւասացրել է Յելինային ու Անելկային, թէ մի տարուց՝ շատ-շատ երկու տարուց յետոյ կը կարողանայ յետ գնել նրանց կալւածը: Դու ասա, այդ հնարաւո՞ր բան է: Ասա: Բայց մերոնք աշխատում են իրանք իրանց համոզել որ, ինչպէս ասել է, այնպէս էլ կը լինի:

— Ի՞մ կարծիքով, այդ բոլորովին անկարելի բան է: Նա շարունակելու է սպեկուլացիայով պարապել:

— Նա ինքը մեզնից լաւ դիտէ այդ, կը նշանակի դիտմամբ խարում է նրանց:

— Գուցէ նրա համար է այդ անում, որ նրանք շատ դարդ չանեն:

Հօրաքոյրս աւելի թունդ բարկացաւ:

— Ինչպէս թէ դարդ չանեն: Դարդ չեին անիլ, եթէ որ չը ծախէր: Եզուր մի պաշտպանիլ նրան: Ամեն մարդ պէտք է դատապարտի նրան: Խըւաստովսկին զայրոյթիցը քիչ էր մնում գժւէր: Նա տեղեկացել է գործերից ու ասում է, որ եթէ կոպէկ անզամ չը ստանար ոչ մի կողմնակի աղբիւրից, այնուամենանիւ յանձն կանէր երկու տարում պարուքի տակից ազատել նրանց կալւածը, — իսկ պարագ հէնց առաջինը ես ինքս կը տայի, դու էլ կը տայիր: Կը տայիր, չի: Տեսնում ես: Իսկ այժմ՝ կորած բան է:

Յետոյ սկսեցի հարց ու փորձ անել Անելկայի առողջութեան մասին: Ես հարցնում էի գաղտնի, զարմանալի, անբացատրելի անհանգստութեամբ, որովհետև վախենում էի՝ այնպիսի մի բան հազորդէր հօրաքոյրս, որ եթէ պատահած լինէր, բոլորովին բնական, սովորական բան կը լինէր և որը սակայն, չը դիտեմ ինչու, կը կտրատէր, կը լոշուէր ջղերս: Դատ ողորմելի մարդ եմ: Բախտիցս՝ հօրաքոյրս հասկացաւ հարցմունքիս միտքը և առաջւան զայրոյթով պատասխանեց.

— Ոչինչ չը կայ... Սիրո չի անում... Ծախելը՝ ծախեց, իսկ այդ—վախենում է, սիրո չի անում...

Խօսակցութեան նիւթը իսկոյն փոխեցի: Ասացի հօրաքրոջս, որ ինձ հետ միեւնոյն գնացքով Վարշաւա է եկել այժմեան ամենամեծ պիանիստուհին, որ շատ հարուստ կին է և սաստիկ փափագում է մի քանի կոնցերտ տալ յօդուա չքաւորների: Համա տարօրինակ բնաւորութիւն է հօրաքրոջս բնաւորութիւնը: Առաջ սկսեց

յարձակւել Հիլտի վրաց, թէ ինչու չի եկել ձմեռը, երբ որ նւագահանդէսների ամենալաւ ժամանակն է. իսկ յետոյ միտք արեց տեսաւ, որ այժմ էլ պեռ կարելի է կոնցերտ սարքել, և ուզում էր իսկոյն և եթ զնալ նրա մօտ: Հազիւ հազ կարողացաց նրան համագել, թէ աւելի լաւ կը լինի՝ Հիլտին առաջուց իմաց տամ, որ ինքը զնալու է նրա մօտ: Հօրաքոյրս մի քանի բարեգործական ընկերութիւնների նախագահ է և պատուի խնդիր է համարում՝ այդ ընկերութիւնների համար ի հաշիւ ուրիշ ընկերութիւնների կորպել ինչ որ ձեռքն ընկնի, ուստի վախենում է՝ մի զուցէ ուրիշ մէկը իրանից առաջ դիմի Հիլտին:

Գնալիս հարցրեց ինձ.

— Ե՞րբ ես փոխում Պլոշով:

Բայց ես պատասխանեցի, որ ամենեին չեմ փոխւելու: Ճանապարհին մոտածեցի աեսաց, որ աւելի լաւ կը լինի Վարշաւայում կենամ: Այսաեղից Պլոշով եօթը վերստ է, այնպէս որ ամեն օր առաօտեան կ'երթամ ու կը մնամ մինչև երեկոց: Ինձ համար այդ մինոյն է, իսկ զանազան կասկածների այլպիսով տեղիք տւած չեմ լինիլ: Բայց այդ ուզում եմ, որ պանի կրոմիցկան էլ մոքովը անց չը կացնի, թէ ինձ համար կարող է ցանկալի լինել նրա հետ մի յարկի տակ առպելլ: Սնեառինսկու հետ խօսելիս էլ ասացի, որ միտք չ'ունիմ Պլոշով փոխւելու, այնպէս՝ կարծես թէ մի կողմանակի ու նշանակութիւն չ'ունեցող բանի մասին խօսելիս լինէի: Տեսայ, որ բոլորովին հաւան կացաւ այդ մոքիս և մինչև անգամ ցանկութիւն ունէր երկար ու բարակ խօսել Անելիացի մասին: Սնեառինսկին անկասկած խելօք մարդ է և սակայն չի հասկանում, որ պայմանների փոխւելուց յետոյ մինչև անգամ ամենամոերիմ բարեկամների յարաբերութիւններն ել են փոխում: Նա այնպէս եկաւ մօսս, կարծես ես մինչև այժմ էլ այն լէօն Պլոշովսկին լինէի, որ կրակովում տերեւի պէս դողալով խնդրում էր նրան փրկել իրան. մօտեցաւ ինձ նոյն կոպիտ բացարարութեամբ և ուզում էր միանգամից ձեռը արմունկահան կոլիել հոգուս մէջ: Հէսց առաջին ըոսկէին թափը կոտրեցի: Սկզբում այդ պատճառով նա մի քիչ չարացած ու զարմացած էր, բայց յետոյ յարմարւեց իմ արամադրութեանը ու ակսեցինք այնպէս խօսել, իբր թէ մեր վերջին անգամնան տեսակ-

ցութինը ամենեին տեղի ունեցած չը լինէր։ Սակայն տեսնում էի, որ նրան հետաքրքրում է իմ այժմեան տրամադրութիւնը, որովհետեւ, չը կարողանալով ուղղակի հարցնել, նա սկսեց կողմնակի կերպով հարց ու փորձ անել, իսկ գրող-արտիստի անշնորհքութեամբ, որ խորազնին հոգեբան ու սրատես անալիսիկ է իւր գրասենեակում և գիմնազիստի պէս միամիտ՝ գործնական կեանքում։

Եթէ ձեռքիս սրինդ լինէր, կարող էի Համելէտի պէս տալ նրան ու ասել, — «Խնդրեմ ածես, իսկ եթէ ասում ես թէ ածել չը գիտես, հասպա ինչպէս ես ենթագրում՝ գու, որ փայտի կտորը հնչեցնել չես կարողանում, թէ կարող ես ուզածիդ պէս նւազել իմ հոգու լարերով։»

Այդ համեմատութիւնը անցաւ մոքովս, որովհետեւ երեկ գիշեր, չը գիտեմ այս էլ քանիերորդ անգամը, կարդում էի Համելէտը։ Ինձ համար բոլորովին անհասկանալի է այն երեսյմը, որ հիմիկւան մարդը, ինչ հասարակական դիրք էլ ունենայ, ամեն մի ամենամունդ նորաւուրց ու բարդ հոգեկան խանգարման ժամանակ ոչ մի բանում այնքան նմանութիւն չի գտնում իրան, որքան այդ՝ Հոլինշէդի կոպիտ ու արիւնալից առասպելի վրայ հիմնած գրամալյում։ Համելէտը՝ մարդկային հոգին է այնպէս եղել է նա, ինչպէս է և ինչպէս լինելու է։ Իմ կարծիքով՝ Նեքսպիրը այդ գրամալյում անցել է այն սահմանը, որ որոշւած է մինչև անգամ հանձարների համար։ Հոմերին կամ Դանակէին ես հասկանում եմ իրանց դարի ֆոնի վրայ։ Հասկանում եմ, որ նրանք կարող էին անել այն ինչ որ արել են, բայց թէ ինչպէս է կարողացել այդ անգլիացին տասնեօթերորդ դարում նախազգալ այն բոլոր հոգեկան հիւանդութիւնները, որոնք տասնիններորդ դարի արգիւնքն էին լինելու, այդ, չը նացելով Համելէտի մասին զրւած հազար ու մի հետազօտութիւններին, մշտական հանելուկ կը մնայ ինձ համար։

Այդպէս՝ տալով Մնեատինսկուն Համելէտեան սրինգը, նրա հոգատարութեանը յանձնեցի Կլարային։ Յետոյ սկսեցի նրա հետ խօսել նրա դաւանանքների մասին։ Ասացի, որ իսկապէս այսոեղ դալուս պատճառը հայրենիքիս կարօտն ու պարտականութեանս զգացմունքն է եղել։ Բայց այդ այնպիսի անհոգ եղանակով ասացի, որ Մնեատինսկին չէր իմանում՝ ծաղր էր այդ թէ իսկական զգացմունքի

արտայացութիւն։ Եւ նորից կրկնեց այն երևոթը, որի մասին արդէն յիշել եմ Պարիզում գրելիս։ Այն բարոյական ազգեցութիւնը, որ վերջին դէպքերի չնորհիւ ձեռք էր բերել ինձ վրայ Մսեատինսկին, հալուում - չքանում էր բոպէ առ բոպէ։ Նա չեր իմանում՝ ինչպէս բացարէր այդ. միայն մի բան էր հասկանում, — որ հին բանալիքներով ինձ բաց անել չի կարողանում։ Մնաս բարեւանելիս, երբ որ նորից խնդրեցի օգնել Կլարային, սուր-սուր նայեց ինձ վրայ ու ասաց.

— Այդ շատ կարեոր է քեզ համար։

— Նատ, որովհետեւ իմ մօտ բարեկամն է և ես շատ յարգում եմ նրան։

Այդպիսով նրա ուշադրութիւնը կետրոնացրի Կլարայի վրայ։ Հաւանօրէն կը կարծի, թէ այժմ էլ նրան եմ սիրում։ Չարացած գնաց։ Երբէք չի կարողանում զգացածը ծածկել։ Դուռը յետևից մի քիչ պինդ փակեց, բացի այդ՝ երբ որ սանդուղների վրայ նրան ճանապարհ գնելուց յետոյ յետ էի դառնում նախասենեակը լսում էի, թէ ինչպէս չորս-չորս աստիճան միանդամից էր իջնում ու շատ բարձրածայն շլւշլւացնում, որ անում է միշտ, երբ որ մի որ և բանից դժգոհ է լինում։

Ասենք նրան ճիշտ էի ասում, թէ ինձ համար կարեոր է որ Կլարայի գործը յաջող գնայ։ Այսօր գրեցի Կլարային, բացարեցի թէ ինչու մինչև այժմ իրան աեսութեան չեմ գնացել, և իսկոյն պատսախան ստացայ։ Նա հիացած է Վարշաւացից և մանաւանդ վարշաւացիներից։ Այստեղի բոլոր նշանաւոր երածիշոները այս երեք օրւայ ընթացքում այցելել են նրան աշխատելով գերազանցել միմեանց իրանց սիրալիր վարմունքով ու իրանց ծառալութիւնը առաջարկելով։ Գրում է, թէ ոչ մի տեղ չի պատահել այդ աստիճան սիրալիր մարդկանց։ Կարծում եմ, եթէ ուզենար այտեղ ընդ միշտ բնակութիւն հաստատել, գուցէ այդքան սիրալիր չը վարւէին հետը, թէև պէտք է ասած նա ընդունակութիւն ունի ամեն տեղ բարեկամներ գտնելու։ Արդէն մի քիչ պտտել — տեսել է քաղաքը։ Առանձնապէս դուր է եկել նրան Լազենկին։ Նատ ուրախ եմ, որ Վարշաւան այլպէս հիացմունք է պատճառում Կլարային, ևս առաւել որ սահմանը անցնելուց յետոյ Լեհաստանի բնութիւնը նրա վրայ

Ճնշող տակաւորութիւն գործեց։ Արդարեւ մեր անշեն ու տափակ շըջակայքում մի բան չը կաց, որի վրայ մարդուս աչքը կարողանար հանգիստ առնել, և մարդ պէտք է այսուեղ ծնւած լինի, որպէս զի կարողանայ այդ տեսարաններում որ և է, հրապոցը գննել։ Կլարան վագոնի պատուհանիցը գուրս նայելով շարունակ կրկնում էր, — «Աս, այժմ հասկանում եմ Շոպէնին»։ Ի դէպ ասել նա սխալ ում է, որովհետեւ չի հասկանում Շոպէնին<sup>1)</sup> ոչ իմելքով, ոչ զգացմունքով, ինչպէս որ չէր կարողանում հասկանալ այսուեղի բնութեան տեսարանները։

Ես, թէե հոգով արտասահմանի զաւակ եմ, բայց մի տեսակ ատաւիզմի շնորհիւ կարողանում եմ զգացմունքով ըմբռնել մեր բնութիւնը և զիտելով՝ յաճախ զարմացմամբ ստուզել եմ, որ զարնան հայրենիք վերադառնալիս միշտ անյագ կերպով զւարճանում եմ նրա տեսարաններով։ Սակայն իսկապէս ասած՝ ի՞նչ մի երևելի տեսարաններ են։ Նատ անգամ դիտմամբ աշխատել եմ երևակայել, թէ ես օտարազոյի նկարիչ եմ, ոչ մի առանձին զգացմունք չեմ տածում դէպի այսուեղի բնակութիւնը և նայում եմ նրա վրայ օտարի աչքով՝ օբեկտիւ կերպով։ Ազդէս երևակայելիս այսուեղի տեսարանները այնպիսի տալաւորութիւն էին գործում ինձ վրայ, կարծես վայրենի մարդու կամ միայն խաղեր գծագրել իմացող երեխայի քաշած նկարներ լինէին։ Այդ տափակ անվար հանդերը, թաց մարզագետնները, ուզզանփիւն շըջագիծով խրճիթները, հորիզոնի ծայրում՝ կալւածատէրերի պարտէզների բարդիները, վերջապէս՝ անտառով շըջափակւած լայնատարած դաշտավայրը, այդ՝ ինչպէս գերմանացիք ասում են՝ «տասը մղոն ոչինչը», այդ բոլորը միշտ ցիշեցնում էր ինձ նկարչութեան նախատիստարը իւր՝ ծրագրի ու գծերի վերին աստիճանի աղքատութեամբ։ Խ'սկն ասած՝ այդ՝ այն էլ գժւարութեամբ՝ կարելի է միայն ֆոն համարել։ Բայց հենց որ զագարում եմ օտարի աչքով նայելուց, հէնց որ սկսում եմ զգալ այդ տեսարանների պարզութիւնը, թափանցել նրանց այն անսահման ընդարձակութեան մէջ, որի մէջ ամեն մի որոշ ձև հալւում, ձուլ-

<sup>1)</sup> Շոպէնը՝ Լեհ կոմպոզիտոր է,

Ծանօթ. թարգմ.

ւում է այնպէս, ինչպէս հոգին Նիրւանացի մէջ, — նրանք իմ աչքումը ոչ միայն «սկզբնատիպերի» արտիստական հրապոյըն են ունենում; այլ և սկսում են ինձ վրայ հանգստացնող կերպով ազդել: Ես օրինակ կարող եմ հիանալ նայելով Ապենինեան սարերին, բայց հոգիս չի կարող թափանցել նրանց մէջ, նա դէմ է առնում ու մնում է դրսեր: Այդ դէպքում՝ վաղ թէ ուշ մարդ կը սկի ձանձրանալ: Մարդ իսկապէս հանգստանում է միայն այն դէպքում, եթէ որ ի մի է ձուլում իւր շրջապատի հետ, իսկ ձուլել կարող է միմիայն այն ժամանակ, երբ նրա հոգին ու արտաքին բնութեան հոգին միատեսակ, իրար համապատասխան կազմակերպութիւն ունեն: Նոստալգիան 1) հէնց նրանից է յառաջանում, որ մարդուս հոգին դուրս է կորզւում իրան շրջապատող իրերի ամբողջութիւնից: Ինձ թւում է թէ այդ հոգեկան խնամութեան (ԵՊՕՋԵՏՎՈ) սկզբունքը կարելի է աւելի էլ լնդլացնել: Գուցէ զարմանալի թւի, որ ես, որ արտասահմանումն եմ կրթւած ու այնտեղի կուլտուրացով համակւած, այս տեսակ հայեացքներ եմ յացնուում, բայց աւելի կ'ատեմ, — մինչեւ ան գամ օտարազգի կինը, թէկուզ գեղեցկութեան կողմից ամբողջ աշխարհում հաւասարը չ'ունենայ, ինձ համար միշտ կը լինի որոշեալ չափով միմիայն նիրկացացուցիչ կանացի սեսի և ոչ կնոջ հոգի:

Միոքս է թէ մի ժամանակ ինչեր էի գրում լեհուհիների մասին: Բայց մէկը միւսին չի խանգարում: Ես կարող եմ շատ լաւ տեսնել նրանց թերութիւնները և այնուամենացնիւ ինձ աւելի մօտիկ զգալ նրանց քան օտարազգի կանանց: Բացի այդ, առաջւան հայեացքներիս մեծ մասը հին շորի պէս զգգուել է:

Բայց հէրիք է զբա մասին: Ամօթով ու զարմացմամբ նկատեցի, որ այս բոլորը գրելուս նախառակն այն էր, ինքս ինձ խօսքով դցէի, զբաղեցնէի: Այն, այդպէս է, այդպէս: Երկար ու բարակ խօսում եմ բնութեան տեսարանների ու կարօտասետի մասին, իսկ ուշ ու միոքս իսկապէս Պլոշովումն է: Չեմ ուզում այդ խոսառվանել, բայց պէտք է խոսառվանել: Մէջս ինչ որ անհանգստառութիւն է բուն դրել. սիրոս սաստիկ ճմլում է: Շատ կարելի է, թէ Պլոշով գնալս թէ այնտեղ

<sup>1)</sup> Հայրենիքի սաստիկ կարօտից յառաջացած հիւանդութիւնն Ծանօթ. Թարգմ.

մնալս անհամեմատ աւելի հեշտ լինի քան ես երևակայում եմ այժմ այս սպասողական դրութեանս մէջ։ Նախընթօրից (Քահնցի) անտառնելի բան չկայ։ Մի անգամ ջահել ժամանակս պէտք է մենամարտութեան գուրս գայի և յիշում եմ, որ սիրոս անհանգիստ էր միմիայն նախընթաց օրը։ Այն ժամանակն էլ աշխատում էի մի ուրիշ բանով զբաղեցնել միտքս և նոյնքան ապարդիւն՝ որքան և այսօր։ Եմ մտածմունքները ամենելին գորովալից չեն, ոչ էլ մինչեւ անգամ բարեկամական՝ պանի Կրոմիցկայի վերաբերմամբ, այլ միայն զարմանալի կերպով վիստում են գլխումն. տեղահան արած մեղուների նման թափում են վրաս ու չեմ կարողանում նրանց ձեռքից ազատել։

(Կը շարումակեի)

# ՀԱՅԿԱՐԱՍՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

ՊՐՈՖ. Գ. Ա. ՇՈՒԽՎՅԱՆ

(Հարուսակութիւն 1)

Եւգենիոս Բորէ ծնւեց Անժէրում 5-ն օգոստ, 1809թ.: Նորահայրը, որ նախկին գլուխ էր մի բառալիոնի, մեռաւ 1812-ին: Նաիւր առաջին ուսումը ստացաւ իւր հայրէնի քաղաքում և, 1826-ին մտաւ Ստանիսլասի կոլեժը (դիմազ) Պարիզում; ուր յաջորդ տարին նա տարաւ «պատուի մրցանակը» Փիլտոնֆայութիւնից, ընդհանուր կոնկուրսի միջոցին: Նա կորցրեց իւր մօրը 1828-ին: Իրաւաբանութեան դպրոցի դասընթացքը անցնելուց յետոյ նա նւիրւեց լեզուների ուսումնասիրութեան: Իւր մօր բարեկամաւթիւն կցեց դը Լամենէի հետ (de Lamennais<sup>2)</sup>), որը խրախուսեց նորան իւր ուսումնասիրութիւնների մէջ: 1834-ին, երբ Լըւայան դը Ֆլորիւալը Խոտալիս գնաց, այն ժամանակւայ կրթական մինիստր Գիզօն նշանակեց նորան պրոֆեսորի փոխանորդ Արևելեան կենդանի լեզուների Պարոցում: Լամենէն այդ առիթով դրեց նրան. «Ես չնորհաւորում եմ քեզ այն աշակերտաների քաննակութեան համար, որոնք լսում են քո դասընթացը և այն գիւտերի համար որ արել ես հայոց դրականութեան մէջ»: Այդ ժամանակ Բորէն Ասիական Ընկերութեան

1) «Մուրճ» 1891թ. № 1, 3, 7—8 և 9:

2) Նորա «Paroles d'un Croyant» թարգմանած է հայերէն պ. Ռ. Բերբերեանի ձեռքով, Կ. Պոլիս, 1871թ.:

ամենագործօն անդամներից մէկն էր։ Նա շարունակեց իւր գասընթացքը մինչև 1835 թւականը և այդ տարւայ վերջը նա գնաց Վենետիկի Սր. Ղազարը, ստանձնելով մի գրական յանձնարարութիւն։ Նա այնտեղ տպել տւեց մի Տեղեկագիր վանքի ու միաբանութեան մասին, որի անդամ նշանակւեց նա։ Ահա թէ այդ առիթով ինչ դրեց նրան դը Լամբնէն։ «Դու գեղեցիկ բաներ տեսար, դու քեզ ամրացրել ես այն երկրի լեզուի մէջ, ուր, ասում են, տապանը կանգ առաւ, և դու այժմ ակաղեմիկոս ես... Ես մեծ ուրախութեամբ կը կարգամ այն տեղեկագիրը, որի մասին դու ինձ ծանուցումն ես արել։ Սր. Ղազարի կրօնաւորները արդէն հրատարակել են մի այլպիսին, որ պարունակում է պատմութիւնը նորա հիմնողի և այն անհաւատալի դժւարութիւնների, որոնց նա պէտք է յաղթէր այն տեղում հաստատելու համար, ուր նոքա այն ժամանակւանից դէս այնքան բարզաւաճել են։ Դժբախտաբար, մի տարի յետոյ, Բորէն, տեսնելով որ Լամբնէն հակառակում է եկեղեցու հեղինակութեանը, բաժանեց նորանից։ 1836-ին նա դառաւ Univers catholique (Կաթոլիկական Աշխարհ) թերթի խմբագիրներից մէկը։ Նա այն ժամանակ հրատարակել էր Journal Asiatique թերթում առ 1833 թ. (էջ 271—198)՝ Աղբկ. Պոլսի առման մասին, որ հեղինակել էր մի ոմն Աբբահամ, թարգմանած ֆրանսիական Ազգային Գրադարանի ձեռագրից № 80 (տես Բրոսսէի հրատարակութեան XXI. հատորը՝ էջ 307—314), և 1835-ին (էջ 293—7) մի քաղւածք Ուռհա (Եղեսա) քաղաքի առման մասին գրւած Աղբից։ Նա նոյնպէս վերջացրեց խմբագրել մի աշխատութիւն Հայստանի մասին առհասարկ, Univers pittoresque թերթի համար, որ լոյս տեսաւ 1838-ին 144 երկսիւն երեսներով և բազմաթիւ նկարներով։ Այն ժամանակ հանրացին կրթութեան մինիստրը և Արձանագրութիւնների ու զեղեցիկ գպրութեան Ակադեմիան բարձեցին նորա վերայ մի գիտական առաքելութիւն Արևելքում։ Նա ուղևորւեց 1837 թւականի սկզբում։ «Ես գնում եմ, ասում է նա, այցելելու այն երկիրը որ քրիստոնէութեան որբանն է եղել, ուսանելու այն լեզուն, որ խօսում էին այնտեղ և քննելու նորա յիշատակարանները (մոնումէնտ)։» Կարճ ժամանակ մնալով Վիննա, Տրիեստ և Սիրա, նա հասաւ կ. Պոլիս, ուր

նա սարքւեց մի հայկական ընտանիքում՝ «Արևելքի ձեռքը բռնելու համար»; Բացի հայերէնից նա գիտէր պարսկերէնը, արաբերէնը, տաճկերէնը, եբրայերէնը և փիւնիկերէնը: Կ. Պոլսից նա գնաց էր-զերում, ապա Թաւրիզ, ուր նա մի ուսումնարան հիմնեց, որ նա մինչ 1839 թ. ինքը կառավարեց: Վերջապէս նա հաստատւեց Նոր-Զուղայում Սպահանի մօտ (29 ապրիլի 1840 թ.), ուր նա իբր աշակերտներ ունեցաւ մի քանի պարսկէներ նշանաւոր տներից և որտեղից նա ուղղեց Պարիզ մի քանի գիտնական զեկուցումներ: Նա վերադարձաւ Պարիզ երկու տարի աւելի ուշ, 1842 թւին, բայց նորա հետաքրքրական աշխատութիւնը «Թղթակցութիւններ և Յիշատակարաններ մի ճանապարհորդի Արևելքում» արգէն 1840-ին լոյս էր տեսել Պարիզում: 1843-ին նա մի ճանապարհորդութիւն արաւ Հռոմ, ուր նա տեսակցութիւն ունեցաւ պապի մօտ, ապա նա մի երկրորդ անգամ գնաց Կ. Պոլսի: 1846-ին նա հրատարակեց Univers catholique (Կաթոլիկական Աշխարհ) թերթում մի թարգմանութիւն Տովսէս Կազանկատուացու Ազւանների Պատմութեան (որ արտասպակեց Nouvelles Annales des Voyages 1848 թ. ծանօթութիւններով Վիւիեն դը Սէն-Մարտէնի): 1847-ին նա այցելեց Արևիստելագոսը և 1848-ին Փրանսիական կառավարութեան կողմից յանձնարարւեց Երուսաղէմ գնալ՝ ուսումնասիրելու համար սուրբ տեղերի խնդիրը: Այդ առարկայի մասին նա հրատարակեց մի բրոշնւր 74 էջից բաղկացած՝ «Սուրբ տեղերի խնդիրը»: Այդ խնդրով աւելի ուշ զբաղվեց նաև Վիկտոր Լանգլուան:

Վճռած լինելով այսուհետեւ նւիրւել եկեղեցական կոչման, Բորէն հոգևորականութիւն ընդունեց 1850-ին և վերադարձաւ Պարիզ. բայց յաջորդ տարին նա պէտք է վերադարնար Կ. Պոլսի, ուր նրան յանձնւեց Բերէկի դսպրոցի կառավարութիւնը: Եբրեւ այցելու, նա ամեն տարի այցելեց Զմիւնիա, Սանտորին, Նաքսի, Սալոնիք, Մենաստիր և այլն: Վրիմի սկատերազմի ժամանակ նա կազմակերպեց կառքեր վիրաւորների և հիւանդների համար (ամբիւլանս) և նւիրեց իրան Վարնայի խոլերականներին: 1860-ին նրան յանձնւեց զեկուցում տալ բուլգարացիների շարժման մասին դէսի հոգևայական եկեղեցին, և 1866-ին նա նշանակւեց մշտական քարտուղար Առաքելութեան Միաբանութեան (Congrégation de la

Mission), որի ընդհանուր գլուխն եղաւ 1874-ին։ Նա մեռաւ 3 մայիսի 1878 թ., ցաւ պատճառելով այն ամենքին, ով նորան ճանաչել էր։ Նորա յաջորդն է Անտուան Ֆիա (Antoine Fiat), որին, կրկնում ենք շնորհակալութեամբ, պարտական ենք այս յօդւածի կենսագրական մանրամասնութիւնների համար բարեպաշտ և անձնւեր միսիոների մասին։

Էւարիստ Պրիւդ'հոմ (Evariste Prud'homme): Այդ հայկաբանի աշխատութիւնները ցրւած են ամսաթերթերում, և մենք կարծում ենք մեր ընթերցողներին ծառայութիւն մասուցանել՝ այստեղ նոյն մի առ մի թւելով։ Նա սկսեց մի յօդւածով Արեւելքի Տեսութեան մէջ (Revue de l'Orient) 1861 թ. (նոր շարք, հատոր XІІ): «Հայերի ազգային սահմանավրութիւնը» խորագրով, ժմարգմանութիւն հայերէնից. 1863—4-ին նա հրատարակեց նոյն թերթի մէջ մի թարգմանութիւն Արիստակէս Լաստիվէրդցու, համաձայն Վենետիկի տպագրութեան (1845): Տասնումէկերորդ դարի այդ վարդապետը գրել է պատմութիւնը Անիի կործանման Յոյներից և Սեղուկների արշաւանքների սկզբնաւորութեան (1000—1071): Թարգմանողը դէն է դցում Աստւածաշնչից վերցրած բազմաթիւ ցիտառները։ Ճարտասանական և ողբային եղանակը, ասում է Ժիւլ Մոհլը, (Mohl), գերիշխում է այդ հեղինակի մէջ և գժւար ընթեռնելի է գարձնում նորան, բայց նա չի թագցնում հայերի սխալները, դաւաճանութիւնները և մեզ թոյլ է տալիս տեսնել լրատաճառները և միջոցները այս երկար ու աղիողորմ ողբերգութեան, որի ամբողջ ընթացքը միայն արիւնով և աւերումներով է դրոշմւած։ Ասիական Թերթում 1863 թ. (ՎԻ-դ շարք էջ 400—475) Պրիւդ'հոմը հրատարակեց Զենոր Գլակի Տարոնի Պատմութիւնը, թէ ինչպէս հայերը քրիստոնէութիւն ընդունեցին (բնագիրը հրատարակւած է Կ. Պոլսում 1708 թւին և Վենետիկում 1832 թւին<sup>1)</sup>): «Դա, ասում է Ժիւլ Մոհլը իւր զեկուցման մէջ,

<sup>1)</sup> Վեկտոր Լամպլուան հրատարակեց նորա թարգմանութիւնը, խմբագրութեամբ Մ. Էմինի և. պոլսեցու, որ չը պէտք է շփոթել Մոսկուակի Մ. Էմինի հետ.

Տարոնի գաւառի պատմութիւնն է Ասորիքի սահմանի վերայ, որ լուրջ ընդդիմակրութիւն ցոյց տւեց Տրդատի կրօնափոխութիւնից յետոյ Արդ գարում. այնուեղ հաստատել էր հնդկացիների մի գաղթականութիւն, բայց հեթանոսները տաղալւեցին, և սուրբն Գրիգորը հրամայեց Զենոբին, որ ականատես էր, գրել անցքերի պատմութիւնը Ասորիքի հեկեղեցիների համար»: Ասիական Ընկերութեան նիստում առ 12 փետրարի 1864 թ. Պրիւդ'նոմը մի քանի մանրամասնութիւններ տւեց յունական և լատինական առարկաների մասին, որ վերագրում են Աղիմպեանին և որոնք պահպանւած են հայերէն թարգմանութեան մէջ և որոնց բնագիրները կորած են (Տես Մխիթար Դոշի<sup>1)</sup> Վենետիկի հրատարակութիւնները 1842 և 1853 թ. յաւելածով): Ասիական թերթի ՎI. շարքի ՎII. հատորի մէջ, նա թարգմանեց հանգուցեալ պրոֆեսոր Փերովիք Պատկանեանի լաւագոյն աշխատութիւններից մէկը՝ «Փորձ Սասանեանների տոհմի Պատմութեան հայոց պատմագիրների հա-

<sup>1)</sup> Յօցւածի հեղինակ պլոտֆ. Շոռմափօր, հակառակ խոր խակ կարծիքին գրաֆիկական տառապարձութեան առաւելութեան մասին, Պոչը գրում է Kochen մինչդեռ պէտք է դրւի Երշե. այդ մանաւանդ ցաւալի է, որ այդ անում է զրիթէ բոլոր անունների վերաբերմամբ: Այսպէս գիտնական պրաֆեսորը մի այլ տեղ Գարեն գին անունը գրում է Karékine, փոխանակ զրիլու Garéguine, բայց միևնույն ժամանակ նա գրում է Պատկանեան անունը Patkavian, ինչպէս և հարկն է. այսպիսով «կ» տառով նա տառապարձում է թէ մեր Գ և թէ մեր Կ տառերը: Որ սխալ և չփոթառապարձութիւնը մի դատարկ խնդիր չը պէտք է համարել մանաւանդ լեզւագէտների համար և որ դա կարող է շփոթեցնել հայերէնը օտար լեզուներով գրւած գրքերով ուսանողներին,—այդ մասին հաստատ կարելի է ասել որ չարգելի հեղինակը ինքը համոզւած է: Հետևապէս մենք անկեղծ խորհուրդ ենք տալիս պ. Շոռմափին, նորա այս զեղեցիկ աշխատութեան առանձին հրատարակելու գիտաւորութիւնը ի կատար ածելուց առաջ Փրանսսերէն գրած չատուկ անունները արեելեան մի հաչ հայկաբանի ձեռքով որբազրել տալ, որպէս զի մեր բ, պ, գ, կ, դ, և տ տառերի: Կարող ենք հաւատացնել հեղինակին, որ նորա աշխատութեան արժանիքը աչպիսով մի տիտղոսով աւելացած կը լինի, չը խօսած արդէն աչն մասին որ նա մի օրինակելի դաս էլ տւած կը լինի մեր արևմտևան գրագէաններին.

Ծանօթ. թարգմ.

մաձայն,և Ի. հասորում՝ «Քաղաքածք գրքից խորագրած՝ Ոսկեփորիկ, մեկնութիւններ սուրբ գրքերի մի քանի տեղերի, դրւած հրամանով Հեթում Լ., թագաւորի հայոց, Վարդան վարդապետի ձեռքով, թարգմանութիւն աշխարհիկ հացերէնից համեմատութեամբ գրաբառ բնագրի էւարիստ Պրիւդ՝ հոմի»։ Վերջապէս Ասիական թերթում, ՎI. շարք հասոր ԽVI, նա հրատարակեց Պատկաննեանի ամենանշանաւոր գործի՝ «Հետազօտութիւններ հացերէն լեզւի կազմութեան մասին» թարգմանութիւնը, Դիւլուրիկի ծանօթութիւններով և յաւելումներով։ Այդաշխատութիւնը, տում է Էրնէստ Ռընան (իւր զեկուզման մէջ առ 29 յուն. 1871) թւում է թէ գրւած է Բուրպի դպրոցի լաւ սկզբունքների համաձայն։ Նա շատ լաւ ցոյց է տալիս հայոց բառքառի տեղը իրանական գերդաստանի մէջ, նորա առանձնայատուկ ազգակյութիւնը զենդերէնի հետ, այն զառամեալ դրութիւնը, ուր նա հասել է քերականական ֆլեքսիոնների կողմից, մի ողորմելի դրութիւն, որից աւելին միայն նոր սլարսկերէնն է ներկայացնում։ Ճիշդ է որ հեղինակը ինքն էլ նկատում է (էջ 103) թէ «Հացերը իրանց լեզւի նմանութիւնով և իրանց ցեղով պատկանում են իրանական մեծ ցեղին», բայց այս պնդումները ոչնչով չեն ապացուցւում, և թւում է թէ ֆակտերը հերքում են այն։ Աւելցնենք նաև որ Արևելքի Տեսութեան մէջ 1865 թ., IV. շարք, հասոր I, Պրիւդ՝ հոմը թարգմանեց ասերէնից Մ. Էմինի մի աշխատութիւնը՝ «Հայկական այբբենարանի մասին»։ Միւնոյն թերթում, որի հրատարակութիւնը դադարեց 1865-ին, նա թարգմանել էր Էմինի աշխատութիւնը Հայոց հեթանոսութեան մասին։ Մենք այնտեղ գտնում ենք նաև (1868-ին) հայր Խորէն Գալթացեանի Արշակ II ողբերգութեան թարգմանութիւնը։ Մենք վերջացնում ենք Էրնէստ Ռընանի խօսքերով՝ «Եւարիստ Պրիւդ՝ հոմը մեռաւ շատ վաղօրօք. այդ բարեխիղճ և տեղեակ մարդը ունէր միայն 43 տարեկան հասակ (տես մեր յօդւածը Վիկտոր Լանդլուախ մասին)։ Նորա սիրած պրոէկտոն էր Հայաստանի դրագարանների հետազօտութեան մի ճամբերդութիւն անել։ Նա այնպիսի ծանօթութիւն ունէր հացերէնի, որից ափառ է որ չը կարողացաւ աւելի օգուտ քաղել։»

Յովան Անդրէաս Գատտէյրիսս (Joseph André)

Gatteyrias) ծնւեց 1855թ. և մեռաւ 28 մայիսի 1883թ.: Աշակերտ է. Դիւլլորիէի և պ. Ժիւլիէն Վինսոնի, պրոֆեսոր հնկերէնի (hindoustani) և տամուլի (tamooul) Արևեան լեզուների դպրոցում՝ նա առաջինն էր որ սուսացաւ դպրոցի դիմումը հայերէն լեզւի համար: 1880-ին նա մի գերազանց թարգմանութիւն տւեց Վարդանի Ողբի Հայաստանի գժբախոսութիւնների և սուրբ Վարդան Գողթնեցու մասին, գրւած՝ արաբների կողմից երկիրը գրաւելու առիթով (Ասիական թերթ, 7-րդ շարք, հատոր XVII., տես հայր Վետնդ Ալիշանի մննողրափիան, Վենետիկ, 1880, թարգմանած իտալերէն): Առաջ բերենք այս առիթով պ. Էրնէտ Ուլնանի գեղեցիկ խօսքերը (հատոր XVIII, 29 յունիսի 1881): «Հայաստանը Արևելքի միակ ազգն է որ իսլամի կողմից ճիւլլած լինելու գիտակցութիւնը ունեցաւ: Ուրիշ տեղ՝ ոչ մի բողոք, ոչ մի աղաղակ. գոնէ դատելով մեզ հասած ցիշատակարաններից: Որտեղ է եգիպտասի ողբը: Որտեղ է Ասորիքինը: Անձնատուր լինելու այդ տեսակը անկասկած առաջ է գալիս նրանից, որ սայաների գրութիւնը շատ տանելի էր հեջիրի առաջին գերերում այն ցեղերի համար, որոնք միայն կրօնական պահանջներ ունեին: Բայց Հայաստանը, որ արաբների նւաճումների ժամանակ մի լուրջ քաղաքական կեանք ունէր, խօսք դտաւ ասելու գոնէ որ նա զգում է թէ մեռնում է»: 1882-ին Գատտէյրիասը հրատարակեց մի շատ հետաքրքրական փոքրիկ պատկերագարդ հատոր՝ Հայաստանը և Հայերը (144 երես): Դա գլխաւորապէս մի պատմական ամփոփումն է: Ապա նա նւիրեց իրան վրացերէնի ուսումնասիրութեան, որ նա անհրաժեշտ էր համարում հայերէնի ֆիլոլոգիական ուսումնասիրութեան համար. և նա հրատարակեց Revue de linguistique et de philologie comparée (1881) թերթի XIV-րդ հատորում՝ «Եղեգւաբանական ուսումնասիրութիւններ վրացիական գերգաստանի լեզուների մասին»:

---

Մենք ահա վերջացնում ենք մեր յօդւածը ֆրանսիական հայկաբանների վերաբերմամբ: Արդէն նկատած կը լինեն, որ խրախուսանքը երբէք նրանց չի պակասել, և այդ առիթով մենք կարող կը լինէինք ծանրանալ նոցա մասին արւած բարեխիղն՝ քննադրատու-

թիւնների վերաց այնպիսի մարդկանց կողմից, որպէս գիտնական արխէօլոգ Դեզիոէ Ռաուլ Ռոշէտ (Rochette 1789—1854), հոչակառը արևելագէտ Սիլւեստր դը Ռասի (Sacy, 1758—1838), Յովսէփ Ռուսէն Ռէնո (Reinaud, 1795—1867), արաբականի պրոֆեսորը Կոլէժ դը Ֆրանս դէպուտատ, որին մենք պարտական ենք Վեստի թարգմանութիւնը Կարապետ Նահնազարեանի ձեռքով. Եղիսլուագէտ Էթիէն Մարկոս Քատորլմէր (Etienne Marc Quatremère, 1782—1857), որի մի հայոց բառարանը պահուած է Պարիզի Ազգային Գրադարանում. Ժիւլ Բարթոլիմէսոս Սէն-Հիլէր (Saint-Hilaire), որի համակրելի խոսքերը ներքեւ առաջ ենք բերում, և այն: Ժամանակ առ Ժամանակ, հետեւելով Զրպետի և Զոհրաբի օրինակին, Պարիզում հաստառած հայերը, մանաւանդ երբ այդ քաղաքում գոյութիւն ունէր Մուրալեան վարժարանը (collège Moorat) դպրոցը, օգնութեան են հասել մեր հայագէտներին: Մենք մանաւանդ կը ցիշենք աբբա Գրիգոր Կապարաջի Կարապետին (Grégoire Kabaragy Kárapet), որը 1844-ին հրատարակեց Եղիշէի մի թարգմանութիւնը այս վերնագրով՝ Soulèvement national de l'Arménie chrétienne au v. siècle contre la loi de Zoroastre sous le commandement du prince Vartan le Mamigonian», որից առաջ նա 1843-ին հրատարակեց Փրանսերէն լեզով «Եշխան Վարդան Մամիկոնեանի, Հայաստանի Վ-դ դարի հերոսի, քաղաքական և պատերազմական կեանքի համառօտ պատմութիւնը, Ղազար Փարագեցու, նորա քարտուղար Եղիշէի պատմութիւնը լրացնելու համար»:

Տարաբախտաբար մեր գիտնականների գրւածները մեծ մասմբ ցրւած են հանդէսներում և նոյն իսկ լրագրերում, որպէս նաև այլ և այլ ակադեմիաների ցիշատակարանների մէջ, երբեմն նաև այնպիսի հրատարակութիւններում, ուր ոչ ոք չի մտածել նոյա որոնել, և կամ այնպիսի վերնագրերով են, որ ոչ մի հայագէտի ու շագրութիւնը չեն արթնացնիլ: Այսպէս մենք գտնել ենք մի շաբք շատ հետաքրքրական յօդւածներ Պոլ Նիկար'ի (Pol Nicard) այս վերնագրով՝ «Dipoenus et Scyllis, sculpteurs», հրատարակւած Փրանսիական անտիքւարների (հնութիւնների) ազգային Ընկերութեան Ցիշատակարանների մէջ (4-րդ շաբք, հատոր VIII, Պարիզ, 1877):

Դոքա զիտնական հետազոտութիւններ են Խորենացու 2-րդ գրքի գլուխ XII-ի վերաց, ուր առաջ է թէ Արտաշէսը իւր երկիրը տանել առեց Դիանացի, Հերկուլէսի և Ապոլոնի ոսկեջրած բրոնզեաց արձանները, նոցա ազգացին ասուածութիւններին նորմած մի տաճարում կանգնեցնելու համար: Խորից ցիշենք այդ ասւիթով որ Զրպետը նոյն աց Ցիշատակարաններում (Հատոր II, էջ 262) արդէն մի յօդւած էր հրատարակել Հին-Հայատառնի կառավարութեան և կրօնի մասին: Քիչ ճանաչւած մանրամասնութիւններ կան նաև Էտիէն Շաստէլի (Chastel) գրւածքում՝ «Պատմութիւն հեթանոսութեան կործանման Արևելքի կայսերութեան մէջ», Պարիզ 1850: Վերջապէս մենք կարող ենք առաջ բերել մի քանի յօդւածներ «Bibliothèque de l'École des Chartes»-ից, բայց շատ հեռուն չենք ուզում գնալ: Բացի գորանից, որպէս զի մեր ուսումնասիրութիւնը լիակատար լինի, մենք պէտք է խօսենք բազմութիւ ֆրանսիացի ճանապարհորդների և հետազոտողների մասին, որոնք այցելել են Հայաստանը. բայց մենք այդ ամենը կ'ամփոփենք մի առանձին գլուխում, և, մինչ այդ, մենք յզում ենք մեր ընթերցողներին էլիզէ Ռէկլիւցի «Համաշխարհացին Աշխարհագրութեան» վերաց, կամ Վիւիէն գլ Սէն-Մարտէնի «Աշխարհագրութեան նոր բառարանի» Arménie յօդւածի վերաց, Հատոր I (Պարիզ, 1879, էջ 213—217):

Այն աշխատութիւնները, որ մենք թւեցինք, անկասկած բաւական կը լինեն որպէս զի հայերը երախտագիսառութեան ցիշատակ պահպանեն Ֆրանսիացի համար: Մեր զիտնականները չեն բաւականացել ուսանելու հայերէն լիզեի կազմը, այլ նոքա մանաւանդ աշխատել են պարզել Հայաստանի հնութիւնները, պատմութիւնը, կրօնը և գրականութիւնը: Լեզուն ուսումնասիրելով հանդերձ, որ անհրաժեշտ է նոցա հետազոտութիւնների համար, նոքա չեն մոռացել այդ լեզուն խօսող ազգը, և նոքա ուզեցել են նոյն իսկ ազգացին ողու խորքը թափանցել: Հետեւապէս մենք համարձակւում ենք պնդել որ նոքա շնորհակալութեան արժանի ծառայութիւն են մասառցել Հայաստանին (Nous osons donc affirmer qu'ils ont bien mérité de l'Arménie): Ինչ վերաբերում է մեզ, նոցա յաջորդներին, չը ննջենք նոցա դափնիքների վերաց, այլ շարունակ ցիշենք որ noblesse oblige: Վերակենդանացնենք ուրեմն, շնորհիւ

նոցա մեզ թողած ժառանդութեան, Արարատի մեր Եղբայրների այդ փառաւոր անցեալը և օգնենք Նրանց սուրբ լերան շուրջը կանդնեցնել Լուսաւորչի խաչը, որ Ազատութեան էմբլէմ է: Յիշենք որ գիտնականները, գրականադէանները, բանաստեղծներն են եղել որ կարողացան ազատել Յունաստանը բարբարոսների ձեռքից, և թողոր այդ յիշառակը մեր ջանքերին խրախոյս ծառայէ: Ամենից առաջ Հայաստանի հետ ծանօթացնենք, այնժամանակ անտրդւած քաղաքակրթութեան ազաղակը, այն քաղաքակրթութեան որը այնքան անդամ նա ազատել է, շուտով կը վճռի ճակատագիրը այն գժնեայ կառավարութեան, որի պատմութիւնը ամիտիւում է Արկտոր Հիւզդոի այս ոտանաւորի մէջ՝ «Թիւրքերը անցել են այնտեղով, — ամեն ինչ աւերակ է և սուզ! (Les Turcs ont passé là: tout est ruine et deuil!):

Մենք այժմ անցնում ենք Բելգիան, ուր հայկաբանութեան ներկայացուցիչն է ու. Ֆելիքս Նէւը: Այս գիտնականը բարի եղաւ մեր յօդւածը վերանայել և զրում է մեզ այդ առիթով. «Առանց տառանւելու պահպանեցէք այն կարճ քաղւածքը որ դուք ամբողջապէս առաջ էք բերել և որը վկայում է իմ համակրութիւնը հայոց ազգի համար, որի հայրենասիրութիւնը միշտ զիմագրել է հալածանքներին և աղէտներին: Դուք շատ լաւ եք արել, պարոն, որ ձեր գիտնականութիւնը ծառայեցնում էք մի այդքան ազնիւ դատի համար»:

Պարոն Նէւ (Félix Jean-Baptiste Joseph Nève) ծնել է Բելգիայի Աթ (Ath) քաղաքում Հենօ (Hainaut) գաւառում, 13 յունիսի 1816 թ.: Իւր ուսումը Լոււէնում (Louvain), և գերմանական Բոնն ու Միւնիսէն քաղաքներում ստանալուց յետոյ, նա գնաց Պարիզ, Քառամէրի, Աթնօի և Խօժէն Բիւրնուֆի դասերը լսելու համար: 1838-ին նա ստացաւ Ֆիլոսոֆայութեան դոքտորի աստիճանը. 1841-ից արդէն նա պրոֆեսոր նշանակւեց Բելգիայի Լոււէն քաղաքի կաթոլիկական համալսարանում, իսկ աւելի ուշ նա այնպէս դառաւ տիտղոսաւոր<sup>1)</sup> պրոֆեսոր հին գրականութեան և

<sup>1)</sup> Ֆրանսերէնում տիտղոսաւոր պրոֆեսոր նշանակում է այն,

արևելքան լեզուների։ Խւր գրւածքով «Ներածութիւն արևելքան գրականութիւնների ընդհանուր պատմութեան», Լոււէն, 1844 թ.» նա վաղօրօք ցոյց տեղ որ կոչւած է առենանշանաւոր արևելքականութիւններից մէկը գառնալու։ Նա խւր ուսումնասիրութիւնները բաժանեց սանսկրիտերէնի և հայերէնի մէջ, միաժամանակ հետազոտութիւններ անելով Լոււէնի համալսարանի պատմութեան համար և այդ քաղաքի Երեք-Լեզուների Կոլլեցի մասին (Collège des Trois Langues), մի կողմ թողած մի մննօգրաֆիան մի երիտասարդ արևելքագէտի, չօժէն ծաքէնի, կեանկի մասին։ Մեզ չի պառկանում այսուեղ նկարագրել զիտանական պրոֆեսորի բազմաթիւ աշխատութիւնները Հնդկաստանի գրականութեան մասին։ Ինչ վերաբերում է հայերէնին, դեռ ևս 1841-ին պարոն Նէւը թարգմանեց Սուներ թերթում առ 4 յուլիսի Նարականի երգերը սուրբ Առաքեալներին նւիրած։ Խւր վերը ցիշատակւած «Ներածութեան» մէջ (էջ 51) նա գասում է հայերէնը պարսկական գերդաստանի մէջ զենդերէնի, պահլաւերէնի, պարսերէնի, աւզաներէնի, բելուցերէնի, քուրդերէնի և օսերէնի հետո «Հայերէնը, ասում է նա, երկար ժամանակ նկատած էր որպէս անկախ մի լեզու, բայց նա պատկանում է սրբակական զերգաստանին խւր արմաններով և խւր քերականական ֆլեքսիոններով։ Պարոն Նէւը ցենում է Փ. Ն. Պետերմանին և Ֆ. Վինդիշմանի աշխատութիւնների վերայ. սակայն մենք չենք կարծում թէ սոքա ացգակս լինեն հասկացած հայերէնի զիրքը։

Ապրիլին 1843 թ. լոյս էր տեսել Université catholique հանդէսում (Պարիզ, հասոր ԽVI, էջ 373 և հասոր ԽVII, էջ 49 – 52) մի քննութիւն Յովհաննէս V կաթողիկոսի Պատմութեան, գործ Սէն-Մարտէնի, հրատարակւած սորա մահից յետոյ, որի մասին մենք իւր տեղում խօսել ենք։ 1845-ին պարոն Նէւը հրատարակեց միենոն հանդէսում (հասոր XX) մի յօդւած Եղիշէի Վարդանանց պատմութեան մասին, որ տասն և հինգ տարի առաջ Փ. Նէումանը անդլիերէն էր թարգմանել (Լոնդոն, 1830), աբեղաց Յովհէփի Կապ-պելետառին՝ Խալերէն (Վիեննա, 1840), Կապարաջին՝ Վրանսերէն

Երբ մէկը կառավարութիւնից ստանում է պրոֆեսորի կոչումը:

Մանոթ. Թարգմ.

(Պարիզ, 1844) և Պետրոս Շանչեանը՝ ռաերէն (Թիֆլիս, 1853): 1855-ին, Ասիական թերթի 5-րդ շարք, հատոր VII լոյս տեսաւիր «Ուսւածք Թովմա Մեծոփեցու և նորա Հայոց Պատմութեան մասին 15-րդ դարում (տես Դիւլորիէի գեկուցումը հայկական ուսումնաքների յառաջդիմութեան մասին, Պարիզ 1867, 188 երես): Այդ նոյն տարին նաև թարգմանեց հայոց եկեղեցու երգերը լսու Շարականի (Լոււէն, 1855): 1857-ին նաև աշխատակցեց Revue catholique հանդէսին (5-րդ շարք հատոր III) այս գրւածքով՝ Կոնստանտինը և Թէոդոսը արևելեան եկեղեցիների առաջ, ուսւածք՝ քաղած յոյն և հայ ազբիւրներից. 1859-ին, այսինքն մի տարի աւելի առաջ քան երբ Ժ. Պետերմանը իւր ուսւածքը հրատարակեց Բերլինի գիտութ. Ակադեմ. Յիշատակարաններում (1860, էջ 81—186), պարոն Նէւը հրատարակեց Belgique հանդէսում (հատոր VII, Բրիւսէլ, 1859): Առաջին խաչակիրների արշաւանքի բելգիական առաջնորդները: Յաջորդ տարին լոյս տեսաւ նորա «Նկարագիր Թամերլանի և Շահովսի պատերազմների արևմատան Ասիայում» լսու Թովմա Մեծոփեցու հայոց անտիպ ժամանակագրութեան (տես Մémoires couronnées et autres de l'Académie de Belgique, հատոր XI, 158 էջ, Բրիւսէլ) <sup>1)</sup>: 1861-ին նաև լոյս ընծայեց Revue catholique հանդէսից մի արտապատճեածք (7-րդ շարք, հատոր XIX): Մի քանի արկածներ քրիստոնէութեան հալածանքից Հայաստանում 15-րդ դարում, առաջին անգամ թարգմանած հայերէնից ֆրանսերէն (Լոււէն): 1862-ին լոյս տեսաւ իւր փորձը՝ Կոչումն Հոգոյն Սրբոյ հայոց պատարագում: 1863-ին նաև հրատարակեց՝ Ֆրիդրիխ Վինդիշման և բարձր ֆիլոլոգիան Դերմանիայում (Պարիզ): Այդ գրւածքում նաև խօսում է մանաւանդ գիտնական գերմանացու այս վերնագրով աշխատութեան մասին՝ Հայերէնի հիմքը արիական լեզուների մեջ (Միւնիսէնի Ակադեմիայի Յիշատակար., ֆիլոսոֆ. և ֆիլոլոգ. բաժին, հատոր IV, 2-դ մաս), ուր խօսում է հայերէնի տեղի մասին արիական գերդաստանի մէջ: Յունիսի 1866 պարոն Նէւը աշխատակցեց Revue catholique հան-

<sup>1)</sup> Այդ լիշտակարանը ներկագայլած է եղել լիշտալ Ակադեմիայի  
Classes des lettres կոչւած բաժնին 2 օգոստ. 1838 թ..

դեսին (հասոր XXIV, էջ 332—344) Սուրբն Գրիգոր Լուսաւորչի քարոզների մի թարգմանութիւնով՝ Երրորդութեան անձերի որոշելու մասին (տես Ժ. Մ. Նմիդ՝ Reden und Lehren des heil. Gregorius des Erleuchters, թարգմանած հայերէնից. Ռեգենսբուրգ 1872, 268 էջ):

Վերջապէս 1866-ին լրյա տեսաւ պ. Նէւի գեղեցիկ գրւածքը՝ Քրիստոնէական Հայաստանը և նորա գրականութիւնը (Լուլէն, V Ա + 403 էջ), ուր հեղինակը ի մի է հաւաքում առաջուց հրատարակած իւր մի շարք փորձերը, որոնց աւելացնում է մի քանի նոր տեղեկութիւններ (զեկուցումը տես Լոււէնի Մuséon թերթում, հասոր V, էջ 652): Ահա նորա պարունակութիւնը. Ներածութիւն, փառաբանական երգեր, Հարականը և ողբի երգեր. Կաթողիկոսներ՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ, սր. Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի. Պատմութիւն՝ Եղիշէի, Յովհաննէս Կաթուղիկոսի, Մատթէոս Եղեսացու, Խաչակիրների առաջին արշաւանքի բեղիական առաջնորդները, Հայկական աղբիւրներ Մոնղոլների պատմութեան համար Ասիայում. Յաւելւած՝ Պատմական կազմը ասորեցիների և Հայերի մէջ. Ասորական մեծ ժամանակադրութիւնը Բար-Հերուէսի:

Ահա թէ ինչպէս է խօսում պ. Բարթէլլը Մէնտ-Հիլէրը<sup>1)</sup> Journal des Savants թերթում առ 1886 թ., էջ 730. «Այս հասորը լրյա է տեսնում հէնց մի այնպիսի բօսկէին, երբ Հայաստանը սպասում է եւրոպական զիսլումատիացից և պահանջում է Բերլինի կոնգրէսում 1878 թ. նրան խօստացած բեֆորմները, որոնք սակայն գեռ չեն իրագործւած: Եւրոպան շատ համակրութիւն է պարտական այս փոքրիկ քրիստոնէական աղջին, որը գրեթէ մոլորւած է Ասիացի քիչ ճանաշւած մի մասում, բայց որը իւր հաւատը կարողացել է պահպանել 15 դար շարունակ բոլոր վասնգների և ճնշումների մէջ, որոնց նա զոհն է եղել և գեռ չէ դադարած դոհ լինելու: Զի կարելի բաւականաչափ համակրութիւն ցոյց տալ այդքան թշւառու-

<sup>1)</sup> Բարթէլլը Մէնտ-Հիլէրը, չպատճի մանաւանդ իւր թարգմանութիւնով և ուսումնակրութիւններով Արիստոտելի, Փրանսիական Ակադեմիական անդամ է և 80-ական թւականներին թէն ոչ երկար ժամանակ՝ Փրանսիական համբապետութեան արտաքին զործերի մինիստր էր:

թիւններին և այդքան հաստատակամութեան. նա ունի մեծ արժա-  
նիք ունեցող կրօնական ու պատմական գրականութիւն, նա կարող  
է մեզ շատ բան սովորացնել այն յեղափոխութիւնների մասին, որոնց  
ասպարեզ են եղել Ասխացի այդ և նորա հարեւան երկիրները...  
չը խօսած հայոց զրականութեան մասին որը պակաս նշանաւոր չի  
եղել: Այս գեղեցիկ էջից յետոյ մենք առաջ ենք բերում պարոն նէւի  
համակրելի խօսքերը իւր աշխատութեան յառաջաբանից (էջ VI):  
«Պատմութեան մէջ հազրագիւտ կրինակի երեսոյթով, հայոց ազգը,  
ուժեղ հրաշալի հաւատարմութիւնով դէպի իւր բնաւորութիւնը և  
հաւատը, դիմացաւ այն պատերազմներին և յեղափոխութիւններին,  
որոնք նորան այսպէս ասած կարատեցին. նա ունի իւր զրական և  
ժամասացութեան լեզուում իւր կենդանութեան մի նշան, իւր յարա-  
տեւութեան գրաւականը. մարդ կարող է մտածել որ նա  
կոչւած է մի օր մասնակցութիւն ունենալու Ասիացի  
վերակենդանութեան դորձում»:

Բելգիայում հայկական ուսմունքը գեռ տեղ են գտնում Մա-  
սեօն-ի մէջ, որ միջազգային հանդէսէ և հրատարակում է 1882-ից  
կոււէնում Գրական-գիտնական Ընկերութեան ձեռքով: Պարոն նէւը  
նորա գլխաւոր աշխատակիցներիցն է: Մենք գտնում ենք  
այնուեղ հետեւալ յօդւածները՝ Մի քանի տեղեկութիւններ Վանի և  
ուրիշ արձանագրութիւնների մասին Ա. Հ. Սէյսի (Sayce) և հան-  
գուցեալ Քերովբէ Պատկանեանի Ս. Պետերբուրդից. մի զեկուցումն  
էմիլ դը Դիլոնի (Dillon) Փ. Պատկանեանի Հայաստանի պատմական  
գրականութեան գրախօսական ուրւագծի մասին, 1880 թ. (Mu-  
seon, հատոր I). դը Ռեստէնդի (de Restaing) քննադատու-  
թիւնը Մոլսէս Խորենացու Աշխարհագրութեան, հրատարակութիւն  
հայր Արսէն Սուկրիի (Soukry), Վենետիկ 1881: Նարլ դը Հարլէն  
(Harlez) Յ-րդ հատորում, 1884 թ., քննադատում է դը Դիլոնի  
Հայկական ուսումնասիրութիւնները (ոսկրէն, մասն առաջին, հա-  
յերէնի յարաբերութիւնները էրանսական լեզուների հետ, Խար-  
կով, 1884 թ.). Ֆելիքս նէւը հրատարակում է այնուեղ մի զեկու-  
ցումն Ասովկի պատմութեան, թարգմանութիւն է. Դիւլորիէի, որի

առաջին մասը հրատարակել էր Կարիէլը: 1887 թւականի հատուրում մենք գտնում ենք մի գեղեցիկ քննադատութիւն Պատկանեանի հրատարակութեան՝ Արծրունիների տան պատմութիւնը, վարդապետ Թովմա Արծրունու, Ս. Պետերբուրգ, 1887: Եօթներորդ հասորում կայ պար. Նէւի յօդւածը՝ «Մի քանի նոր հրատարակութիւններ հայոց գրականութիւնից, լոյս տեսած Ասիայի և Եւրոպայի մի քանի քաղաքների տպարաններից (այն է՝ Հայոց մատենախօսութիւն 1) 1563-ից մինչ 1883, հայր Գարեգնի, Վենետիկ, 1883, մի հատոր XXXII+754 երես. Քննական քերականութիւն հայոց լեզվի հայր Արսէն Այսինեանի, Վիեննա, 1866. Manuale lexicon armeno-latinum ad usum scolarum scripsit D. Iohannes Miskgian, professor linguae armenae in pontificio collegio urbano ac in pontificio seminario romano S. C. de propanda fide, Romae, 1887): Վերջապէս 1889-ին լոյս տեսաւ մի տեղեկութիւն Վիեննայի Ֆիլիմարեանների Հանդէս Ամսորեւացի մասին: Պարոն Նէւը յայտնում է այդ ասւիթով նաև լոյս տեսնելը հոկտեմբերից 1888 թ. Նեղոս շաբաթաթերթի Ալեքսանդրիայում, խմբագրութեամբ Անտոն Ռշտունու: Այդ թերթը դադարել է հրատարակել, որովհետեւ այն հայ քահանան, որին պատկանում էին տպարանի տառերը, պէտք է գնար Գալաց, Ռումինայում, այնտեղ մի նոր թերթ հիմնելու համար<sup>2)</sup>:

Այսպէս ուրեմն տեսնում ենք որ Բեղդիան ևս իրաւունք ունի հայ աղջի երախտագիտութեան վերաց: Ցանկանանք որ այնտեղ գտննեն աւելի ու աւելի բազմաթիւ գիտնականներ պար. Ֆելիքս Նէւի շաւզով գնալու համար և որ նոքա սրտին մօտ առնեն այն զեղեցիկ տողերը որ այս համակրելի հայագետը հրատարակել է դեռ ևս 1845 թւականին Université catholique թերթում (հատոր XX, երես 491). «Հայաստանը, ասում է նա, մի կողմով զիազօւմ է յունական հնութեան,

<sup>1)</sup> «Մուրճ» ի ընթերցողներին պարտք ենք համարում լաւանել, որ պրոֆ. Շուումֆի աշխատութեան մէջ փշւած հայ մատենագիրների գրւածքների խորագրերը մենք թարգմանում ենք ուղղակի ֆրանսերէնից աշխարհաբառ, առանց ուշադրութիւն դարձնելու նոցա գրաբառ բնագրի խրական վերնագրերի վերակ:

<sup>2)</sup> Որ և հիմնւած է «Արօր» անունով: Ծանօթ. Թարգմ.

որից իւր գրականութիւնը այնքան բազմաթիւ փոխառութիւններէ արել թարգմանութեան միջոցով, և միւս կողմազ նա զիսպում է Արեւլցիների ինքնուրոյն կեանքին: Եթէ դարերի ընթացքում նորա քաղաքական դրութիւնները շատ տարբեր են եղել, բայց նորա կրօնական սպատմութիւնը քրիստոնէական ազգի պատմութիւն է, և որպէս այդպիսին, նա չի կարող անտարբեր մնալ մի ժամանակ, որը, ինչպէս մեր ժամանակն է, ազգերի ժամանակագրութեան մէջ որպում է նոցա սոցիալական մոքերի ոյժն ու բարգաւաճումը և որը այսուղ ևս հարկադրւած է խոսողանել և ընդունել քրիստոնէական սկսբունքի պահպանողական ոյժը»:

Նոշափելով այժմ Գերմանիան, որպէս նաև գերմաններէն գրւած շէցարական, աւտորիական և այլ աշխատութիւնները, մենք առ այժմ մի կողմէ կը թողնենք այն ճանապարհորդներին և հետազոտողներին, որոնց իրանց նկարագրութիւններից դէնը ոչինչ չեն դրել: Այդ մասին կարելի է օդնութեան դիմել զուտ աշխարհագրական աշխատութիւններին, որպիսիք են Կարլ Ռիտսերի հակացական աշխատութիւնը, Խորագրած Erdkunde (Երկրագիտութիւն), պարբերական հրատարակութիւնները՝ Globus, (Երկրագունդ), Ausland (Արտասահման), Petermanns Mittheilungen (Պետերմանի հաղորդագրութիւնները), Zeitschrift der Geographie und Erdkunde (Ամսագիր Աշխարհագրութեան և Երկրագիտութեան) և այն: Դա մի առանձին գործ է, որ շատ հետաքրքրական լինելով հանդերձ, այնուամենայնիւ չի մտնում մեր աշխատութեան շրջանակի մէջ:

Գերմանիայում իսկական հայկաբանութիւնը սկսում է ներկայ XIX դարում սպատմական և գրական գործքերով Կ. Ֆ. Նէումանի (C. F. Neumann), որին յաջորդեց Փ. Հ. Պետերմանի (J. H. Petermann) լատիներէն գրած քերականութիւնը, որը աեղի տեսք լեզւագիտական փորձերին և Դիմենբախի, Ֆ. Վինդիշմանի, Ռ. Գոչե, Պոլ դե Լագար (L. Diefenbach, F. Windischmann, R. Gosche, Paul de Lagarde): Մեծ Փիլոլոգները, որպէս Բոպպուր, Ելացինէրը, Պոտուրը, Շպիդէլը, Լասաէնը, գեռ ևս հայերէն չը դիմեն կամ չեն իմանում ինչպէս օգուեն նրանից. բայց վերջապէս Պոպու

դը Լագարդը և պրոֆեսոր Ֆրիդրիխ Միլէբը, Վիեննայից, նորան դասում են էրանական լեզուների շարքում։ Գրականութեան ուսումնասիրութիւնը առ այժմ դեռ շատ է զանց առնւած, բայց գորա փոխարէն ֆիլոլոգիան մեծ յառաջդիմութիւններ է անում, ինչպէս որ մենք այդ ցոյց տւինք՝ l'Arménie թերթում առ 15 յուլիսի պարոն բուգեհի մի գրքի առիթով<sup>1)</sup>։ Այդ յառաջադիմութիւնների շնորհիւն է որ սկսում են ուսանել բնագիրները լաւ քննադատութեան կանոնների համաձայն։ Հանգուցեալ Ալֆրէդ Փոն Գուտշմիդը գորա սկիզբը դրեց իւր աշխատութիւններով Մովսէս Խորենացու և Ագաթանգեղոսի մասին, որպէս Աղոլֆ Բառումգարանները իւր ուսւածքով Մովսէս Խորենացու ճարտասանութեան մասին։ Մենք հարկ չենք դասում ծանրանալ այս իրողութեան վերայ, որ մի գրականութիւն արդիւնաւէտ կերպով ուսումնասիրելու համար, ամենից առաջ պէտք է ունենալ իսկական բնագիրները, որոնցից հեռացրած կը լինեն արտագրողների սխալները, որքան այդ կարելի է։ Եթէ այն, ինչ մենք ասացինք, վերաբերում է մանաւանդ գրաբառին, չը մոռանանք սակայն որ այժմ սկսում են զբաղւել նաև նոր գրականութիւնով։ Նէյպշիսկի մի հրատարակիչ, պար. Վիլհելմ Ֆրիդրիխ արդէն լոյս է ընծայել, զեկավարութեամբ պար. Արգար Յովհաննիսեանի, մի տասնեակ հատորներ «Armenische Bibliothek» (զերմաններէն<sup>2)</sup>), և պար. Արթուր Լայսուը (Arthur Leist) ժամանակ առ ժամանակ մի քանի թերթերում հրատարակում է հայոց նոր բանաստեղծութիւնների գերմաններէն թարգմանութիւնները։ Այսպիսով ամեն բան ցոյց է տալիս լաւ ապագայ հայոց գրականութեան մշակման նւրոպայում։ Եթէ իսկ է որ XIX դարը միայն նախապատրաստական էպոս է, հետևապէս XX դարին կը պատկանի փառքը՝ հայկագեան գրականութիւնը այն աս-

<sup>1)</sup> Տես «Մուլճ» 1891 թ. № 2.

<sup>2)</sup> Նշանակութիւն տալով պ. Ա. Յովհաննիսեանի Armenianische Bibliothek (Հայկական Գրադարան) շատ օգտաւէտ հրատարակութեանը, թերեւ անկարեսոր չէ ասելը՝ որ մինչ այժմ լոյս տեսած հատորիկների խմբագրութիւնը, որքան մեզ լաւանի է, կատարել է պ. Արթուր Լայսուը, իսկ հում թարգմանութիւնները կատարել են այլ և այլ անձեր

տիճանի վերայ դրած լինելու, որ պատշաճում է նորան լուսաւոր աղքերի գրականութիւնների շարքում: Խակ մեզ, իւր վախճանին հանգող այս դարիս մշակողներիս, մեզ մնում է դեռ մի գործ կատարել: Մեր յետնորդները, լաւ հասկանալու համար Հայաստանի պատմութիւնը և գրականութիւնը, կուզենան տեղն ու տեղն նոցառութիւնների: Եւ իրօք ինչպէս կարող են պատմաբանը, հնագէտը մարդաբանը այլապէս նորից կենդանացնել անցեալը? Ինչպէս կարող է Փիլոլոգը այլապէս ուսանել ժողովրդի բառբառները, որ այնքան անհրաժեշտ են նորա հետազոտութիւնների համար? Ինչպէս կարող է գրականագէտը առանց գորան ժամաթախել լեզուն ժողովրդական խօսքի աղբիւրների մէջ, ինչպէս որ այլպէս արել են մեր ռոմանտիկները? Դէհ, որ այդպէս է՝ միացնենք մեր ոյժերը այս մի քանի տարիներս որ մնում են և Հայաստանը մատչելի դարձնենք նոցա համար, որոնք մեզ պէսք է յաջորդեն: Անենք այնպէս որ նոքա կարողանան այցելել այս գեղեցիկ երկիրը առանց վասանգ կրելու սպանւել Շուլցի (Schulz) նման, կամ չարաչար տանջել և կողոպուել քուրդ ու թուրք աւազակներից ինչպէս Սաշօն (Sachau), և որ նոքա ազատ լինեն հաղորդել բնակիչների հետ առանց վախենալու անյուշ բանուերից և կախազաններից որպէս ծորեկը:

Ակներւ է որ ֆրանսիական հայոգէտների աշխատութիւններն են որ ամենից առաջ մեր դարի զերմանական գիտնականների ուշքը դարձրին հայոց գրականութեան վերայ: Դոցանից առաջինը, Ժամանակադրական կարգով, Նէումանն է (Karl Friedrich Neumann): Ծնւած 1792 թ. Ռայխամանադրֆում, Բամբէրգի մօս (նորա խսկական անունն էր Բամբէրգէր), ուր նորա հայրը մի աղքատ հրէայ վաճառական էր, նա անցաւ իւր երիտասարդութիւնը վաճառականութեան մէջ, բայց 1817 թ. կարողացաւ գալ Հայութէրդ, այնտեղ իւր ուսումը ստանալու համար: Ազտեղ նա լսեց Հեգէլի դասախոսութիւնները և ընդունեց բողոքականութիւնը. ապա նա ուսեց Թիրշի (Thiersch) Փիլոլոգիական սեմինարիայում, Միւնիսինում: 1819 թ. նա ստացաւ դասատութիւն անելու վկայական և գնաց Գեօտութիւններին իւր ուսումը վերջացնելու համար: 1821-ից 1825 թ. նա վարեց ուսուցչութեան պաշտօն Վիւրցբուրգի և Սովիրիի դիմնագներում, բայց նորա սայինալիստական

գաղափարները նորան այնակեզից հեռացնել տւին։ Այն ժամանակ նա իրան հարկադրւած տեսաւ դիմել գրականութեանը և նւիրւեց մանաւանդ արեւելեան լեզուներին։ Նա մի քանի ժամանակ մնաց Սբ. Ղազարում՝ հայերէնը սովորելու համար, յետոյ մի ճանապարհորդութիւն արաւ Զինաստան չինական գրքերի ժողովածու կազմելու համար։ Իւր վերադարձին այդ գրքերից 2,400-ը տւեց Բերլինի գրադարանին, իսկ մնացածը 10,000 հատոր զիջեց Միւնխենի գրադարանին։ Իւր վարձատրութիւնն նա նշանակեց պրոֆեսոր հայերէնի, չիներէնի և էթնոգրաֆիացի Միւնխենի համալսարանում (1833)։ 1852-ին նորան ծառայութիւնից հանեցին այն յառաջաւոր մոքերի համար որ նա արտայացում էր պատմութեան դասընթացքի մէջ։ Նա շարունակեց մնալ Միւնխենում մինչ 1863 թ., ապա հաստատւեց Բերլինում, ուր նա մեռաւ 17 մարտի 1870 թւականին։

Նէումանը բաւականին բազմաթիւ աշխատութիւններ է հրատարակել չինաբանութեան, էթնոգրաֆիացի և պատմութեան մասին, բայց մենք այսուեղ կը զբաղւենք միայն նորա հայկաբանական աշխատութիւններով։ 1829-ին նա հրատարակեց նոր Ասիական թերթում (Nouveau Journal Asiatique, հատոր III) մի Յիշատակարան Դաւթի կեանքի և գրւածների մասին, որ հայկական ֆիլոսօֆա էր փրկչական Վ-րդ գարում, և մանաւանդ Արիստոսէլի մի քանի դրւածների նորա թարգմանութիւնների մասին (առև Դաւթի մասին յօդւածը Biogr. univ. de Michaud, 1855, և Բարթելլումի Սէնտ-Հիլէր'ինը Nouvelle biogr. générale, 1857). 1830-ին լոյս տեսաւ անդլիւրէն Եղիշէի պատմութիւնը Վարդանաց պատերազմի՝ „The History of Vartan and of the battle of the Armenians, containing an account of the religious wars between the Persians and Armenians by Elisaeus, bishop of the Amadunians, translated from the Armenian by C. F. Neumann, London: Oriental Translation Fund, 1830, XXIV+112 էրես, որին յաջարդեց 1831 թ. թարգմանութիւնը Վահրամի ժամանակագրութեան Հայոց թագաւորութեան մասին Կիլիկիայում խաչակիլիների պատերազմի ժամանակ՝ Wahram's Chronicle of the Armenian kingdom of Cilicia during the

time of the Crusades, translated from the original Armenian with notes and illustrations by C. F. Neumann, London, 1831 թ., 110 երես (տես Փրանտերէն թարգմանութիւնը Ս. Պետրոսեանի Revue de l'Orient 1864 թ., էջ 245—254 և 315—325): Ահա թէ ինչ է ասում պարոն նէւը Վարդանի թարգմանութեան մասին (Univesité catholique, հատոր XX, էջ 395). «Միւնխէնի գիտնական ակադեմիկոսի թարգմանութիւնը ազատ թարգմանութիւն է, որ կատարւած է թւում ոչ այնքան Փիլոլոգիական մաքով որքան իրողութիւնների ընդհանուր շահի համար. նա նոյն իսկ բնագրից յայտնի տեղեր կտրատել է, որ նա կրկնութիւններ կամ երկարաբանութիւններ է դատել, մանաւանդուր նորա կարծիքով հեղինակը ընկել է այն ոճի մէջ որ նա անւանում է հոմելիցիա (ճարտասանական): Անձշղութիւնները, որոնց համար յանդիմանելեն սրար. Նէումանին, բացատրում են այն սիստեմով որ նա ընդունելու հարկ է դատել, և նոյնպէս այն դժւարութիւնով միշտ խիստ ճշգութեամբ որոշելու իմաստը հին հայերէն մի բնագրի, որը առաջին անդամն է ենթարկում եւրոպական քննադատութեան և որը ոչ պակաս լիքն է քերականական համելուկներով, քան հայոց կլասիկների մեծամանութիւնը: Տեսնելով այն բարեխիղճ զգուշութիւնը, որով վերաբերում են նոյն իսկ Միխթարեանները իրանց հայրենիքի հին հեղինակները մեկնելու ժամանակ, այլ ևս հասկանալի են այն մի տեսակ օրինական տառանմունքը, որի մէջ է լինում եւրոպացի Փիլոլոգը՝ բնագիրը կարդալու և ուսումնասիրելու ժամանակ, յայտնի տեղերի մոքի որպէս նաև փոխաբերական մի քանի խօսքերի կամ այլաբանութիւնների դիմաց: Այդ պատճառով մենք չենք հասկանում այն արհամարանքը և կծւութիւնը որոնք բուրում են այն հանդիմանութիւնների միջից, որոնք, խիստ քննադատութեան անունից ուղղուում են եռանդու թարգմանիչներին, և այն էլ այնպիսի անձշղութիւնների և նոյն իսկ սխալների առիթով, որոնք անխուսափելի են Փակտերի նորութեան և նոյնպէս դարձածների օտարութի լինելու պատճառով: Մենք չը վախեցանք ամբողջապէս արտագրելու այս շատ խրատական էջը, որի մանաւանդ վերջին նախադատութիւնը առաջադրում ենք ներկայիս յայտնի կրիտիկոսներին:

Գերմանական ամսագրերում նէումանը աշխատակցեց նախ 1829 թ. Hermes oder Kritisches Jahrbuch der Literatur (Հերմէս կամ քննադատական ամսագիր գրականութեան) հանդէսին, Լէպպիդ, հառ. XXXIII, մի յօդւածով այս խորագրով՝ «Հայոց լեզուն և նորա գրականութիւնը»։ Դա մի շատ հետաքրքրական գեկուցումն է, որը պարունակում է Գերմանիայում կատարւած հայկական ուսմունքների պատմական տեսութիւնը։ Հեղինակը այդտեղ նկարագրում է, բացի Արանդ-Աւգերի բառգրքից, Մովսէս Խորենացու (1827) և Եղիկի (1826 թ.) Վենետիկեան հրատարակութիւնները։ Էջ 202—204 նա թարգմանում է հոչակառ տեղը Որմիզդի և Արքանի ծննդեան մասին։ 1833-ին նա հրատարակեց Jahrbücher der Literatur (Վիեննա, հասոր 62, էջ 58—69) մի յօդւած Փաւատոս Բուզանդի մասին, ոորա հրատարակութեան առիթով, Վենետիկ 1832։ Նա այնուղ այս կարծիքն է յացանում թէ հայերէնը մօտիկ ազգական է պահլաւերէնի, և այդ հաստատելու համար նա առաջ է բերում մի էջ Վիլհելմ Հումբոլդտից<sup>1)</sup> Abh. d. hist. philol. Klasse d. kön. Ak. d. Wiss. zu Berlin, 1829 թ., հրատարակւած 1832-ին, էջ 25), չի տատանուում պնդելու թէ հայերէնը հնդկա-գերմանական<sup>2)</sup> ամբողջ գերդաստանի ամենահարուսա լեզուներիցն է և որ ֆիլոլոգիական ու պատմական տեսակէտից այդ լեզւի ուսումնասիրութիւնը աւելի կարեռ է քան որ և է մի ուրիշը լեզւագիտական աշխարհից։ Այդ յօդւածի վերջում (էջ 69—71) նէումանը նկարագրում է բժ. Մխիթարի (Mkhithar de Her) գիրքը տենդի մասին, հրատարակւած Վենետիկ, 1832։ Կ. Ֆ. Իլլինի ամսագրում Zeitschrift für die historische Theologie, Լապպիդ, 1834, հասոր IV, տուածին մաս, էջ 71—78, նէումանը թարգմանեց Եղիկի գրւածքի չորրորդ մասը՝ Marcions Glaubenssystem մի տեղեկութիւնով Մարկիոնի վարդապետութեան և պարսից կրօնի յարաբերութիւնների մասին։ Այդ միեւնոյն հասորում,

<sup>1)</sup> Վիլհելմ Փոն Հումբոլդտ, նշանաւոր լեզւագէտ, պատմաբան և քաղաքագէտ, եղբարը հոչակառ բնագէտ Ալեքսանդր Փոն Հումբոլդտին։

<sup>2)</sup> Որ նույն է թէ Հնդկա-եւրոպական։

երկրորդ մաս, նա տւեց Ներսէս<sup>1)</sup> Լամբրոնացու Կիլիկիայի Տարսոսի արք-եպիսկոպոսի սինոպական հռչակաւոր ճառը, ներածութիւնով և ծանօթութիւններով (որ արգէն խոալերէն թարգմանել էր հայր Յարութիւն Աւգերեանը, Վենետիկ, 1812): Նոյնպէս 1834-ին Նէումանը հրատարակեց Սերգիյ Գլինկաի ռսերէն մի բրոշիւրի (Լազարեան ճեմարան, 1831) գերմաներէն թարգմանութիւնը՝Պատմութիւն գաղթականութեան դէպի Ռուսաստան 40,000 հայերի Ագերբէջանի նահանգից 1828 թ. (Լայպցիդ): Վերջապէս 1836-ին լոյս տեսաւ Լայպցիգում հռչակաւոր արևելադէտի հիմնական գրւածքը՝ «Փորձ հայոց գրականութեան պատմութեան, ազատորէն խմբագրւած ըստ Միհթարեանների աշխատութիւնների» (Versuch zu einer Geschichte der armenischen Literatur nach den Werken der Mechitaristen frei bearbeitet, XII+308 էջ): Այս գիրքը բաժանւած է 18 գլուխների և դասաւորւած է ըստ դարերի: Հեղինակը 1848-ին նորա վերայ աւելացրեց մի յաւելւած 56 երեսի, որ խօսում է Մովսէս Կաղանկատուացու և Արիստակէս Լատոիվերդցու մասին, խորագրով՝ Beiträge zur armenischen Literatur (Նպաստներ հայոց գրականութեան համար), Միւնիսէն, 1859: Մէնք չենք կարծում թէ Նէումանը ուրիշ աշխատութիւններ ունենայ հայոց գրականութեան մասին. բայց եթէ սխալում ենք, խնդրում ենք տեղեակներից որ բարի լինեն ցոյց տալ մեզ մեր բաց թողածը:

<sup>1)</sup> Յօդւածիս հեղինակը դրում է St. Nersès de Lambion. սակայն լատինի է որ Ներսէս Լամբրոնացուն Հայեաստաննեաց եկեղեցին սուրբերի կարգը չլ գումար:

# ՍԱՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՐԱՎՈՒՐ

ԲԺՇ. ՆԵՐՍԵՍ ՈՒՄԻԿԵԱՆԻ

Առիստինու առողջապահութեան ամբիոնի Խարկովի համալսարանում:

(Շարունակութիւն՝<sup>1)</sup>)

## IV

Խօսելով՝ զիտնականապէս որոշւած կերակրացին տարրերի հինգ կարգերի մասին— ես զիտմամբ խօսք չասացի— ֆոսֆոր պարունակող օրդանական մի նիւթի մասին որ լեցիա ին է կոչւում:

Նեցիտինը նման է ճարպերին, որոնց նա շատ մօտ է իւր բաղադրութեամբ, եթերի և սպիրտի մէջ լուծելովը և այլն: Նեցիտինը մեծ քանակութեամբ գտնւում է զլիսի ուղեղի մէջ և փոքր քանակութիւններով բոլոր օրգաններում<sup>2)</sup>: Ես հետազոտել եմ թէ առաջնների և թէ երկրորդների քանակութիւնը զիտնական ճշգութեամբ: Ես հետազոտել եմ նմանապէս լեցիտինի քանակութիւնը շատ բուսական կերակրացին միջոցներում՝ լորու զանազան տեսակներում, սիսեռի, զարու, ցորենի, եղիպտացորենի, զետնալսնձորի և ուրիշ շատ նիւթերի մէջ:

1) Տես «Մուրճ» № 6.

2) Կերակրացին զանազան միջոցների մէջ գտնուող լեցիտինի քանակութեան և լեցիտինի մննդատու նշանակութեան մասին լոմ կատարած հետազոտութիւնները և եղբակացութիւնները չուտով լուս կը տեսմնեն մի որ և է բժշկական թերթում:

Գիտնական գրականութեան մէջ մինչև օրս չկայ և ոչ մի աշխատասիրութիւն, որը ցոյց տւած լինէր լեցիտինի սննդատու նշանակութիւնը։ Պրոֆ. Դանելիսկալու հակողութեան ներքոյ իմ արած բազմաթիւ փորձերից՝ շների, աղաւնիների և իմ անձիս վրա երևաց որ լեցիտին ընդունող կենդանիների կշիռը աւելի շուտ էր ծանրանում, նրանք աւելի գւարժ, ուժեղ, արագաշարժ էին լինում և ընդհակառակին՝ լեցիտինից զրկւած կենդանիները կորցնում էին իրանց կշախ, (և եթէ մի քանիսի քաշը աւելանում էր — դա լինում էր շատ աննշան չափով), դասնում էին դանդաղ, վատառողջ և այլն։

Այս իմ փորձերից պարզ ապացուցում է լեցիտինի սննդատու լինելու նշանակութիւնը։ Անդանիները ընդունում են բացի վերոցիշեալ բոլոր սննդատու նիւթերից մեծ քանակութեամբ նաև այնպիսի նիւթեր, որոնք մեծ մասամբ դոնեւում են կերակուրի մէջ աննշան չափերով և որոնք դարձնում են ընդունելի կերակուրը աւելի համով և ուաելի։ Այս նոր տեսակի նիւթերը սննդատու նշանակութիւն բոլոր ովին չունին, որովհետեւ նրանք չեն կարողանում պահպանել մեր օրդանիստի նիւթական պարունակութիւնը և ոչ էլ ապահովել օրդանիստի մէջ եղած մննդատու նիւթերը կորուստից։ Այս տեսակի նիւթերը կոչւում են ճաշակի նիւթեր։

Սոքա կատարում են մի բոլորովին ուրիշ, բայց ոչ պակաս նշանաւոր զեր օրդանիստի համար և կերակուրի մէջ սոքա նմանապէս անհրաժեշտ են, նման սննդատու նիւթերին։

Ճաշակի բոլոր նիւթերը կարելի է բաժանել երկու մեծ կարգերի։

1) Նոքա՝ որոնք ընդունուում են բացառապէս կերակուրի հետ մի ասին (կամ կերակուր պատրաստելու ժամանակը, կամ ուտելու ժամանակը, կամ ուտելու միջոցին) և անւանեւում են համեմներ (որովրածակ), զորօրինակ հասարակ աղը, մանանեխ, քացախ, պղպեղ, իւղ, կինամնն (դարձին), վանիլ, մշկահոտ ընկոյզ, բոլոր բանջարեղինները՝ գազար, կազամբ, կոտեմ, թարխուն, բողկ, ծնեբեկ և այլն, որ գցում են կերակուրի մէջ։

2) Նոքա, որոնք ընդունուում են առանձնապէս իբր կերակուր կամ ըմպելիք միմիայն համեմային և զրգուող տեսակէտից և ոչ թէ սննդատու լինելով։ Այս թւումն են՝ տեսակ-տեսակ զակուսկաներ,

քաղցրաւենի, միրզ, խմիչքեղէն, սուրճ, թէյ, շոկոլատ, կոնֆեկտներ և այլն:

Հիմնւելով իմ բոլոր ասածներիս վրա 5 տեսակ մննդատունիւթերի վերաբերութեամբ՝ կարելի էր կարծել, որ եթէ մենք վերցնելու լինենք սպիտակուցային նիւթեր, ճարպեր, ածխաջրածիններ, անօրդանական աղեր և ջուր — որոշ կենդանու համար անհրաժեշտ գանձակութեամբ, և, եթէ այդ բոլորը միասին խառնելով մի խառնուրդ կազմէինք ու առաջարկեինք իբր կերակուր կենդանունական նորմալ կերպով կը կերակրւէր դորանով.—բայց ոչ: Ոչ մարդս, ոչ անսասունները կերակուրի այդպիսի մի խառնուրդ չեն ուտիլ, որովհետև այդպիսի մի խառնուրդը անհամ է լինում: Նոքա հրաժարւում են այդպիսի մի կերակուրից նոյն իսկ մեռնելով քաղցից: Բայց եթէ աւելացնում ենք ճաշակային նիւթեր կամ համեմետր՝ նոքա սկսում են ընդունել այդպիսի նոր խառնուրդը թէև ոչ երկար ժամանակով:

Այսպիսով՝ ոչ մարդը, ոչ կենդանիները չեն կարող կառավարւել առանց ճաշակային նիւթերի. և այս վերջիններիս անհրաժեշտութիւնը այնքան զգալի ու մեծ է, որ մարդս շատ անգամ յանձն է առնում ամեն ծախք անել, նոյն իսկ զրկւել սննդատու նիւթերից, միայն թէ կարողանայ գոհացում տալ իւր ճաշակային պահանջներին: Այս հանգամանքով են բացատրւում այն ահազին ծախքերը որ անուում են՝ գինու, արաղի, գարեջրի, տեսակ-տեսակ զակուսկաների, ծխախոտի, կոնֆեկոների և այլ ճաշակային նիւթերի վրա: Խոչ է պատճառը ճաշակային այս մեծ պահանջքի, որ ունի կենդանին:

Գլունականների բազմաթիւ փորձերով ապացուցւել է, որ ճաշակային նիւթերը ազդում են մննդառութեան և մարսողութեան վրա իրանց ներգործութեամբը չղային սիստեմի վրա:

Համով և հոսով կերակուրի նիւթերը սկզբում գրգռում են ճաշակային և հոտառութեան օրգանները, զրդում են մի ախորժելի զգացողութիւն, այնուհետև ներգործում են ամբողջ մարսողական գործիքի վրա—պատրաստելով նրան մարսողութեան գործի համար: Գրգռման գործողութեան ժամանակ—արտադրում է առաջ լորձունք: Այդ կարելի է ապացուցանել փորձով ստամքսային գեղձերի

(յելեզա) հայար<sup>1)</sup>: Ամեն մի կերակուր այնքան է ուտում—մինչև որ նա համով է թւում: Այն ամենը ինչ որ անհամ է կամ վաս համ ունի—մենք չենք կարող կուլ տալ:

Բերանից անցնենք ստամբսին: Յայտնի է որ յուզաթաղաթի ամեն մի մեքանիկական գրգռումը ստամբսի մէջ—առաջ է բերում խախատայոցի արտաթորութիւն և արիւնատար անօթների լում (Ապօլիսի): բայց մի քանի գրգռող ճաշակային նիւթեր տւելի զօրեղ են այդ կողմից, զորօրինակ խոհանոցի աղը և ալկոհոլը (ԱԽ-ԿՈԳՈԼՅ): Այս պատճառով է որ ուտելուց առաջ ընդունում են կամ շատ աղի կամ խիստ համեմած զակուսկա, ձկնկիթ, կամ մի ումով արագ: Երկրորդ կարգի ճաշակային նիւթերը երբ որ սոքա արգէն անցած են լինում արիւնի մէջ՝ ազդում են գլխաւորապէս գլխի և ողնաշարի ուղեղների վրա: Սոցա թւումն են՝ սուրճ, թամբաքու, թէս, ոգեղէն և այլն: Դլիսի և ողնաշարի ուղեղները այս նիւթերի ներգործութեան տակ տարածում են իրանց գրգռող ոյժը ամբողջ օրգանիսմի վրա—ազգելով մեր տրամադրութեան վրա և մեր՝ աշխատելու ընդունակութեան վրա: Մտաւոր կամ ֆիզիկական գործով աշխատող մշակը հեռու է մղում առաջ եկող թմրութիւնը թամբաքու քաշելով կամ մի բաժակ գինի խմելով:

Սակայն չը պէտք է մոռանալ որ այս ճաշակային նիւթերը իրանք-իրանք սննդատու նիւթ չեն մատակարարում, այլ միմիայն զարկ են տալիս եղած մննդատու նիւթերի աւերման, քայլքայման. և եթէ օրգանիսմին շարունակ տալու լինենք միմիայն ճաշակային նիւթեր՝ իւր բոլոր սննդատու նիւթերը աւերելուց նա կը մեռնի. ուստի օրգանիսմի կեանքը պահպանելու համար անհրաժեշտ է այդ երկու տեսակ, այն է սննդատու և ճաշակային նիւթերի անդադար և հարկաւոր չափերով մատակարարումն: Նշանաւոր է այն երեւոյթը, որ միմիայն ճաշակային նիւթերը, եթէ տրում են շարունակ, դուրեկան զգացողութիւնների փոխարէն հակառակն են պատճառում: Եթէ որ և է կերակուր, որ սկզբում մեզ շատ համով է թւում,

<sup>1)</sup> Արհեստական ֆիստալաւոր ( ) չների ստամբսի վրա ինքս անձամբ տեսել եմ խախացահուզի չամկարծակի երևալը, երբ քաղցած շան ցուց են տալիս եղել մոի կտոր:

Անք ուսում ենք մեծ քանակութեամբ կամ շատ յաճախ—նորա առաջ բերած տպաւորիչ զդացողութիւնները բթանում են։ Այս է պատճառը, որ ոչ մի մարդ չի կարող երկար ժամանակ կերակրել միւնոյն կերակրով, նա կը զգուի նրանից։

Մենք սիրում ենք ճաշի բազմատեսակ լինելը ոչ թէ ուրիշ սննդառու նիւթեր ձեռք բերելու համար, որոնք շատ կերակուր-ների մէջ նոյնն են և որոնց մասին ես այնքան շատ խօսեցի, այլ միմիայն տեսակ-տեսակ ճաշակացին նիւթերի համար։ Եւ չը պէտք է զարմանալ, որ միմիայն կերակուրը մենք ընդունում ենք զանազան ձևերով և կերակրացին բազմատեսակ նիւթերից պատրաստած։ Մենք անդադար փոխում ենք կերակուրը և էլի մնում ենք դժգո՞հ, եթէ նրանք նորից երևում են սեղանի վրա։ Քանի անդամ է պատահել ձեզ ընթերցող, արդէն կուշա կերած պրծած լինելուց յետոյ մաս-նակցել թէկուզ մի քաղցրեղէն խմորեղէնի, կամ մի աւելի թեթև կերակուրի։ Բացատրութիւնը էլի նոյնն է։ Անք կարող ենք ուսել այնպիսի մի քանակութիւն և այնքան բազմազան նիւթեր—մինչև որ սոքա արդէն զգւելի են դաւնում։

## V

Վերը մենք խօսեցինք սննդառու նիւթերի նշանակութեան մասին. այժմ խօսենք թէ ինչ շափերով պէտք է լինեն այդ սննդառու նիւթերը կերակուրի մէջ—նպատակացարմար սննդառութեան համար ջոկ ջոկ պայմաններում։

Սննդառու նիւթերի շափերի մասին խօսելիս ես առայժմ աչքի առաջ կունենամ՝ սպիտակուցացինն նիւթերը, ճարակերը և ածխաջրածինները, իսկ ջրի մասին կը խօսեմ յետոյ։ Բայց որովհետեւ անօրդանական մասերը գտնուում բոլոր նիւթերի մէջ անհրաժեշտ շափերով, ուստի դոցա մասին առանձնապէս խօսելու հարկ չկար։

Դրեթէ անհնարին է օրդանիսմի սննդառութեան համար կազմել մի ընդհանուր անպայմանն նորմ։ 1) մննդառու նիւթերի, որովհետեւ այդ չափը կախւած է զանազան պայմաններից, այն է՝ հա-

1) Նորմ=չափ։

սակից, սեռից, կլիմայից, օրգանիսմի դրութիւնից (հանդատութիւնն կամ ֆիզիկական մտաւոր աշխատութիւն) և անհատականութիւնից:

Ուստի իմ բերելիք թւերը<sup>1)</sup> կը լինեն միջին թւեր միջին օրգանիսմի համար որոշ հանդամանքներում:

Յօցտը՝ իւր և ուրիշների հետազօտութիւններից առաջ է բերում միջին մարգու համար միջին քանիչու ժամանակ հետեւեալ թւերը՝

118 գրամ—սպիտակուցային նիւթեր  $\left\{ \begin{array}{l} = 18,3 \text{ գրամ ազուր} \\ \text{ածխածին} \end{array} \right.$  + 63 գր.

56      »      ճարպեր  $\left\{ \begin{array}{l} = 265 \text{ գրամ ածխածին} \\ \text{ածխաջրածիններ} \end{array} \right.$

---

18,3 գրամ ազուր + 323 գրամ ածխածին:

Այս չափսը կազմում է այնպիսի կերակուրից, որը բաղկացած է լինում՝ մի խառնուրդից՝ մաեղին և բուսական մի քանի նիւթերից: Որպէս զի հեշտացնենք այն հաշիւը թէ որքան կերակրային միջոցներ են հարկաւոր օրգանիսմին անհրաժեշտ չափով մննդատունիւթեր մատակարարելու՝ առաջ դնենք մի աղիւսակ<sup>2)</sup>, որից կերեան մի քանի նիւթերի (ջրի, սպիտակուցային նիւթերի, ճարպերի և ածխաջրածինների) տոկոսական չափերը:

(Նայէք յաջորդ երեսը):

1) Սննդատու նիւթերի չափսերը որոշելու համար աշխատել են Bischoff, Voit, Pettenkofer, Pflüger, Rohland, Beneke, Rubner Banke և ուրիշները:

2) König—Chemische Zusammensetzung der menschlichen, Rahmungs- und Genussmittel.

ԿԵՐԱԼՔԱՅԻՆ միջոցներ	ԶԵՒ օ/Օ	Սպիտակուց. օ/Օ	Ճարպերի օ/Օ	Ածխաջրա-ծեռների օ/Օ
Հում մաքուր միս . . .	75.9	21.9	0.9	—
Եփած » » . . .	56.86	34.14	7.5	0.4
Տաղակած » . . .	55.39	34.23	8.21	0.72
Գեր հորթի » . . .	72.31	18.88	7.41	0.07
Նիհար հորթի » . . .	78.82	19.86	0.82	0.50
Միջակ ոչխարի » . . .	75.99	17.11	5.77	0.00
Նաղաստակի » . . .	74.16	23.34	1.13	0.19
Հաւի » . . .	70.82	22.65	3.11	1.09
Կոնկոյ ձկան միս (պյուկա)	79.59	18.34	0.51	0.63
Հաւի ձու . . . . .	73.67	12.55	12.11	0.55
Զի սպիտակուցը . . . . .	85.75	12.67	0.25	0.00
Զւի դեղնուց . . . . .	50.82	16.24	31.75	0.12
Կանանց կաթը . . . . .	87.02	2.36	3.94	6.23
Կովի » . . . . .	87.42	3.41	3.65	4.81
Այծի » . . . . .	87.33	3.52	3.94	4.39
Սեր . . . . .	65.51	3.61	26.75	3.52
Կովի իւզ. . . . .	14.49	0.71	83.27	0.58
Խւզալի պանիր . . . . .	39.09	25.09	29.05	2.22
Ցորենի հատիկը . . . . .	13.65	12.35	1.75	67.91
Ցորենի ալիւր . . . . .	13.34	10.18	0.94	75.06
Հաճարի հատիկը . . . . .	15.06	11.52	1.79	69.82
» ալիւր . . . . .	13.71	11.52	2.08	71.25
Վարսակի » . . . . .	14.83	10.89	1.48	72.22
Եղիպատացորենի ալիւր . . . . .	13.12	9.85	4.62	70.90
Բրինձ . . . . .	13.11	7.85	0.88	77.15
Մակարօնը . . . . .	13.07	9.02	0.30	76.77
Սպիտակ հացը . . . . .	35.59	7.06	0.46	56.90
Գետնախնձորը . . . . .	75.48	1.95	0.15	21.44
Գարունք . . . . .	95.60	1.02	0.09	2.90
Լոբի չորացրած . . . . .	14.76	24.27	1.61	56.10
Սիսեռ . . . . .	14.99	22.85	1.79	57.79

Եթէ մարդս յանձն առնէր այս բոլոր կերակրացին միջոցներից միայն որ և է մէկը ուտելով կերակրւել—վերոցիշեալ նորմալ անհրաժեշտ սպետակուցազին մննդատու նիւթերի այն 118 դրամը (=18.3 գր. ազոտ) ստանալու համար պէտք է ուտէր Ֆօքոն հաշւով հետևեալ միջոցներից.

կամ՝ պանիր . . .	68	մսխալ
» սիսեռ. . . .	1 ֆ.	34
» նիհար միս . .	1 »	38
» ցորենի ալիւր.	2 »	07
» ձու (18 հատ).	2 »	32
» եղիպտացորեն.	2 »	55
» սև հաց. . . .	3 »	64
» բրինձ. . . .	4 »	83
» կաթ . . . .	7 »	54
» գետնախնձոր .	11 »	88
» ճրագու իւղ. .	12 »	47
» կաղամբ . . .	19 »	82
» գարեջուր . .	44 »	26

Նորմալ մննդատու նիւթերի մնացած մասը, այն է 328 դր. ածխածին ստանալու համար մարդս պէտք է ուտի (այն յիշեալ ենթադրութեամբ), որպէս զի սոցանով գոհացում տայ ածխաջրածինների և ճարպերի պահանջքին.

կամ՝ ճրագու իւղ .	1 ֆ.	16	մսխալ
» կարակ իւղ. .	2 »	08	»
» ցորենի ալիւր.	2 »	15	»
» բրինձ. . . .	2 »	32	»
» սիսեռ. . . .	2 »	38	»
» պանիր . . . .	3 »	02	»
» սև հաց. . . .	3 »	50	»
» ձու (34 հատ).	5 »	78	»
» նիհար միս . .	6 »	79	»
» գետնախնձոր .	8 »	13	»
» կաթ . . . .	12 »	11	»

» կաղամբ . . . 24 » 25 »

» գարեջուր . . . 34 » 26 »

Աղիւսակի այս թւերը իրանք խօսում են: «ոքա պարզ ցոյց են տալիս, որ ցիշեալ կերակրային միջոցներից և ոչ մէկը՝ ինքն ըստ ինքեան, առանձնապէս վերցրած՝ չի կարող նորմալ (այսինքն բնական, սովորական) կերակուրի տեղը տալ այնպէս որ անհնարին է մարդուս համար դոցանից որ և է մէկով բաւականանալ: Վերցնենք միսը: Սպիտակուցային նիւթերի անհրաժեշտ քանակութիւնը ձեռք բերելու համար պէտք է, ցիշեալ աղիւսակների համաձայն, ուտել 1 ֆ. 36 մսխալ միս: Ճարպային և ածխաջրածնային նիւթերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է 6 ֆ. 36 մ: միս ուտել: Ակներեւ է որ ոչ ոք չի կարող երկար ժամանակ ուտել օրական 6 ֆ. 79 մսխալ միս<sup>1)</sup>: Սա մէկ: Նրկորդ օր 6 ֆ. 79 մսխալ միս ուտելիս—մենք օրգանիսմի մէջ ներս բերած կը լինէինք սպիտակուցային նիւթերի մի ահագին քանակութիւն, որ աւելորդ էր օրգանիսմի համար (որովհետեւ սպիտակուցային նիւթերի քանակութիւնը պէտք է լինէր այնքան՝ որքան որ կայ 1 ֆ. 36 մսխալ մսի մէջ) և որ սոցա մարսողութիւնը շատ կը գժւարացնէր ստամոքսի գործը: Պարզ է ուրեմն, որ պէտք էր մսին, որը հարուստ է ապիտակուցային նիւթերով, աւելացնել այնպիսի կերակրային միջոցներ, որոնք հարուստ լինէին ճարպերով և ածխաջրածններով (օրինակ՝ ճարպ կամ գետնախնձոր), որ կերակրային միջոցների աւելի պակաս կշռով և ծաւալով (օնթեմբ) սուանալ կարողանայինք սննդաստու նիւթերի նորմալ չափու էսկիմոսները գործ են ածում ոչ միայն մկանացին միս որը աղքատ է ճարպերով և ածխաջրածններով, այլ և աւելացնում են դրա վրա բաւականաչափ ճարպ: Հիւսիսային Ամերիկայի հնդիկները որսի գնալիս վերցնում են իրանց հետ միակ կերակուր պեմմեկան ասածը, որ բաղկացած է փոշիացած մսից և ճարպից: Հնդկաստանցիք և Զինացիք թէե գործ են ածում մեծ քանակութեամբ բրինձ (որը շատ աղքատ է սպիտակուցային նիւթերով), բայց հարուստ ածխաջրածննե-

<sup>1)</sup> Հարկաւոր չէ 1 ֆ. 36 և 6 ֆ. 36. գումարել, որովհետեւ վերջին գումարի մէջ արդէն կատարականաչափ և պիտակուցավին նիւթեր:

րով) աւելացնում են վրա վրա—ձուկ, լուբիա, սիսեռ (որոնք հարուստ են սպիտակուցացին նիւթերով): Իրլանդացիք և արևելեան Պրուսսիացի բնակիչները գետնախնձորի վրա (որը հարուստ է ածխաջրածիններով և աղքատ սպիտակուցացին նիւթերով) աւելացնում են մածուն կամ մեր տառեխի նման մի ձուկ (շելեմա), որոնք հարուստ են սպիտակուցացին նիւթերով: Աւտարալիացի խորքերի մի քանի բնակիչները գործածելով վայրենի թռչնեղէն միս ահազին քանակութեամբ՝ այնուամենացնիւ մեռնում էին մաշւածութիւնից—երեխ ճարպացին և ածխաջրածնացին նիւթերի պակաս ընդունելու պատճառով: Բոլոր ասածներից պարզւում է, թէ Բ'նչու համար մարզս զրեթէ միշտ բնազդմամբ ընտրում է իւր համար կերակուրների զանազան տեսակները կենդանացին և բռնական աշխարհներից, և յիրաւի միմիայն այս պայմանով նա կը ստանայ ռացիոնալ կերակուրը, որը ոչ շատ կը ծանրաբեռնի նրա ստամոքսը, ոչ էլ աւելորդ ոյժերի վատնումն կը պատճառէ: Զրի անհրաժեշտ քանակութիւնը, որը պիտի ծառայի օրգանիսմի նիւթական կազմութեան, տարբերում է անհատի օրգանիսմի անհատականութիւնից, հանգստառութիւնից թէ բանելուց, հասակից, տարւայ եղանակից և այլ արտաքին պայմաններից:

Forster'ի<sup>1)</sup> հետազոտութիւնների հիման վրա—հասակ առած մարդը սովորական սննդառութեան միջոցին ընդունում է իւր մէջ 5 ֆ. 70 մախալից սկսած մինչև 9 ֆ. 11 մախալ ջուր: Զրի այս քանակութիւնը ներս է ընդունուում երկու կերպ՝ 1) կերակուրի ձևով, որը որոշ ջրի քանակութիւն է պարունակում (տես կերակրացին միջոցների բաղադրիչ մասերի աղիւսակը), և 2) ընպելիքի ձևով:

## VI

Մինչև հիմա մենք որոշում էինք միջին աշխատաւորի համար միջին աշխատաւութեան ժամանակ կերակուրի միջին նորմալ չափը: Ինձ մնում է մի քանի խօսք ասել այն պատճառների մասին, որոնք փոփոխութեան են ենթարկում այդ չափալ՝ նայած օրգանիսմի վրա նոցա ունեցած աղդեցութեան. զորօրինակ օրգանիսմի-

<sup>1)</sup> Թրիսմանъ—Կյուր Գիգևս տ. III.

տեսակ տեսակ զրութիւնները (հանգստութիւն, մոռաւոր կամ ֆիզիկական աշխատութիւն, յղութիւն, կաթի արտադրութիւն) օրգանիսմի սեռը և նրա հասակը:

Այս բոլոր գրութիւնների մասին փորձնականապէս ձեռք բերած նորմալ թւերը ամեն մէկի համար առանձին—ես այսոեղ հարկ չեմ տեսնում մէջ բերելու, այլ կը խօսեմ կարճառօտ կերպով:

Ակների է որ բանող մշակը աւելի շատ մննդատու նիւթեր պիտի ընդունի՝ աչքի առաջ ունենալով աւելի շատ մեքանիկական գործողութիւն:

Բայց մը մննդատու նիւթերից—բորակածնայինից թէ անբորակածնայինից:

Այս հարցը հետազոտղների մեծահանութիւնը պարագլուխ ունենալով պ. Խօսին՝ ասում է որ բանող մարզը սպասում է սպիտակուցային նիւթերի մի և նոյն քանակութիւնը թէ հանգստութեան և թէ սաստիկ աշխատութեան դէպքերում։ որ միմիայն անբորակածնային նիւթերի սպասման քանակութեան մէջ է զանազանութիւնը, այսինքն իբր թէ բանելու (բածու) ժամանակ օրգանիսմը սպասում է աւելի շատ անբորակածնային նիւթեր (ճարպեր և ածխաջրածիններ) քան հանդիսան եղած ժամանակ։ որովհետեւ ճարպերը և ածխաջրածինները իրանց այրելու միջոցին օրդանիսմի մէջ—ժառայում են իբրև զլիսաւոր աղբիւր՝ ծածկւած ոյժ և տաքութեան պատրաստելու համար։

Հետազոտղների փոքր մասը, որոնց թւում եմ և ես, ասում է որ բանելու ժամանակ բացի ճարպերից և ածխաջրածիններից սպասում է նաև սպիտակուցային նիւթերի մի փոքր քանակութիւն։ Ուստի մշակի կերակրի մէջ բացի ճարպերի և ածխաջրածինների աւելացնելոց՝ պէտք է աւելացնել նաև սպիտակուցային նիւթեր մի փոքր քանակութեամբ։

Աերջապէս Շպէկը ասլացուցեց որ մտաւոր աշխատութիւնը չի շատացնում աւերման պրոցեսները օրգանիսմի մէջ, ուստի և տեղի չկայ ենթադրելու որ մոռաւոր մշակը սպառէր աւելի շատ կերակրային միջոցներ։

Անցնելով կնոջ յղութեան շրջանին՝ պէտք է ասենք, որ թէ երեխայի ղարզացման և թէ կաթի գոյացման համար անհրաժեշտ

Են աւելորդ նիւթեր։ Ակներև է որ ացդ երկու դրութիւնների համար էլ նիւթը պիտի ներս բերւի կերակուրի հետ. ուստի թէ յզի կնոջ և թէ կա՞թ աւող կնոջ կերակուրի մէջ պէտք է շատացնել սննդառու բոլոր նիւթերը։ Եւ զլիսաւորապէս սպասակուցային նիւթերը, որովհետև սրանք են կազմում այն նիւթերը, որոնցից թէ զարգանում է երեխան և թէ գոյանում է կաթը։

Գալով ռեռին՝ պէտք է ասենք որ կինարմատը աւելի քիչ կերակուր է սպահանջում. առաջին՝ որ նրա մարմնի սովորական քաշը ազամարդու քաշից աւելի պակաս է (չմուանանք ցիշել որ հասակ առածները իրանց քաշի համեմատ են կերակուր ընդունում), և երկրորդ՝ կինարմատը այնքան ինտենսիւ<sup>1)</sup> չի գործում, բանում։

Հասակի մասին արդէն մանրամասն խօսած լինելով (դլ. I)<sup>2)</sup> սցստեղ կը ցիշեմ միայն, որ աճող օրգանիսմի կերակուրը ծառայում է աւելի շատ նպատակների քան հասակ առածինը, և հասակ առածինը իւր կողմից օրգանիսմի համար աւելի շատ նպատակների է ծառայում քան ծերերինը. ուստի աճող օրգանիսմը ակնյալախ կերպով աւելի շատ կերակուր պիտի ընդունի քան հասակ առածը, իսկ վերջինը իր կողմից աւելի շատ կերակուր պիտի ընդունի քան ծերը։ Այս տեսական եզրակացութիւնը ապացուցւած է գիտնականների բազմաթիւ փորձերով։

Երեխայի ծննդեան բուգեից մինչեւ 10—12 տարեկան հասակի մննդառութեան մանրամասնութիւնները՝ ես կը դարձնեմ նիւթ մի առանձին յօդւածի։

<sup>1)</sup>) Ինտենսիվ=սպասիվ, ուժվին։

# ՏԵՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹԻՒՆԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ 1891 ԹԻԱԿԱՆԻՒՄ<sup>1)</sup>

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

Տնտեսական դրույթիւնը Ռուսիայում ներկայացնում է մի այնպիսի պատկեր, որ իւր սուր բնաւորութեամբ գրաւեց իւր վրայ ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը: Եւրոպական մասնւլը լուրջ կերպով ուսումնափեց այդ դրույթիւնը և սորա պատճառները: Անկարելի էր անտարբեր մնալ, քանի որ այդ դրույթիւն հետևանքները պիտի մի կերպով հասնեին Եւրոպային և սորա տնտեսական շահերը շօշակեին:

Հնչողէս յայտնի է, Ռուսիայի ներկայ տնտեսական տագնապի պատճառը վերազրում են 1891 թւականի վատ հունձքին, որի հետեւնիքը մեծ սովոր էր: Մասնաւոր անբեր հունձքերը Ռուսիայում յարմախ են պատահում, բայց մի այնպիսի անբերը իութիւն, որ երեան եկաւ 1891 թ., դա մի արտօսավոր երեոյթ էր: Ի հարկէ զլսաւոր և անմիջական շարժառիթը այն յանկարծակի վնասների և նեղութիւնների, որ այժմս ռուսաց ժողովուրդը կրում է, դա սարսափելի անբերը իութիւնն էր: 1891 թւականի վատ հունձք իսկապէս մի պատահական և անցողական դէպք էր, որի դէմ կարելի էր առնել, եթէ ժողովուրդը տնտեսապէս և նիւթապէս բարելաւ դրույթիւն մէջ գոնուէր: Բայց ներկայ տնտեսական տագնապի պատճառ-

1) Russlands wirtschaftliche Lage im Jahre 1891, von Wilhelm Henkel. Deutsche Zeit- und Sfreitfragen. Heft 98.

ները ունեն աւելի խոր արմատներ, որ կարելի է զանել միայն լրջութեամբ որոնելով:

Թերթեցէք այն բոլոր զրւածքները, որոնք ուսումնասիրում են Առևահայի 1891 թ. վատ հունձի պատճառները և առվը, և գուք կը տեսնէք, որ գժբաղդութեան զլխաւոր պատճառը գտնում են զիւզացիների և մեծ հողատէրերի տնտեսութեան պակասութիւնների մէջ:

Այս պակասութիւնների մասին խօսելուց առաջ, յիշենք ոռու զիւզացու բարոյական էութիւնը նամանաւանդ ճորտութեան վերանալուց յետոց՝ Յայտնի է, որ ճորտութեան վերանալուց յետոց (1861 թւից) զիւզացին ազատւեց այն բոլոր կասպանքներից, որ նրան կաշկանդում էին տնտեսական ասսլարիզում: Գիւղացին այժմ կարող էր իւր անտեսութեան և հողի մշակութեան ձեռքը փոխել այնպէս, ինչպէս ինքը ցանկանում էր: Նա կարող էր օրէնքի զօրութեամբ կարգադրութիւն անել իւր հողից ստացած արդիւնքի վերաց իւր կամքի համեմատ, իբրև կատարեալ սեպհականատէր, վճարելով որոշ ժամանակամիջոցում իւր նախկին հողատէրին հող յետ գնելու մի յայտնի գումարը: Մի խօսքով զիւզացին դառաւ ըստ օրէնքի կատարեալ անկախ մարդ, որ ինքն իրան պիտի պահպաննէր գոյութեան կուի մէջ: Գիւղացիների ազատութեան գործը ուռւսաց ժողովրդի կեանքի համար անկասկած ունեցաւ. փրկարար ազգեցութիւնն նարոցապէս էլ զիւզացին հանդիսացաւ իբրև մի մարդկացին էութիւն, որի մասդելը, զգալը և գործելը ոչ մի արգելք չը պէտք է հանդիպէր:

Այժմ իննդիբը նրանումն է թէ զիւզացին ձեռք բերելով անկախութիւն՝ որ աստիճան ընտելացաւ անկախ և ինքնուրոյն գործունէութեան ՅՈ տարւայ ժամանակամիջոցում, որ անցել են ճորտութեան վերանալուց յետոց: Գիւղացիների ներկայ դրութիւնը այնպէս է, որ կարծես թէ ազատութեան բարեկները նոքա չեն վայելել և թէ օրէնքի բարերարութիւնը առերեւոյթ է անցել:

Այսպէս պնդում են, որ զիւզացին մնացել է զարձեալ ծոցի անզգոյց, անփոյթ և որ ցաւալին է, նա արբեցող և անձնատուր է իւր հին սովորութիւններին և մոլութիւններին: Եթէ զիւզացին մոնելով անտեսական և հասարակական նորագոյն կեանքը չէ մաքրել իւր նախկին բարոցական պակասութիւններից, դա մի պատճառ պէտք է ունենայ, որ դուցէ բզիսում է նոյն խակ իւրնոր դիրքից,

բայց որի մասին գեռ կարելի է վիճել. իրողութիւնը միայն սա է, որ այդ բարոյական պակասութիւնները վնասում են նորա աշխատաց անտեսութեանը: Այսպէս ամեն ժամանակ, երբոր գիւղացուն մի դժբաղզութիւն է հանդիպում, նա տակաւին դիմում է իւր նախակին հողատէրին օգնութեան համար: Գիւղացին իւր յոյսերը գրած ունի իւր նախակին հողատէրի խնամութեան վրայ: Երբ որ գիւղացուն փայտ է հարկաւոր, կամ փող է հարկաւոր տաւար առնելու համար, դա դիմում է կրկին նախակին հողատէրին: Ուրեմն ի՞նչից պիտի եզրակացնել, որ գիւղացին յառաջադիմել է:

Այն տնտեսական հանգամանքները, որոնց մէջ գիւղացիները գտնուում են, հետևեալն են.

Ովզորաբար գիւղացիները բաժանում են իրար մէջ համայնական հողը: Իւրաքանչիւր գիւղական ընտանիք ստանում է մի փոքրիկ հողի կտոր և սորա հետ մի քիչ տաւար և քիչ մշակելու գործիքներ: Եթէ հողը բաւական է, տաւարը և մշակելու գործիքները անբաւ են խելացի և արդիւնաւոր կերպով տնտեսելու: Իսկ առհասարակ թէ հող և թէ այլ գիւղատնտեսական պարագաներ բաժանւած ընտանիքները շատ քիչ են ստանում: Բայց տաւարի քչութիւնը շատ աւելի զգալի է լինում: Որտեղ տաւար քիչ է, այնուղ հող պարարտացնելու միջոցները պակասում են: Տաւարի ազբի պակասութիւնը տալիս է անտեսութեան մեծ վնասներ, որոնց գիւղացիները չեն դիմուում: Այս պատճառով բազմաթիւ տեղերում Ուռսիացի հողերը մնում են առանց խնաշքի և զաղարում են արդիւնք տալ, չը նայած իրանց բնածին արդիւնաւոր յատկութիւններին: Այս դեպքերում գիւղացուն անհրաժեշտ է կազմակերպւած գիւղատնտեսական վարկ (գիւղական բանկ), որ բացակայումէ: Հետևաբար գիւղացիները փողի հարկաւորութիւնից ստիպւած՝ ընկնում են վաշխառուների ձևուքները, որոնք մի տարւաց մէջ նրանցից մինչ 150% են վերցնում: Բայց եթէ գիւղացին այսպիսի թանկ վարկն էլ չէ ճարում, ձախող հանգամանքը նրան ստիպում է ծախել իւր ունեցածները: Սարսափելի է սրանից յետոյ գիւղացու դրութիւնը: Նա տալիս է իրան իւր սովորական արբեցողութեանը և զրկւած լինելով ամեն բանից՝ սկսում է թափառական կեանք վարել գործ ճարելու համար: Գիւղացիները, գտնուելով անյաշող տնտես սկան պայմանների մէջ, չեն

ստանում իրանց հողերից բաւական արդիւնք, որպէս զի նոքա կարողանան պարտաւորիչ հարկեր անգամ վճարել։ Միւս կողմից հարկերը շատ յաճախ աւելի բարձր են քան հողի արդիւնքը։ Զը նայած այս բանին, հողը կը տար մեծամեծ արդիւնքներ, եթէ նա խելացի կերպով տնտեսւէր։ Խոկ խելացի տնտեսութեան համար անհրաժեշտ են կազմակերպւած վարկ և գիւղատնտեսական կատարելագործւած գործիքներ, որոնց պակասութիւնը մի աղաղակող ցաւ է պատճառում գիւղացիներին։ Ել ինչ ասել կ'ուզի այն բանի մասին, որ գիւղացիների համար զժւար է լինում իրանց նախկին տէրերին։ հողեր յետ գնելու գումարները վճարել։

Երբէք չը պիտի կարծել, որ Ոուսիայում հողը պակասում է։ Միայն հարկաւոր են հողերի աւելի արդար բաշխումն գիւղացիների մէջ և խելացի տնտեսութիւն։ Ապա թէ ոչ վերև նկարագրած տնտեսական պայմանների տիրապետութեան ներքոց գիւղատնտեսութիւնը չի կարող ծաղկել։ Եւ մի ընդհանուր երաշտութեան տարի, որի դէմ կուելու գիւղացին անսպառասու է, պիտի 1891 թւականի նման մի ընդհանուր աղէտ առաջացնի։

Եթէ այդ է գիւղացիների տնտեսութեան զրութիւնը, հետաքրքրական է իմանալ մեծ կալածատէրերի տնտեսական վիճակը։ Վերջինների մասին մի ընդհանուր կարծիք է տիրապետում, թէ նոցա հողերը մեծ մասամբ ծանրաբեռնաւած են պարտքերով, ասել է թէ հողատէրերը դրաւ դրած ունեն իրանց հողերը և մինչ այն աստիճան, որ պարտքերը հողի գներից աւելի են։ Սոքա իրողութիւններ են, որ կարելի է թւերով ատպացուցել։ Շատանանք մի օրինակով, որ մեզ մի յայտնի գաղափար կը տայ հողատէրերի պարտքերի անընդհատ աւելման մասին։ 1859 թւականին 50 նահանդների հողատէրերի պարտքը մասնաւոր վարկացին հիմնարկութիւններին հասնում էր 425.503,061 ռուբլու։ 1883 թ. այդ պարտքը միւնոյն 50 նահանդներում բարձրանում է 465.469,258 ռուբլու։ ուրիշն 40.066,187 միլիոն աւելի քան 1859 թ. <sup>1)</sup> Աւելցնենք սորա վրայ և այն ֆակտը, որ բոլոր հողատէրերի մեծ մասը

<sup>1)</sup>) Труды Императорского вольно-экономического общества № 1  
Январь 1889 г.

գիւղատնաւեաներ չեն, այնպէս որ այս պայմաններում անհնարին է սպասել յառաջադիմութիւն գիւղատնաւեսութեան մէջ:

Սակայն անբերըութեան մասին խօսելիս պէտք է աչքի առնել կլիմայի և հողի պայմանները, որոնք ոչ միայն նպաստում են անբերըութեան, այլ և ուղղակի սպասնում են շնչել ապազալում հողի արդինաւորութիւնը և առհասարակ բուսականութիւնը: Այս վերաբերութեամբ արւած են հետազոտութիւններ, որոնք ապացուցանում են, որ Խուսիայի շատ գետերում ջուրը սկսել է պակասել. ուրիշ խօսքերով գետերը ցածրանում են: Այդ երեսով մեզնում են մասամբ նրանով, որ գետերի ափերի վրայ ապրող բնակիչները թափում են ջրի մէջ ամեն տեսակ կեղաւայնն: Տարիների լնթացքում գետերի մէջ թափած կեղուերը կուտակում են և սկսում են ջրի առաստութիւնը նւազեցնել, այնպէս որ վարելահողերի արդինաւորութեան համար հարկաւոր խոնաւութիւնը նւազում է: Բայց ամենից շատ նւազացնում է հողերի խոնաւութիւնը այն անհերքելի իրողութիւնը, որ Խուսիայում անտաւները ոչնչացնում են անդութ կերպով: Խնչպէս յայտնի է, անտաւներից տւած խոնաւութիւնը ահազին և համարեա վճռողական նշանակութիւն ունի թէ կլիմայի մեզմութեան և թէ հողի յատկութիւնների համար: Անտաւները տալիս են մեզ յորդառատ անձրւներ: Իսկ այն տեղերում, ուր անձրւները շատ քիչ են գտիս, հողը սկսում է չորանալ և այնուհետեւ աւազով ծածկւել: Արդէն Խուսիայում ահազին տարածութեամբ վարելահողերը ծածկւել են աւազով հէնց շնորհիւ խոնաւութեան անյացանալուն<sup>1)</sup>:

Խնչպէս ընթերցողը տեսնում է, անբերիութիւնը Խուսիայում բղխում է մի կողմից այն աննպաստ պայմաններից, որ վերաբերում են գիւղացիների և բոլոր հողատիրերի վատ տնտեսութեանը, իսկ միւս կողմից հողի և կլիմայի վատթար պայմաններից, որոնք ուղղակի հետևանք են հանդիսանում մարդկացին յափշտակիչ և գիշատիչ տնտեսութեան ձևերին: Այսպէս է մեկնում ռուսաց լուրջ մամուլը անբերութեան պատճառները, այդպիսի մեկնութիւն տալիս է և եւրոպական մամուլը, որի արձագանքը մենք լսում ենք ի միջի այլոց և վերը լիշած գերմանական դրքոյկի մէջ:

<sup>1)</sup> Համեմատեցեք նաև «Մուրանի այս №-ի թղթակցութիւններ Խուսիայում»:

Ուրեմն թնջ պէտք է արած այս գրութեան առջև, որ կարող է նաև ապագայում տեղիք տալ անբերրիութիւններին: Ահա մի նշանաւոր խնդիր, որ իւր ծանրութիւնով մոռացնել է տալիս ուրիշ խնդիրները, որովհետև այս խնդրի նպաստաւոր լուծումից կախւած է երեւում հարիւր միլիոնաւոր ազգաբնակութեան ապահովութիւնը և գոյութիւնը: Ուուսիան, որ պարունակում է 23 միլիոն քառակուսի կիլոմետր, պիտի կարողանայ ոչ միայն իրան կերակրել իւր հացով, այլ և ամբողջ Եւրոպային: Համեմատ այս մեծ կոչման՝ Ուուսիան պիտի ամեն ջանք գործ դնի գիւղացիների տնտեսական դրութիւնը բարելաւելու: Նա պիտի ձեռք մեկնի այնպիսի միջոցների, որոնք ընդունակ են իւր հողին այն բերրիութիւնը վերադարձնել, որով բնութիւնը այդ հողը օժանել է: Իսկ է, որ այս նպատակի համար հարկաւոր կը լինեն մեծ աշխատանք և դրամական միջոցներ: Սակայն արդիւնքը այնքան մեծ կը լինի, որ սա կը վարձարի բոլոր գործ դրած աշխատանքը: Արդէն վորձեր արւած են և տւել են լաւ հետեանքներ: Օրինակ Ուուսիայի մի տեղում այսպէս անւանւած—Միխայլովսկի խորք, օկրոց ստի Մեծվեճիցա—շինւած են մեծ աւագաններ, որոնք կարող են պարունակել 350.000 խորանարդ ոտնաչափ ջուր: Այս աւագանների մէջ պահուում է ձիւնից ստացած ջուրը և սրանով ոռոգում են 600 գեսեատին հող: Հունձքի ժամանակ զանազանութիւնը շատ մեծ էր ստացած քանակութիւնների մէջ՝ ոռոգւած և ոչ ոռոգւած հողերից: Մէկ գեսեատին արհեստական կերպով ոռոգւած հողը տւել էր 15 չետւերտ ցորեն, իսկ մի գեսեատին ոչ ոռոգւածը տւել էր  $4\frac{1}{2}$  չետւերտ ցորեն: Այս վայլուն գործը ապացուցեց, որ աւագով պատած և ծածկւած հողերը պտղաբեր դարձնելու համար հարկաւոր է արհեստական ոռոգումներ սահմանել և մանաւանդ անտառները ամենայն խստութեամբ խնամել: Միայն թէ նման գործերը չը պէտք է մասնաւոր նախաձեռնութեան թողնել: Այստեղ օրէնսդրական եռանդու քայլերը միայն կը ծառացէն նպատակին: Օրէնսդրութեան գործը և պաշտօնն է՝ հրամայել և ստիպել, որ ամենուրեք, ուր հարկն է, նմանօրինակ գործեր խիստ կերպով էատարւեն: Օրէնսդրութիւնը կոյա պարագաւորեցուցիչ պի ոի դարձնի:

## ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻ ՑԱԼԹԱՆԱԿ ԱՆԳԻԱՅՈՒՄ

(Գլագոլունի լաղթութեան առիթով)

Գլագոլունի կուսակցութեան յաղթութիւնը մօտադայ ընտրութիւններում անկասկած էր համարում: Եւ այդ գուշակութիւնը մի մարգարէութիւն չէր և ահա ինչու: Անզլիան մի յառաջդիմական երկիր է թէեւ զօրեղ պահպանողական տեմպերամէնտով: Այդ երկրում որ և է պահպանողական մինխառութիւն անպատճառ տեղի է տալիս ազատամիտ մինխստրութեան, երբ սորա նոր ծրագիրը հասունանում է տարիների ընթացքում: Ճշմարիտ է որ անզլիացիք չեն սիրում մի մէծ փոփոխութիւն իրագործել հէնց որ այդ միտքը կը յացոնուի, այլ այդ փոփոխութիւնը յառաջ բերելու համար նոքա կարիք են զգում մի քանի տարի կշռելու, այդ միտքը որոճալու և նորա հետ հաշտելու համար և համոզելու նորա լաւութեան և անհրաժեշտութեան մէջ: Ճշմարիտ է և այն, որ այդ կէտում անզլիացիք կուրօրէն չեն հպատակւում ոչ մի հեղինակութեան, թէկուզ այդ հեղինակութիւնը լինի ազատամիտների համար մի Գլագոլան, որ լորդ Պալմերսանի մահից յետոյ, ուրեմն ահա երեսուն տարի շարունակ գլուխ է Անզլիայի ազատամիտ մերթ յաղթող, մերթ յաղթող կուսակցութեան և որ մէկ չէ, երկու անզամ չէ որ գլուխ է եղած անզլիական մինխստրութիւնների, հետեւալէս և կառավարութեան: Բայց, միւս կողմից, չնորհիւ թերեւս անզլիացիների այդ տեմպերամէնտին, նոյն այդ երկրի ազատամիտ կուսակցութիւնը, որ սովորաբար նախաձեռնողն է արմատական օրինագծերի, շնորհիւ իւր երկարամեայ պատմական կրթութեան և այն խիստ սերտ շփման որ նա ունի ժողովրդի հետ, առաջարկում է միայն այնպիսի փո-

փոխութիւններ, որոնց համար նա վստահ է թէ կարող է ընդունելի անել տալ ազդի մեծ մասին մի քանի տարի եռանդով քարոզելով, որքան էլ համարձակ երեան նոքա առաջին անգամից:

Այդ պատճառով Անգլիայում ազատամիանների կուսակցութեան կողմից մտցրած րեֆորմները այնպիսի րեֆորմներ են, որոնց համար պատճութիւնը շաա թէ քիչ հաստատ հող է պատրաստել: Այդ րեֆորմները, երբ նոքա կատարւում են վերջանում, այլ ես միայն ազատամիանների սեպհականութիւն չեն, այլ աժբողջ երկրի, այն աստիճանի նոքա խոր արմատներ են զցում ժողովրդի մոքերի ու բարք ու վարքերի մէջ:

Դորանով պէտք է մեկնել և այս՝ միայն Անգլիայում սովորական երեսյթը, որ պահպանողական կուսակցութիւնը պահպան է ոչ միայն իւր կուսակցութեան համար առանձնապէս թանկագին հաստատութիւնների, այլ նաև րեֆորմներով ձեռք բերած հաստատութիւնների ու օրէնքների, թէկուզ սոքա ձեռք բերւած լինեն ազատամիանների ջանքերով, հակառակ պահպանողականների երբեմնեան ընդդիմադրութիւններին:

Ոչ մի այլ երկրում պահպանողական կուսակցութիւնները այդպէս չեն. ուրիշ երկիրներում պահպանողականները, հէնց որ կառավարութեան ղեկը իրանց ձեռքն են զցում, զեռ ամենից առաջ մտածում են ազատամիանների րեֆորմները իրանց պահպանողական րեֆորմներով, այսինքն րէակցիայով քանդել:

Չարմանալու չէ ուրեմն որ Անգլիայի պահպանողական կուսակցութիւնը շատ շատերից նկատում է որպէս երկրի յառաջդիմական շարժման մի Փակտոր և ոչ ամեն ինչ յետ ու յետ տանող: Արդէն ձեռք բերած ժողովրդական ազատութիւնների համար Անգլիայի պահպանողական կուսակցութիւնը հաւատարիմ պահպան է կանգնած: Եւ այդ սկատճառով Անգլիայում պահպանողական կուսակցութիւնը երկրի յառաջդիմականներից այնպէս չի հալածւած, ինչպէս նոյնանոն կուսակցութիւնները նելգիայում, Ֆրանսիայում և այն:

Եթէ երկրի և այն էլ Անգլիայի պէս ազատութեան սովոր մի երկրի ժողովրդական ձայնատառութեանը տալու լինենք հասարակաց կարծիքի կշիռը, ապա ուրեմն մենք ստիպւած ենք լնդունելու, որ այդ նոյն հասարակաց կարծիքը պարբերապէս հակւում է կամ դէպի

պահպանողականները կամ դէսի ազատամիտները, երկու կուսակցութիւններն էլ իւր սեպհականը համարելով։ Երբ ազատամիտները բաւականաչափ գործած են լինում իրանց խոստաշած ծրագիրը իրագործելու չափ, որից յետոց սկսում է արդէն նոցա անծրագիր ։ Թոյլ գործելը կամ ազգից զեւ չը մարսած նոր ծրադիրներով գործելը, — այն ժամանակ հասարակաց կարծիքը հակւում է դէսի պահպանողական կուսակցութիւնը, որ նոյն այդ տարիներում կարգանում է որոշել կառավարչական այլ գործունեութեան համար ազգից ընդունելի մի ծրագիր, օգտևելով հակառակորդների թոյլ կողմերից ներքին թէ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ։

Բնական է որ ամբողջ ազգը միահամուռ ձայն չի տալիս մի կամ միւս կուսակցութեան, այլ յօդուտ մէկի կամ միւսի բազգը որոշողը լինում է ազգի մի մասը, որի այս կամ այն կողմ անցնելով վճռուում է մեծամասնութիւնը պարլամէնտում։ այդ մէկ մասի ներկայացուցիչների թիւը լինում է 30 - 50 - 100 - 150, նայած հանգամանկներին։ Ազգի մասաց մասը ներկայացնում են երկու ամփոփ մասսաներ, որոնցից մէկը հաստատ ազատամիտ աւանդութիւններով է մնուցւած, միւսը՝ պահպանողական աւանդութիւններով, գրեթէ ամփոփուս հաւատարիմ իւրաքանչիւրը իւր դրօշակին։

Այսպէս ենք ահա հասկացել մենք անգլիական պարլամէնտական լնադրութիւնների ոգին. գորանով ենք մեկնում նաև այս եզակի երեսոյթը, որ Անգլիացում պարլամէնտական մեծամասնութիւնների, հետևապէս և մինիստրութիւնների, պահպանողական կամ ազատամիտ լինելը գրեթէ մաժեմաթիկական ճշգութեամբ որոշւում է կառավարող մինիստրութիւնը գործել է մի որոշ ժամանակամիջոց, որի ընթացքում ազատամիտ կուսակցութիւնը իւր ծրագիրը բաւականաշափ կարողանում է ընդհանրացնել ազգի մէջ, — այն ժամանակ նոր ընդութիւնները աւելի յաջող են լինում ազատամիտների մինիստրութեան համար. և vice versa.

Արդ, նոյն իսկ այդ ժամանակամիջոցը որոշւած է մի տեսակներքին կեանքի հանգամանկների ոյժով։ Անգլիացում ոչ մի մինիստրութիւն եօթ տարուց աւելի չի տեսում, իսկ այս վերջին երեսուն

տարիներում՝ վեց տարին՝ սովորական միջոցն է մինիստրական փոփոխութեան, նման մի կատարելազործւած մեծ մեքենայի, որի անիւները ամեն 6 - 7 տարին նորոգւում են:

Ասած հաստատելու համար — ահա մի ցուցակ, որ ես դնում եմ ընթերցողներիս առջեւ. այդ ցուցակը պարզ ցաց է տալիս թէ որքան կանոնաւոր կերպով իրար յաջորդում են հասարակաց կարծիքի ու զգութիւնները Անդիայում, հետևապէս նաև որքան մեծ կանոնաւորութեամբ իրար յաջորդում են պահպանողական և ազատամիտ կուսակցութիւնները:

1862—1868 մինիստրութիւն Դիզրաէլի (պահպանողական):

1868—1874 մինիստրութիւն Գլադստոն (ազատամ.):

1874—1880 մինիստր. Դիզրաէլի (նոյնը լորդ օֆ Բիկոնսֆիլդ):

1880—1886 մինիստրութիւն Գլադստոն (ազատամ.):

1886—1892 մինիստրութիւն Սոլսբրի (պահպանողական):

Կրկնում ենք, որ այդ երեսովով լոկ պատահական չէ, այլ կապւած է անգլիական կեանքի հանգամանքների և կուսակցական կուտի կանոնաւոր ընթացքի հետ: Ահա թէ ինչու մարդարէութիւն չէր առաջուց նախատեսել լիբերալների յաղթութիւնը, այլ հաւանականութեան վերայ հիմնւած մի հաշիւ, մանաւանդ որ մասնաւոր ընտրութիւնները այս վերջին տարիներում մեծ մասամբ յօպուտ լիբերալների և մինիստրութեան հակառակ կին խօսում:

Մամնաւոր ընտրութիւնների հետևանիքները բոլոր սահմանագրական երկիրներում՝ նախանշաններ են ընդհանուր ընտրութիւնների ելքին, մանաւանդ երբ նոքա բազմաթիւ են լինում: և յաճախ մասնաւոր ընտրութիւններով<sup>1)</sup> հասարակաց կարծիքի տարութերմունքը իրան զգացնել է տալիս:

Եւ բաւականի թւով պահպանողական վիճակներ մասնաւոր ընտրութիւնների ժամանակ այս վերջին տարիներում կատարեցին ազատամիտ, հետևապէս Սոլսբրիի մինիստրութեան համար չարտդուշակ ընտրութիւններ:

<sup>1)</sup> Երբ պարլամենտի անդամներից մեկը մնանում է իւր օրէնողական լիազօրութիւնները գեռ չը լրացրած՝ նորա ներկալայրած ընտրադական վիճակը ընտրում է մի ուրիշն: Այդ է մասն աւոր ընտրութիւնը. բայց երբ պարլամենտար օրէնքով լուծում է, այն ժամանակ կատարւում են ընդառնութիւններ:

Ներկայ 1892-ի ընտրութիւնները մի առանձին մէծ կարևորութիւն էին ներկայացնում: Իրլանդական խնդիրը առաջին գծի վերաց էր զրւած Գլադատոնի ծրագրում: Մի խնդիր, որ հարիւրաւոր տարիների ընթացքում քաղաքական ու տնտեսական-սոցիալական խնդրի հնմուռու կերպարանքն է ստացել և որ ամենքից ընդունում է որպէս Անգլիացի, հետևապէս քաղաքակրթւած մարդկութեան վերքերից մէկը, – այդ խնդիրը այժմ վերջնականապէս անցել էր իրլանդական հողից անգլիական հողի վերաց:

Անգլիացի ազատամիտ կուսակցութիւնը նոր չէ որ աշխատում է իրլանդիացի քաղաքական և տնտեսական զրութիւնը բարւոքել: Հենց օրինակի համար Գլադատոնի ժամանակ՝ այն որ մինչ 60-ական թւականների վերջերը մեծամասնաբար կաթոլիկ իրլանդիացում իշխող և արտօնւած անգլիական բողոքական եկեղեցին, որ պետական եկեղեցի էր սահմանւած, իբր արտօնւած եղեղեցի վերացւեց և հաւասարացւեց միւս եկեղեցիների դրութեան հետ:

Բայց իրլանդական հոմ-ռուլը, այսինքն ինքնավարութիւնը, աւելի մեծ և կնմուռու խնդիր է ներկայացնում: Այդ խնդիրի բաւարար լուծումը միշտ խորտակել է՝ զարնւելով անգլիական ազդի և պարլամէնտի մեծամասնութեան անդրւելի չկամութեան: Իրլանդիան կամենում է իւր կառավարութիւնն ունենալ և ոչ թէ կառավարւել անգլիական պարլամէնտով, ուր իրլանդական պատգամաւորների ձայնը միշտ խեղդւում է անգլիացիների 5<sup>1</sup>/<sub>2</sub> անգամ աւելի ձայներով. անգլիական պարլամէնտի միջոցով նոքա չեն կարողացել օրէնքներ ձեռք բերել, որոնք նողաստաւոր լինէին իրլանդական ազգի շահերին, որովհետև իրլանդացիներին իրանց ձեռքում սլահելը թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս – միշտ եղել է անգլիական քաղաքականութեան հիմնաքարը իրլանդիացի գործերի նկատմամբ: Եւ որ զլսաւորն է, Անգլիացի այդ դարեւոր քաղաքականութիւնով, իրլանդիան, որտէս արդէն վաղուց վկացել են և վկացում են բոլորեքեանք, ովքեր միայն հեռւից թէ մօտիկից ուսումնասիրել են այդ երկիրը, ողորմելի, անսանելի ողորմելի վիճակի մէջ է եղել և այժմ էլ է: Բաւական է այսքանը միայն իմանալ, որ այդ քաղմահարչար ազգը, որ այժմ ընդամենը միայն 4 միլիոն 700 հազար բնակիչներից է քաղկացած, այս վերջին յիսուն տարի-

ներում տւել է գլխաւորապէս Հիւսիսային Ամերիկային ոչ պակաս քան 3 միլիոն 415 հազար հոգի գաղթականներ, որոնցից 770,700 հոգի միայն այս վերջին տասը տարիներում:

Իրլանդացիք կարողացել են սակացն իրանց անընդհատ կռւով և հակառակութիւնով անզլիական քաղաքականութեան դէմ՝ իրանց դատը լսելի անել ամբողջ աշխարհին և միշտ անհանգիստ անել անզլիական կառավարութիւնը: Եւ եթէ նոքա այդ կռիւր կարողացել են այդ աստիճանին հասցեն և զիմանալ, այդ անկասկած նրանից է, որ իրլանդացիք, որքան էլ ֆասաւած լինեն, բայց և այնպէս ամփոփ ազգաբնակութիւն են կազմում: Ազգերի քաղաքական ու կռւլտուրական կեանքի համար գա մի այնպիսի հանգամանք է, որ մենք կարեոր ենք համարում ցղել մեր ընթերցողներին մեր «Թիւ և Այժ» յօդւածին<sup>1)</sup>:

Իրլանդացոց ամփոփ ազգաբնակութիւնը մի այնպիսի հանգամանք է, որ եթէ նոքա ինքնամանաշութիւն ունենան և կարողանան օգտւել իրանց ձեռքից եկած հանգամանքներից և արդէն ունեցած իրաւունքներից, —անզլիական կառավարութիւնը միշտ տենդացին դրութեան մէջ կարող են պահել:

Եւ այզպէս էլ նոքա վարւել են, ունենալով իրանց քաղաքական շարժման պարագլուխ՝ Ո'Կոննորներ, ՈՒլիւաններ, Պարնեներ:

Վերջինիս մասին «Մուրճ»-ի ընթերցողները արդէն տեղեկութիւն կ'ունենան «Մուրճ»-ի քաղաքական տեսութիւններից: Գլուխ կանգնելով իրլանդական պատգամաւորների անզլիական պարլամէնտում՝ իւր այդ կարգաւորւած կռւսակցութեան միահամուռ վարմունքով, կռւսակցութեան միաբանութիւնով նա ոյժ էր ձեռք բերել, անզլիական պարլամէնտում այս կամ այն դիրքը բռնելով՝ վճակ մեծամասնութիւնը յօդուած կամ հակառակ կառավարութեան և կամ խանգարել պարլամէնտի զբաղմունքները, միշտ պահանջներ գնելով յօդուած իրլանդական հոմոռուլիք: Դորա հետ կապւած իրլանդական ժողովուրդը, զրգուելով և պաշտպանելով նաև Ամերիկայում ապրող իրլանդացիներից՝ սկսեց մի շարժում ընդդէմ տեղական իշխանութիւնների և հողատերերի, արտայացուելով այդ բռլորը թէ հողի կապալաղրամը չը վճարելով, թէ բռնութիւններով և թէ սպանութիւններով:

1) Տես «Մուրճ» 1890 թ. № 5.

Մինչև 80-ական թւականների կէսը իրլանդական գատի պաշտպանները, սակայն, իրօք միայն իրանք իրլանդացիք էին. նոքա ուժեղ դաշնակից չունեին Անգլիայում. բանը այնպէս էր որ մի կողմ կանգնած էին միմիան իրլանդացիք, միւս կողմ՝ անգլիացիք առհասարակ:

Այս դրութիւնը սակայն արմատապէս փոխւեց, երբ 1886 թւականին Անգլիայի ազատամիտ կուսակցութեան պարագլուխ Գլազուանը իրլանդական հոմ-ռուլը (ինքնալարութիւնը) իւր ծրագրի մէջ լնդունեց: Նա յայտարարեց դորանով որ իրլանդիացին ինքնավարութիւն տալը ոչ միայն իրլանդական խնդիր է, այլ առհասարակ անգլիական մի խնդիր, որի բաւարար լուծումից կախուած է ոչ միայն իրլանդացոց բարորութիւնը, այլև և անգլիական քաղաքական կերպի յառաջդիմական և կանոնաւոր ընթացքը:

Մեր աչքում՝ Գլազուանի այդ վարմունքը զժւա մարդասիրական մի ակտ չէր դէպի մի այլ ցեղի ազդ, այլ մի քայլ էր, որ թելադրւած էր անգլիական շահերի ուրոյն լմբանումից:

Նա բաց աչքով նայեց դրութեան վերայ և տեսաւ որ իրլանդիացին ինքնավարութիւն տալով՝ Անգլիայի քաղաքական դիրքը չի վտանգւիլ, իսկ միւս կողմից՝ Անգլիան ազատ կը լինի մի մշտական գլխացաւանքից, որ միաժամանակ մի արատ է անգլիական ազդի և անունի համար:

Լոկ մարդասիրութիւնով Գլազուանը շանս չէր կարող ունենալ իւր կողմը գրաւել ազգի մեծամասնութիւնը: Պետական բարձրագոյն շահն էր պահանջում այդ. և համոզցնել անգլիացիներին այդ բանում, — նորա գլխաւոր և գրեթէ միակ ջանքն է եղել այս վերջին վեց տարիներում:

Ի՞նչպէս պսակւեց Գլազուանի այդ ջանքը:

1885 թւականին, իւր նոր ծրագիրը յայտարարելուց առաջ, անգլիական պարլամէնտը այնպիսի մի կազմ ունէր, որ ազատամիտ կուսակցութիւնը, որ նոյնն էր թէ Գլազուանեանները, 84 ձայնով աւելի գորեղ էին քան պահպանողականները, Գլազուանի կուսակցութեան մէջ չը հաշւելով Պարնէլի իրլանդական կուսակցութիւնը, քանի որ այդ ժամանակ Պարնէլի կուսակցութիւնը առանձին էր:

Բայց երբ Գլազուանը դաշնակցութիւն կապեց Պարնէլի հետ

և իւր ծրագրի մէջ ընդունեց իրլանդական հոմ-ռուլի խնդիրը, այն ժամանակ ազատամիտների մի մասը, լորդ Հարդինդունի գլխաւորութեամբ՝ բաժանեց Գլագատոնից. նոքա ցանկանում էին որ Իրլանդիան մնայ այնպէս միացած Անգլիայի հետ ինչպէս մինչ այժմ գոքա միութեան (ունիա) կողմնակիցներ էին, հետևապէս կոչւեցին ունիոնիստներ:

Իրլանդական խնդրում ունիոնիստներ էին բնականաբար նաև բոլոր պահպանողականները, որոնց պարագլուխը, լորդ Ռիկոնսֆիլդի մահից յետոց, լորդ Ալլաբրին է:

Այսպիսով պահպանողական կուսակցութիւնը Սոլսբրիի գլխաւորութեամբ գաշնակից գտաւ ազատամիտների մի ֆրակցիայի մէջ, որի պարագլուխն է լորդ Հանդինդուն, որոնք, որպէս ունիոնիստներ՝ Գլագատոնի գէմ են:

Իսկ միւս կողմից Գլագատոնի ազատամիտ կուսակցութիւնը, կորցնելով Հարդինդունի ֆրակցիան, գաշնակից գտաւ յանձին Պարնէլի և նորա կուսակցութեան, յանուն հոմ-ռուլի, որ երկուսի ծրագրումն էր:

Բայց Գլագատոնի համար կորուստը աւելի մեծ եղաւ քան ձեռք բերածը: Երբ պարլամէնտը նորից արձակւեց և 1886 թւականին նոր ընդհանուր ընտրութիւններ եղան, հետեանքները պարզ ցոյց տւին որ Անգլիայի ժողովուրդը դեռ ևս բոլորովին պատրաստ չէր Գլագատոնեան-Պարնէլեան իրլանդական քաղաքականութեան համար: 1886 թւականի ընարութիւններից ունիոնիստները, այսինքն պահպանողականները և ունիոնիստ-ազատամիտները, յաղթող գուրս եկան. նոյն ձայնները 118-ով աւելի էին քան Գլագատոնեաններինը և Պարնէլականներինը միասին առած:

Այդ մեծամասնութեան վերայ յենւած՝ կազմեց Սոլսբրիի պահպանողական մինիստրութիւնը, որ և տեսեց մինչ ներկայ 1892 թ. յուլիս ամիսը, երբ նոր ընդհանուր պարլամէնտական ընտրութիւններ կատարվեցին:

Ընդդիմագրութեան վիճակի մէջ մնալով՝ Գլագատոնը այս վեց տարիները գործադրեց պրոպագանդ անելու յօդուտ իւր նոր ծրագրի, յօդուտ իրլանդական հոմ-ռուլի:

Իւր պրոպագանդով նա մեծամեծ հետևանքների հասաւ:

Ներկայ 1892թ. յուլիսի ընտրութիւններից հոմ-ռուլի կուսակիցները, որ նոյնն է թէ Գլադատոննեանները, դուրս եկան ունիոնիստների վերայ յաղթող 40 ձայնով: 1886թւականից դէս, ուրեմն այս վեց տարիներում, Գլադատոննի կուսակցութիւնը ոչ միայն հաւասարւեց ունիոնիստների կուսակցութեանը, և լեզով նոցա առաւել ձայնների կեսը (118-ի կեսը = 59), այլ և գերազանցելով նորան 40 ձայններով: Գլադատոնը վաստակեց ուրեմն այս վեց տարիների ընթացքում  $59+40=99$  ձայն:

Եթէ ի նկատի ասնելու լինենք որ գաղափարի այդ նւաճումը կատարւել է մի խնդրի նկատմամբ, որի մասին անդիմական ազդը, իբր ամբողջութիւն, հարիւրաւոր տարիներ շարունակ միայն մի կարծիք է ունեցել, և ի հարի է հակառակութեան մտքով, այն ժամանակ հասկանալի կը լինի, որ գաղափարի նւաճումը ահագին է եղել այս վեց տարիներում: Որովհետև ակներև է որ այդ հարիւր ձայնները նւաճւել են ոչ թէ իրանդիալի իրլանդացիների մէջ, այլ Մեծ-Բրիտանիայում, անդիմացիների, վալիսացիների և շոտլանդացիների և իրլանդիալի անդիմական և շոտլանդական ազգաբնակութեան մէջ:

Գլաւարը առայժմ այդ է, թէև իրողութիւն է որ, եթէ ըլ հաշելու լինենք իրլանդացիների ձայնը, անդիմական, շոտլանդական ու վալիսական ձայնատուները դեռ ևս միայն կիսով չափ ձայն տւեցին յօդուա իրլանդական հոմ-ռուլի, իսկ աւելի ճիշդն ասած՝ կէսից մի թէև չնշին, այն է շուրջ 33 հազար ձայնների առաւելութեամբ հակառակ եղան իրլանդական հոմ-ռուլին:

Այդ իրողութիւնը սակայն շատ չի նւազեցնում մոքի յաղթանակը, որովհետև եթէ այսօր անդիմացիք միայն մի ինչ որ երեք տասնեակ հազար հոգու առաւելութեամբ են հակառակ իրլանդական ինքնավարութեան գաղափարին, վեց տարի առաջ այդ առաւելութիւնը միլիոն էր կազմում:

Վեց տարի առաջ, 1886թւականի ընտրութիւններին, Գլադատոնը իւր հոմ-ռուլեան ծրագրով յաղթեց զլիսաւորապէս այն ոլատճառով, որ անդիմացի լնորողների մի մասը չուզեց կարծիք յայտնել իւր համար դեռ ևս չլ հասունացած մի խնդրի մասին. և հէնց այդ էր պատճառը, որ միլիոնաւոր լնորողներ ամենեին չը մասնակցեցին այն ընտրութիւններին. դորանից մի տարի առաջ՝ 1885

թւականին՝ կատարւած ընտրութիւններին երբ. Գլագստոնը հոմառութիւն ծրագիրը չունէր, ազգը, օգուտ քաղելով ընտրողական նոր կատարւած ըեփորմից, որով ազգի աւելի մեծ խաւերի վերայ տարածւեց ձայն տալու իրաւունքը, շատ աւելի մեծ թւով մասնակցեց ընտրութիւններին, որոնցից և Գլագստոնը յաղթող դուրս եկաւ, քան յաջորդ 1886 թւականին, երբ Գլագստոնը արդէն պարզել էր իւր նոր ծրագիրը, որով և նա յաղթւեց հակառակորդների ահազին մեծամասնութիւնովը: Եթէ 1885-ին ընտրութիւններին մասնակցեցին շուրջ 4 միլիոն 600 հազար հոգի, 1886-ին, հոմառութիւնների պատճառով, մասնակցել էին միայն 3 միլիոն հոգի: Տարբերութիւնը մեկ ու կէս միլիոնից աւելի էր: Այժմ, վեց տարի խնդիրը թեր և դէմ քննելուց յետոյ, 1886-ին ընտրութիւններին չը մասնակցած անձերի համար խնդիրը պարզէլ էր, և նոքա այս տարի նորից մասնակցել են մասամբ ընդդէմ, բայց մեծ մասամբ յօդուտ Գլագստոնի, յօդուտ Իրլանդիայի ինքնավարութեան, որի շնորհիւ և յաղթեց Գլագստոնը նոյն այն ծրագրով, որով նա վեց տարի առաջ շարաշար յաղթւել էր:

Գլագստոնի այս տարւայ ընտրողական յաղթութիւնը շատ կողմերից ներկայացնում է ընդհանուր հետաքրքրութիւն ոչ միայն անդիմացիների համար, այլ և ընդհանուր մարդկութեան համար:

Ամենից առաջ դա մի փայլուն օրինակ է մոքերի պրոպագանդայի անդիմական ձևի և անդիմական վերանորոգող կուսակցութեան գործելու ձևին, նորա թէ զգուշաւորութեան և թէ միաժամանակ համարձակութեան իւր ծրագիրները կազմելու գործում: Իրլանդիայի բաժանելլ Անդիմայից իւր ներքին խնդիրների համար՝ պահանջում են արդէն ոչ միայն իրլանդացիք, այլ և իրլանդացիներին այդ ինդրում միշտ հակառակ եղած անդիմացիք, գոնէ սոցա ձայնատուների կիսով չափ:

Դա մի մեծ օրինակ է թէ ինչպէս մի լստ ամենայնի լուսաւոր և ուժեղ ազդ իւր իսկ սնամհական շահի համար կարող է զալ հանդէկ էզորիստական ու ճնշող տիրապետութեան հակառակ մոքերի, և թէ

ցեղով, տեմպերամէնտով, սովորութիւններով, կենցաղով, ժողովրդական իդէալներով ու ազգային տրադիցիաններով ոչ միայն տարբեր, այլ և ուղղակի հակառակ մի ազգի քաղաքական ինքնավարութիւնը որքան հաշտելի է տիրապետող ազգի շահերի հետ, եթէ նոցա մէջ զարգանայ փոխադարձ օգտակարութեան գաղափարը և յարգանքն ու սէրը գէպի մարդկայնութիւնը:

Իրանդական հոմոռուլի կուսակցութեան յաղթանակը Անդ-լիայում տօնելու արժանի մի իրողութիւն է նաև մանաւանդ մանր ազգութիւնների համար: Խնչպէս կարող էր Անդիան, Իրանդիայի նախառուինքը երեսին՝ անկեղծ, զօրեղ և անդադար պաշտպան հանդիսանալ Թուրքիայում մանր ազգերի ինքնավարութիւններին: Իւր անային նման հանգամանքները անկարելի է որ կաշկանդած չը լինէին նորա ձեռքերը: Արևելեան քաղաքականութեան համար այժմ նա, մի նոր ներքին յաղթանակի միջոցով, ձեռք է բերում աւելի ազատ շարժողութեան միջոց:

Ահետիք ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ, Յարութիւն. — «Վաղարշապատեցի Յարութիւն Արարատեանի կեանքը»: Թարգմ. ռուսերէնից Պ. Պ. Հրատ. Թիֆլ. Հայոց Հրատարակ. Ընկեր. — Թիֆլ., տպ. Արօր Տ. Նազարեանի, 1892 թ., Ժ-254 ռութածալ երես, տառ № 12, գինն է 75 կուէկ:

Այս գիրքը մի եղակի հեղինակութիւն է, գրւած կենսադրական ձևով, որ մեծ լուս է ափուում մեղանից շուրջ հարիւր տարի եղած ընտանիկան, զիւղական, հոգեսրական ու քաղաքական կեանքի վերաէ գըլխատրապէս Երևանի խամութեան մէջ (ալժմեալ Երևանեան նահանգի մասը) և այն ժամանակւակ վրաց թագաւորութեան մէջ։ Այս գրքի միջոցով մենք զբեթէ ականատեսունք լինում Անդրկովկասի զրութեանը ռուսաց տիրապետութիւնը առաջ ացնագէս, որ ոչ մի պատմաբան չէր կարող ացնքան ռելիք դուրս բերել այդ ալժմ առմիշտ անցած կեանքը։ Ազատեղ ընդհանուր տեսութիւններ չեն անւում, ալսուղ պատմում է առօրեակ կեանքը ալնպէս, ինչպէս նա եղել է իւր չարաբերութիւններով զէպի ընտանիքը, զիւղական հասարակութիւնը, ուսումնարանը, եկեղեցին, հոգեսրա-

կանութիւնը, մարմնաւոր իշխանութիւնը։ Առիթներ աչնքան բազմակողմանի պատկերացումների առատորէն տալիս է Յարութիւն Արարատեանի կեանքը, որ, ամենաչքաւոր ընտանիքից լինելով, իւր զիրքում վեր ու վեր է բարձրացել անցնելով ամենաստեսակ զիւղական սուրդրութիւնների միջով, և որ իւր քաշած տանջանքներից փախչելու համար՝ դիմել է պանդխոտութեան, զէպի Ռուսաստան, անցնելով Վրաստանի վրաչով Աղա-Մահմադ խան շահի Թիֆլիս արշաւելու ժամանակները։ Ներկաէ գիրքը, այն ձեռի, ինչպէս ներկանում է այս հակերէն թարգմանութեամբ՝ հետեւապէս բաղկացած է երկու մասից. առաջինում, որ մեծագուն մասն է 188 երեսով Արարատեանը պատմում է իւր կեանքը Վաղարշապատում, իսկ երկրորդ մասում, որ 65 երես է կազմում, նա պատմում է իւր տեսածները Վրաս-

աամնում վերը՝ իշած շահի Թիֆլիս  
արշաւելու՝ ժամանակի, իւր հայերէն  
(այժմ կորած) բնադրում և ռուսերէն  
թարգմանութեան մէջ որից թարգ-  
մանւած է այժմնայ հայերէնը երկ-  
րորդ մասը աւելի ընդարձակ է, բայց  
ինչպէս թարգմանող պատուի Պ. Պ. Նկա-  
տում է, այդ երկրորդ մասից թարգ-  
մանած են միայն այնպիսի կտորներ,  
որոնք առանձին հետաքրքրութիւն  
ունին ներկաւում (էջ ծբ. ճանօ-  
թութիւն): Այդ առիթով պէտք է  
նկատել որ թարգմանողը կամ աւելի  
ձիշդն ասած Հրատարակչական ըն-  
կերութիւնը շատ լզուր է զանց ա-  
րել դոնէ լառաջաբանի մէջ ասել  
թէ ինչ բռվանդակութիւն ունի գրքի  
գուրս գցած մասը և թէ վերջապէս  
ինչով նա հետաքրքրական նիւթ չի  
պարունակում: Դոքա կէտեր են,  
որոնք մութն են մնում ռուսերէն  
թարգմանութեան կամ բնագրի հետ  
ծանօթութիւն շունեցողներին, թէ են  
հաւատում ենք և անդամ դիտենք,  
որ դուրս գցած կտորները պատմա-  
կան մեծ արժէք ներկազացնող էջեր  
չեն և վերաբերում են բուն Ռուսա-  
տանին:

Դրքի երկու մասերն էլ գրւած  
են շատ աջող գրչով: Արարատեանը,  
որը շատ զգացուն, խելօք և լիշող  
մարդ է երեսում, հասկացել է որ  
առօրեակ պատահարների մէջ ժա-  
մանակի ողին է արտափալում, և  
այդ պատճառով նա պատմումէ այդ  
պատահարները հրապարակօրէն նա-  
մանանդ պատրաստականութեամբ,  
որ իւր կենսագրութիւնը զրելու ժա-  
մանակ նա շատ և շատ բարձր է  
եղել իւր ծնողների հասարակական

դիրքից: Նա լաղթել է բոլոր դժւա-  
րութիւններին, որ կարող էին ներ-  
կացնալ իւր ժամանակում մի որք  
աղքատ ընտանիքի զաւակին մի ան-  
պիսի հասարակութեան մէջ, որպի-  
սին կարող էր լինել հայ ժողովութղղը  
թրքական խանութիւնների ժամա-  
նակ 18-երորդ դարում: Եւ Արարա-  
տեանի կեանքը գժրախտաբար ցոյց  
է տալիս, որ կեանքում մի քայլ ա-  
ռաջ անելու համար: Հարկատը էր  
հեռանալ հալրենիքից և օտար բայց  
աւելի բարձր քաղաքակրթութեան  
վերակ կանդնած մի աղզի մէջ ընկ-  
նել ու գործել: Ազգպիսի կառավա-  
րութիւններ, որպիսիներն էին թրքա-  
կան խանութիւնները Անդրկովկա-  
սում կամ նուն իսկ հայկական մերի-  
քութիւնները, զատապարտած էին  
կորչելու, որովհետև շատ փոքրիկ տէ-  
րութիւններ լինելով հանդերձ՝ նոքա-  
քաղաքական ովի աղբիւր չէին որո-  
նում ժողովրդական բազմակողմանի  
կրթութեան և անհատականութեան  
զարգացման մէջ: Թէ ինչ էին ան-  
հասի իրաւունքները, նորա նուն իսկ  
անձնական ապահովութիւնը ամեն  
տեսակ հարստահարութիւններից և  
պատիւ չօշափող սանակութիւննից  
թէ ժողովրդի հարտածնների կողմից  
և թէ իշխանութեան օրդանների  
կողմից, դորա համար պէտք է կար-  
գաւ «Արարատեանի կեանքը», որը  
դրւած էլ է շատ պարզ լեզով, ա-  
ռանց սեթենթութեան և նոյն իսկ  
մի լայտնի հումորով:

Իւր մանկական կեանքի նկարա-  
գրութեան հետ պատկերացնելու  
համար ժամանակի կեանքը, զըմա-  
պատող հասարակութեան այլ և ալ-

խաւերի տիպերը և առօրենակ անսուսականն ու ընկերական կեանքի հաճգամանքները՝ Յար. Արարատանը օգտում է այն բոլոր դիրքերից, որոնց մէջնաեղելէ ծնած օրից, 1774 թւականին, մինչ իւր պատանեկութեան հասակը, երբ զիմել է օտարութեան—Ռուսաստան, Մենք կ'աշխատենք այդ կեանքի գլխաւոր դէպքերը զուրա բերելով՝ ժամանակի համար բնորոշ հանգամանքները լիշտակել ալսուել. Ծնւած մի մօրից, որը երեխան ժամանակ զերմէլ էր թուրքերից և ծախտել Գանձակի մի բէզի, որի մօտ մեծացել է մինչ 10—11 տարեկան հասակը, երբ նա պէտք է նշանւէր բէզի տղի հետ, բայց որին չաջողել է թէն տանջանքներով բայց և աչնպէս ազատւել—Արարատանը իւր մօր խօսքերով պատմում է այդ անցքերի հանգամանքները, պատմութեան, որը մի պարզ պատկեր է Գանձակի խառնութեան ներքին կեանքին. Միմէսն կաթողիկոսի հոգատարութեամբ Յարութինի մալրը, զեռ ևս մանկահասակ, ամուսնանում է Տաճկաստանի Վարդենիս դիւզացի արհեստով քարտաշ Աստւածատուր Խաչիկեանցի հետ, և այդ ամուսնութիւնից ծնում է նախ մի որդի, ապա Յարութինը և ապա Հերիքնազը, որից չետք մալրը կորցնում է իւր ամուսնուն, տունը մնում է որբ և մալրն է պահում ընտանիքը զորդ գործելով ու բարեակ մանելով. Վերաբէ համում 1779 թւականը, վրաց Հերակլ թագաւորը վարձակումն է զործում Երեանի վերաբէ բարձ առանց լաջողութիւն դանելու. բայց վերա-

դառնալով Վրաստան՝ «Հարուստ թէալքատ (հակերից) բոլորին միասին Հերակլ զերի տարաւ և իւր իշխանների վերաբէ բաժին բաժին արեց» (Էջ 35). Վաղարշապատը քար ու քանդ չանելու համար էլ «Հերակլը (Միմէսն) կաթողիկոսից ստացաւ մի բաւականին խոշոր գումար» (Էջ 36): Գերի տարածներից «շատերը սովոր մեռան, ոմանք փախչելով ազատւեցին, իսկ Թիֆլոս բերածներից մի մասին բնակեցրին աւաղակների բուն դարձած վանդաւոր տեղերում, մնացածներին բաժանեցին վրաց իշխաններին և ազնւականներին» (Էջ 38): Սա մի կտոր է Վրաստանի հաւերի պատմութիւնից:

Այս թշւառութիւնների վերաբէ մի ուրիշ հոգեմաշ վերք ևս աւելացել էր կաթողիկոսի սրտին. այս այն հանգամանքն էր, որ «մեր ազգակիցներից ոմանք հետանալով մեր հայրենի գաւառութիւնից, դարձել էին պապական կամ նզվուտ և աշխատում էին թուլամորթներին գալթակղեցնել. Նրանք իրանց ստապատիր քարոզներով աշխատում էին պարզամիտ զեղջուկ ռամկին ճշմարտութեան ճանապարհից շեղել, և ի հարկէ, այդպիսիների նպատակը միան խարեւութիւնն ու շահամոլութիւնն էր, որից ոչինչ (Էջ 38—39):

Միմէսն կաթուզիկոսի մահան և Ղուկաս արքեպիսկոպոսի կաթողիկոսանալու տարում Յարութիւն Արարատանը ութ տարեկան էր, երբ ոկտեց գրել-կարդալ սովորել վաճքի կազմարարի մօս. Հէնց այդ ուսումն է որ անասելի թանկ նստեց Յարու-

թիւնին, իւր վերակ դարձնելով գիւղացիների հալածանքները, թէ որքան քիչ էր տարածւած գրագիտութիւնը այդ ժամանակ, ցուց է տալիս Արարատեանի վկացութիւնը. «Մեր (Վաղարշապատ) գիւղի 700 տանից վերջին ալքատից մինչև առաջին հարուստը՝ տասը մարդուց աւելի գրագէտ չէիր զանիլ» (Էջ 2):

Եւ իւր զրքի մի ծանօթութեան մէջ (Էջ 40) ապա և ուրիշ տեղերում (օրինակ Էջ 53) հեղինակը ծանօթացնում է իւր ժամանակի ուսման պարմանների ու պարագաների հետ:

Որպէս զի Յարութիւնը ուսումը կարողանար շարունակել, նորա մազըն էր զնում բանակուղ (վանքի համար գաշտերում աշխատելու) գիւղի տանուտէրի հրամանով. Գիւղը ունեցել է կառավարիչ, որը նշանակում է եղել տանուտէրին ու տասնապետին կամ գորին. Ցիշում է նաև հարիւրապետ (ՅՈՒՏԵԿԻ), որին ալ. Պ. Պ. հնթաղրում է մովորով կամ կառավարիչ վանքի բոլոր գիւղերի (Էջ 60). Կառավարչի ձեռքի տակ կար և մի ուրիշ հոգեորական անձն՝ կառավարիչ կամ վերակացու, որին չանձնած էր գիւղից վանքապատկան հասութը ժողովել և վանքավին աշխատութիւններին վերահսկել և նշանակում էին չքաւոր մարդկանցից (Էջ 67): Կառավարիչը եղել է հոգեորական, երեխ որպէս վանքապատկան գիւղի կառավարիչ. Տանուտէրի ու գորի վարուութիւնը համապատասխան էր ժամանակի ողուն. Հայ. հունար, վիշոցներ, ծեծ, փալախկա և ալ աւղալիսի քն.քութիւնների օրակարգի մէջ էին խեղճերի հետ զործ

ունենալիս. Դոցանից ահագին բաժին հասել է նաև և մանաւանդ Յարութիւնին ու նորա մօրը: «Դպիրն ինձ թողեց ու զարձաւ մօրս, միքանի ապուակ տեսց նորա երեսին՝ մազերը ձղձղեց ու քաշէ քաշ տալով ասոյ՝ ինչպէս համարձակւեցիր ինձ հակառակել ու լիրբ-լիրբ խօսքեր ասել. Եթէ ուզում ես որդուդ պաշտպանել և ուսումնական շնուր, ինքդ արի, զրա փոխարէն աշխատիր և ինչ որ կը չանձնեմ՝ արա» (Էջ 46): Եւ կամ՝ «Գալուստը (Կառավարիչը) այդ ժամանակ կալումն էր: Նրա հրամանով իւր ստորադրեալ-ներից վեց հոգի իսկոյն եկան և մօրս մազերիցը քարշ տալով նրա մօտ տարան»: Եւ զեռ աւելին. «Եւ ահա ամենայն սառնասրութեամբ (Գալուստը) հրամանէց որ մի ուժեղ տղամարդ կանչեն ու գերեմասոի մահակներ բերեն: Նրա հրամանն անմիջապէս կատարեց: Նկատ մի հաստ ու կոպիտ գիւղացի, մօրս շալակեց ու իւր ուսի վրափից նրա ձեռները պինդ բռնեց. իսկ միւաներն այնքան ծեծեցին նրան, որ ձանը կտրեց ու շրերն արիւթաթախ եղաւ. Նո մօրս ետերց գնացել էի և վկաէ էի այս սանենայն անգթութիւններին» (Էջ 48):

Անողորմ կերպով ծեծւելու դէպքերի նկարագրութիւններով լիքն է «Արարատեանի կեանքը»: Ացդ պատմութիւնները չափազանց ճնշող տպաւրութիւն են գործում ընթերցողի վերաց որը չի կարող դսպեկել հարցնելուց՝ արդեօք Արարատեանը չի չափազանցնում: Բայց պատմւածքը իւր ամբողջութեամբ այնքան արժա-

Նահաւատութիւն է ներշնչում, որ մարդ պէտք է հաւատագ պատմւած զէպկերի ճշդութեանը: Սական տեղադադար ցանկալի էր աւելի որոշութիւն: օրինակ շատ կարենոր է գիտենալ բանատեղ (կոռ ու բէդեառ) գնալու օրերի քանակութիւնը տարւաւ ընթացքում: արդ Արարատեան մի տեղ ասում է ալսպիսի բան: «Զը նակելով որ ես անչափահաս մտնուի էի, ամբողջ շարաթեաւ լի օրերը ստիպւած էի բանատեղ գնալ բաց կիւրակի օրերը ծածուկ գնում էի ուսուցչիս մօտ և ուսումս շարունակում» (Եջ 49): Ինչ ընդարձակութեամբ պէտք է ակտ տողերը հասկանալ, այդ պարզ չէ: Բաց չեցուելու արժանի է որ բանատեղ գնալը լոկ ձրի ծառակութիւն չի եղել, այլ վարձով: «Շատ չաճախ էր պատահում, որ բանատեղից ստացած վարձում էրի ծառակութիւնը մեր հարուստների և կառավարիչների հրամանով ինձանից խլում էին» (Եջ 49): Խլելու համար պատրաստներ էին բերում՝ կոմի իրանց արտը մտնելը և այն:

Տասը տարեկան հասակում Յարութիւնը մտնում է ծառալութեան՝ վանքի Կարապետ անունով վարդապետի մօտ, ապա գիտի քահանալի մօտ, երբ 1785 թ. Արաստանի վերակարձակւեց լեզվների Օմար խանը, իբր 30,000 զօրքով, ձմեռեց այն ժամանակ Տաճկաստանին պատկանող Ախալցխաչ քաղաքում, որը, ինչպէս երևում է, գելուվաճառութեան մեծ շուկա է եղել, ապա Աշաւարակ գիւղովն ու Երևանի կողմով գնաց Շուշի քաղաքը, այստեղից իւր երկիրը, նաև բնորոշ է: Գիւղի վերակացուն, մի

Աշտարակում «Օմարը բռնեց մի քանի հայ ազգեպաններ, ոմանց սպանեց, ոմանց էլ հետը տարաւ»:

Յարութիւնը նորից մտաւ ծառալութեան Կարապետ վարդապետի մօտ, ուր ժամասացութեան ժամանակ մի անգամ սխալւած լինելու համար անքան անգթաբար ծեծւց, որ «Երկու ամսաշափ անկողնից չը վերելաց»: Բաց և այնպէս ջարդւած մէկ մատը բռնելու համար Երևան գնալով տեղական մի վերաբոգի մօտ, զօտով նորան վերադարձրին վանքը, ուր նորա վանքում մնալու համաձանութիւնը դուրս կորդելու նպատակով ֆալախակի պատժին ենթարկեցին: «Այս պատիմը մեղանում սովորական է: Երբեմն այնպէս անգթաբար է կատարւում, որ պատժուղը զրկում է ձաշնից և ուշք ու մտքից»: Բաց Յարութիւնը այնուամենայնիւ չի համաձանում ծառակել վանքում և 14 տարեկան վերադառնում է Վաղարշապատ, իրանց տուն, նորից ընկնելով տանուաէրի ու գղիրի ձեռքը ու բանատեղը: Նրկու տարի շարունակ նաքանքանի գործով էր աշխատում, նաև ըրնձի, ցորենի ու բամբակի արտերում և վանքի եզներ ու դոմէչներ արածացնում, կիւրակի և այլ մի քանի օրերը գնալով իւր երկրորդ ուսուցչի մօտ կամ ժամասացութեան: Ապա Յարութիւնը մտաւ աշակերտ վանքի կազմաբարի մօտ, ստանալով ամսական 30 փարաչ (?) ոռճիկ և ձրի ճաշ վանքի սեղանատանը: Բաց մի դէպք նորան նորից զցեց իւր հոգեհանների ձեռքը: Դէպքը շատ դաքը, այստեղից իւր երկիրը, նաև բնորոշ է: Գիւղի վերակացուն, մի

ճութ խաղող գողացած լինելու համար, մի թուրքին աջնակէս խփում է դագանակով քներակին, որ նա մեռնում է տեղն ու տեղը. Սպանողին չանձնում են սպանւածի ազգականների վրէժինգրութեանը, բայց չմտոց վաճականները փրկանք են տալիս, նրան ազատում, մեղը զցելով մի քանի երիտասարդների վերաբէ Դոյցա մեղը քաւելու համար նիրեանի խանը Վաղարշապատ գիւղը դատապարտում է պատժի, այն է որ Արագած լերան վերաէ մի որոշ տեղում մի բերդ չինեն, աւազակների չարձակումներից ազատմելու պատրւակով. Այդ բանը գլուխ բերելու համար կարգադրութիւն եղաւ ամեն չափ ու հասակից 35 մարդ ընտրել ազքատ տներից և նոցա վերաէ հըսկողներ ընտրել հալուստներից 5 հոգի. Բացի զրանցից՝ երկու թուրք և մի հաջ էլ ընտրւեցին զլիսաւրվերակացումներ. Մեր Յարութիւնը, որպէս չքաւոր, ամենաչատ և երկար բանողներից եղաւ, վեց ամիս աչդգործում լինելով և կրելով զառն տանջանքներ այլ և այլ պատահարներից, Վերադարձին Ամբերդ գետով անցնելիս խեղդելու վտանգին ենթարկւեց, ազատւելով պատահմամբ անցնող մի թուրքի ձեռքով: Այդ մասին լուրը աջնակէս տարածեց թէ իրը Յարութիւնը մեռաւ. Օշական գիւղը հասնելով, Յարութիւնին դժւարութեամբ միայն լաջողւեց համոցնել իւր ծանօթներին որ սխալ է թէ իրը ինքը մեռած է եղել և որ կենդանութիւն առած մեռել չէ: Այդպէս կարծելով տեղական նախապաշարմունքի համաձաւն նորան պատ-

րատուում էին հրացանով սպանել... Էջ 89 մեծ հումորով Արարատեանը նկարագրում է Օշական գիւղի երկու քահանաներին, որոնք շարումակ իրարից խռովում են, որպէս զի հաշտւելու շատ առիթներ ունենան՝ ժողովրդից ընծաներ ստանալով...

Իւր մեծ եղբօր պատկելը առիթ է տալիս Արարատեանին ծանօթացնել մեղ ընտանեկան մի քանի բարքու վարքերի հետ: Տաճկական Բալագեղ քեր քաղաքը գնալու մի առթով ի միջի ալլոր տեղեկութիւններ են տրում եղիդների մասին, պատմում է Մանուշակ անսունով գեղեցիկ կնոջ մասին, որ մի գեղեցիկ լուսաբանութիւն է հաջերի վիճակի Տաճկաստանում և նոյն խոկ հավկական բարքու վարքերին:

Մարդաբանների (Եթնոգրաֆ) ուշադրութեանը կարելի է առաջարկել Էջ 117 սպատմած «հսկաների գերեզմաններից» հանած հսկակալան մեծութիւն ունեցող մարդկացին սպառների մասին, Աղվարդ գիւղի մօտ: Յիշենք որ Յարութիւնը Աշտարակում մի հարուստ ազգետիրոջ մօտ ակնեպան մտաւ և որ աչդ առիթով մենք ծանօթանում ենք ազգեպահութեան պայմանների հետ (Էջ 125—127): Աղա-Մահմադ-խան շահի նիրեանի վերաէ արշաւելու լուրը նրեանի խանին թելալրում է քաղաքը ուստելիքի պաշարով պամանվել: Յարութիւնը լինում է նոցանից, որոնք աչդ նպատակով Յարութիւնի գնում ձիերով ցորեն բերելու: Այդ առիթով նա մեղ ծանօթացնում է մի ոմն Զաքար թուրք կալւածատիւ-

բոջ հետ, որը Յարութիւնին առաջարկում է իւր մօտ ծառալութեան մտնել իրը իւր գիւղի կառավարիչ տարեկան 100 մանեթով։ Բայց Յարութիւնի մայրը թուլ չի տալիս այդ և նու մտնում է ծառակ Սահակ արքեպիսկոպոսի մօտ ու Հայփամիմի վանքում։ Մինչ 15 էջ նվիրած է Սահակ եպիսկոպոսին և նորա չարաքերութիւններին Ղուկաս կաթողիկոսի հետ։ Ղուկասը դուրս է բերւած ոչ գեղեցիկ գոճներով։

Սահակ եպիսկոպոսի մահը զլեց Յարութիւնին իւր պաշտպանից, չը ստանալով նաև եպիսկոպոսի կտակած մի փոքրիկ գումարը, վանականների ագանութեան չնորհիւր գիւղի կառավարչի կողմից ստացած մի նոր ծեծը վերջապէս թելաղեց Յարութիւնին դիմել պանդիստութեան։ Բայց մինչ այդ գիտաւորութեան իրագործելը, Յարութիւնը առիթներ որաց իւր հայրենիքի մի քանի հնութիւնները տեսնելու, որպիսին է Գեղարդը, Խոր Վիրապի վանքը, ո. Յակոբի վանքը, ապա Արագած լեռան վրայ գտնած բաղմաթիւ հին ամազի վանքերն ու եկեղեցիքը, Կարրի գիւղը, չը խօսած Մողնու վանքի մասին, որի վանահայր Կարապետ (Նախկին վարդապետ) եպիսկոպոսի մօտ նա նորից ծառալութեան էր մտել և որի մօտ իրան շատ լաւ էր զգում։

Նատ հետաքրքրական է պատմութիւնը իւր նշանւելու մի չաջողւած փորձի, որը մինոցն ժամանակ խաներին բնորոշող մի պատմութիւն է։

1792 թ. Աղա-Մահմադ-խանի ար-

շաւանքի լուրի տարածւելուն պէս, երբ ամենքը պատապարւում են Երևանում կամ Եջմիածնում, Թաւրիվլից եկած Թիֆլիսի վաճառականների քարտանով Արարատեանը վիրջապէս թողնում է հայրենիքը, մի քանի ժամանակ մնում Թիֆլիս և Վրաստանում առհասարակ, ականատես լինելով Աղա-Մահմադ-խան շահի աւերութիւնին Թիֆլիսում և Վրաստանի ողորմելի դրութեանը երկիրը պաշտպանելու գործում։ Շատ մեծ հետաքրքրութեամբ կարգացւում է նաև այդ երկրորդ մասը, որից դժւար է աւելի հետաքրքրական էջը մատնանիշ անել, այնքան նորքա հաւասարացիս լաւ են գրւած։ Բայց գուցէ վրաց թաղաժառանդի որ կրամոլութեան և ոչնչութեան նկարագրութիւնը մնայ իրը մի կլասիկական կոոր ալս ամրող գրքում։ Թիֆլիսից հայ վաճառականի հետ ունեցած չարաբերութիւնների նկարագրութիւնը կարող է նունպէս գրական արժէք ներկայացնել։

Մենք այլ ես գրքի ալս երկրորդ մասի մանրամասների վերաց կանգչենք առնիվ, բայց դորա սլատմական արժէքը կարող է հասկացմալ եթէ ասելու վենենք որ Աղա-Մահմադ-խան շահի Թիֆլիսը աւերելու պատմութեան վերաբերեալ Արարատեանի պատմածը միակ գրական վիշտակարանն է ոչ միայն մեր, այլ և վրաց գրականութեան մէջ։ Հետեւապէս չը պէտք է զարմանալ, որ վրացիք վաղուց իրանց լեզով թարգմանած ունեն «Արարատեանի կեանքի» երկրորդ մասը։ Խակ ինչ վերաբերում է առաջին մասին, —

անկատկած նա մի եղակի և թանկագին նշխար է հայկական կուլտուրական պատմութիւնից. Անա ինչու մենք աղաղէս մանրամասնաբարար կանգ առանք աղդ առաջին մասի վերակ որ աղնքան բաղմակողմանի կերպով պատմերացնում է իւր ժամանակի հայերի կեանքը:

Տիրապի է մտածելը որ աղդ ամբողջ նկարագրութեան մէջ չարերի ու վաստերի տիպերը շատ գերակըցում են բարիների և լաւերի տիպերից. Մարդ մնում է զարմացած աղնքան անպիտանացած մարդկանց ու հանդամանքների վերակ, որոնց մէջ մի լաւ ձգումներով մարդ իրան շրջապատած կը տեսնէր աղդ ժամանակներում. Խրի դրական ուժերի աշխարհ վիշենք գրքի առաջին մասից, նախ Արարատեանի մօրը, որը քրիստոնէական ուժեղ բնազդուսմով դիմադրում է թուրքեցի հարուստ ընտանիքի հրապուրանքներին, հետեւում իւր մուացւած բայց գտնաւած մօրը և ապա հերոսաբար պաշտպանում իւր զաւակներին կեանքի ամեն կարգի ճնշումներից. ապա վիշենք Յարութիւնի աջն երկրորդ ուսուցչին, որը բարի հրեշտակի պէս ամենուրեք երեսում է. Սիմեոն կաթողիկոսին, որին շերտ էջեր են նւիրած. Սահակ եպիսկոպոսին, որին Արարատեանը մի առաքինի և մեծ ժողովրդական անձնաւորութիւնն է դուրս բերել. ապա մասամբ Կարապետ եպիսկոպոսին և վերջապէս այն մութ անձնաւորութիւնը, որը ներկալացնում է մեղ Մզրախ անունով և որը այն ժամանակ Տաճկաստանի վերականութիւնով կամ Ներկ-

քին-Կուլաբ գիւղի հաջ քահանան էր, հալուստների համար արհավրք, խեղճերին՝ բարերար. Մզրախը, որը մի աւազակ է, կարող է հասկացել միայն պատմական հանդամանքների մէջ. Նա, եթէ կարելի է աղաղէս ասել ոչ թէ աւազակ քահանանց է, այլ քահանանպական աւազակ է որին Պաֆին անկասկած իւր վէպերի մէջ զուրս կը բերէր մի լաւ գերով, աւելի համապատասխան Մզրախների խակական կոչմանը. Մզրախը մի տիպ է, ինչպէս Դալի-Մադրասան Ղարաբաղում. Պրական տիպերի մէջ ի հարկէ վիշելու է վերջապէս իրան՝ Արարատեանին, որը մի աչքը բաց, ընդունակ և ուսումնասէր հայերի մէջ ոչ շատ հաղագիւտ տիպ է, բայց որը այնուամենաանսիւ ընթերցողին զարմացնում է, թէ ինչպէս նա իւր մանկութիւնը և պատմանեկութիւնը նկարագրածի պէս ստորագոյն պայմաններում անցկացրած լինելով՝ լաջողում է երբ և իցէ աղնքան բարձրանալ, որ ուսաց թագաւորներին ծանօթ և սիրելի անձնաւորութիւն դառնաց ստանակ քաղաքացիական գեներալի աստիճանը որպէս խսկական պետական խորհրդական, կամ բանակի իների մէջ մոնի Փրանսիական թերթերում Շահան Զրպետեան պրոֆեսորի հետ, կարեորութիւն տուանակ Ներսէս Աշտարակնեցուն ծառակութիւն մատուցանելու կարողանալու չափ և այնուիւր գրած կենսագրութիւնից ստական երեսում է որ Արարատեան օժտւած էր արտասովոր ընդունակութիւններով հանդամանքներից օգտականող Մերկ-Կուլաբ կամ Ներ-

կըուելու, սուր աչքով՝ զիտելու և մեծ վիշողութիւնով՝ տեսածը մտքում պահելու, այլ և գրականական տաղանդով՝ չարչարանքների պատմութիւնից հետաքրքրական վէպի նման կովտուրային պատմական մի զիրք օրինելու չափ:

Այս զիրքը, ինչպէս ասւած է թարգմանող Պ. Պ. ի բառաջաբանում, թարգմանւած է հաջրէն և ալժմ կորած ձեռագրից ռուսերէն, գերմանէն, անգլիերէն, և գրքի երկրորդ մասն էլ վրացիերէն։ Այդ թարգմանութիւնների մասին ըստում ենք ընթերցողին Պ. Պ. ի բառաջաբանին։

Ալժմ մի քանի խօսք գրքի հայրէն թարգմանութեան մասին։ Թարգմանութեան լիզուն, որը ընդհանրապէս արարատուսն բարբառի հարազատութեան զրոշմ է կրում, մի քանի կոզմերից անպիսի տարօրինակութիւններ է Ներկալացնում, որ մնում է միաւն ապշել։ Ովկ կարող է հասկանալ, բացի գուցէ միաւն իրան թարգմանչից, թէ ինչու ամե-

նամաքուր աշխարհաբառ ձեւրի հետ նա ամեն տեղ զրում է՝ լսին, տանին, տանչվկի, չարչարւին, մոռնիւրվէմնզիր լինիւ, աշխատիւ և այլն։ Եւ կամ լանկարծ՝ «մեր բազմավասակ մատենագրաց յ կինսսագրութիւն անց վերաբերութեամբ», և մի

քանի ալսպիսի ականջ ծակող խորթութիւններ բաց մի բան որ չափազանց անիսնամ կերպով է կատարւած, դա՝ զրքի տպագրական սրբագրութիւնն է, որ ամեննեին պատիւ չի կարող բերել Հրատարական Ընկերութեան, տպագր ական սիալների թիւը ալսուեղ շատ շատ աւելի է քան թպատրելի է մի գրքի համար։ Նաև տպեղ տպաւորութիւնն է թողնում այլ և այլ ձեկի գլխատառերի շփոթութիւնը։ Կարելի էր ցանկալ նաև աւելի մաքուր թուղթ։ Թարգմանչի ծանօթութիւնները անհրաժեշտ էին և եղածները տեղին են, մինչև անդամ աւելորդ էր լինիլ ևթէ նոցա թիւը աւելի լինէր։

Ա. Ա.

ԱԱԱՅԵԱՆՑ, ԵՐԻԱՆԴ. — «Ձաւախսքի բուրմունք»։ Հրատար. Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան։ Թիֆլիզ. 1892 թ. տպ. Արօր Նազարեանի. մեծ ութածալ, 71 երես, տառ. № 10, զինն է 25 կ.։

Մեր ժողովրդագրական գրականութիւնը մի նոր գրքով ևս հարըստացաւ. դա վիշեալ «Ձաւախսքի բուրմունք»ն է։ Այդ գրքի երեան գալը աչքի է ընկնում առաւել ան պատճառով, որ նորա նիւթը բոլորովին

նոր է. դա Բարձր-Հայքի, որ մինչեւ օրս համարեա մնացել էր անուշաղիր, ժողովրդեան չափաբերական և արձակ աղօթքների, երգերի և աւանդութիւնների մի հաւաքածու է, քանի որ Ձաւախսքի, ալսինքն Ախալցիսակ

ու Ախալքալաքի բնակիչները Բարձր-  
Հակից գաղթածներն են:

Դժբաղդաբար պ. Լալակեանը ոչ  
մի խօսք, ոչ մի բացատրութիւն կամ  
տեղեկութիւն չի տալիս ոչ ան ժո-  
ղովրդի մասին, որի բանաւոր գրա-  
կանութիւնը իւր աշխատութեան  
նիւթէ արել<sup>1)</sup>, ոչ այն ազբերների  
մասին, որոնցից նա օգտական է՝ և ոչ  
որ ամենից զլիաւորն է, այդ բար-  
բառի առանձնակատկութիւնների  
արտասահնութեան և քերականական  
կանոնների մասին: Զը կան նոյնպէս  
բազմաթիւ օտարազզի և բարբառին  
առանձնակատուկ խօսքերի և դարձ-  
ածների բացատրութիւնը, որ ան-  
հրաժեշտ է զրքի լեզուն հասկանա-  
լու համար:

Յողնենք այն հանգամանքը, որ  
հաւաքածուն ինքնաստինքեան խիստ  
անկատար է և լուրջ մշակութեան է  
կարօտ, պ. հաւաքածու մեղանչում է  
այնպիսի հասարակ, տարրական կա-  
նոնների դէմ, որոնց ըլ գիտենալը  
աններելլի է ամեն մի անձի, որ պա-  
րապում է ժողովրդալրաւթեամբ:  
Պր. Լալակեանը չի պահպանել ժո-  
ղովրդի արտասահնութիւնը, անուշա-  
դիր է թողել բարբառի շատ քերա-  
կանական կանոնները, խառնել և  
աղաւաղել է բառերը, լատկացնելով

1) Կարող ենք վկանել, սակայն,  
որ պ. Լալակեանցը ունի այդ մա-  
սին շատ նիւթեր ժողոված, որոնք  
չեն հրատարակւած: Այդ նիւթերից  
մի քանի հատոր մեղ են լանձնած  
հեղինակի կողմից, որոնք սակայն,  
որպէս հում նիւթեր, չեն կարողացել  
տեղ գտնել «Մուրճ»-ի մէջ:

Յան. Խմբ.

նոցա այնպիսի նշանակութիւն, որ  
չունին իսկապէս: Պր. Լալակեանը  
չը գիտէ, որ Զաւախուքում կան ան-  
պիսի գաւառաբարբառներ, կամ՞նոցն  
իսկ այնպիսի ինքնուրուն բարբառ-  
ներով խօսող գաղթականներ, որոնց  
բանաւոր գրականութիւնը նա խառ-  
նել չփոթել է ջաւախքինի հետ.  
չը հասկանալ նոցա միջի ահազին  
տարբերութիւնը կը նշանակէ չըմ-  
բռնել հաւաքած նիւթի պատ-  
մական, լեզւաբանական և ժողովրդ-  
զարբական ահազին նշանակութիւնը:  
Այսպէս «Անօրէն մարդկան-  
ցից ազատւելու ազօթքը», «Ահա մտա-  
կան կանկը դին դեր եզմանոց, ոիրուն երգերից  
առաջին չորս տունը, «Թբու-  
նէն անցաւ թնդիրն էր  
ծուխո», «Արիք տեսէք ազ-  
ջկաւ կեսուրո», «Առաւոտ դա-  
րի պոկենք», նաև Պարերգե-  
րից շատերը, չարսանեաց  
երգերից առաջին երկուսը  
և այլն և ազն չեն պատկանում  
Զաւախքին, այլ կամ զաղթած եկ-  
տորներն են հետները բերել և կամ  
պատահաբար գիտեցել է մի ջաւա-  
խեցի:

«Հնտի, մնտի լաւ Թէլինկօ,  
«Ճտուաֆըտէլ լաւ Թէլինկօ,  
«Արածի Մուրճամուրսի վրատ,  
և կարգեցար ուր է հինատ...

Ինչ նշանակութիւն կամ պա-  
րունակութիւն ունին, ինչ լմպով  
կամ բարբառով են առաջին երեք  
տողերը, մենք չը կարողացանք հաս-  
կանալ, թէս Զաւախքի բարբառը  
մեր մակենի լեզուն է, և չը կարո-

զայտան համկանալ այդ բառերը ոչ  
մինը ջաւախսեցիներից, որոնց մենք  
դիմեցինք բացատրութիւն խնդրելու  
օրինակի համար համեմատեցէք և  
տեսէք «Մեր թագաւորն է աջ խաչ...»  
(Երես 26), որը ոչինչ առնչութիւն  
չունի Զաւախքի (Եոն և Բարձր-  
Հաջոյ) բարբառի հետ: Մի քանի  
տեղեր աւելի աններելի սխալներ են  
արած: Ալովէս՝ (Երես 28)

«Կողեր ունինք մե ու կարմիր,  
«Ք եղ կ թ ե լ ու մ է կ մ ա ս ն

Ենարիբ:

«Ս է ր (ս ե ր?) ու կ ա ր ա գ  
շ ա տ պ ա տ ր ա ս տ ի ր ...»

Ընդդիակալ երկու տողերը ժողո-  
վըրդինը չեն, այլ թիսովի, կեղծ ու  
արհեստական: Դոքա մեր գրակա-  
նական լեզուվ են գրած երեսի տաճ  
պակասը լրացնելու համար: Նոյնը  
պէտք է ասել նաև (Եր. 36) «Պիւ-  
պիւկ, ի՞նչ ես պառկէ չոխուս ուա-  
ցամ»—երգի առաջին տաճ մասին,  
որը թարգմանած է թուրքերէնից  
կէս գրականական և կէս Զաւախքի  
բարբառով:

Գալով բուն նիւթին, որտեղ ան-  
թիւ տպագրական սխալներ կան  
ամեն մի երեսում և այն որ ուշա-  
դրութեան չէ առնւած և մասնա-  
նիշ չէ արւած բառերի արտասանու-  
թիւնը, այլ և աղաւազւած և շփոթ-  
ւած են թէ ուղղագրութիւնը և թէ  
բառերը: Չէ որ հարկատր է նաև  
գլու այնպէս, որպէս արտասանում  
է ժողովուրդը և երկրորդ, եթէ մեր  
ոչնեցած տառերը բաւական չեն  
բարբառի բոլոր ձախները արտա-  
բերելու, այն ժամանակ տառերի  
վերաէ դրող սոլորական փշինե-

բով կամ նշաններով աշխատում են  
պակաս ձախները լրացնել <sup>1)</sup>: Ան-  
տարակուս կարդացած կը լինիք պ.  
Գ. Խալաթեանի «Հայ ազգագրութեան  
ծրագիրը»: Ժողովուրդը ասումէ: զլոխ,  
գրած է զլուխ և զլոխ, ասում են  
էրկինք, Մարտ, գրած է երկինք,  
Մարիամ և Մարգար խառուը, գրած է  
Յիսուս, տուփ կամ սուրփ, գրած է  
սուրփ, փեր կամ բեր, գրած է բեր: ա-  
սում են Վերուսազմ, կամ Վերուսա-  
զմ՝ Վերուսազմ,—գրած է Երուսաղէմ:  
Հարկատր էր գրել քուքար, Սար-  
քիս, աշկերտ, մէք, Աթամ, մարթ,  
կիրակիս, Քրիստոն, Գիրքնը, գրւած  
է Սարդիս, աշկերտ, և աղն. ինչպէս  
ընդունւած է զրականութեան մէջ:  
Գրում է՝ քառասուն (պիտի լինի  
քառասուն), նէաֆաս (նաֆաս), վէվ  
(վէւ), պութաղ (պուտաղ), թագոր  
(թագուր), շաղէ (շաղուէ), խազնա-  
տար (խազնատար), ճամփինէր (ճամ-  
փինէր), գալաւակ (գըլաւա), աննը-  
ման (անլըման), պաքմաղ (պաքմաղ)  
թանք (թանկ), չը գտնեմ (չը գտնիմ),  
կամուրջ (կարմունջ), ականջ (ան-  
կաճ), մէջ (մէջ), զարկէ (զարնէ)  
իշտէք (իշտէկ), ըռանջդար (ըռանջ-  
պար), բարձած (բառցած), դառէ,  
գարձած (գառցէ, գառցած), իջեց-  
րին (իջեցուցին), Ասոնք, իսոնք, ի-  
նոնք, մերոնք, ձերոնք (հարկատր է  
ասոնք, իսոնք, ինոնք, մերոնք, ձե-  
րոնք)... Մենք սխալների երեսները  
մատնանիշ չ'արինք, որովհեսում իւ-

<sup>1)</sup> Ստորև բերած օրինակներում  
չեշտի (Շ) նշան ենք զնում այն տա-  
բերի վերաէ որոնք դրականականից  
տարրեր կերպով են արտասանուում:

բաքանչիւր երեսում տասնեակներով | Լալաւեանի գրած և նորա դիմացը  
ազգպիսի սխալներ կան, օրինակ ժողովրդի արտասահնածը.

Տղեամծ է (Երես 1)  
«Թաղակ հացի փուռ էկաւ,  
«Ելէք աշեցէք վով էկաւ,  
«Երէք, իրէք պող ձիաւոր,  
«Երէքն ա կանանչ կապաւոր,  
«Մէկը Յիսուս, մէկը Քրիստոս,  
«Մէկը մանուկ՝ սուրբ Կիրակոս,  
«Էկաւ սարով, իջաւ ձորով,  
Հրեշտակին դէմը բարով...»

Արձակ գրաւածներից աւելորդ եմ  
համարում մի նմուշ զնել, թէս այն-  
տեղ ես անթիւ սխալներ կան:  
Մեր կանծիրով ալս հաւաքածուն  
իւր ներկաւ ուղղագրութեամբ համա-  
րեաւ անպէտք է ուսումնասիրութեան  
համար, քանի որ բարբառի բազմա-  
թիւ հնչիւնները կորսւած են նորա  
մէջ և փոխարինւած խորթ և ան-  
հարազատ հնչիւններով: Այս բար-  
բառը ունի բացի սովորական «ա»-ից  
և մի ուրիշ «ա»-վափուկ (որպէս  
ֆրանսերէն լա մասնիկում), որպէս նա  
հնչում է բառերումն պաքմանը Ախր-  
քանակ, Արզնւրում, Բացի «ու»-ից և  
մի վափուկ «ու» (Ճիշտ համապատաս-  
խան ֆրանսիական «Ա»-ին), որպէս  
բառումն Արզնւրում, Մինչդեռ «Ե»-ն  
և «Ո»-ն գրականական բառերի մէջ  
հնչում են որպէս պարզ «Ե» և «Ո», այս  
բարբառի բառերում, երբ շեշտը աչդ  
առաների վերակ է, հնչում են «Ե»-ն  
ինչպէս էն, իսկ «Ո»-ն որպէս  
մակարդւած «ու» ինչպէս հնր, ձնր,  
փնր, սնիս, սխանոր, կխտոր, մերժնք,  
ասննք, ատոնք, և ալն բառերում:  
«Ե»-ն տես բառերում՝ բեր, փե,

Պիու վնի  
Թամզմ հացի Փոստ (կամ հնու) էկաւ,  
Ելէք աշեցէք վով (կամ վեւ) էկաւ,  
Իրէք, իրէք սող ձիաւոր,  
Իրէքն ա կանանչ կապաւոր  
Մէկը Յիսուս, մէկը Քրիստոս,  
Մէկը մանուկ՝ սուրբ Կիրակոս...  
Էկաւ (էկան) սարով, իջան ձորով,  
Հըրըշտակին դէմը բարով...

Կեր, վիճ, եղներ, կովեր, հարներ,  
աներ, հողեմ, թաղեմ, փոխեմ, և  
ազն, Զաւախքի բարբառը չունի  
վակար բ, գ, դ, ջ, և ձ, այլ գոյց  
փոխանակ բ-ի և պ-ի միջին ձանը  
բ-ի տեղ է գործածում, երբեմն բ-ն  
դառնում է պ և փ, (պարի, սուրփ,  
իեր-փոխանակ-բարի, սուրբ և  
բեր): գ-ի տեղ զործ է ածում թով  
գ, որ երբեմն դառնում է «ի», և «ք»  
(գիւղերից մի քանիսում ասում են  
կարի, փոխ. գարի, ք'ուքամ՝ փոխ.  
կ'ուգամ): «Դ» ի տեղ թով դ, որ  
երբեմն դառնում է «ա» և «թ»: «Ձ»-ն  
դարձել է փափուկ չ երբեմն նաև  
«ձ», և «չ», (անկան, մէջ), «ձ»-ն դար-  
ձել է թով չ, երբեմն նա հնչում է  
որպէս «ց» և «ծ»... Մեր մատնանիշ  
արած բարբառի նրբութիւններից  
մի քանիսը միան (ինչպէս անէա-  
խօսքում) պահպանել է պ. հաւա-  
քողը, իսկ ամենամեծ մասը ոչ միան  
չեն պահպանւած, այլ և ոչ մի տեղ  
ուշաղրութեան էլ չեն առնւած:  
Կնքում ենք մեր խօսքը, լաւտնե-  
լով մեր համեստ կարծիքը, որ ակդ  
գիրքը կարօտ է նոր, կանոնաւոր և

ուղիղ տպագրութեան, տեղ տեղ նաև | Այլապէս ակդ ժողովածուն շատ թիւ-  
խմբագրութեան, ապահնքն դէն դցե- | լիմացութիւնների տեղիք կը տառ  
լով Զաւախքին ոչ չատուկ երգերը: | զ բ. Վանցէանց:

## Նոր ստացւած գրքեր

- 1) Չորանեան, Արշակ.—Թուղթի փառք. հոգեբանական վապակր. կ. Պոլիս, տպ. Թ. Սանձագձեան, 1892 թ., գինն է 5 դրոււչ:
- 2) Նոյնը.—Թրթուումներ (ոսնաւորներ): կ. Պոլիս, տպ. Ն. Ճ. Ալամեան, 1892 թ., գինն է?
- 3) Նոյնը. - Գիտութիւն. քերթւած: կ. Պոլիս, տպ. Գ. Պաղուատ-  
եան, 1892 թ., գինն է?
- 4) Հաշիւ. Ս. Պետերբուրգի հաջոց եկեղեցական ստացւածքների  
կառավարութեան ընդ. անօրինութեամբ խորհրդի 1891 տարում: (Նոյնը  
ուուսերէն): Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխովովի, 1892 թ.: Այդ  
«Հաշիւ» իրր չաւելւած՝
- 5) Մասնագիտական համարատուութիւն շինութեան, վերանորոգու-  
թեան և մակաշինութեան Ս. Պետերբ. հակ. եկեղեցիների տան մէկ մասի  
(Նոյնը և ուուսերէն), Ս. Պետերբ., տպ. Սկորոխովովի, 1892 թ.:
- 6) Լէօ.—Թաթախման գիշերը: Շուշի, տպ. հակ. հոգ. Տեսչ, գինն  
է 7. կոպէկ:
- 7) Փառնակէս.—«200,000». կատակերգութիւն մէկ արարւածով:  
1892 թ., Երևան, տպ. Էմ. Տէր-Գրիգորեանցի, գինն է 30 կոպէկ:
- 8) Հեղինակ?—Երկրի և երկնքի մասին զրուցներ. թարգմ. ուու-  
սերէնից: Հրատ. Օղեսափ համալսար. հակ ուսանողների. 1892 թ., Մասկ-  
աս, տպ. Մ. Բարիսուղարեանի. գինն է 20 կոպէկ:
- 9) Զարգարեանց, Մ., թժ.—«Խոլերաի մասին» (արտասպառ-  
ած 1892 թ. Արարատ անսագրից): Վաղարշապատ, տպ. Մալք-Աթոռի,  
1892 թ., ձրի:
- 10) Արծրունի, Վ., թժ.—«Խոլերաի մասին»: Արտասպառած «Մշակ»  
լրապոլից: Վաղարշապատ, տպ. Մ. Էջմիածնի բաժանում է ձրի:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՍՍԻԾՑ ՔՐՈՆԻԿ

ԽՈԼԵՐԸՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Խոլերայի համաճարակումը կլանեց մեր երկրի բնակիչների ամբողջ ուշադրութիւնը այս վերջին երեք ամիսներում և այլ բանի հետաքըլք-քըլքութեան համար բնաւ. տեղ չը թողեց: Խոլերան, որ մեր երկրում սկսեց Բաքւից, տարածւեց աջնուհետեւ մի կողմից Առւսաստան՝ Հաշտարխանի միջով, իսկ միւս կողմից Կովկասի գրեթէ բոլոր նահանգները: Առւսաստանի սահմաններից դուրս՝ խոլերան գոյութիւն ունի այժմ միայն մեր հարեւան Պարսկաստանում, մինչդեռ բարեբախտաբար մեր հարեւան Տաճկաստանում, չնորհիւ ձեռք առած խիստ միջոցների՝ խոլերան չը կարողացաւ մուտք դործել կամ որ և է ծառալ տուննալ: Տարաբախտաբար արևմտուսն Եւրոպան իսպառ զերծ չը մնաց խոլերայից, թէև առայժմ նա զլիսաւորապէս Գերմանիայի ծովեզրիայ Համբուրգ քաղաքումն է սաստիկ. այդ կէս միլիոնաչափ բնակիչ ունեցող հարուստ քաղաքում խոլերան օրական հարիւրաւոր զոհեր է տանում:

«Մուրճ»-ի անցեալ 6-րդ համարում տպւած մեր աշխատակից բժ. Ն. Աւմիկեանի յօդածում առած էր խոլերայի տևողութեան մասին հետեւեալը. «Խոլերայի համաճարակումի սկզբում հիւանդանում են մի քանի հոգի. այնուհետեւ դէպքերը բազմանում են. 4—6 շաբաթից յետոյ համաճարակումը հասնում է իւր գագաթնակէտին», որից յետոյ, ի հարկէ, նա սկսում է նւազել: Այդ խօսքերը մօտաւրապէս ճիշդ դուրս եկան: Այն բոլոր տեղերում, ուր խոլերան ամենից առաջ սկսւեց, համեմատապէս էլ սկսեց աւելի շուտով նւազել մինչ մի ամիս կամ ամիս ու կէս սաստիկ զարդանալուց ու զոհեր տանելուց յետոյ:

Նորհիւ կանոնաւոր կերպով հազորդող պաշտօնական տեղեկութիւններին, որոնք տպւում են „Հայկազ“ և „Պրավիլեցիանական Վէստնիկ“ լրագիրներում, հնարաւորութիւն կայ այժմ՝ համագումարներ հաղորդել խոլերային զոհ գնացածների մասին, որոնց ընդհանուր թւերը հաղորդելը մենք խոսացել էինք անցեալ անգամ: Բայց արդէն այդպիսի համագումարներ մենք գտնում ենք արւած նոյն պաշտօնական «Կաւկազ» ռուսաց լրագրում, որից և կ'օգտվեմ այս անգամւայ համար:

Հաշիւները վերաբերում են ժամանակամիջոցին՝ սկսած յունիսի 6-ից, երբ առաջին դէմքը եղաւ Բաքրում, մինչ օգոստոսի 1-ը, որի ընթացքում, Կովկասում, ըլ վարակւած մնացին միայն Սուխումի և Ալեծովեան օկրուգները. Թնացած բոլոր նահանգներում գործեց խոլերան, թէև ոչ բոլոր գիւղերում, անդամ ամբողջ գաւառներ կան, որոնք ազատ մնացին: Վարակւած նահանգներում յիշեալ ժամանակամիջոցում շատ թողլ էր խոլերան կամ բնաւը կար Տերեկի և Կուբանի նահանգների լեռնային տեղերում. Քութայիսի նահանգում խոլերան կար միայն Քութայիս, Բաթում և Պոտի քաղաքներում և այն գաւառներում միայն, ուր անցնում է երկաթուղու զիծը. Կարսի նահանգում խոլերան կար միայն Շորագեալի վիճակում. Թիֆլիսի նահանգի գաւառներից խապատ զերծ մնացին Թիլաւի և Թիոնէտի գաւառները:

Այն թւերը, որ բերում ենք առորեւ, ի հարկէ պէտք է ընդունել միայն որպէս մօտաւորապէս ճիշդ, որովհետև եղել են անկանկած դէմքեր, որոնք սխալմամբ ընդունւել են որպէս խոլերային, բայց եղել են նաև շատ դէմքեր, որոնք պաշտօնապէս արձանագըրած չեն եղել:

Համագումարները Կովկասի բոլոր նահանգների մասին ներկայացնում են հետևեալը.

### Ա. ԱՆԴՐԿՈՎԻԱՍ.

	Դրա քանակ (թվով)	Եկամունքների գումար	Մաս ներ
Բաքու քաղաք (6-ից յունիսի) . .	56	2.501	1.934
Բաքու նահանգ. (17-ից յուն.) . .	45	4.714	3.210
Թիֆլիս քաղ. (11-ից յուն.) . .	51	408	188

Թիֆլիս նահ. (8-ից յուշ.) . . .	24	1.710	877
Գանձակի նահ. (13-ից յուն.) . . .	49	5.486	2.885
Դաղեստանի շրջ. (18-ից յուն.) . . .	44	12.559	5.674
Երևանի նահ. (7-ից յուլիսի) . . .	25	2.644	1.431
Քութայիսի նահ. (12-ից յուշ.) . . .	20	90	45
Զաքաթալի օկտոբ (16-ից յուշ.) . . .	16	212	133
Կարսի շրջան (17-ից յուշ.) . . .	15	483	245
Բ. Հիմնական կազմով.			
Վաղիկաւկ. քաղ. (12-ից յուշ.) . . .	20	719	308
Տեղեկի շրջան (26-ից յուն.) . . .	36	16.450	8.039
Կուբանի շրջան (27-ից յուն.) . . .	35	7.161	3.611
Ստալրապոլի նահ. (10-ից յուշ.) . . .	22	5.819	3.208
Համագումար . . .		60.956	31.788

Այդ հաշվից երևում է, որ առողջացածները կազմել են 52%  
բոլոր հիւանդացածների:

Զօրքերի մէջ եղած բէպքերը ի նկատի են առնւած միայն Թիֆլիսում, Բաքում և Դաղեստանում:

Նոյն ժամանակւայ ընթացքում, այսինքն ց1-ն օգոստոսի վախճանւածների միջին օրական թիւը եղել է՝

Բաքու քաղաքում . . . . .	34	հոգի
Բաքու նահանգում . . . . .	71	»
Թիֆլիս քաղաքում . . . . .	3	»
Թիֆլիսի նահանգում . . . . .	36	»
Գանձակի նահանգում . . . . .	59	»
Դաղեստանում . . . . .	138	»
Երևանի նահանգում . . . . .	57	»
Քութայիսի նահանգում . . . . .	2	»
Զաքաթալի շրջանում . . . . .	8	»
Կարսի շրջանում . . . . .	16	»
Վաղիկաւկազ քաղաքում . . . . .	15	»
Տեղեկի շրջանում . . . . .	223	»
Կուբանի շրջան . . . . .	109	»
Ստալրապոլի նահանգում . . . . .	146	»

Ամեն մի նահանգի ազգաբնակութեան թւի հետ համեմատած, վախճանւածները կազմել են հետևեալ տոկոմները.

Հարիւր հողի բնակիչներից հիւանդացել են կամ մեռել են՝				
Տերեկի շրջանում հիւանդացած	2,3%/ <sup>0</sup>	վախճանւ.	1,1%/ <sup>0</sup>	
Դաղեստանի շրջ.	2,1 »		0,9 »	
Ստալրատ. նահան.	0,9 »		0,5 »	
Բաքւի նահանդում	0,7 »		0,5 »	
Գանձակի նահանգ.	0,7 »		0,4 »	
Կուբանի շրջանում	0,6 »		0,3 »	
Երևանի նահանդում	0,4 »		0,2 »	
Կարսի շրջանում	0,4 »		0,2 »	
Զաքաթալի շրջ.	0,3 »		0,2 »	
Թիֆլիսի նահանգ.	0,2 »		0,1 »	
Քութայիսի նահ.	0,01		0,01	
Բաքու քաղաքում	2,7		2,09	
Վլագիկաւ կազ. քաղ.	1,6		0,7	
Թիֆլիս քաղաք.	0,3		0,3	

Կովկասի ամբողջ ազգաբնակութեան թւի հետ համեմատած, մինչ օդոստ. 1-ը հիւանդացել են խոլերայից հարիւրին 0,8%/<sup>0</sup>, և վախճանւել հարիւրին 0,4%/<sup>0</sup>, որ նոյնն է թէ ամեն 250 բնակիչներից վախճանւել է խոլերայից մի (1) հողի:

Այժմ, օգոստոսի վերջին օրերում, խոլերայի համաճարակւմը մեր երկում շատ զգալի կերպով նւազել է, տեղ-տեղ գրեթէ խռառ վերջացել է. բայց դեռ ևս նա կայ. յօյս կայ որ գալ ամսի վերջում այդ ահուելի հիւանդութիւնը միայն անցեալի ցիշատակներ թողած կը լինի մեղանում:

Ուսումնարանների բացումը, որպէս բնական էր սպասել, ձեռնահաս կառավարութիւնների կողմից հրամայւած է յետաձգել թէ ռուսաց և թէ հայոց գովրոցների համար. Ուսումնարանները մեզանում բացում են սկսած սեպտեմբերի 15-ից միայն:

# ՀԱՅԵՐԵՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՌԱԽԱՎԱՅԵՐԻ ՄԵԶ 1891 թ,

(Պաշտօնական տեղեկութիւնների վրա ոյ ժնուծ<sup>1)</sup>)

## ՊԵՏՐՈՍ ԶԱՔԱՐԵԱՆԻ

Նախարան հայերէն գրքերին անցնելը աւելորդ չեր լինի բերել այս-  
տեղ Ռուսաստանում 1891 թւում հրատարակած գրքերի հաշիւը.

Ռուսաստանում, բացի Ֆինլանդիայից, հրատարակել է 9.053 գիրք  
29,105,959 օրինակով, որից ռուսերէն 6.588 (22,918,105 օրինակ) և այլ  
լեզուներով՝ 2.465 գիրք (6,187,854): Այդ 2.465 գրքից 840-ը՝ 2,212,618  
օրինակ լեհերէն է եղել, ուստի ըստ կարգի՝ գերմաներէն, երրակերէն, լա-  
տիներէն, էստոներէն, ապա հայերէն 132 գիրք, 179,918 օրինակով<sup>2)</sup>:

Նախորդ 90 թվին ամերող Ռուսաստանում, բացի Ֆինլանդիան,  
հրատարակել է 8638 գիրք, որից հայերէն 102 հատ, և դարձեալ հայերը  
բանել են 7-րդ տեղը (անու Սավորոն-ի Ռու. կալենդար-ը), ուրեմն անցեալ  
91 թւականին հայերէնի թիւը շատացել է 50-ով:

Բայց հարիւառը նն բացարութիւններ. ընթերցողը թող առաջուց  
չուրախանակ տեսնելով թէե շատ համեստ, բայց և անպիս նշանաւոր

1) Списокъ изданій вышедшихъ въ Россіи въ 1891 г. Перепеч. изъ Прав. Вѣстника.

2) Պր. Ն. Պալենկովը (Աշոր. Վետ. 6 և. 1892 թ.) հայերէն գրքերի թիւը հաշւում է 139 (ուրեմն 7-ով մերից տւել), 192,922 օրի-  
նակով: Այստեղ պարոնը սխալում է, մասամբ իւր մեղով (օրինակ նա գրում  
է «Եջմիածնում հրատարակել է վրացերէն Լեռմանստալի հրատարակութիւնը,  
որը չը վիտենք որտեղից է վերցրել, մասամբ սիսալ հազորդած պաշտօնա-  
կան տեղեկութիւնների չնորհիւ, օր. պ. Ա. Տ.-ի ճուշում հրատարակած  
Սեմեյնալ սцենան, պ. Շորօնիլ-ի Բակու և ուր օքրեած այն

մուցրած է հայերէնի հաշւում (անու Ծոս. Իզդ. առաջ. 1891 թ.):

132 թվով, 200,000 օրինակով։ Այսը թւերը ինքն ըստ ինքեան նշանակութիւն չունին, կամ, եթէ կամենաք, այնքան, որքան մեր մի թերթի հաշւած ոչ աւել, ոչ պակաս 133 (?!) հայ մատենագիրները... Թւերը պէտք է ենթարկել ան ալի զի, կամ, ինչպէս Ն. Միլմալովակից մի անգամ սրամիտ նկատեց, լոդիկական օպերացիավի. ի նկատի ունեցէք որ պաշտօնական տեղեկութիւններում ամեն մէկ լ տպագրած կամ կազմած թղթի կտոր—գիրք է հաշւում, բայց ի հարկէ դրանցից քիչերն են դառնում՝ դրական ութեան ու պհականութիւն։

Ահա ինչպէս են դասաւորում այդ 132 գրքերը 179,918 օրինակով՝

10 հատ օրացուց. . . . . 19,200 օր.

8 " ալեալ գրքեր (ոչ գրա-

կան բովանդակութեամբ) . . . 5,800 "

3 հատ ալբրէնարան . . . . . 3,200 "

Դասագրքեր՝

3 հատ թւաբանութեան. . . . . 6,000 "

3 " կրօնի . . . . . 13,850 "

5 " հալոց լեզվի. . . . . 17,200 "

1 " սպատմական. . . . . 800 "

33 գիրք 66,050 օր.

Դասագրքերից շատ տերը նոր տպագրական գրութիւնների կամ բուրժուական գրականութիւնները, օրինակ պ. Դ. Աղաչեանցի (Անահիտ), Մաղաթեանի (Կրթ-կրթ), Հանգուցեալ Պարոնեանի «Զոջերը», «Մուրացկան-ները», «Խիկարը», չը հաշւենք Կարամզինի չարաբալլդ «Լիզա»-ի մէկ թարգմանութիւնը (կամ երկուաը), ապա աչքի առաջ ունենալով որ այս հաշւումն են պ. Բարիսուղարեանի «Հանգէսը» և նրանից 4 ալատասպածքը (Լ. Ի. օ. «Մհերը»), պ. Աղաչեանի «Մի երեսը», Լիրօնտովի «Մասկարագը», «Արեելեան զլուցը») առանձին-առանձին, ուրեմն 11 գիրք, որ նոր չեն մեր գրականութեան համար, կը ստանանք 88 գիրք, չը քննելով նրանց ներքին բովանդակութիւն կամ 1 օրով, կամ շատ ատրինելով, կամ որոնց չերեալը աւելի օգտակար կը լինէր, թէ ընթերցողի թէ հեղինակ թարգմանչի համար, օր. «Հետաքրքիր աղջիկը» Ս. Ամիրեանի (?), Գարշինի ալբանդակած «Զորա օրը», «Հովկի հարսը», «Արդարադատ աղջիկը», «Անող դրութիւնը» և շատ ուրիշներ... Բայց թող մեան 99 գիրքը, առանց կրիտիկական դոքա բաժանում են ալպէս։

Բելեարիստիկա՝ լիքակը, պիեսներ և ալբն 77 հատ 89,300 օր.

Դիւզասանտեսական. . . . . . . 1 " 1,200 "

Ժողովրդագրական. . . . . . . 2 " 1,800 "

Ժողովածունիք (Արագստ), «Հանդէս» . . . . .	2	»	1,120	»
Գյուղնական (Ժողովրդականացրած). . . . .	3	»	4,200	»
Աշխ և այլ ճիւղեր՝ պատմական, հրապա- րակախօսական. . . . . . . . . . . . . . . . . . .	14	»	16,248	»
			99 համ	113,868 օր.

Ավեմ վերցնենք ամենաշահաւոր ձեւողը՝ բելետրիստիկան, որ կազմում է գրեթե  $77\%$  զուտ գրական գրքերի, 'Իրանցից'՝

ինքնուրովն ան . . . . . 34 համ 44%

## Թարգմանած

Թուսերէնից	30	»	38,6%
Գերմաներէնից	8	»	10,4%
Ֆրանսերէնից	2	»	2,7%

Անդախտ Հի երևում՝ ինքնուրան թէ

(թարգմանական): 3 " 3,9%<sup>2</sup>)

Ուրեմն վիավական գրւածքներից  $44\%$  էնքնուրոն և՛ն,  $51\%$  թարգմանութիւններ,  $4\%$  անորոշ Անցնենք օրինակների քանակութեանը (դարձեալ վիավականի համար). ամեն մէկ զիրք միջին թւով տպագրում է 1160 օրինակ, տախիս 6,000 (եզակի օրինակ բոլոր 132 գրքերի միջին էլ լու 16 $^0$ —24 երեսանոց գրքուկ), տինիս 150 օր. (շատ սակաւ):

Վիպական-բելլուրիստիքական գրւածքները տպագրում են in 16° (16-ածալ) և in 8°, 77 գրքից in 16°—18 գիրք, in 8°—59 գիրք, Եթէ դասառհենք գրքերը երեսների թւով կը ստանանք.

16-ածալ`

13 զիրք (18 զրքից ուրեմն 72%) միջին թռով ոչ աւել 30 երեսից  
 (միան մեկը՝ 57 երեսից, իսկ 4 զիրք 16-ական երես ունեն):  
 3 " ( " " 16%) 108 եր. (բոլորը թարգմանութե.):

<sup>1)</sup> Կան գրքի ը, որտեղ թէս ռուսերէնից թարգմանած, ելուսպական ծագում անեն (չեղողերէնից, Գրանուսերէնից, գերմ.), այդպիսիները ես գարեալ ռուսերէնից ևս հաշում. դա ինքն ըստ ինքնեան հետաքրքիր է, թէ առաւել որ լեզուն է տարածւած մեր մէջ:

(Իմանալը թէ մեր մէջ օտար լեզուներից ո՞րն է ամենից շատ տարածւած, չօգտածի նպատակի նկատմամբ միայն կողմնակի հետաքրքրութիւն կարագ է ներկացացնել. աւելի կարևոր է իմանալը թէ թարգմանւած դրբերը ո՞ր ազգերի դրականութիւնիցն են. Վկաս. Խմբագրութեան),

<sup>2)</sup> Պէտքից օգտագործելով ևս ևս նկատմամբ որ մեր թարգմանիչները և զրոյները շատ պուած են խօշոր տառերով տպել իրանց ազգանուններ, բոլորովին աւելորդ համարելով չափոնել՝ թարգմանութիւն է, ինքնառողջն է, բնչ է, օր. մէկ անգամ լիշտած «Հետաքրքիր աղջկեց», «Անբազործի բնտանիքը» կմին Տէր Նրիկորեանցի (?) և այլն. պէտք է պահպանել լաւանի կրտսեան քաղաքացիութիւննո...»

1 գիրք 235 երեսից (թարգմ.) և մէկ գիրք 485 երես (Լէօն «Յիշուլինիները»),

8-ածալ՝ միջին թւով ոչ աւել քան՝

**Սլեզե** 50 երես՝ 26 գիրք (59 գրքից 43<sup>0</sup>/₀) 32 եր.

50—100 „ 16 „ (59—26,5<sup>0</sup>/₀) 72 „

100—200 „ 13 „ (59—22<sup>0</sup>/₀) 140 „

300—400 „ 2 „ 382 (1-ը ինքն. միւսը թարգմ.)

500—600 „ 2 „ 553 (մէկը թարգմանութիւն),

Եթէ վերցնենք առաջին երեք թւուրը (in 8<sup>0</sup>), որպէս սովորական երեսով, (քանի որ վերջի երկուուր գրեթէ բացառութիւնն են), մնենք կը տեսնենք որ մեր գլուխերի մեծ մասը (92<sup>0</sup>/₀) չեւ անցնում 70 երեսից, իսկ այդ 92<sup>0</sup>/₀-ից 43<sup>0</sup>/₀ կազմում են 2 տպագրական թերթից բաղկացած գրքեր...

Նկատելու է որ վեսկերը մեծ մասամբ արտատպւած են զանազան պարբերական հրատարակութիւններից <sup>1)</sup>:

Բոլոր գրքերի (132) տպագրութեան մասնակցել են հաւաբնակ 9 քաղաքներ 15 տպարաններով:

Թիֆլիսը տպագրել է . . . 89 գիրք, ուրեմն 67,4<sup>0</sup>/₀

Տպարաններ՝ քանի գիրք

Արօր-Նազարեանց . . . . 28

Ռուտինեանց . . . . . 21

Վարդանեանց . . . . : 17

Մարտիրոսեանց . . . . 13

Շարաձէ . . . . . 10

5 տպարան 89 գիրք

Սոսկան (մատին Բարխ. տպ.) . . . . 17 հատ 13<sup>0</sup>/₀

Շուշին . . . . . 11 հատ 8,3<sup>0</sup>/₀

այն է՝ Հայ. Հոդ. Տեսչ. տպ. 3 գիրք

Մ. Յակովեանի „ 8 ”

Պետերբուրգը (Սկորոխոդովի տպարան) . 5 հատ 3,8<sup>0</sup>/₀

Երևանը . . . . . 3 „ 2,3<sup>0</sup>/₀

(Երկու տպարան՝ Տէր-Գրիգորեանցի և Գուլամիրեանցի)

Ալեքսանդրապոլի, Ախալց., Նոր-Նախիջ. Երկու-Երկու գիրք 1,5<sup>0</sup>/₀

Բագուն 1 հատ (այն էլ ոչ գրական բովանդակ.) 0,8<sup>0</sup>/₀

Վերջին նկատողութիւն. բելետրիստիկական գրքերը ևս չը բաժա-

<sup>1)</sup> Զը լինեին այդ պարբերական հրատարակութիւնները, առանձին տպագրւած վետիկի մէջ մեծ մասը հաւանականորէն լուս չը պիտի անոնէին, գոնէ ոչ այդ ժամանակամիջոցում:

Յանօթ. Խմբ.

նեցի՝ մանկական, ժողովրդական և խնտելիգենտների համար նշանահակած, քանի որ այդ տեսակ բաժանում անկազուն կը լինէր, և որ զիստորն է, զրբերը ձեռիս տակը չը կաց, վշողութիւնս կարող էր խարեր

\* \* \*

Այժմ անենք մեր եղբակացութիւնը, թւերը ընթերցագի առաջ են, նա կարող է ստուգել մեր առելիքը: Նախ և առաջ զարմացնում է գիւղատնտեսական գրքերի զրեթէ կատարեալ բացակազութիւնը (մէկ ձեռքը ծափ չի տալ...), մինչեւ լրագրական ամեն մի թղթակցից կը լուր դանդաղաներ թէ գիւղացին նահանգետական արօրուլէ մշակում հողը, չերամաբուծութիւնը ընկած է, բայց բակը վաստ տեսակի է... Ի հարկէ ոչ ոք չի սպասում որ գրքերով պակասութիւնները կը վերանան իսպառ.. բայց և՛ գրքերը նպաստում են դրան, որի բարդաթիւ վկազութիւններ կարելի է դտնել օրինակ ռուս ժողովրդ դական գրականութեան վերաբերեալ գրւածքներում (Որուբակինի, Պրտղաւինի, Աբրամովի, Զոլոտորեւի և ալլն):

Նոյն բացակացութիւնը և՛ գիտնական մասերում...: Ես ալսող աւելորդ եմ համարում կրկնել ծամեմած ճշմարտութիւնը, թէ ընթերցող զասակարգի ձեռը պիտի տալ գրքեր, որոնք մաքրելով նրա տակածութիւնը, տան նրա ձեռքը միակ զէնքը իր գոչութեան կորիւը խելացի, իմացական դարձնելու համար: Ըստ երևութիւն ադր միտքը ծանօթ է բոլորին, բայց չեմ ասիլ նաև նրա իմաստը, էսութիւնը:

Այս հարցի մի կողմը չօշափենք, քանի որ քիչ ուշադրութիւն են դարձնում առհասարակ: Եթէ մենք ցանկանում ենք ժառանգել եւրոպական մոքի պատուղները, ունպհականացնել նրան, մի խօսքով դառնալ Ամիանում եւրոպական կուլտուրակի ավանդութեան<sup>1)</sup>, մենք ի հարկէ բաւականանալ չենք կարող զանազան վէպերի, պիեսների թարգմանութիւններով: Թող դրանց հեղինակները լինեն Դիկկենս և Շեքսպիր, Տուրով և Յանիկի... Մենք պիտի ծանօթանանք եւրոպական գիտութեան, եւրոպական մտածողների հետ... Դժբաղդաբար ազդ ծանօթութիւնն առաջ մ անկարելի է, մեր ընթերցող դասը (խօսքս միան հակերէն իմացողների մասին է) զարդի է ամենասարական գիտնական պատրաստութիւնից: Առվ զիտէ, զուցէ ազդ է պատճառը որ մեր սակաւաթիւ թարգմանիչները չեն վստահանում լուրջ գրւածքներ թարգմանելու, և եթէ կազմի հատ մի կենտ աշխատութիւն, նա էլ հաղիւ օգուտ բերէ, քանի

1) Յիշեք պրօֆ. Վեսելովսկի ի խօսքիրը հաչ դրականութեան մասին, որ մենք լիովին ընդունեցինք, բայց հասկացանք նրա ծանրութիւնը, մեր վրա զրած լաւանի պարտական աշխատութիւնը... Առվ զիտէ, զուցէ ազդ է պատճառը որ մեր սակաւաթիւ թարգմանիչները մեր վրա զրած լաւանի պարտական աշխատութիւնը...

որ հիմնաքարը անվալտ է մնում ընթերցողի համար... Հայ ուսումնաբանը, գէթ աչժմեանը, չէ տալիս ազդ պատրաստութիւնը և իր կոչումը լուրջ հասկացող հայ գրողի համար բացւում է լայն ասպարէզ... Առաջի անգամից պիտի տալ ժողովրդական-դիտնական գրւածքներ, որ մի կողմից հող կը պատրաստեն եւրոպական մտքի՝ մեր ծանօթութեանը համար, միջոց կը տան հայ գրողն իւր մտքերը արտակալտել աւելի պատճառաբանած, աւելի ֆակտաւոր կերպով, միւս կողմից զարդ կը տան մեր աղքատ թուլ գրական լեզւն, հարստացնելով նոր մտքերով, կեանքի հրաւիրելով զանազան բառեր, դարձւածներ, որոնք զուութիւն ունեն այս կամ այն գաւառաբարբառում և շանսունին, չաղթող դուրս գալով դուրս գալով դուրս կան կույց, դառնալ ընդհանուր գրական լեզւի սեպհականութիւնն...»

Անցնենք այժմ վիպական բաժնին. Ընթերցողը նկատեց, երկի, թէ ինչ զարհուրելի տոկոս են կազմում բարակ գրքերը, դրանք ինքն ըստ ինքեան հէնց իրանց ծաւալով վիճակած են այսօր վաղը մնումելու, ի հարկէ եթէ ծնունդ չեն հանձարեղ մտքի... Տայց զա թող մի կողմ. վշենք որ դրանց մեծամասնութիւնը նշանակած է ժողովրդի համար, որ չի կարող ուուբլիներ տալ ընթերցանութեան գրքին. Մենք տեսանք թէ ինչ նշանաւոր  $\%$  ին կազմում թարգմանութիւնները ( $51\% / 53\%$ ). Ո՞վ և ինչ է թարգմանում. մեծապոչն մասը Եօրու, Եօսենի, առանց ամենաթուլ մտքի կոնտրոլի, ինչ ընկնում է թարգմանչի ձեռը՝ այն էլ թարգմանում է. ազդ ախտի համար մենք պարտական ենք մեր տշառ թարգմանիչներին, որոնց իշտահը զարգանալուն քիչ չէ նպաստել մեր մամուլը...

Ոչ, անցեալ 1891 թւին մեր գրականութիւնը չի հարստացել 88 գրքով այլ միան մի երկու տասնեակ գրքերով, որ ընթերցողը ողջունել է ուրախ սրառով: Ինքնուրուն վիպական գրւածքներից՝

Լէօի «Ճանապարհորդական լիշտութիւններ» հատ. I, Նամալեանի վէպիկները (ակժմս մի. գրքում ամփոփած), Արծրունու կմլինան, Վ. Փափազեանի ժողովածուի I հատ., Մանուկլեանի «Զալաբիների Արշաւանքը», տիկին. Մ. Մարիսեանի «Հեղինէ» վէպը:

Թարգմանած գրքերի մէջ էժի կուսադիմինի «Ցեցը» (Ուկիա), Լերմոնտովի, Դնի երկ. տպագրութիւնը (թարգմ. Սաղաթեանի), Դողէն, Իբաէնի Շտոկմանը:

Մնացած մասերում. Տէր-Գրիգորեանի «Բժշկաբաննը», Նաւասարդեանի «Հեքիաթները», պատմական բաժնում պ. Աւ. Արասիանեանցի «Արևելեան ազգերի հին պատմութիւնը», որ ե՛ ձեռնարկ է, և գեղեցիկ ու իր տեսակում եղակի աշխատաւթիւն ընթերցանութեան համար:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍԱՏԱՆԻՑ

Լուկովեանով գաւառի դէպքը: Մոսկվակի և Նիժեգորոդի զեմստօների հրատարակութիւնները: Անրերք հունձերի առաջքն առնելու ծրագրեր: Ա. Ս. Նըմոլովի ծրագիրը: Բարոքման (մելորացիոնի) վարկի ծրագիր: Շտեմարանների խնդիրը: „С. Պետերբուրգскія Въдомости“ լուսպրի առաջարկութիւնը: Առանձին կոմիտեարի գործունէութիւնը: Գիւղական հողավիճ բանկի հաշիւներից: Պետերբ. բժշկական իդական կուրսերը: Պր. Լիխաչևի հրաժարականը: Անտ. Բուղդլովիչի «Համալաւեան լեզուն» և Ա. Պըմլինը: Ս. Պ. Բոտվինի նամակներից: Ռուսական նոր բառարանը: Վեմնակու մահը: Կոմսուհի Սալիասի մահը: Ռուսաց գրականութիւնը մրանսիազում: Դաշկովսկու դէպքը: Խոլերան Ռուսաստանում:

Լուկովեանով գաւառը հռչակեց թէ իւր վերին ասսիճանի չքառութեամբ, և թէ մանաւանդ այն պատմութեան շնորհիւ որ տեղի ունեցաւ այդ գաւառի սովեալ բնակիչների օճանդակողների կողմից:

Անկարելի է ըսկանդ առնել այդ տիտուր, բայց միևնուն ժամանակ և խիստ բնորոշ հանգամանքներով լի դէպքի վրա:

Վերը ըեթերցողը նկատած կը լինի որ այդ Լուկովեանով գաւառը ամենաչքաւորներից, ամենաթշւառներից մէկն է եղել սովեալ բոլոր 17 հահանգների մէջ:

Արդ ինչպէս են կատարմել այն օժանդակութիւնները որ անել էր տալիս տէրութիւնը թէ իւր սեփական միջոցներից և թէ եկած մասնաւոր բարեգործութիւններից: Բայց ամենից առաջ չը մոռանանք ասելու որ այդ օժանդակութիւնների չափերի որոշելը և տալր կատարաւմ էր գաւառներում զաւառական օժանդակող (քրուոլյանուայ) լանձնաժողովների ձեռքով:

Պր. Կուողուբիցկի՞ն—նահանգական ատեանի անդամը—ասպեց իւր զեկուցումը՝ լունւար ամսին իւր վերատուգութեան լանձնած զաւառների (Արզամասի, Լուկովեանովի և Սերգաչի) օժանդակող չանձնաժողովների գործունէութեան մասին: Մի զեկուցում, որի մէջ նա նզրակացնուամ էր թէ օժանդակող ալդ երեք գաւառական լանձնաժողովների նախահաշիւնները

բաւականաչափ կանոնաւոր չեն կազմւած։ Միմիան Լուկովեանով գաւառի լանձնաժողովը—բաղկացած բոլոր զեմաստների նաշանիկներից—պատասխանեց վետք։ 19 ին որ Լուկովեանով գաւառում չը կաւ հաւաքական (մասսօվայ) կարօտութիւն, չնորդիւ հաստատած բարօրութեան և տեղի ունեցած աշնանաց լաւագ լաւ հաւանականի լաւ հաւանականը արանքավակեան և նահանդապատի հրաւանդներով զեկավարնելու՝ զեկավարում են նաև ծառաջութեաւ և բարովակոն պարագաւութիւններով։<sup>1)</sup> աչքի առաջ սւնենալով նաև ամեն մի դիւղացու ապագավական դրութիւնը։

Այս հերքումին պատասխանում է Եւուալուբիցին, բայց այս անգամ թւերավ։ Նրա արդ ովատասխանը ձեւակերպում է արագիս, օժանդակութիւնները սկսել են ուշ (գեկանմբեր ամսին), ամսական 30 ֆունտ հաց սաացել են միայն 132 հոգի, իսկ շ. 766 հոգի միմիան 20 ֆ. ամսական, մինչև լունարի կէսը Լուկովեանով գաւառում բաժանել է միմիան 38.000 ֆութ հաց, մինչդեռ Արգամասի գաւառը սուցել է 63.000 ֆ., իսկ Մերդաշնը՝ 150.000 ֆութ։

Այս նոր պատասխանից լիսոտ Լուկեկեանով գաւառի օժանդակող լանձնաժողովը վճռում է խնդրամատոց լինել՝ միջոցներ ձեռք բերել լրացրական բանակուրը արգելելու համար, որպէս զի իրանք չանձնագույն առ զողովի անդամները—կարող լինեն հանգիստ կերպով վերաբերել գետի գործը և շարունակել պաշտօնական գործունէութիւնը։ Բայց գեներալ Քարանտինը ընդդիմանում է այս մէկ բանին և լանձնաժողովը լիս է կանգնում իւր վճուից։

Անունանեաւ առաջ է զալիս մի ալ խնդիր Նահանդապական բարեկործական կոմիտէտը առաջարկում է Լուկովեանով զուառի բարեկործական հոգաբարձութիւններին ճաշարաններ բանալ, իսկ այս վերջնը, զեներալ Քարանտինի վկանութեամբ, կամ ընդունակ մարդիկ չի կարողանում գտնել աւանդնել բանի համար, կամ արգելքներ է դնում չանձնագույն առնել ցանկ երին և կամ առասարակ ընդդիմանում է բոլոր կարօտ գիւղացիներին՝ ճաշարաններից օգտւելը թուլ տալու, ալ միմիան հողագուրկ գիւղացիներին, որսնցից ամեն մի գիւղում 2—2 կամ 3—3 հոգի են։

Նահանդապական կոմիտէտը հաւատում է իւր ընտրած մարդուն և սրա ընտրածներին, իսկ գաւառական հոգաբարձութիւնը միմիան նրան՝ ում ընտրելու լինի զեմաստօի նաշանիկը։ Բայց երբ վերջապէս նահանդապական կոմիտէտը պահանջում է որ ճաշարաններ հիմնեն—զաւառական հոգա-

<sup>1)</sup> „Долгомъ службы и нравственности объязанностию”.

բարձութեան հախտպահ պարոն Ֆիլատոֆովը՝ աղուտկանների տեղական առաջնորդը՝ հրաժարական է տալիս...

Մանաւորենք ազմու զանազան անձանց հաղարդած տեղեկութիւնները։ Խոկութեանով դաւառում օժանդակութիւն չի տրւել ոչ հողատեր զիւղացիներին և ոչ այն ծառալող զիւղացիներին, որոնց տարեկան վարձը համառմ էր թէկուզ 16 ռուբլու։ Փետրւար ամսին 990 հոգու տրած է եղել ամսական  $11\frac{1}{2}$  ֆունտ, իսկ 1125 հոդու ամսական  $6\frac{1}{2}$  ֆու։ Պրիլեկա զիւղում օժանդակութիւն չի տրւել այն զիւղացիներին, որոնք իրաւ է քաղցած են եղել բայց էլի գեռուով են ունեցել<sup>1)</sup>։ Ուզուն-Մականի զիւղի 7 բնակիչներից ինպիրք էր ստացել նահանգական օժանդակող լանձնաժողովում, մի խնդիրք—որի մէջ նկարագրելով իրանց կարօտ զրտվթիւնը՝ զանդատում էին փոխ տրւող օժանդակութիւնների սակառութեան վրա։ Նահանգական լանձնաժողովը լանձնեց զեմստօի նաշալնիկին քննել ալդ դորձը<sup>2)</sup>, և սրա ներկայութեանը—ն զիւղացիներ հրաժարակացին իրանց ստորագրութիւններից... Գևորգալ Բարանովի ասելով՝ իւր ուղեկիցների հետ զիւղացիների տներում նա չը տեսաւ և ոչ մի «տարական»<sup>3)</sup> նրանք կրանց ստելու հացի բացակալութիւնից։ Խոկ խառնուրդներով եփած հացը (չլեռն ու լեճօն) տարածած ու եւտեր... Ի զէպ ազգպիսի հացը տորֆի<sup>4)</sup> նման է և ունի տնտանելի համ։ Ի լրումն ուս ամենի լայտնեց որ հակառակ պաշտօնապէս հագործւած տեղեկութիւններին՝ բոլոր աշնանացան զաշտերը չեն վարւած և բացի ալդ «թղթի վրա» պահեստներում գտնւող զարնանացանը՝ հարկաւոր քանակութիւնից աշացարանների թիւը 2—3 շաբաթում հասաւ 50 ի, մինչդեռ նրանից առաջ մի հատ ճաշարան հաստատելու համար հարկաւոր էր զիւղացիներին մինչև զարուն պահան պարագան պարունակութիւնը մի:

Խոկութեանովի դաւառական լանձնաժողովի արկածների ալս պատմութեանը վերջ տալու համար ամենք մի երկու խօսք ևս։ Երբ որ Նիմենգորովի նահանգական օժանդակող կոմիտէտի լանձնարարութեամբ պ. Վ. Գ. Կորունիկոն, երիտասարդ համակրելի ուսու զրոդներից մէկը, ացեղեց Լուկունով գաւառու—ճաշարանների թիւը 2—3 շաբաթում հասաւ 50 ի, մինչդեռ նրանից առաջ մի հատ ճաշարան հաստատելու համար հարկաւոր էր մի ամքողջ ամիս, այն էլ եթէ գլուխ էր գալիս։

<sup>1)</sup> „Хотя тоже не ъвши сидятъ, а въстаки еще въ силахъ“.

<sup>2)</sup> Քարածուխի ամենասսոր տեսակը, որը զուանում է ճահիճներում բուսականութեան վտելուց։

<sup>3)</sup> Դաշտապին մեծ միջատ։

<sup>4)</sup> „Проповести разслѣдованіе“.

\*  
\* \*

Անցեալ տարւակ սովի պատճառների մասին լոկ են տեսել զանազան վիճակագրական թւեր պարունակող հրատարակութիւններ թէ զեմստուօնների ձեռքով կատարած՝ (Մոսկավի<sup>1)</sup> նահանգի զեմստուօննը և Նիժնենովգորոդինը<sup>2)</sup> և թէ մասնաւոր անձերի ձեռքով։ Այդ ամեն զրութիւնների և զրակացութիւնը մի է։ Նոքա վկարում են, որ անցեալ տարւակ սովը «արդիւնք է գիւղական բարօրաւթեան անկումի, որը իւր կողմից հետեւանք է աւող հնացած հիւանդութեան որ պալմանաւորւած է եղել անքերք հանձերի մի շարքով, ձեռնվաստակի պակասելովը, բանող ձեռքի գնի ընկնելովը, խոտանեղերի քչանալով, հիւանդութիւններով և հըրդեհներով։ Գերճախոս թւերը զալիս են ապացուցանելու այդ ամենը։

Տարեցտարի վճարուող տուրքերի գումարը պակասել է։ Նիժեգորոդեան նահանգը վճարել է 1881 թ.՝ 3.835.118 ռուբ. արքունական տուրք, —իսկ 1890 թ.՝ 2.483.059 ռ., ասել է մոտ 850.000 ռ. պակաս Սրա համեմատ աւելացել է ապառիկ մնացած տուրքերի քանակութիւնը, որը 1881 թ.՝ 4%/<sub>է</sub>, 1882 թ.՝ 9%, 1889 թ.՝ 14%, 1890 թ.՝ 35%/<sub>օ</sub>։

1881 թ. անասունների թիւը, նոյն նահանգում, եղել է 1.010.624 գլուխ, 1890 թ.՝ —միջիան 855.802։ Լուկուեանով գաւառի մի գիւղում 8 ոչխարից մէկն էր մնացել, 25 խողից մէկը նոյն ժամանակամիջոցում։ Նոյն գաւառում գարնանացան արտերի տարածութիւնը պակասել էր 15%/<sub>օ</sub>։

Գաղթելու խնդրագրեր էին մատուցւած 1890 թ. 69, իսկ 1891 թ. արդէն 2.263 հոգուց։

Սրա հետ զուգընթաց է բոլոր գիւղական արդիւնագործութեան գների պակասելը։

Սամարակի նահանգի դրութիւնը աւելի վատ է<sup>3)</sup>։ 1867 թ. ամեն մի գիւղացու ընկնում էր 3,2 ձի, 1885 - 2,7, իսկ հիմա աւելի պակաս, քանի որ մինչեւ նոյեմբերը (91 թ.) ծախւած էր 142.000 ձի, 92.000 կով ու եղ և 817.010 ոչխար։ Գիւղացու մի դեսեստինա<sup>4)</sup> հողը արդիւնք է տալիս 40 կոպէկ, մինչդեռ մասնաւոր հողատիրոջ մոտ այդ արդիւնքը հասնում է մի ոռորդու և էլ աւելի Վերջին 5 տարւակ ընթացքում, համաձայն գեմտօնների վիճակագրութեան, արձանագրւած են 13.345 փոխառութեան դէպքեր 1.170.935 ռ. զումարի։ Նկատելու է որ տոկոս էր վճարում երբեմն 240%!<sup>5)</sup> Գրաւ

<sup>1)</sup> „Продовольственное дело“.

<sup>2)</sup> Урожай 1891 г. въ Нижегородск. губ.

<sup>3)</sup> „Юридический Вестник“ 1891 № 11 и 1892 № 3. юридико-неко-պ. Կրաօնոպիրով:

<sup>4)</sup> = 2400 քառակուսի սաժէն։

է դրւած եղել մինչև նոյն խակ 91 թւի սովետական տարին 450.000 դրամ սեատինա համայնական հող: Աշնանը գիւղացին վաճառում էր խր հացը 35—40 կոպէկով փութը, խակ գարնանը էլի էտ առնում 72 կ. և աւելով: Մի քանի գիւղերի տնատէ բերի  $\frac{1}{3}$ — $\frac{1}{2}$  ձմեռը գնում են եղել մուրացկանութեան! Տուլավի նահանգում ճանապարհորդած ն. կ. Միլսալլովսկին նկարագրում է Ռյոսկի Յնձոմոստի լրագրում (№ 104) նահանգի ողբալի և խղճալի դրութիւնը, միան մի իրողութիւն քաղինք նրա պատմածներից: Շարապով գիւղի 299 ընտանիքներից մաքուր հաց ունեն միմիան 4 ընտանիք, մնացածները կամ խաղառ կարօտ են հացի, կամ գործ են ածում զանազան խառնուրդներ (խեծած) և ալն, որոնք առաջ են բերում տեսակ անբուժելի հիւանդութիւններ մարսողական դրաբաններում...

\*  
\* \*

Անցեալ տարւաչ Ռուսաստանի 17 նահանգների վատ հունձքը զեռերկար խօսակցութեան նիւթ կը լինի ամենքի համար: Պարբերական մամուլը դեռ երկար ժամանակ զբաղելու է այդ խնդրով մինչեւ որնա միանգամայն պարզած համարվի: Այդ խնդիրը ազնքան ծանրակշու է, մանաւանդ Ռուսաստանի համար, որը «հացի շտեմարան» կոչումը վայելելով հանդերձ ինքը երբեմն շատ նեղ, անելանելի դրութեան մէջ է ընկնում—անհրաժեշտ է որ այդ խնդիրը լաւ մշակւած լինի քանի որ այդ հացի խընդիրը խալապէս մահու և կեանքի խնդիր է: Աւստի ամեն մի աշխատութիւն, որ անում է այս նպատակով ուշադրութեան և ուսումնասիրութեան արժանի է նաև մեր կողմից, քանի որ մեր կովկասի տնտեսական դրութիւնը սերտ կապով է կապւած Ռուսաստանի լաջող կամ անկաջող սննդեսական դրութեան հետ:

Այս տեսակ փորձերից մէկն է նոր լուս տեսած «Անբերրութիւն և ժողովրդական աղէտ» վերնագրով գիրքը: Ամանք աւագրքի հեղինակ են համարում պ. Ա. Ս. Նրմոլովին—որը կառավարիչ է տուրքերի զեպարտամենտի: Աչքի առաջ ունենալով խնդրի լրջութիւնը՝ մինք կը ծանօթացնենք ընթերցողին կարճառու կերպով պ. Նրմոլովի ընդարձակ ծրագրի հետ բաղկացած 16 զլիսաւր կէտերից, որի գործադրութիւնը պ. Նրմոլովը կարեոր և անցետաձելի է համարում: Ահա աղդ 16 կէտերը. 1) Ռուս հողագործութեան օդերեւութարանական պայմանների հետազոտելու գործը գնել հաստատ հիմքերի վրա: 2) Կազմել ծրագիր օդերեւութարանական կազմարանների պաշտօնի մասին: 3) Ժողովել նիւթեր պատահած անբերք հունձերի՝ անցերի՝ անցեանականական պարագաների վերաբերեալ եղած հետազոտութիւնները: 4) Հետազոտել Վոլգա, Դոն, Օկա, Դնեպր գետերի ակները: 5) Կարգի բերել անտառաբուժութեան վերաբերեալ եղած հետազոտութիւնները և շա-

րունակել նրանց աւելի լաւ ձևով; 6) Յայտնի կացուցանել Ռուսաստանի ամբ տեղերը, որոնք անրերիանում են հողմաբեր աւազով; 7) Տոփարակացին կազմող վիճերի (ճայռ) առաջքն առնել; 8) Հետազօտել՝ արդեօք զետաշը մակերեսովի ցած ան ու ը հետեանքէ, թէ՝ պատճառ երաշտի—սրա առաջքն առնելու նպատակով; Խառնութեասիրել հողի մշակութեան այն պաշմանները, որանց միջոցով պահպանում լինէր հողի խանաւութիւնը; 9) Փողովիկ եղած տեղեկութիւնները ջրապիւրների և արտեղեան հորերի վերաբերեալ Այս ուղղութեամբ գործերի նոր ծրագիր կազմել; Ռւսումնասիրել ջրամբարների գործը տափարակ տեղերի համար; 10) Ռւսումնասիրել ջրանցքներ (օբводնութեան քառորդը) ստեղծելու գործը և եղածների մասին տեղեկութիւնները ի մի ժողովի; 11) Որոշել տեղադրական սահմանները զանազան մշակուղ բոլսերի ընդարձակման; 12) Տեղեկութիւններ հաւաքել այն տեսակ բոլսերի մասին, որանք աւելի լաւ են տանում թէ ցուրաը և թէ չորտաթիւնը; 13) Ռւսումնասիրել այն հարցը՝ թէ բացի հողագործութիւնից ուրիշ ինչ գիւղատնտեսական ճիւղեր կարելի է աարածել անքերը հունձին հակալչու կազմելու համար; Եական նշանակութիւն ունի, շարունակում է ալսուղ պարուղովը, բանջարահոցապահութեան տարածումը վիւղացիների մէջ; 14) Ռւսումնասիրել գիւղատնտեսական կալարանների հարցը, կուցէ և հետեւել ամերիկական ալս տեսակ կալարաններին; 15) Կազմել մի լայն նախագիծ անտառարտութեան և ոռոգման՝ պիտական մշակութիւնների—սկսելով ալս գործը աւելի կարօտ տեղերից; Պարզել՝ արդեօք աւելի նախապատելի չի նախազծող բարուքման վարիչը գործադրել ամենից առաջ օգնութիւն տալու մասնաւոր անձերի ձեւնարկութեան պիտական նորն տեսակ ձեւնարկութիւնների հետ միտքամանտեկ; 16) Ռւսումնասիրել հարաւալին Ռուսաստանի կլիմաչական պաշմանների բարուքման խնդիրը կամ կասպից ծովի մակերեսովից բարձրացնելով, կամ կասպեան տափարակների ոռոգումով, կամ անտառցելով և ալսն, Ընթերցողը անշուշտ նկատած կը լինի որ ալս ծրագիրը իսկապէս 16 կէտերից չէ բաղկացած, ալլ շատ աւելի, քանի որ շատ կէտեր երկու երեք առաջարկութիւնների պարունակում; Անուաննանիւ, չը նախած իւր ընդարձակութեան՝ ալս ծրագիրը աշքի է ընկնում իւր միակողմանիութեամբ—գլխաւորապէս ուշագրութիւն դարձրած լինելով օդիքեռութարանական և կլիմաչական կողմերի վրա;

Ռուս մամուլի ասելով լաւ հետեանքի համանելու համար անհրաժեշտ է մաքրել և գտել մեր հայրենակիցներին իրանց աւերիչ բնաւորութիւնից, որը նրանց մէջ արին և մարմին է դառնելու; Մենք ևս առաջ բերենք այդ բիւրաւոր օրինակներից մի քանիսը, որոնք բերած են նաև Երմոլովի աշխատութեան մէջ:

1) Աստրախանի նահանգում 40 տարի սրանից առաջ Նարյակ Պեսկ.

անունով մի անտառ կար 120.000 գետեատինա<sup>1)</sup> չտփով. այժմ միացել են միան ողորմնելի հետքերը, ուր և արածեցնում են անառաներին. Առտառի անհետանալովը շրջակայ հողերին վտանդ է սպառնում քամով բերող աւագներից:

2) 15 տարի սրանից առաջ Վորովլա գետը մի հիանալի գետ էր առաս ջրով, ձկնով և թռչուններով, որոնցով լիքն էր գետի երկարութեամբ ձգող անտառը. Ներկալում գետի հետքերը առզ առզ կորել են, ինքը գետը տեղ տեղ բռնոր վիճ բարակել է, անտառներից չի միացել և ոչ մի հատ ծառ՝ ամենը կտրաւած, ոչնչացրած է:

3) Վորովլա գետի պիս անհաւագնաց են դառել Ռուսաստանի շատ առ գետերո. Բիստրո, Յնա, Խոռոր, Վորոնիյ, Մեղլիլիցա, Խոն խակ Գոն, Հինեպր, Վոլգա վետերը բարակել են:

4) Տերի նահանգում, որտեղից ոկիզը են առնում Ռուսաստանի գըլ-խաւոր գետերը՝ Պնիպը, Վոլգա և Արևմտեան Դվինան—անտառապահապանութեան վերաբերեալ օրէնքը մայրում է միմիակն 1890 թ. երբ անտառների կէսը արգէն կտրաւած ոչնչացրած էր:

Խուսական մամուլը անվետաձգելի է գտնում և պահանջում  
1) Ռամիկի համար կատարեալ տպատութիւն տեղից տեղ տեղափոխմելու  
2) Անցագրերի միանդաման վերացնելը. Ակս երկու կէտերի անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը արդէն ապացւած և անվիճելի է համարում. միում է միան սրանց իրազործելը; 3) Գիւղական ոչ խոչըր վարկի կազմակերպութիւնը և 4) զործադրել ծրադրած և պիտական կալւածների մինիստրութեան հակազութեամբ մը լունձնաժողովի կողմից արդէն խմբադրած բարուքիման (ոչչօրացիոնալ) վարկի նախապիծը:

Այդ տեսակ վարկի նապատակն է նպատել գիւղատնտեսութեան բար-ւոքմանը՝ փոխառութիւնների միջացով: Փոխառութիւն պիտի տրվի ա). հողի բարելաւութեան և անկարկութեան, արմինքն հողեր չորացնելու, և ոռոգելու<sup>2)</sup> համար, անտառարուծութեան, տղեգործութեան և խաղողաբուծութեան համար; բ) գիւղատնտեսութեան և երկրագործութեան համար անհրաժեշտ անառաները և զործիքները ձեռք բերելու համար. Փոխառութիւնները պիտի լինեն համաձայն ութեամբ պետական կառան կամաց առաջնական կառան է բի, ֆին անսների և ներքին գործերի մինիստրութիւնների: Փոխառութիւններ կարող են ստանալ թէ մանաւոր անձինք, և թէ գիւղական համայնքներ, զեմստուներ և ակն: Փոխառութիւնները տրտում են 7—10—15—20—35 տարի ժամանակամիջոցներով՝ նախած թէ ինչ բանի համար են: Փոխառութիւնների տոկոսը պիտի լինի 4%, խակ պարտքաշէջը՝ համեմատ փոխառութեան ժամանա-

<sup>1)</sup> Գիւղատինան.—2400 կմ ռակուսի սաժենի:

<sup>2)</sup> Обводнительные и оросительные работы.

կամիջոցին: Փոխառութիւնների գործադրման հակողութեան համար նշանակում են նահանգական գիւղատնտեսներ (գубերների ագրոնոմ) և սրանց օգնականները:

\*  
\* \*

Կառավարչական շրջաններում մտադրութիւն կալ բարեփոխել շտեմարանական գործը, ուստի ներքին գործերի մինիստրութիւնը շրջարերականների միջոցով առաջարկել է նահանգապետներին որ սրանք—ոչ ուշ քան չուղիսի 15-ը իրան մանրամասն սեղեկութիւններ տան՝ շտեմարաններ ունեցող կամ շտեմարանական տուրք վճարող համալիքների թվի մասին, շտեմարանների ընդարձակութեան մասին, շտեմարանների պատրաստ պաշարի մասին, նաև շտեմարանական գումարների մասին:

Թէ այս և թէ առհասարակ սովոր հետ սերտ կապ ունի Ա. Պետեր բուրգուկի և Վեդոմոստի լրագրի մի առաջարկութիւնը. «Յատ զգտակար կը լինէր. Պետերբուրգում համաժողով կազմել կառավարչական և զեմստան երի ներկայացուցիչներից թէ սովոր վկասւած և թէ սոցա կից նահանգներից Ալս համաժողովը կըտար իւր վերջնական վճիռը թէ սովոր պատճառների մասին և թէ ապագայում նույն տեսակ աղէտի առաջն առնելու ձեռնարկելի միջոցների մասին»:

\*  
\* \*

Կարօտեալներին բարեգործական միջոցներից օդնելու՝ հաստատւածառանձին կոմիտէտը Մեծ Խշան Թագաժառանգի նախագահութեամբ ստացել էր 3 միլ. ռուբլի մասնաւոր նւէրներ, իսկ իւր ամբողջ հասաւ 10 միլ. ռ. աւելի, որից 8 միլիոն ռ. մնխւած է իւր օժանդակութիւն և 1 միլիոն ռ. գործադրւած է ձիեր առնելու:

\*  
\* \*

1883 թ. ապրիլի վերջներքին գործել սկսած Հողակին Բանկի տպւած հաշիւներից մի քանի տեղեկութիւններ քաղենք մասնաւորապէս նրա 1890 թ. գործունէութեան մասին:

Քայլի 1°/₀ տարեկան տուրքից բանկը վերցնում է  $34\frac{1}{2}$  տարւակ փոխառութեան համար պարտքաշչիլ հետ միասին  $7\frac{1}{2}\frac{0}{6}$  իսկ  $24\frac{1}{2}$  տարւակ համար  $8\frac{1}{2}\frac{0}{6}$  կարելի էր կարծել որ այս պայմանները շատ ձեռնտու են գիւղացիների համար և բանկի գործունէութեան ծաւալը տարէց տարի պիտի լավանաբ—բայց իրազութիւնը ալլ բան է հաստատում: Մինչդեռ բանկը 1890 թ. փոխի էր տեղ 4.519.209 ռ. և գիւղացի-

Ներից մնացորդ վճարներ ստացել 1.666.782 ռ., նախորդ տարիներում փոխ տևած դումարները աջապէս են ներկայանում.

1884	թ. --	9.529.368	ռուբ.
1885	"	—13.761.978	"
1886	"	—11.148.850	"
1887	"	— 7.495.197	"
1888	"	— 5.133.539	"
1889	"	— 3.692.133	"

Ուրիշն 1890 թ. փոխ տևածի գումարը միմիան 1889 թ. գումարից է աւել մօտ 800.000 ռ., իսկ մնացեալ է տարիներից շատ աւելի պակաս:

1883 թ. մինչև 1890 թ. վերջը բանկը տևել է 7.367 փոխատութիւններ 56.140.438 ռուբլու Նոյն ժամանակամիջնում բանկը ստացել է զիւղացիներից մնացորդ վճարներ 12.581.781 ռ., ուվեմն դումարը բոլոր եզած գնումների, որոնք կատարեալ են այդ բանկի շնորհիւ, համառւմէ 68.722.220 ռուբլու 7 տարւաց ընթացքում: Հողեր առնողները եղել են 225.485 ընտանիք, որոնց արական սեռը 728.231 հոգու էր հաւասար: Գնուած հողի տարածութիւնն է 1.579.391 դեսետինա: Այս վերջին թվոց մասնաւր դիւղացիներ ձեռք են բերել 16.349 դեսետին՝ վճարելով 362.073 ռ. բանկի 431.055 ռ. փոխատութեան հետ: Դիւղական համապնդներ ձեռք են բերել 731.559 դեսետինա 4.182.411 ռ., վճարելով բանկի 27.979.033 փոխատութեան հետ: Ընկերութիւններ ձեռք են բերել 831.483 դեսետինա վճարելով 8.037.266 ռ., բանկի 27.730.750 ռ. փոխատութեան հետ: Ասիլ է թէ մասնաւր դիւղացիները զնելիս վճարել են 45% առքելուից, ընկերութիւնները մօտ 22%, իսկ համապնդները մօտ 13%:

Տարեցտարի տևած փոխատութիւնների գումարները համեմատելիս ոչ թէ աւելանալ է նկատուած, այլ խոշոր պակասում: ասել է թէ կամ զործը թիրութիւններ ունի կամ վերցնող տոկոսը շատ է բարձր և հողը չի կարողանում ալղքան արդիւնաբերել: Եւ իրաւ թւերի մի ուրիշ շարք ապացուցանում է այդ ենթադրութիւնը:

1887 թվոց մինչև 1890 թ. բանկի վրայ մնացել են 113.175 դեսետինա, որոնց համար փոխ էր տևած 6.745.563 ռ. պատկառելի գումարը, իսկ զնողներից ստացել էր 748.501 ռ., նմանապէս ոչ պակաս պատկառելի գնամար: Գնողները ետ էին կանգնել իրանց գնած հողերից և ձեռք վերցրել իրանց տևած մօտ 750.000 ռ. գումարից: Իրաւ է զնողների մնացորդ վճարները կազմում են ընդհանրապէս առած զնման 10% միանց—բայց դա միան ընդհանրապէս վերցնելիս է ալղպէս: Իսկ մասնաւր դէպքերին դալով՝ նկատուած է որ գնողները ետ են կանգնել իրանց գնած հողերից՝ վճարած լինելով 27%, 33% և նոյն իսկ 40% զնման արժէքից: Մինչև 1890 թ. բանկի ձեռքին մնացած հողերը իրան վեաս են պատ-

ճառել 1.259.649 ռ., որին եթէ աւելացնենք նունպիսի վեասը 699.323 ռ., կը ստանանք մի կողոլ թիւ մօտ 2 միլ. ռուբլի Ազդ գումարից հանելով զանազան հասող թներ՝ ելի միասը հասնում է 1.200.000 ռուբլու:

Եթէ ազգպէս շարունակելու լինի, բանկին կարող է անխռուսափելի վտանգ սպառնալ, Պր. Գերցենչոտէնը<sup>1)</sup> առաջարկում է հողերը աւելի էժան վաճառել, պակասացնել վերցնող չահը, երկարացնել փոխառուութեան ժամանակամիջոցը և բանկի 5½% վիազաթզմերը գարձնել 5%, կամ աւելի ևս պակաս և վերջապէս կոնվերտիա անել եղած փոխառութեանների համար:

\*  
\* \*

Բարձրագոյն բժշկական կուրսերի (Պետերբուրգում) ուսումնական 1890—91 թւի հաշիւներից առաջ բերենք մի քանի մանրամասնութիւններ: Ռւսաստողուհիների թիւը հասնում էր 278, Կալին եկածներ Ֆիֆլուսից, Տաշկինստից և այլ հետու տեղերից: Առաջին կուրսի 127 ուսումնութիւններից 41-ը՝ ունին զիմնազիալում ստացած շքաղբամներ: Գլխաւոր եկամուռը կազմում է ուսանողուհիների վճարը որ կազմում էր 17.000 ռուբլի: Պետերբուրգի գուման նպաստ է տալիս 3000 ռ., նունքան տալիս էր և լուսաւորութեան մինխտրութիւնը: Անցեալ տարի զանազան երեկովներից գոլացել էր մօտ 4½ հազար ռուբլի: Բայց ելքը մօտ 37.000 ռ. է: Ազդ կուրսերը պահպանուում են մի ընկերութեան օգնութեամբ («Բարձրագոյն իդական կուրսերին հասութներ նպաստող Պետերբուրգի ընկ.»): Ընկերութիւնը ունի նւէրներից գոլացած դրամապլում մօտ 11 հազար ռուբլի, իսկ սրանք մօտ 131 հազար: Ընկերութիւնը ունի մի զիշերօթիկ բաժն, ուր անցեալ տարի ապրում էին 54 ուսանողուհիներ: Ընկերութեան նախագահուհին է տիկին Լեխաչևա, որի ամուսինը հրաժարեց Պետերբուրգի քաղաքագլուխի պաշտօնից նկատելով որ «կան ձախնաւորներ որոնք աշխատում են արատաւորել քաղաքավին վարչութեան գործունէութիւնը»:

\*  
\* \*

«Вѣстникъ Европы» ամսագրի № 5՝ տպած է վերջը մի լոդածի—որի հեղինակը՝ պ. Պլէսինը, խօսում է մի խնդրի մասին՝ Ա. Բուզգիլովիչի նոր լուս ընծանած գրքի<sup>2)</sup> առիթով:

1) Русская Мысль. 1892 г. № 2.

2) Антонъ Будиловичъ — Общеславянскій языкъ въ ряду другихъ общихъ языковъ древней и новой Европы. Варшава, 1892. (Անտոն Բուզգիլովիչ՝ համասլաւան լեզուն — հին և նոր Եւրոպակի միւս ընդհանուր լեզուների շարքում, Վարչաւա, 1892. Երկու համուր).

Անտ. Բուդիլովիչը ինքը իւր զրքում հարց գնելով թէ արդեօք հնարաւոր և անհրաժեշտ է գրական միութիւնը սլաւոնական ազգութիւնների համար»—ինքը վճռում է գրականապէս և ոռւս լեզուն առաջարկում իբր ընդունելի համասլաւեան լեզու։ Պ. Պլավինը, որը, ի դէպ ասած, հմուտ մասնագէտ է սլաւոնական լեզուների, գրականութեան և պատմութեան—քննադատելով պ. Բուդիլովիչի առաջարկութիւնները և համաձայնւելով իսկ համասլաւեան գրականութեան միութեան կարելութեան և անհրաժեշտութեան հետ՝ ժխտում է սոցա ապացուցանելու հնարաւորութիւնը և վկացում դժւարութիւնների մասին ոռւս լեզուն համասլաւեան լեզու ընդունել տալու գործում։ Պ. Պլավինը ծաղրում է նաև Ա. Բուդիլովիչի ծագրացեղ նկատողութիւնները իբր թէ ոսները պէտք է մաքրեն ոռւս լեզուն զանազան օտարաբանութիւններից և արգէն քաղաքացիութիւն վահելող բերոյ և նախնական բառերի անդ գործածէին սրո՛, բավլօթակա և ազն. պ. Բուդիլովիչի ասելով բերոյ և նախնական բառերից համար և դժւար կացու ցանում ոռւս լեզուն համասլաւոնական դարձնելու հարցը»։

Պ. Պլավինը իրաւացի կերպով մաքառում է այդ արհեստական միջոցի դէմ։ Նրա ասելով «Մլաւ աշխարհների վրա մեր (ռուս) ազդեցութեան խնդիրը ամենից առաջ դառնում է խնդիր մեր սեփական լուսաւորութեան, որին վիճակած վիճէր մրցել եւրոպական լուսաւորութեան հետ»։ Մի ուրիշ անգ նա աւելի պարզ է բացատրում իւր միտքը ասելով, «խնդրի ամենածանր կէտը գտնւում է ոռւս գրականութեան առաջադիմութեան մէջ—գրականութիւն բառի ամենալազն ըմբռնողութեամբ—այն է գեղարվեստական բանաստեղծութեան, գիտութեան բոլոր ճիւղերի, հասարակական կիանքի և վերջապէս ժողովրդական բարք ու վարքի զարգացման մէջ»։ Ահա ինչ է դիմադրում պ. Պլավինը արհեստական միջոցներով համացեղ լեզուներից ոռւս լեզուն համասլաւոնական դարձնելու համար։

\*  
\* \*

«Ենտունիկ Եվրոպ» ամսագիրը շարունակում է տպել հանգուցեալ պալատական թժիչէ պրոֆեսոր Ս. Պ. Բուկինինի՝ Բուլղարիակից գրած նամակները վերջին ոռուաթրքական պատերազմի դաշտից։ Բուկինի վշեալ նամակները՝ պարունակում են շատ մանրամատնութիւններ և կարդացուամ մեծ հետաքրքրութեամբ նոյն իսկ 15 տարուց չետոք Գտնուելով շարունակ պատերազմի դաշտում զինտրական բժշկի կոչումով, նա առիթ ունէր շըիմլու ամենքի հետ և նկատելու շատ բաներ։

Նա խօսում է «ապերախտ» բուլղարների մասին, լազնալանջ և երկանաբաղուկ թուրքերի մասին, ոռու գեներալների «ես»-ի մասին, Պլենայի մասին, բարեսիրտ ոռու զինտրների մասին, որոնց նա երբեմն

«առղատիկներ» է կոչում, և երբեմն՝ ռուս օֆիցերների հետ միասին առաջ՝ առւրի մարդկեց, Բայց ամենամեծ գովեստով նա խօսում է Ալեքսանդր Ա կազմով և այն ժամանակաւ զինորական մինիստրը Միլլուտինի մասին։ «Իրանց պահելու ձեռվլ գործին վերաբերելու լրջութեամբ և շիտակութեամբ, ասում է Բոտկինը իւր օգոստոս 4 նամակում, ամենահամակրելի կան անձեր մնում են ինձ համար՝ Կալարը և Միլլուտինը։ Միան սրանց նայելիս չի երևում այն «ետ»-ը, որը մնացեալ գործիչների մոնամասնութեան մօտ աչքի է ընկնում։ Միլլուտինի համեստութիւնը և լրջութիւնը ներշնչում են դէպի նա ամենամեծ լարգանք։ Նա ամբողջովին նվիրած է իւր գործին, որին պատրաստ է զոհել նոյն իսկ իւր «ետ»-ը»։

\*  
\* \*

Գիտութիւնների ռուս Ակադեմիան լուս է ընծալել «Ռուս լեզվի բառարանի» առաջին մասը (Ա-Եմաց բառերը)։ Զը նայած որ ազդ նոր ակադեմիական բառարանի լառաջաբանում բերւած է զանազան անձերի մր երկար ցուցակ (ի թիւս ալոց՝ Բալշատան, Շորավուս, Շոենկ, Գաղենիամպի, Զալցման, Գոլդենբերգ, Լունդել և այլն), որոնց ուղարկւած են եղել այս առաջին մասի սրբագրական թերթերը — անուամնանանիս բառանի ազդ մասը կավելած է ոչ բաւականին լրջովին և հոգատարութեամբ, ինչպիսին պահանջում է արդ տեսակ մի բառարան, որից մի նորը հազլիւ տասնեւակ տարիներում տապաղրում լինի։ Ակադեմիական բառարանի ազդ առաջին մասը պարունակում է բազմաթիւ անհջութիւններ, պակաս բառեր, խրթին գաւառաբանութիւններ և նոյն իսկ սխալ բացատրութիւններ։

Աւելորդ չէ եթէ լիշելու լինենք ալսանդր, որ լաւ ռուսագէտների ճահաճւած են Ռուսաստանում ոչ թէ բնիկ ռուսները, այլ եկտորները Ռուսաց առաջին լաւ քերականութիւնները՝ Գրեչի, Օստենեկի (Վոստոկով), Գալի աշխատասիրութիւններն են, մինչդեռ Խանովի և Անտոնովի կողմանները բանի պէտք չէին։ Նմանապիս ռուս լեզվի առաջին կարդի բառարանը, որը հիմա էլ մեծ հեղինակութիւն ունի։ Դալի աշխատութիւնն է։

Ներկալում քաջ ռուսագէտ է համարւում պ. Գրտար, որը և մեծ մասնակցութիւն ունի կազմուղ նոր ակադեմիական բառարանի մէջ։

\*  
\* \*

Անդեալները վախճանմեց ռուս պատմագրական ամսագիրներից մինի, այն է Պյուռայ Ստարսահի խմբագիր հրատարակիչ Մ. Ի. Սեմևսկին։ Համգուցեալը զայ զնաց իւր եռանդուն և անհամագիստ բնաւորութեան։ Պետ չը կաղղուրւած մէ թեթև տկարութիւնից, որ նա ստացել էր լուրդելի

գրաքնիչ Վեղլովի թաղման ներկայ լինելիս—Սեմեսկին աճապարում է Կրօնշտադ Պետրոս Մեծի մասին մի դասախոսութիւն անելու ձանապարհին նա աւելի ևս վատանում է և հիւանդութիւնը սուր կերպարանք ստանալով վերջ է դնում նրա կեանքին։ Հանդուցեալը լատնի էր իւր եռանդուն, անխոնջ բնաւորութեամբ։ Գովելով հանդել Սեմեսկուն, իբր քաջ խմբագրի և հրատարակչի՝ ուռաւաց մամուլը ակնարկում է որ այսուամենանիւ հանգուցեալի օրով խմբագրով Ռյուսկա Շտաբա՛ն պարունակում էր իւր մէջ ոչ արժանաւոր կերպով ուսումնասիրւած պատմական աշխատասիրութիւններ, ալ շատ անգամ աննշան մարդկանց երկար ու բարակ, շատ անգամ անհամ լիշտակարաններ։

\* \* \*

Անցեալները վախճանւեց նշանաւոր ուռաւ կին հեղինակներից մէկը—կոմսուհի Եղիսարէթ Վաս։ Սալիսս դը Տուփնեմիր, որը աւելի լատնի էր Նոգենիա Տուր ծածկանունով։

Կոմսուհին պատկանում է առաջին ուռաւ կին գրադների շարքին։ Խւր գրական գործունէութիւնը նա սկսեց 1840 թւականների վերջերքում՝ տալով ուռաւ հասարակութեանը մի շարք ուռաններ մինը միւսի ետելց՝ Սահմանադի վրա (Խա րյեժք), Պլեմանուզա, Կիանքի երեք ժամանակամիջոց (Տրի որք յազան), Կախարզած շրջան (Զակօճօվաննայ երցիւ), Պառաւկնիկը (Շտաբական), Կոմսուհին օժտած լինելով նուրբ ճաշակով և գեղարմատական բնազումով՝ ձեռք էր բերել լուրջ գրական հմտութիւն։ Նրա գրական փորձերը (Ետօք) և ուսումնասիրութիւնները ցրւած են շատ ուռաւ ամսագլիներում։ «Գեղեցիկը, բարին, ճշմարիտը»—ահա ուռաւ մամուլի սեղլով—կոմսուհու անձնաւորութեան լատկանիշները։

Ուռաւ նշանաւոր մարդկի՝ Կուղբեացեւ, Գրանդովսկին և ալին գնահատել էին կոմսուհու ալիք արժանաւորութիւնները և նրա ամենաաօտ բարեկամներն էին։

Կատկովի՝ Ռյուսկի ՅԵՍՏՎԻԿ՝ ում աշխատակցելուց վետով կոմսուհին խմբագրում էր մի առժամանակ իւր հիմնած՝ «Ռուսական կեանքը» անունով ամսագիրը—որը, սական, երկար գոկութիւն չունեցաւ։ Այն ժամանակաւ ուռաւ կեանքի «մութ ամպերը» նրան քշել էին արտասահման, ուր 2—3 տարի մնալուց լետով նա վերպարձաւ Մոսկաւ և լուս ընծակեց պատաններութեան համար գրւած մի քանի վերին աստիճանի հիտաքրքրական, կրթիչ վեպիկներ, որնցից ամենաատարածւածն է «Կատակոմբ» (Գետնազարանք) առաջին քրիստոնեաների կետնքից։

\* \* \*

Ընթերցողը արդէն գիտէ որ ուսա գրականութիւնը նւաճումներ է անում Եւրոպաւում և մասնաւորապէս Պարիզում: Ուսւ հեղինակները թարգմանւում են Գրանսերէնի և լուիցտակութեամբ կարգացւում: Ազգբում՝ մի քանի տարի առաջ՝ այդ էափշաւակութիւնը ունէր քաղաքական աստառ՝ Գրանսիցիք, չը կամենալով առանձնացած մնալ քաղաքականապէս՝ աշխատում էին ձեռք բերել ուսւ հասարակութեան և ապա ուսւ կառավարութեան համակառութիւնները: Պարիզում էր մի ծալրածեղ մոդա դէպի այն ամենը ինչ որ սսական էր: Ռսական հազուատ, ոսական ճաշ սսական երաժշտութիւն, սսական գրականութիւն և այլն: Տուրգենև, Տոլսոտի, Դոստոևսկի թարգմանւում էին մինը միւսի ետևից: Աչմ Պարիզի Hachette et C° գրավաճառները լուս են ընծայել Պուշկինի «Աւապիտանի աղջկը» (33 գրաւիւրներով) և Գոգովի «Տարաս Բուլբան» (27 գրաւիւրներով) մի մի հատոր ու 8°: Հատորի գինը 1 ֆ. 50 սանտիմ: Թարգմանիչների անունները չեն լիւած:

Նոյն գրավաճառանոցը բացի Տուրքեննելից հրատարակած ունի նաև Սալովի վեպիկները:

六

Երբ որ հասարակ ժողովուրդը բժշկներին թողած՝ դիմում է հեքիմ-ներին, մենք այդ իրողութիւնը բացատրում ենք ամբոխի տգիտութեամբ և չքաւորութեամբ։ Երբ նոյն այդ տեսակ աճուր, օվինքազ խարեւաներին է դիմում հասկացող, ինտելիգենտ աւած հասարակութեան մասը—մենք պատրաստ ենք այս իրողութեան մէջ տեսնել որ մարդիկ այլ ևս հաւատ չունին դէպի բժշկականութիւնը, դէպի գիտութիւնը և նրա պաշտօնեաները։ Հանգամանքների այս գրութեան մէջ զարմանալի չէ, եթէ աղջ փեշակի մարդիկ վերացրած ըլ վնին մեր միջից և ծծում տպէտների և թերահաւատների գրապանները։ Ցաւալին այն է որ ալզպիսիները անպատճի կերպով այնքան ժամանակ ցեցի դեր են կատարում մինչև որ սալվաքըում են բարձր մի սանդուխքից։ Գաչկովսկի մէկը՝ մեծ հոչակ էր վայելում և մեծ դումարներ ժողովում՝ մի ացելութեան համար 25-ից 100 ռ. վերցնելով, չնոր հիւ իւր հնարած վիտալին (կենսատու) միջոցի, որը նա սրսկում էր հիւանդների կաշու տակը։ Նա տարածում էր այդ «դիւթական» դեղի պատրաստելու մասին զանազան «առասպելներ» և այնպիսի մի աղմուկ էր կարողացել հանել իւր այդ կենսատուի մասին, որ ինքը իւր դեղը գնահատում էր ոչ աւել և ոչ պակաս քան մի միլիոն ռուբլի։ Սակայն այդ «կենսատուն» նրան շատ թանգ նստեց, երբ որ Պետերբուրգի Գրեուր քաղաքապետի վրա արած փորձերը կենսատութեանը հակառակ հետևանքներ ունեցան։ Գաչկովսկին բանտարկելուց վետոյ բարոնում է իւր կենսարար

դեղի բաղադրութեան մասերը. և իրավի ալդ դեզի «դիւթական» մասերը  
են՝ վագնին, բորակ և ջուր—ամենն էլ անվաս և գրոշանոց բաներ:

Ամենայն դէպքում Դաշկովմկու հունարը պէտք է ժամանակակիցք  
fin du siècle համարել. որսկումներ Պաստեօրի, Կոխի և ինչու Գուչկովմկուն  
էլ չը լինի:

\* \* \*

Հնդկաստանից Պարոկաստան և Պարսկաստանից Բաքու և ամ,  
բողջ Կովկասը ընկած խոլերան մեծ կոտորածներ արեց այս ամառա-  
ամիսները և սարսափահար ժողովուրդը անմոռնչ կերպով տաճում էր ալդ  
ահաւոր աղէտը:

Կովկասից Ռուսաստան անցնելով, ուր ժողովուրդը դեռ նոր էր  
մկնել շոնչ քաշել, ազատելով սովի ճանկերից—խոլերան առաջ բերեց  
անկարգութիւնների մի ամբողջ շարք, անկարգութիւնների, որոնք լիա-  
պէս վկացում են ուստ ամբոխի խաւարամոռութիւնը և կատարեալ տղի  
մոռթիւնը:

Ի թիւս շատ շատերի ամբոխի վազան կատաղութեանը Աստրախա-  
նում գոհ գնաց «Ռւխտ» մականունով հաչ մէկը. «Ռւխտը» փորձ էր  
փորձել <sup>1)</sup> ետ կանգնել տալ մոլորած ամբոխին իւր գազանակին մտա-  
դրութիւններից. Ալդ «Ռւխտը» ալրւեց. Խօսք չը կաչ որ դատաստանը  
հարկ ու պատշաճ դատավճիռ կը կալացնի մեղադրեալների դէմ:

3.

<sup>1)</sup>) „Կավկազъ“ № 186.

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՒԽԿ

Դանեմարկացի թագաւորական զուգի պսակադրութեան ոսկի վաճառմեակը: Դանեմարկացի աջակողմեանները և ձախակողմեանները: Լեհնը և լյուստրուալը: Լոմբրոզո՞ն Զոլավի «Մարդ գաղանի» մասին: Լոմբրոզո՞ն Մոպասանի հիւանդութեան առիթով: «Գետաէի ընկերութեան» տօնախմբութիւնը և Հելմուցի ճառերը: Ֆրիդրիխ Բողենշտեդտի մահը: Վիեննացի համաշխարհապետին ցուցահանուչութը: Դրամի խնդիրը Աւստրիա-Շտանգարիամ: Արծաթի առասութիւնը և սրա գնի ընկնելը: Ֆրանսիական աղգալին բանկը: Փողի առ հարիւրը 1891 թ.: Ֆրանսիացի ազգաբնակութեան նուազումը: Ծովապետ ակադեմիկոս Գրաւիեռի մահը: Էլենեաս Համսունոր ակադեմիկոս: Ալֆ. Գրեւեն կարիկատուրիստը: Պարիզի սալոնները Զախարեանի նկարները: Ֆրանսիական ամսագրերի վարքերից: «Խաղաղութեան դաշնակցութեան» ճիւղերը: Անգլիական կեանքից:

Դանեմարկացի Գրիստիան IX-ի և Լուիզա թագուհու պսակադրութեան ոսկի վիճամեակը տօնւում էր մայիս ամսին: Փոքրիկ Դանեմարկը շնորհիւ իւր թագաւորի խնամական մեծ կապերին եւրոպական շատ տէրութիւնների հետ՝ ամենքի ուշադրութիւնը գրաւել էր մայիս ամսին:

Դանեմարկացի ներկայումս 74 տարեկան թագաւորի մեծ աղջիկը: Ալեքսանդրան 1863 թ. մարդու է գնացել Անգլիակի թագաժառանգին՝ Ռեէլսի իշխանին, երկրորդը՝ Դագմարան 1866-ին Ռուսաստանի թագուհին է, երրորդը՝ Թիրան (Thyra) 1878-ից Կումբերլանդ կուսի ամուսինն է (Կոմն կումբերլանդը 1866 թւականին Պրուսիացի հետ միացրած նախկին Հաննովէրի թագաւորութեան թագաֆառանգն էր): Գրիստիան թագաւորի որդիներից Գէորգը Ցունաստանի թագաւոր է, Վոլոդեմարը՝ որ ամուսնացած է Գրանսիացի իշխանազն Օրլէաննեան Մարիամի հետ և որին առաջարկել էր Բուլղարիացի իշխանական թագը (Ալ. Բատտենբերգից վետոյ)՝ բաց որից նա հրաժարւեց (և գուցէ հէնց աչդ պատճառով ոռուսաց կալսեր ամենասիրելին զառաւ), և վերջապէս Դանեմարկի թագաժառանգը՝ Ֆրեդերիկը, որ իրան պահում է հօր պէս շատ համեստ, մասնակցում է զանիացի գիտնականների աշխատութիւններին և դասախոսութիւն անում հասարակ պրոֆեսորի պէս:

Ոսկի վասնամեակի տօները շատ շքեղ էին. անվերջ էին ընդունելութիւնները, ուղերձները, սպակները և այլն:

Տօնախմբութիւնը միանգաման ժողովրդական էր, քանի որ թագաւորը իւր գերգաստանով մեծ ժողովրդականութիւն է վաճելում Դանեմարկականում: 1864 թ. չարաբաստիկ պատերազմից էտոյ երբ Գելտանիան խլեց Յահանանդ Դանեմարկանից—այս վերջինի համակրութիւնները անցան զեպի Ֆրանսիան. գերմանական ազգեցութիւնը տեղի տևեց Գրանսիականին. Գրանսիան, Գրանսիական գրականութիւնը, Գրանսիական արդիւնաբերելութիւնը և արդիւնագործութիւնը ազատ և սիրավիր մուտք գտան Դանեմարկակի մէջ:

1870 թ. պատերազմի լայտարարութեան լուրը մեծ ոգեսրութեամբ և մեծ լուսերով ընդունւեց Դանեմարկականում:

Բացարձակ չէզոքութիւն, թէ զինւորած չէզոքութիւն—ահա աջնունեան Դանեմարկակի քաղաքականութեան հիմնաքարերը: Եւ Դանեմարկակի ներկատ արտաքին գործերի զեկավարները անդադար կրկնում են Դանեմարկակի իշխանագն Համլէտի խօսքերը՝ «Ո՞նել թէ չը լինել»—սրանց վրա աւելացնելով «չէզոք» բառը:

Այդ խնդիրը Դանեմարկակի համար իրաւ որ կեանքի և մահու խնդիր է:

Ներկայ կառավարութիւնը՝ զինւորած չէզոքութեան կողմն է. ուստի կոպէնհագէն մարդաքաղաքը իբրև մի զինւորական նաւատեղի (որի նմանը Գելտանիան չունի Բալտիկ ծովի եզերքում)—ամրացնւում է շատ զօրեղ կերպով և մեծ խնամքներով: Այն ինչ ծախակողմեանները, հակառակ աջակողմեան արխտովրատիակի, զինւորած չէզոքութիւնը համարում են Դանեմարկակի համար վտանգաւոր: Զարմանալին այն է որ ծախակողմեանները աջակողմեաններից շատ են, դոցա թւում են Բրանդէսը, փիլիսոփայ Հօչյդինգ'ը և Դանիակի ժամանակակից բոլոր առաջնակարգ գրողները, «Եվրոպացիները» լինչպէս որ կոչում են այս տեղ առաջադիմականներին, այնուամենանիւ կառավարութիւնը գտնուում է աջակողմեանների ձեռքում, որովհետև ժողովրդական Գրիստիան թագաւորը արիստոկրատիակի՝ զինւորած չէզոքութեան՝ կողմն է անկարող լինելով մոռանալ 1864 իւր պարտութիւնը և Յահանգների կորուստը: Ներկայ արտաքին գործերի մինիստրն է Ռոզենհորն Լինը: Բայց այն մարդը՝ որ իսկապէս կառավարում է Դանեմարկը—է Էստրուպ (Estrup), մինիստրների խորհրդի նախագահը, որի մասին վկացում են թէ առաջին եռանդուա հաստատամիտ մարդն է ամբողջ թագաւորութեան մէջ:

Ամեն անգամ երբ ուսաց թագաւորը այցելում է իւր ընտանիքի հետ Դանեմարկը—նա հաստատուամ է կոպէնհագենին կից եղած Fredens-Խօրց'ում (Քաղաքակերտ) և որոի գնում Վոլգեմար իշխանի հետ թագաւորապատկան Լիպ (Lip) կոչւած անտառները:

Դանումարկալի թագաւորական զոլոց շատ պարզ կեանք է վարում՝ և հէնց աղդ պատճառով շատ չարգւած է իւր ժողովրդից:

Գիտնական Զեզարէ Լոմբրոզօն էլլ մի գիրք է պատրաստում. Les applications de l'Anthropologie Criminelle=Աիրարկութիւն ոճրագործական մարդաբանութեան» վերնագրով. Այդ աշխատասիրութեան մի պրակը տպւած է մի քրանսիական ամսաթերթում<sup>1)</sup> և նուիրւած էմ. Զոլալի «Մարդ-զազան» ռումանին:

Միանգաման համակրելով Զոլալի սկզբունքին՝ իւր վեպերին հիմք ծառակեցնել գիտութիւնը, և խոստովանելով իսկ որ «միմիան Զոլալի, Դուստովսկու, և Տոլստովի գրւածներն են որ նրան տալս են մի նոր գամմա<sup>2)</sup> վերջին 25-ամեակ դրականութեան միակերպութեան մէջ»—այս ամենը խոստովանելով հանդերձ—Լոմբրոզօն մի քանի սխալներ է զանում Զոլալի վիշեալ ռումանում—սխալներ գի տութեան տեսակէտից. Օրինակի համար թէ այս ինչ ոճրագործը (Եմիլ Զոլալի ռումանում) ալսպէս չը պիտի ոճիր գործէր, կին չը պիտի սիրէր, և աղն. Զենք մտնում մանրամանութիւնների մէջ—այլ շատանում ենք իրողութիւնը արձանագրելով: Ժամանակակից ռումանը քննադրատւում է ոչ միան հասարակ կրտսէկուլի, մի դրականագիտի, մի վիպասանի ձեռքով, այլ և մի դիտականի, հոգեկան հիւանդութիւնների բժիշկ գլուխականի ձեռքով:

Նոյն անխոնջ գիտնական Լոմբրոզօն, խօսելով Գիւկի գը Մոպասանի տկարութեան առիթով լողւած է նուիրել հանճարի ուժաթափութեանը<sup>3)</sup>:

Նա նորից պնդում է իւր ան տեսակէտը թէ հանճարը աւելի շատ է ենթակա ալլասեռած ջղալին հիւանդութեան (la névrose dégénération), մի տեսակէտ որ ինքը փաստաբանել է իւր «Հանճարեղ մարդը» զրքի մէջ և որ, իւր ասելով, իրանից առաջ յախնել են Արիստոտելը, ապա Դիզըոն, Տէնը, գ'Ալամբեռը և աղն:

Այնուամենամեծ է լոմբրոզութիւնը և զղալին ու անմիտ բնականութիւնը, ասում է Լոմբրոզօն, որ շատ չաճախ պատահում են հանճարեղ մարդկանց մօտ—ոչ միան ուժապառութեան առաջ գլխաւոր ձախների աստիճանները՝ Այս դէպքում. հղանակ, ներդաշնակութիւնն, տոնն, նորութիւնն:

<sup>1)</sup> Revue des Revues. Յունիս  
<sup>2)</sup> Գամմա=Երաժշտութեան եօթը գլխաւոր ձախների աստիճանները՝ Այս դէպքում. հղանակ, ներդաշնակութիւնն, տոնն, նորութիւնն:

<sup>3)</sup> Nouvelle Revue 1892 № 6. „De l'épuisement dans le génie“.

<sup>4)</sup> Խելազար, խենթ, անմիտ:

Այս ասելով Լոմբրոզոն մասնանիշ է անում Դոստուսկու, Խբսենի և Շեքսպիրի մի քանի գրածքներին. «Խակական հանճարների մօտ նկատում է միանգաման հակառակ երևոլթ. դա երկարակեցութիւնն է. 143 ստուգած դէպքերից 134-ը այս տեսակի էին. Միկել Անջելօն, Պետրարկը մեռան 90 տարեկան, Հորբար 92, Տիգիանը 99, Վոլտերը, Տալէլյանը, Բենժամին Ֆրանկլինը—84, Նիուտոնը 85 տարեկան հասակում. Եւ իդուր են խրտնում վերջապէս, ասում է Լոմբրոզոն, «տարասեռ» կամ «ալասեռ»<sup>1)</sup> ածականներից. Հոգեբանութեան և կենդանաբանութեան գիտութիւնները ալլասեռուելը չեն հասկանում միմիան վատ մոքով, այլ և լաւ. ասպէս՝ չորքոտանիները—կասիկները ունին մի ամբողջ օրդան՝ սրչ և գընդերք, որ մենք կորցրել ենք մտաւոր գերազանցութիւն ձեռք բերելու համար:

Հոկանները՝ հակաչածե մարմին մատերի հետ օժտաւած են թողլ և ամուլ խելքով. Նոյն կերպով մաքի հոկանները ալլասեռուելուն և ջղալին հիւանդութեան են պարտական իրանց հանճարի միծ գօրութիւնը:

Լոմբրոզոն սական չի ուրանում որ և հանճարեղ մարդիկ կարող են ուժաթափութեան օրինակներ ներկայացնել. բայց այդ օրինակները բացառութիւններ են ըստ Լոմբրոզի և զանազանուում են հասարակ ջղալին հիւանդութիւնների երևութներից:

Կլոպշտոկը և Տասսօն անկարող էին բացատրել իրանց ուսանաւորների լիմասոր:

Երբեմն հանճարեղ մարդիկ քիչ թէ շատ երկար ժամանակով անճանաչելի էին զառնում իրանց տարօրինակութեամբ. Դարւինը նստում էր ծառուերի արմատներին և ջութակ ածում, նատորբրիանը հաւատացնում էր որ նապոլէոն I մեծ լաղթող էր, բայց ողորմելի գեներալ և այն:

Գեօտէի «Ձառաւորի» երկրորդ մասը իւր պակաս արժանաւորաւթեամբ օրինակ է հեղինակի ծերութեան արդիւնքի:

Իտալիակի համար կազմած վիճակադրական թւերից երեսում է որ 1 միլիոն հոգու վրա ինքնառապանութիւն գործած են վինում 619 զրականագէտներ, 36 համալեներ և 80 արհեստաւորներ:

Նոյնը ներկայացնում է և ինելազարութիւնը:

Ֆրանսիակի համար կազմած վիճակադրական թմբը վկանում են որ 1 խելազար ընկնում է 104 արտիստի, 119 փաստաբանի, 280 գրականագէտի, 253 բժշկի, 723 գործակատարի, 5.487 բանկիրի, 18.819 հոգագործի:

«Այս երեսովները ապացուցանում են la scorie հիւանդութիւնը, մինչդեռ բանդագուշանքը և վերնոտութիւնը կազմում են հանճարի կորիզը և աղբիւրը, որոնք հասցնում են նրան դէպի գաղաթնակէտը և ալնտեղից

<sup>1)</sup>) Dégénéréé.

գահափշտում կամ քիչ ու երկար ժամանակով և կամ ծերութեան հասակում:

Աւելացնենք որ Գիտի դը Մոպասանը այժմ 42 տարեկան է և որ գրեթէ յուս չկայ որ նրա մտատր աշխարհը վերականգնեցնել կարողանան: Յաւել կարելի է միայն որ այդ բէալիստ գրողը, այդ ամենահամակրելին Փրանսիացի բոմանիստներից, Գիտատա Ֆլյոբերի այդ աշակերտը, այդ ճշգրիտ նկարիչը—ազդպիսի աննախանձելի դրութեան հասաւ: Նրա ընկերները ջանքեր չեն խնայում նրան բժշկելու համար:

— Գեօտէի ընկերութիւնը, որի անդամների թիւը հասնում է երեք հազարի, կատարեց իւր տարեկան տօնախմբութիւնը չունիս 10 Վէլմար քաղաքում:

Սկզբում տեղի ունեցաւ պաշտօնական նիստը, տպա ճաշը և ապա ներկայացումը:

Այս տարւակ տօնախմբութիւնը սովորականից աւելի փակուն էր, քանի որ Գեօտէի փառաբանողը այս անգամ էր հոչակաւոր գերմանացի Փիզիկոս բնադէտ Հելմհոլցը: Իւր երկար ճառում երեսելի դիտնականը խօսում էր Գեօտէի՝ ապագայ գիտական գիտաբերի նախազգացումների մասին: Եւ իրաւ, մեծ բանաստեղծի հոչակ վակելելոց առաջ Գեօտէն բնագէտ էր: Նա առաջինը եղաւ որ հաստատում էր որ բոլի տերեք, ընձիւղը կոթը, բաժակը (ծաղկի), որձաները<sup>1)</sup> և իդաները<sup>2)</sup> այս զանազան կերպարանքների տակ—կազմւած են միւնոցն ձեռվ և նուն մասնիկներից և որ դրանք կարող են փոխել մի կերպարանքից միւսը,—և այս ամենը նոյն երեսութիւ նման, որով մարդու և կապկի ձեռքերը փոխել են միա կենդանիների մօտ ճիրանաւոր թաթերի, ամբակաւոր և կճղակաւոր ոտների, թշուռների թեսերի—որոնք իրար նման են իրանց չօղւածքով, դիրքով և կոճղի—մարմնի հետ զանգւելովը:

Այսպէս ուրեմն Դարվինի կարապետը Լամարկի և ուրիշների հետ նաև Գեօտէն է հանդիսանում:

Բնագիտութեան միւս ճիւղերում Գեօտէն լաջողութիւն չունեցաւ չնորմիւ գործիքների անկատարելագործ դրութեան: Այսպէս Գեօտէն պընդում էր որ սպիտակ գոչնը պարզ և հասարակ (ոչ բարդ) գոչն է, մինչդեռ միւս գոչները իբր թէ սրա թանձրացումներն են (atténuation): Յատնի է սպիտակ որ հատւածակողմի (որազմա) շնորհիւ ապացուցւեց որ սպիտակ գոչնը ամենաբարդն է և կազմւած է բոլոր միւս գոչներից:

<sup>1)</sup> Որձակ—ծաղկի արու գործարան:

<sup>2)</sup> Իդան—ծաղկի էդ գործարան:

Ճաշի ժամանակ Հելմուցը ի թիւ ավոց ասաց որ «ինքը ուրախ է որ կարողացաւ մի քանի ժամ խլել մակրաքաղաքի տենդալին, կեանքից և անցնել Վելմարում, այդ աղմկազուրկ քաղաքում, ուր պահպանում է դեռ երկրպագութիւնը դէպի գերմանական մեծ բանաստեղծները և ուր իբենը Տուլստոփ հետ գեռ չեն համարում կարապեսներ նոր մեսախալի»:

Երեկոցեան ներկայացմցան Գեօտէի հարիւր տարի չը խաղացւած «Die Vögel և Bürgengeneral» պիեսները:

Յիշեցնենք ընթերցողին Գեօտէի արտառանած խօսքերը 1792 թ. սեպտեմբերի 20-ի երեկոցեան Վալմի՛ի ումբակոծութիւնից լետով, որ նա արտառանել է դիմելով գերմանացի սպաներին. «այսօրւանից սկսում է նոր շրջան տիեզերական պատմութեան՝ գուշ կարող էք ասել, որ դուք ներկայ էիք այդ բոպէին», Վալմի՛ մօտ Փրանսիական ճնշափոխական նոր կառավարութիւնը չաղթեց օտար գաշնակից գօրքերին:

—Անցեալ ապրիլի 19 վախճանեց Ֆրիդրիխ Բողենշտեդտը:

Նա ծննդել է 1819 թ., նա ուսումնասիրել է լեզագիտութիւնը Գեօտարինդենում, Միւնիսենում և Բերլինում: 22 տարեկան նա հրաւիրւեց Մուկւա իշխան Դալբիցինի որդոց մօտ իրք զատուիարակ: Նա առիթ ունեցաւ, այսպիսով, սովորելու սլաւոնական լեզուները:

1844-ից առաջ նա արդէն թարգմանութիւններ ունէր Պուշկինից և Լեբմոնտովից, երբ հրաւիրւեց Թիֆլիս իրը ուսուցիչ գերմաներէն լեզվի: Նա ծանօթացաւ ալստեղ Միրզա Շաֆֆիի հետ և ուսումնասիրեց արևելեան, գլւսաւորապէս պարսիկ զբականութիւնը: Նա վերադարձաւ իւր հայրէնիքը Փոքր-Ասիակի միջով հետը տանելով տապաւորութիւնների ահազին մի պաշար, որոնցից նա օպաւեց (1851) իրան հոչակած գրքի համար «Միրզա Շաֆֆիի երգերը» վերնագրով: Այս գիրքը թարգմանւել է թէ եւրոպական լեզուների և թէ թաթարերէնի (tarlare) և երազերէնի: Այնուհետև նա հրատարակել է «1001 գիշերներ Արևելքում», «Նիրազի երգիչները» և այլն:

1858—1866 թ. նա դասախոսում էր սլաւոնական լեզուները և հին անդլիական գրականութիւնը Միւնիսէնի համալսարանում: Այս միջոցին են վերաբերում նրա ուսումնասուիրութիւնները և թարգմանութիւնները Շեքսպիրից:

1866—1873 նա կառավարել էր Մեծնինգեն դքսի կողմից նշանակւած՝ նրա նշանաւոր թատրոնը: Ի վերջու դուքսը նրան ազնւականի կոչում տևեց: Նա շատ ճանապարհորդութիւններ է արել. նա դնաց Միացեալ Նահանգները և դասախոսութիւններ արաւ զանազան քաղաքներում:

1880 նա հիմնեց Բերլինում Tägliche Rundschau օրաթերթը: Առաջնակարգ բանաստեղծ չը լինելով հանդերձ—Բողենշտեդտը լաւուի է իրու կեանքի, դարնան, երիտասարդութեան սիրահար երգիչ: Առաջնին կեանքի մէջ նա շատ ուրախ զբաւող էր, զարգախօսութիւնների մեծ պաշարով:

Իւր ամբողջ կեանքում ոչ մի անէաջողութեան չը պատահելով—նա մնաց շարունակ լաւառես—օպտիմիստ։ Մինչդեռ նրա լուրջ գրւածքները հաւանուկթիւն էին գտնում հմուտ գրականագէտների կողմից—արևելեան կեանքից գրած «Միրզա Շաֆֆիի երգերն էին որ լափշտակութեամբ էին կլանւում միջնակարգ զերմանացի ընթերցողներից։ և իրաւ «Միրզա Շաֆֆիի երգերը» 33 տարւակ ընթացքում (1851—1884) լուս էին տեսել 123 տպագրութեամբ։

Հայ ընթերցողին լազանի կը վիճի արդէն լրագրերից Նիեննավի միջաղդավին թատրոնական և երաժշտական ցուցահանդիսի մասին։ Դա առաջինն է իւր տեսակում և հետաքրքրական վերին աստիճանի։ Ցուցահանդէսը բաժանւած է զանազան մասների։ Առաջին մասը, ազգագրականը՝ նւիրւած է քաղաքակրթութեան չենթարկւած ազգերի երաժշտութեան, պարին և թատրոնին զանազան ցեղերի մէջ։ Թուրքերը, չինացիները, հնդկացիները, աւստրիացիք և աֆրիկացիք ներկայացւած են ազդել բաւականաչափ։

Մի ուրիշ մաս կազմում է երաժշտութեան պատմութիւնը գարերի ընթացքում, ուր երևում է ամենազն մի երաժշտական գործիքի լաւոնւելը և կատարելագործմելը։ Ալդ բաժնում կան սենեակներ, որոնք նմաննելու չափով ընդօրինակում են առանին կեանքը զանազան երաժշտական հսկաների, ինչպիսիք են Բախ, Մոցարտ, Բեթհովեն, Շուբերտ, Շուման և այլն, իսկ Վագների համար լատկացրած է մի ամբողջ տեսակ։

Գերմանական դրամատիկական գրականութեան դարպացումը ներկայացւած է ժամանակակից կանոնակից մանրամասնութեամբ։

Գերմանիայի և Աւստրիայի գրեթե բոլոր թատրոնները ցուցադրած են իրանց զարգացման գլխաւոր պերիոդները, պատկերները նշանաւոր դերասանների, սրանց հագուստը և ավել։

Նոյն կերպով ներկայացւած են և օտար թատրոնները։ Անգլիան, Ֆրանսիան, Խոտավան, Խոպանիան, Բելգիան և նոյն իսկ Լեհաստանը—ուղարկել են ազն ամենընչ որ ուղղակի կամ անուղղակի լարաբերութիւն ունի իրանց թատրոնի հետ։

Ցուցահանդէսը կամեցել է տեսականի հետ կապել նաև գործնականը Ացդ պատճառով նա կառուցել է մի օրինակելի թատրոնական զանգին Ֆելինէր և Հելմէր ճարտարապետների նախազեծերի համեմատ 1653 հոդու համար։ Մայիս ամիսից միասած մինչև սեպտեմբերի վերջը աշտեղ ներկայացումներ կը տան եւրոպական բոլոր նշանաւոր թատրոնական խմբերը թույլ 17։ Անհետաքրքիր չէ առաջ բերել այդ ցուցակը քանի որ դա իւր տեսակի մէջ եղակի մի բան է։

7—23 մայս Գերման։ թատ. Բերլինից, կառավ. Աղոլֆ Վառուժ։

- 24—31 » Ֆրանսիական » Պարիզից » Ժիվլ Կլարետի:  
 1—8 լուսիս Չեխական » Պրադից » Աղոլֆ Սուբերտ:  
 1—14 լուսիս Բալետներ:  
 30 լուսիսից—14 օգոստ Տիրոլական թատր. կառ. Անդրէաս Հոֆեր:  
 15—24 օգոստ օպերետիկա Պարիզից մասնակց. օր. ժան Գրանիէ:  
 24—31 օգոստ Հռոմական թատր.  
 10—4 սեպտեմբ. Լեհական թատր.  
 5—15 » Դոդէի Arlésienne'ը գերման. խմբով կատարւած:  
 15—30 » Խոպական օպերա կառ. Sonzogno:  
 Դրամատիկական գրականութիւնից դասախոսութիւններ անելու հրա-  
 վիրած են, ի միջի այլոց, նաև Ֆրանսիսկ Ալասեցը, Ժիվլ Լըմիտը և  
 Բրիւնը տիեզեր, որոնք լաւանի Փրանսիական կրիտիկոսներ են:  
 Երաժշտական դահլիճում տրուղ կոնցերտները լինելու են նմանապէս  
 բազմակողմանի և հետաքրքրական Մերակիններից թերեւս մասնակցէին  
 Կարա-Մուրզան և Շահլամեանը, եթէ խոլերան չը խանգարէր:  
 Երաժշտական բաժնում կաչ նաև հաջկականը՝ ուր ի տես են զբանական  
 23 հին և նոր տպագիր և ձեռագիր մատեաններ հոգեորական երգեցողւ-  
 թեան վերաբերեալ:

Դրամի խնդիրը հերթական խնդիրներից մէկն է Աւստրիա-Ռւմիա-  
 Համար: Յատկապէս այս գործի համար կազմած զանձնաժողովը  
 եկել է հետեւեալ և զրակացութիւններին: Իբրև նոր դրամական միաւոր<sup>1)</sup>  
 ընդունել է կիսաֆլորինը կամ կրոնէ (Krone, որ բառացի նշանակում է  
 թագ): Կրոնը բաժանւած է 100 հելլերի: Մի կիլոդրամ ոսկուց պիտի  
 թափակ 184 հատ 20 կրոնանոց դրամ, կամ 368 հատ 10 կրոնանոց: Այս-  
 պիտով 1 կրոնը կարմենաց 1 ֆր. ու հինգ սանտիմ Փրանսիական փողով: 20  
 կրոնանոց զրամի քաշը պիտի լինի 6,097 գրամ ոսկի:

Այժմ երբ Աւստրիան և Հունգարիան կամենում են աչսպիսով իրար  
 հետ ունեցած համաձայնութեան պայմանի զօրութեամբ ոչնչացնել թուղթ  
 փողի շրջանութիւնը և իբրև զլխատոր և միակ զրամական միաւոր ըն-  
 դունել ոսկի դրամը—հարց է առաջ գալիս՝ արդեօք Անգլիան դրամի  
 տագնապ չի ունենալ, եթէ Աւստրիա-Հունգարիան կամենալու լինի Անգ-  
 լիակից ձեռք բերել 500—600 միլիոն ֆրանկի ոսկի:

Անգլիական բանկը միակն է որ ոսկու պահեստ չի ունենում, այս  
 նաև զրամական շուկային՝ բարձրացնում կամ ցածրացնում է փողի տո-  
 կոսը: Մինչեւ Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը ոսկու անձեռն-  
 միսելի սահետներ ունին և թուղ չեն տալ որ այդ ոսկիները իրանցից

<sup>1)</sup> Դրամական միաւորը (единица монеты, unité monnaitaire) մի երկրի հիմնական դրամն է. Ռուսիականը դրամական միաւորը ոսկուին է, Ֆրանսիականը ֆրանկը, Գերմանիականը մարկը:

գուրս տարւեն. Վերին աստիճանի հետաքրքրական է այս խնդրի հետմիաժամանակ տեսնել՝ թէ ինչպէս է փոփոխել անցեալ 91 թ. փողի տոկոսը զանազան եւրոպական պետութիւնների մէջ:

Լոնդոնում անցեալ 1891 թ. զեղջի առ հարիւրը (տոկոսը, պրոցենտ) շատ փոփոխական է եղել՝ առ նւազն՝  $2\frac{1}{2}\%$ , առ առաւելն՝  $5\%$ , միջին թւով՝  $3,35\%$ :

Բերլինում՝ միջին թւով  $3,80\%$  էր. Յունասր ամսին հասել էր  $5\frac{1}{2}\%$ , իսկ տարւաէ վերջին 8 ամիսները անփոփխ  $4\%$  վրա էր:

Վիեննա աչում՝ միջին թւով էր  $4,40\%$ , Տարւաէ սկզբի 7 ամիսները  $4\%$ , վերջի ամիսները  $5\%$ :

Պետերբուրգում՝ միջին թւով էր  $4,88\%$ . Տարւաէ մեծ մասը  $4\frac{1}{2}$  էր, վերջին երեք ամիսներին հասել էր  $6\%$ , իբր թէ սովոր պատճառով:

Հռոմում՝ միջին թւով  $5,78\%$ , առաջին 8 ամիսները  $6\%$ , վերջին չորսը  $5\frac{1}{2}\%$ :

Բրիւսել՝ ամբողջ տարի  $3\%$ :

Ամսակագամ՝ տարւաէ տասն ամիսը  $3\%$ , յունասրին  $4\%$  և փետրւարին  $3\frac{1}{2}\%$ :

Մադրիդ՝ անփոփխ  $4\%$ :

Պարիզ՝ նույնպէս անփոփխ  $3\%$ :

Սեծ զին զնելով ցածր և անփոփխ տոկոսին<sup>1)</sup> արդիւնագործութեան համար, ֆրանսիացի մի ամսագիր ֆրանսիական տոկոսի ամենացածր և անփոփխ լինելը՝ վերագրում է «Banque de France» բանկի կազմակերպութեան:

Ցիշեալ բանկը ունի իբր մետալական պահեստ (encaisse métallique)՝ 2.690 միլիոն ֆրանկ<sup>2)</sup> Այս, իւր նմանը չունեցող պահեստն է պատճառ ֆրանսիական ցածր տոկոսի: Նկատելու է որ եռապետեան դաշնակցութեան (Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա և Իտալիա) պահեստը աւել չէ քան  $2,320$  միլ. ֆր.: Ֆրանսիացիք ըմբռնել են վիշեալ հանգամանքի ճշմարտութիւնը և 1882 թւոց աւելացրել են իրանց բանկի պահեստը 800 միլիոնով:

Բացի վերովիշեալ բարիքից՝ պետական բանկի մետալական պահեստից

1) Այս հանդամանքը շատ նշանաւոր է. փողի տոկոսի 3-ից 4, 4-ից 5, 5-ից 6 փոփոխութեան մէջ՝ ֆրանսիացիք զժւարութիւններ են տեսնում արդիւնագործութեան համար, մինչդեռ Խուսաստանի արդիւնագործութիւնը, բացի ալդ չնշն, աննշան անքարմարութիւնից, գործ ունի և կուրսի հետ, որ անհամեմատ մեծ զժւարութիւններ է պատճառում: Եւ իրաւ կուրսը  $1—2—3\%$ -ով է ցածանում և աւելանում մի օրւաէ մէջ, իսկ տարւաէ ընթացքում զանազանութիւնը կարող է հասնել  $10\%$  և շատ աւելի:

2) 1417 միլիոն ռուբ և 1272 միլ. արծաթ:

կարող է օգտվել փոխառաբար և տէրութիւնը արտաքոյ կարգի հաճզամանքներում: «Փրանսիայի բանկը» մնձ ծառացութիւն արաւ տէրութեան՝ փոխ տալով 1870—1871—1872 թւականներին առաջ զեղչի տոկոսով, ապա 3<sup>0</sup>/<sub>0</sub> և ասպա 4<sup>0</sup>/<sub>0</sub>, մինչդեռ Մորդանի անունով փոխառութիւնը արած էր 7<sup>1</sup>/<sub>4</sub><sup>0</sup>/<sub>0</sub>, պարտքաշէջը հաշվի չառած:

Եւ եթէ ալարուաէ օրս Աւատրիան ձեռնամուխ է եղել իւր դրամահատական սիստեմին՝ հիմնապատճառներեց մէկը հէնց զա է, —ուն են ալ պատրաստի մետաղական պահանապատճառներեց մէկը հէնց զա է, —ուն են ալ պատաքոյ դիպածներում օգտակալ կարողանալու համար:

—Իրանց մետաղական դրամների սիստեմով, Եւրոպան և Ամերիկան բաժանւում են՝ մի-մետաղականների և երկ-մետաղականների, Մի-մետաղականների դրամական սիստեմի հիմքը կազմում է ոսկին, իսկ երկ-մետաղականներինը՝ արծաթն ու ոսկին: Ուժը ոսկու կողմն է և աչդ նրանից է որ արծաթի արծէքը շատ է փոփոխուամ, ոսկունը աւելի անփոփոխ է, հետեւապէս արծաթ զրամը չի համապատասխանում շուկայում ծախւող արծաթ ապրանքի արժողութեանը: Ալսպէս օրինակ աչն արծաթը, որ իրեն դրամ, ուրեմն լոկ անունով, 60<sup>7</sup>/<sub>8</sub> պենս արծէք ունի, և որ մի ժամանակ, իրօք ալդքան արծէք ունէր, նան շափսով արծաթը շուկաներում էր լունար ամիսներին 1885 թ.—49<sup>11</sup>/<sub>16</sub> պենս, 1886—34<sup>3</sup>/<sub>4</sub> պենս, 1888-ին—44<sup>3</sup>/<sub>8</sub>, 1889 թ.—42<sup>1</sup>/<sub>4</sub>, 1890 թ.—53, 1891-ին—մօտ 40 և ալժմ 39<sup>7</sup>/<sub>8</sub> պենս:

Սրս պատճառներն են՝

- 1) Արծաթի հանքերի մնջաքանակ արտադրութիւնը,
- 2) Նախապատռութիւնը՝ որ տրում է առեստի մէջ ոսկուն,
- 3) Արծաթ դրամների վերացնելը՝ մի քանի երկներում:

Բայցատրենք աւելի մանրամասն, օգտական տասը տարի սրանից առաջ պ. Գոշենի (Նախկին անգլիական ֆինանսների մինիստր) բանձնաժողովի կողմից արած հաշիներից և նորագոյն տեղեկութիւններից, ան է պ. Leech'ի ցուցմունքներից:

1873	թ՝	արծաթի արտադրութիւնն	էր	63.267.000	ունց
1880	”	”	”	74.791.000	”
1885	”	”	”	91.652.000	”
1888	”	”	”	108.827.000	”
1889	”	”	”	122.731.000	”
1890	”	”	”	132.833.000	”

Այս թւերը պարզուէն ցուց են տալս թէ ինչ արագ քայլերով է առաջ զնացել արծաթի արտադրութիւնը, և դեռ զարմանալ պէտք է որ, 1885 թ. արտադրութիւնը 91.652.000 լինելով, արծաթի գինը էր 49<sup>11</sup>/<sub>16</sub>, իսկ 1889—122.731.000 ունց լինելով ալսինքն մի երրորդով աւելի քան

85թ.) գիշեն էր 42<sup>1/4</sup>: Եւ ահա այն վախը որ եթէ արծաթի արդիւնաբերութեան աճելը շարունակվի՝ նրա գինը բոլորովին կընկնի, մինչդեռ չափանի է որ դրամի համար հարկաւոր են աճսպիսի մետալներ, որոնց գները աճփոփուական կամ գոնէ քիչ փոփոխական են:

Արծաթի գնի ընկնելուն նսլաստել է և Գերմանիան, որ 1873—1874թ. վերացնելով շրջանառութիւնից իւր արծաթի դրամները և նրանց փոխարինելով նիկէլի խառնուրդով, վայր զցեց արծաթի գինը 6—7%։ Բանը նրանումն է որ սրանով Գերմանիան կընակի վնասեց արծաթին, մի կողմից նա իւր ունեցած դրամները ծախելով ուրիշ մետալով փոխարինեց, և միւս կողմից նա այլ ևս արծաթի գնող չէ, մինչդեռ արծաթի, ինչպէս ամեն մի ապրանքի, գինը բարձր կը վնի՛ եթէ պահանջը առաջարկութիւնից ամելի լինի և ընդհակառակն: Այս է պատճառը որ արծաթի գնի ընկնելը մեծ մտասանջութիւն է պատճառում այն պետութիւններին, որոնք երկմետալական դրամի սիստեմ են՝ մտցրել, ինչպէս Ամերիկակի Միացեալ-Նահանգները և Ֆրանսիան, և սա է պատճառը որ ամենից շատ հետաքրքրաւոծը՝ Ամերիկան՝ մի ժողով է կազմում հրաւիրելով եւրոպական պետութիւնների պատղամաւորներին մի դրամական կոնգրէսի:

---

— 1890թւականը մի արտասովոր և խոճալի տարի էր Ֆրանսիակի համար. վայելելով քաղաքական խաղութիւն, անտեսական բարօրութիւննա ունեցաւ մեծ կորուստ բնակիչների թւում առանց որ և է պատերազմի, սովոր, կոտորածի և այլ աղետի: 1890թ. համար աչժմ կամ ճիշտ վիճակարական թւեր մահացութեան և ծնունդների թւի մասին: Արձանադրած է 838.019 ծնունդ ընդգէմ 876.505 մահի — ասել է՝ նւազումն 38.446 հոգու ֆրանսիակի ազգաբնակութեան թւից:

Այդ ողբալի իրողութիւնը առիթ տւեց երկար վիճաբանութիւնների, շատ լանձնաժողովներ և մասնաժողովներ կազմելու, պատղամաւորների հարցապնդումներին և ալին:

Վերջը մենք կասենք թէ ինչ եղրակացութիւնների և կան ֆրանսիացիք այս իրողութեան առիթով, իսկ ապատեղ զնենք այն համեմատական ցուցակը, որ կոլող թւերով ներկալացնում է վերջին 10 տարւակ ծնունդների և մահի դէպերի թիւը ֆրանսիացում:

ծնունդ	մահ աւելումն	կամ նւազումն
1881թ.	937,000	828,880 +108,200
1882 "	935,500	838,500 +97,000
1883 "	938,000	841,100 +96,800
1884 "	937,700	858,700 +78,000
1885 "	924,500	836,900 +87,600

1886	"	912,800	860,200	+52,600
1887	"	899,300	842,800	+56,500
1888	"	882,600	837,800	+44,700
1889	"	880,509	794,900	+85,600
1890	"	838,000	876,500	-38,400

1889 և 1890 թւականների խոկական թւերը համեմատելիս՝ զանագանութիւնը հաւասար է 124,092, որովհետեւ ոչ միայն 1890 թ. ազդաբնակութիւնը չի աւելացել 85,600 հոգով, այլ նաև պակասել է մօս 40 հազար հոգով:

Եւ այս իրողութիւնը տեղի է ունենում աչնպիսի մի ժամանակ, երբ եւրոպական միա ազգաբնակութիւնների թիւը զգալի կերպով խոչըրանում է, երկու դար առաջ Ֆրանսիակի ազգաբնակութիւնը կազմում էր Եւրոպակի ազգաբնակութեան 40/100, իսկ ներկայումս միմիայն 13/100. Նկատած է որ Պարիզը իւր 2½ միլ. բնակիչներով տալիս է ամենաքիչ երեխաց համեմատաբար Ֆրանսիակի բոլոր քաղաքների և գաւառների հետ: Ահա այն աղիւսակը որը կազմել է բժիշկ Շարեւճը ֆրանսիակի 100 ընտանիքի համար:

Ֆրանսիական	Պարիզում
Երեխակը չունին	20
1 երեխակ ունին	24
2	"
3	"
4	"
5	"
6	"
8 և աւել ունին	2

Երեխակ ունին ալուց խուսափելը—ահա չարիքի խոկական անունը, չարիքի, որը սպանում է Ֆրանսիային մի քանի տարում թողնել լոկ անցեալի փառաւոր վիշողութիւններ:

Վերոիշեալ հանգամանքը սական առաջ է գալիս ոչ թէ Փրանսիաց յինների երեխակ չը սիրելուց, այլ այն հասարակ պատճառով, որ ապրուստը թանգացել է շատ ստեղի քան եկամուտը: Այս տնտեսական հանգամանքի վրա պէտք է աւելացնել նաև զինուրական ծառակութեան դրութիւնը: Ֆրանսիայիք չեն կարողանում մոռանալ 1870 թ. կրած ամօթալի պարապութիւնը և ոչ էլիրանցից լալած երկու ամենազեղեցիկ նահանգները՝ Էլ-զաս-Լոթարինգիան: Անցել են 20 տարիներ, բայց Փրանսիայիների ոխակալութիւնը և վրիժառութեան ցանկութիւնը պահպանում է վառ կերպով: Ազդ է պատճառը, որ 1871—2 թւերից սկսած Ֆրանսիան սկսեց ամենամեծ ուշադրութիւն դարձնել իւր զինուրական ոչերի կազմակեր-

պութեան և վերանորոգման գործին—գործ, որին նա հայրենասիրութիւնից նշիրում է ամեն տարի մօտ մի միլիարդ։ Նա զինորական ծառալութիւնը դարձրեց պարտաւորեցուցիչ իւր բոլոր քաղաքացիների համար,—անուն հետեւ նա օրէնք դարձրեց Յ տարւակ ծառալութիւնը և այլն և այլն, որոնց թմբը մեր նպատակից զուրս է։ Մենք ուզում էնք նկատել որ յոզդուրդի երխաւառարդ ուժերի մի մասի աշխատանքը կորչում է ապարդին կերպով ֆրանսիայի տնտեսութեան համար։ Բացի դրանից այլ հանգամանքը կապւում է նաև ազգաբնակութեան թվի պակասելու հետ։

Պրոֆեսոր Ռիշեն (Richet) իւր մի զասախօսութեան մէջ պահանջում էր օրէնք գնել, որ եղբար կամ եղբար ան եղը ան եղբօր՝ որ զինորական ծառալութեան է մտնում՝ ազատ լին են զինորական ծառալութիւնից։ Այս ինելացի առաջարկը գեռ չի ընդունւել պարլամենտի կողմից։

Վերջապէս Պարիզի բժշկական Ակադեմիան բարուարից իւր վճիռները այս խնդրի վերաբերութեամբ, որոնք են։ 1) պակասացնել մեռնող երեխաների թիւը և 2) ծաղկի պատւաստելը պարտաւորեցիչ զարձնել։ Եւ իրաւ. զեռ մի քանի տարի առաջ, մի պաշտօնական տեղեկագրի համաձայն, ֆրանսիայում 1 օրականից մինչ 1 տարեկան մեռնող երեխաների թիւը հասնում էր տարին 120,000'ի։

— Անցեալ ապրիլին վախճանեւց զը և լա Պրաւիերը։

Հանգուցեալ ակադեմիկոս Ժիլլեն զը և լա Պրաւիերը 80 տարեկան էր։ Նա ազմիրալ էր 1855 թւից, բայց չը մասնակցեց Մեկսիկական եղած պատերազմի կոփիներին։ Նասովեն Մ-ի թաղումին ներկայ վնելու համար նա խնդիրք էր ներկայացրել և թովառութիւն ստացել իրը նախկին թագաւորի նախկին աղիւտանու։ Նա ընտրած էր ակադեմիկոս իւր գեղեցիկ ուժով գրած պատմական աշխատութիւնների համար։ «Ցիշովութիւններ աղմիրալի», «Ծովալին պատերազմները հանրապետութեան և կայսերութեան օրերով», «Նախկին նաւատորմիզը», «Ներկայ նաւատորմիզը», «XV և XVI դարերի նաւագնացները», «Հանապարհորդութիւն դէպի Զինատան»։

— Հանգուցեալ ազմիրալ Պրաւիերի տեղը ակադեմիկոս է ընտրել պրոֆեսոր էրնեստ Լաւիսը, մի շատ չարգւած անձնաւորութիւն, որ չափնի է ֆրանսիական գրականութեան մէջ իւր աշխատութիւններով վերաբերեալ Պերմանիայի։

Բելգիայի համալսարանականներից մի քանիսը զիմել էլն Լավսովին մի քանի տող խնդիրելով իրանց մի հաստարակութեան համար։

Ահա մի քաղւածք նրա նամակ պատասխանից։

Բելգիայի համալսարանականներ, զուք իրաւոնք ունիք հավարուանալու ձեր հայրենիքով։ Մեծ նշանակութիւն ունի ապրել և այն էլ ձեզ նման լաւ ապրել, սակաւն ազգերի համար անհրաժեշտ է սովորական առողջաւ խնդիրներից բարձր խնդիրներով ապրել որպէս զի այլ ազգերի

ողին չը մարի՛: Ներկալումս հարկ չը կաէ ալլ ևս եւրոպական ազգերին զիմել դէպի խաչակիր արշաւանքներ, սպատրասուել ձեր ազատութեան համար կամ ձեռք բերել ձեր անկախութիւնը: Բայց մեր դարը ամելի բարձր նպատակներ ունի կատարելու, քան անցեալ դարերը: Երկու խնդիրներ հրամաքարար ներկալում են մեր քաղաքակրթութեանը և այս վերջինը պէտք է նրանց լուծի կամ ինքը ոչնչանաց, դոքա են ընկերվարական ճշմարտութեան խնդիրը և միջազգակին ճշմարտութեան խնդիրը: Եւ ջանէլ երիտասարդները կը նմանւէին փոքրիկ երեխաներին եթէ սահմանափակուէին միան իրանց մասնագիտութիւնների ձեռք բերելում և նորից չ'աշխատէին լուծելու ալս մեծ խնդիրները: Սփենքոը երկար չի սպասելու:

—Ով որ շատ թէ քիչ ծանօթ է Պարիզի ժաղբական սպատկերազարդ թերթերին—նա անշուշտ պիտի ճանաչի և Ալֆրէդ Գրեւենին (Grévin):

Կարելի է համարձակութեամբ պնդել որ նա համբաւաւոր էր և տիեզերական հռչակ էր վայելում:

Պարիզի բազմահարուստ կեանքը նրա երգիծաբան գրչին մատակարարում էր անսպառ նիւթի. նա ծաղրում էր ամեն մի անհեթեթ երեսի և ամեն մի անձնաւորութիւն՝ լինի դա գատաստանական թէ զինուրական, զրամատիրական թէ կղերական, լրադրական թէ գիտնական, թատրոնական թէ փողոցակին աշխարհներից:

Հանրածանօթ են նրա պատկերացրած սպարիզուհիները: Իրաւ է մը տեսակ միաձեռութիւն էր երեսում ալդ նկարների մէջ—բայց թէ անհնարին է 32 տարի նկարել միենոցն արագարը և միշտ առանձնաշատիւթիւններ մտցնել: Գրեւենի Պարիզուհին միշտ ալսպէս է նկարւած. պճնւած և կալառառ, երկան բարակ կազմւածքով, սրատես կամ ձ լ'օշի prompt ըստ ֆրանսերէնի, վեր ցցւած քթով, համարձակ,—մի տիպար, որ կարծես թէ արկած է պտուում:

1860 թից սկսած արդէն Գրեւենը անուն էր հանել: 1867 թ. «Յարիւարի» ծաղրական թերթում նա ունի մի շարք պատկերներ: Դոցա թւում էր և մէկը, որը ալսպէս է պատկերացնում Մոդան—լոկ շատիկ հաղած մի կին—և ստորագրւած—«Մի հատ մոդան, որ երբէք չի փոխւած»:

Պարիզում եղածները անշուշտ լիշում են նաև Musée Grévin'ը. դա Գրեւենի մուգէսնն է. բայց ոչ հնացած կարգով պահաւողը: Խւր մուգէսում—Գրեւենը միշտ նորութիւն էր մտցնում, մոմից թափած «օրւակ ամեն մի հերոսը» մագնիսի դեր էր կատարում ալդ մուզէում: Դիցուք մէկը ընտրում է ակադեմիկոս—երկու օրից լիտ նրա մոմից թափած արձանը կամ կիսարձանը Գրեւենի մուգէսում կը տեսնէիք: Մի ոչնչական, մի Ռաւաշոլ մի ոճիր է զործում—և խալուն նրա կենդանի արձանը Գրեւենի մուգէսում կը գտնէք:

Նա վախճանմաց չարչարանքների մէջ՝ ոսների և ողնաշարի հիւանդութիւնից՝ անկարող իւր անկողնում շարժւելու:

Ֆրանսիացու ճաշակի նրբութեան վերին առտիճանը ձեռք ձեռքի տւած վաէկչութեան հետ—բնորոշում էին այդ տաղանդաւոր գրիչը: Ֆրանսիացու ուրախ սրախօսութիւնը զուգընթաց էր նրանում ֆրանսիական լաւատեսութեան հետ:

—Մայս ամիսը լավոնի է իրքմ պատկերահանդէսների ամիս: Մինչդեռ ամբողջ կողասը ի ցոց էր դրել Թիֆլիսի «Փառաց Տաճարում» մի քանի առանեակ իւղաներկ պատկերներ—Պարիզի ցուցահանդէսներինը համում է հազարների: Կրիտիկոսները դանդատում են պատկերների քան ակութիւնից և որակութիւնից:

Բացի հոչակաւոր «Ելիսեան զաշտերի» ցուցահանդէսից, «Մարսի<sup>1)</sup> դաշտի» ցուցահանդէսից, բացի մասնաւոր մանր ցուցահանդէսներից, Պարիզը ունի նաև մինը «Ազատամիտը» Արևատների Պալատում և մի ուրիշը Ազատամիտ Միութեանը (Union libérale), ուր ընդունում են միւս սալոններում մերժած պատկերները:

Ելիսեան զաշտերի պատկերահանդիսում աչքի է ընկնում իրք հետաքրքրաշարժ մէկը Բենժամին Կոնստանի՝ «Պարիզը—տիեզերքը հրաւիրելիս մասնակցելու իւր տօնմերին»: Այս պատկերը աչք է զարնում իւր թունդ գեղին, կապուտ և մանիչակագոյն գովներով:

Յիշատակելու արժանի են Դետալի (Détail) պատերազմանկարները, նաև Բոննայի (Bonnat) ձեռքով կատարւած Ռենանի պատկերը:

Մարսի դաշտում աչքի են ընկնում Բուվի de Chavanne'ի «Չմեռը», Բենառի (Besnard) մի քանի պատկերները և հոչակող ամերիկացի Whistler'ի մի քանի նկարները, ի դէպ՝ չատ հետաքրքրաշարժ են այս նկարչի վերնագրերը, օրինակի համար—«Կապուտ և ոսկեգոյն գիշերաժամին (Nocturne)—Վենետիկի սրբ. Մարկոս Եկեղեցին, մոխրագոյն և ոսկեգոյն գիշերաժամին, Chelsea'ի ձիւնը, մոխրագոյն և կանաչագոյն—ովկիանոսը, մթնագոյնի և վարդագոյնի ներգաշնակութիւն—Լեղի Neux'ի պատկերը և այլն:

—Նուվել Ռեվիւկ ամսագիրը մի շարք լոգւածներ նւիրելով այդ ցուհանդէսներին լիշտատակում է նաև այլ Զախարեանի վեց nature morte պատկերները: Տիկին Ժիւլիետ Ադամի խմբագրութեամբ հրատարակող ամսագիրը<sup>2)</sup> (որի քաղաքական տեսութիւնը ի դէպս ասած՝ վարում է ինքը տիկին Աղամը) ունի, ի թիւս այլ բաժինների, նաև մէկը Carnet Mondain, ստորագրւած Berthe de Presilly (Բերթա դը Պրեսիլի), որի

<sup>1)</sup> Champ de Mars.

<sup>2)</sup> Nouvelle Revue=նոր տեսութիւն.

մէջ վշասակւում է ամսւաչ ընթացքում տեղի ունեցած կոնցերտները, երեկոթները, նշանաւոր պսակադրութիւնները, հարսանիքները, թաղումները—մի խօսքով բարձր շրջանների կեանքի արձանագրութիւնները:

Սակայն հետաքրքրականն ը հետևեալն է՝ տիկին՝ Բերթա՞ն ամեն անգամ խորհուղաներ է տալիս իրը չաւելւած գրութեան՝ օրինակի համար—ընքերը խիտ դարձնելու համար պէտք է գործ ածել աւս ինչ միջոցը, որ գանուում է այս ինչ պարֆիւմիստի մօտ, փաղոց աս ինչ (Parfumerie Mison, 31 Rue du Quatre septembre): Մի ուրիշ անգամ՝ ամառաւակ սկզբին նա լանձնարարում է իւր ընթերցողուհիներին գործ ածել պուղրա, սապան, աւելացնելով՝ «որոնք հնարաւած են եղել XIX դարի վերջում Delgiorno վարդապետի ձեռքով էլուն պապի համար և որոնք աչմու լատով սեփականութիւն են դառել այս ինչ պարֆիւմերի» (Parfumerie efoisiqne 35 Rue du Quatre septembre):

---

—«Խաղաղութեան դաշնակցութիւնը» առաջ գնալով զօրեղանում է, նւէցարիակում՝ Մոլիենքերգի նախաձեռնութեամբ նոր ճիւղ է սաեղծմէլ, որ աշխատելու է նպատակ ընկերութեան նպատակին՝ երեխանների խւլացի կրթութեամբ խաղաղասիրական հոգով:

Ազդ ճիւղը ունի Սեն Գալլեն քաղաքում մօտ հարիւր անդամ: Մայիս ամսից սկսած Միւլհաուպեն քաղաքում մի ամսաթերթ է հրատարակւում «Revue de XX siècle» (XX դարի տեսութիւն), որ լուսաբանում է ժամանակակից դէպքերը խաղաղասիրութեան տեսակէտից: Նոյն նպատակին է ծառայում և ա. Բերթա Սուտների Վիենապի ամսաթերթը՝ «Die Waffen nieder»<sup>1)</sup>:

Ֆիլադելֆիակի «Universal Peace Union’ը» (Համաշխարհակին խաղաղութեան Միութիւն) վճռել է մի «Խաղաղութեան Տաճար» կառուցանել:

Խոտալիակում հակապատերազմական այս գաղափարի համար կազմւած են մօտ 30 ընկերութիւններ:

Նոյնպիսի ընկերութիւններ կան Պորտուգալիակում, Սպանիակում, Ֆրանսիակում, ուր «Parti National» թերթը ամեն օր տեղեկութիւններ է հաղորդում հակապատերազմական գաղափարի չաղթութեան վերաբերեալ: Երկու համաժողով տեղի պիտի ունենան օգոստոս 21—30:

---

<sup>1)</sup> Տիկին Բերթա Սուտները ունի լուս ընծառած մի ռոման, որ կրում է գոյն ազդ ամսադրի աղմուկ հանած հակապատերազմական վերապիրը՝ «Զէնքերը վաց»:

—Ներկայ մավիս 24. անդիմական Վիկտորիա թագուհու ծննդեան տարեդարձն էր: Ազդ օրը լրացաւ թագուհու 73 ամեակը: Դանեմարկակի քրիստիան Խ-ից լետու թագուհին ծերագոյնն է իշխող թագակիր անձերից:

Ահա 55 տարին է լրանում աճն օրից, երբ Վիկտորիա թագուհին բազմել է անդիմական գաճի վրա: Տօնախմբութիւնը տեղի ունեցաւ սովորականի պէս շատ շքեղ: Մի գորահանդէս տեղի ունեցաւ Սևն-Զեմս հրապարակի վրա:

—Լուսունի «Լեզվագիտական Ընկերութիւնը» նշանակել է իւր կողմից ներկաչացուցիչներ լուսունում կամանալիք «Արևելագէտների ժողովն» պէտք: Մորիսին և «Մուրճ»-ի ընթերցողներին լաւ ծանօթ հաւագէտ պրոֆ. Գ. Ա. Շոռումփ'ին:

—Պ. Stead-ը իւր «Index to the periodicals of the world»<sup>1)</sup> հրատարակութեան մէջ մանրանման տեղեկութիւններ է հազորդում նաև հաջամագիրների մասին, աճն է նաև «Մուրճ»-ի, «Արարատ»-ի, ասլա «Արաքս»-ի «Աղբիւր»-ի «Արևելեան Մամուլի», «Բազմավէպի», «Հանդէս Ամսօրեալի», «Ծաղկի» և «Քիւրակնի»:

—Անդիմականների սիրած զւարճութիւններից մէկն է ձիարշաներին մասնակցելը և ներկայ լինելը: Սպորտը խսկապէս անդիմական ծագումի է և հէնց ալդ պատճառով է որ ալդ բառը, ձիարշաւի խմասով, ընդունմել է բոլոր եւրոպական աղգելից: Զիազահութիւնը ոչ մի տեղ աճն աստիճանի չի հասցրած ինչպէս Անգլիայում, և Ֆրանսիայի ձիերը շատ քիչ է պատճառում, որ կարողանան լաղթել անդիմականներին: Ինչ և է անդիմականները միծ ուշք են զարձնում աճն ձիւղի վրա և 1780 թւականից սկսած հիմնագրի անունով ամեն տարի տեղի են ունենում Դերբի կոչւած ձիարշաները:

Սովորականի պէս աճդ ձիարշաւը տեղի ունեցաւ լունիսի մէկին Եպսոմ՝ում (Երզօմ): Ազդ օրւաւ արշաւի համար թուլատրում էին ձիեր երկու սեռից էլ երեք տարեկանի թէ լովտակներ<sup>2)</sup> և թէ մատակներ<sup>3)</sup>: Առաջինների քաշը պիտի լինի 9 stones<sup>4)</sup> (ստոն), իսկ վերջիններինը 8 ստոն և 9 ֆունտ: Անցնելու տարածութիւնը =  $1\frac{1}{2}$  անդիմական մղոն: Ցաղթող ձին վաստակում է ոչ պակաս քան 5000 ֆունտ ստերլինգ (մօտ 50 հազար ուռեբլի), իսկ երեկոն էլ աւելի:

Աճս տարի լաղթող հանդիսացաւ մի գրեթէ անչափ ձի, որի վրա հազարից 25 էին լուս դնում և դրա համեմատ էլ զրագ գալիս:

<sup>1)</sup> «Յանկ աշխարհիս բոլոր պարբերական թերթերին»:

<sup>2)</sup> Ջերեբոյք,

<sup>3)</sup> Կօբիլա:

<sup>4)</sup> Ստոնը = 6 քիլո և 35 գրամ:

Այդ ձիու անունն է «Sir Hugo» (պարոն Հիւգօ), որ իւր մարմինի մասով միայն աւելի շուտ տեղ հասաւ քան իւր հակառակորդ մատակը «Նես» անունով:

Նոյն լիշևալ դուքս Դերբին 1779 թ. հիմք էր զրել մի ուրիշ «Լազ-Նիների»<sup>1)</sup> ձիարշաւին, որ միշտ տեղի է ունենում նոյն էպոսում առաջին ձիարշաւի լաջորդ օրը և որին մասնակցում են միմիայն ճակեները, նմանապէս երեք տարեկան ունեցողները: Այս անգամ լաղթող հանդիսացաւ վերսիչեալ «Նետը», որ միայն իւր գլխով կանխեց իւր հակառակորդունուն:

Պէտք է ասած որ ձիարշաւի այդ օրերը առհասարակ տօն օրեր են բոլոր անդիմայիների համար, իսկ երկրորդ օրւակ ձիարշաւը, որ «Գամերի ձիարշաւ է կոչում—հաւանականորին—տեղի դեղեցիկ սեռին է գրաւու մ

Մի ուրիշ բուն անդիմական գւարծութիւնն, զա՝ կրիկետ խաղն է այս տարի սա ամելի ևս տարածւած է քան նախորդ տարիները և լրագիրների ասելով Լոնդոնի լրջակալքում հազար աւոր երիտասարդներ չարմար տեղ չեն գտնում այդ աղդակին խաղը խաղալու համար:

—Լոնդոնի բարձր հասարակութեան լրջանը միջոց է գտել կառավարելու առանց պարել չը սիրող երիտասարդների: Ընտանեկան երեկոլթներին—մողա են դցում բալետը—այնպէս որ պոլկա, վալս պարերից չեսոց հմուտ մէկը—կին թէ տղամարդ սկսում է բալետ պարել ցուց տալով իւր հունարները: Այս մողան գուցէ հաստատի, քանի որ արդէն բալետի դասեր առնողներ կան:

—Նիրկու տարի սրանից առաջ մեծ թշւառութիւն և ազմուկ հանեց Բարինսկ սեղանաւորների մնանկութիւնը: Նորերս՝ մի նման օրինակ խոչոր դէպք տեղի ունեցաւ, զա է Միւրիետա (Murietta հանգ) բանկի մնանքութիւնը, որ առևտրական չարաքերութիւններ ունիք Արգենտինեան հանրապետութեան հետ: Միւրիետապահի կահ-կարասիքը աճուրդով ծախւեց և միայն զարմանալ պէտք է թէ ինչ գների հասան թէ սրա ծախունած մի քանի պատկերները և թէ հանգուցեալ լորդ Cheylesmore'ի: Սհովակի թագաւոր—պատկեր Zandseer'ի հասաւ 7245 ֆունտ ստերլինգի! Միւրիչները չը հասան այդ գնին, ալսպէս—մի Տաղեմա ծախւեց 1000 ֆ. ստ., մի Կոկս 4725 ֆ. ստ., մի Ստանֆիլդ 3150 ֆ. ստ.:

Միւրիետապահի պատկերների ժողովածուի աճուրդից գուացաւ 50.000 ֆ. ստերլինգ, իսկ լորդինը տւաւ 30.000 ֆ. ս. Մեր հաչ նկարիչներից միայն Ալմազովսկին հասկացողութիւնն ունի այդ զներից, իսկ միւսները դեռ շատ պիսի աշխատեն որ հռչակւեն:

—Անդիմական պարլամենտի նոր ընտրած 670 անդամներից 669 հոգի հետեւալ կերպով ևս բաժանւում: 21 հոգի ըսնկիրներ, 143 փաստա-

<sup>1)</sup> Այդ անունն էր կրում դուքս Դերբե'ի Woodmetnster'ում դըտնող ամարանոցը:

բաններ, 18 դարելջրատէրեր, 1 ճարտարապետ, 1 կապալառու, 15 հանգագործարաններ, 8 դիւնադէսներ, 9 ինժենէրներ, 6 կալածքների կառավարիչներ, 10 հողագործներ, 83 խոշոր հողատէրեր, 10 երկաթագործական վաճառականներ, 15 ներկազայտչներ մշակների կողմից, 57 մանուռֆակտուրիստներ, 10 բժիշկներ, 53 վաճառականներ, 1 նախկին հողերական, 35 հրատարակիչներ և գրողներ, 34 բանաստեղծների ելքալրներ և որդիք, 18 պարագ անձինք, 19 նաւատէրեր, 21 երգեւալ հաւատարիմատարներ, 4 միջնորդ, 9 պրոֆեսորներ, 13 հողի զանազան զլաղմունքներով, 20 կապիտաններ, 4 գնդապետներ, 3 գններալ լեյտենանտներ, 8 փոխգնդապետներ, 10 պրոռչիկներ, 1 գեներալ մայոր, 4 մայոր, 2 կապիտաններ առաջն կարգի և մի փոխ պղմիրալ:

Պահպանողական կուռակցութիւններին ուներ մեծամասնութիւն 114 անդամների ստացած վիճակ 60,000 առաւել ձաշներ: Ներկայ աղատամիտ կուռակցութիւնը առաւելութիւն ունի 40 անդամ—սակայն առաւել ձաշների թիւը է 130,000:

Անդիմական պարլամենտի վերջին ընտրութիւնների ժամանակ-ընտրութիւնների-որոնք վերջացան ալեզարդ Գլազուռոնի աղջութեամբ թիւելու կողմնակիցների թվու փոքր առաւելութեամբ (մօտ 40) ընդդէմ պահպանողական Սոլսբիւրիի նախարարութեան—ընտրուցաւ նաև մի սեամորթ հնդիկ՝ Նաորօջի անունով: Այ առաջին անգամն է որ մի սեամորթ բազմած կը վիճի անդիմական պարլամենտում և առաջին անգամն է որ մի սեամորթ առիթ կունենալ անդիմական պարլամենտում խօսելու ի դիմաց ամբողջ Հնդկաստանի: (Ասում են որ հնդիկ Ֆինոքուրիի նորընտիր պատգամաւորը վաղուց է ինչ որ աշխատում էր ընտրուել պատգամաւոր—բայց միշտ անկանող: Այս հանգամանքը առիթ էր աւել լորդ-Սոլսբիւրիին իւր ձառերից մինում ծաղրավ լիչել «սեամորթու մշտենջենական պատգամաւորութիւնը»: Այդ ծաղրը օդնեց Նաորօջիին, որին ի դէպ ասած լրադիրները անւանում են ոչ ազ կերպ քան «Սոլսբիւրիի սե մարզը»:

Նաորիջին առաջ վաճառական էր, ակմ անա քանի տարի է որ նաթողել է ացդ զբաղմունքը և ապրում Հնդկաստանում ինայան թէ չէ Նաորիջի ընտրելը մօտ 300,000 ռ. հանգանակեցին և ուղարկեցին նոր ընտրեալ հնդիկ պատգամաւորին—սրա կարգադրութեան տակթողնելով լիշեալ գումարի գործածութիւնը:

Դադաւխաւ Նաորօջին ծնմալ է 1825 թ. Բոմբէ՛ քաղաքում: Էլֆինստոնի ճեմարանում աւարտեց մեծ լաջողութեամբ: Իւր վարժապետի մահից վետու վարեց մաթեմատիկալի ամբիոնը: 1851 թ. հիմնեց մի ամսագիր: 1869 վերագրձաւ Նոնդոնից Հնդկաստան հիմնեց «Հնդկաստանի ընկերութիւնը»: Նրա հախատեառութեամբ է որ ամեն տարի գումարուում են հնդկական կոնդրեններ: 1886 թ. պատգամաւոր չընտրուց Հոլբորնից:

—Գրադարանների տեսակներից վազուց լազմի են մեծ մասմբ հռչակաւոր պետական և մասնադիտական գրադարանները։ Դոցավիքական նոր ժամանակներում աւելացել են ժողովրդական գրադարանները։ Ժողովրդի ան մասին, որ չի կարող հասարակաց մեծ գրադարանների գրքերից օգուտ քաղել, նոքա դրդում են, զարթացնում, ոդով բարձրացնում և ուսուցանում, որով և լրացնում են ժողովրդական ուսումնարանները։ Նոցա բարերար ազդեցութիւնը ամենից լաւ ապացուցում է այն արագութիւնավ, որով նոքա ծաւալում են, հենց որ նոքա մի տեղ հաստատ արմատ են բռնում, և այն զոհարեւութիւններով, որ անում է նոցա համար ժողովրդը Ազգ կողմից ամենից հեռուն են գնացել Անդլիան և Ամերիկան, ուր, մանաւանդ վերջինում, գրադարաննական գործը հսկակական քաղեր է արել՝ Եւրոպակից զերազանցելու չափ։ Թւերը ամելի պերճախոս են։ 1825—1850 թւականների ժամանակամիջոցում, ուրեմն 25 տարում ձևախավին Ամերիկայի Միացեալ Նահանգներում հիմնւեցին ընդամենը 550 գրադարաններ, 1850—75 նոյնպէս 25 ամեակ միջոցում արդէն հիմնւեցին 2240 գրադարաններ, իսկ 1885-ին ընդամենը զուտթիւն ունիին չ340 հասարակաց գրադարաններ 20 միլլիոն հասոր գրքերով։ Վերջին տասնեակ տարիներում համանաքնները այնքան մեծ միջոցներ տեմն և հարուստները այնքան մեծ կտակներ թողին, որ ամերիկակական քաղաքներից շատերը, օրինակ, Գրեմանիայի քաղաքներից շատ գերազանցել են։ Օրինակ Վիեննայի Արքունական և համալսարական գրադարաններում հասորների թիւը դեռ այնքան էլ չէ, որքան այդ քաղաքի բնակչիների թիւն է, մինչդեռ Բոստոնի Հասարակաց գրադարանինը (Public Library) և Աթեննէումինը երկու անգամ աւելի է։ Նաև օգտեհլու կողմից ամերիկական գրադարանները աւելի առաջ են։ Նիու-Յորկիը օրինակ, իւր չորս մեծ գրադարաններում ունի կէս միլլիոն հասոր, որոնցից օգտեհլ են անցեալ տարի մի միլլիոն անգամ, որոնցից 400,000-ը բաժին էր ընկնում Օտտաննորդիէր և այլ գորեղ նպաստողներից հիմնւած ժողովրդական գրադարանների վերաբ։ Զիկագօի (որ 1850-ին դեռ մի փոքրիկ դաստոական քաղաք էր, բաց որը 1890-ին արդէն մի միլիոն բնակիչ ունէր) ժողովրդական երկու գրադարաններից օգտեհլ են  $1\frac{1}{2}$  միլլիոն անգամ։ Ամերիկական և Անգլիական գրադարաններում մի գիրք մի տարում անցնում է 3—6 ձեռքեր, Վիեննացում 6, երրեմն միայն 10—12 ձեռք։ Միանգամ օգտեհլը ամերիկական գրադարաններում նըստում է սոկի վաղովի հաշւում՝ 11 կոպէկ, անգլիականներում՝ մոտ 6 կոպէկ, Պարիզում, Բերլինում, Վիեննացում՝  $1\frac{1}{3}$ —3 կոպէկ։ Խոչ վերաբերում է ընթերցանութեան նիւթին, զարմանալի համաձանութիւն կազ գերմանական, անգլիական և ամերիկական գրադարանների զեկուցումների մէջ։ այդ զեկուցումներից երեսում է որ կարդացւած գրքերից 70 մինչ 80%<sub>0</sub>

պատկանում են «Գրականութիւն, տաեղծաբանութիւն (Փիկցիա) և երիտասարդական գրքեր» գրուպպալին, մօտ  $10\%$  պատմութեան, կենսագրութեան և ճանապարհորդութիւններին,  $5\%$  բնական գիտութիւններին, արդիւնագործութեան և տեխնիկակին: Նոյն իսկ Անգլիակում և Ամերիկակում կրօնական գրքեր կարդացում են  $0,6\% - 0,9\%$ : Բերլինում կարդացած գրքերից աստւածաբանականը կազմում է  $1\frac{1}{4}\%$ , փիլոսոփիակութիւնը  $1\frac{1}{4}\%$ , լուսական և լատինական կլասիկները  $1\frac{1}{2}\%$ :

0.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւնները Անդլիայում և Գլաղատոնի մինիստրութեան կազմը:—Մահմանագրութեան վերափոխումը Բեղդիացում, թագաւորական ռեֆերենցումը:—Բրիտանիայի Հակա-գերեվաճառական և հակա-սորմական գլխաւոր ակտը:—Բիսմարկի ճառը Ենացում:—Պապ Լէօ XIII և եռոպական դաշնակցութիւնները:—Մտամբուլով Պոլսում:

Պարլամենտական ընտրութիւնները Անդլիայում, որ կատարեցին յուլիս ամսում, վերջացան, որպէս սպասելի էր և ցանկալի՝ յօգուտ Գլաղատոննեան ազատամիտ կուսակցութեան: Գլաղատոնի կարդացած յորդորը իւր ընտրողական վիճակում՝ Միջլոթիան՝ում (Շոտլանդիա) իւր ամենաէական կէտերում մենք հաղորդեցինք ընթերցողներին մեր անցեալ տեսութեան մէջ: Այդ ընտրողական մանիֆէստից սարգ երեաց, որ անդլիական ազատամիտ կուսակցութեան սպարազլուխը ցանկանում էր, որ ընտրողները իրանց ձացները յօգուտ ազատամիտներին կա: Մասնաւողականներին տալուս՝ զեկավարւէին ամենից առաջ նրանով՝ ցանկանում են նոքա Խրլանդիացին ինքնավարութիւն (Հոմ-ռուլ) տալ թէ ոչ: Այսպիսով հոմ-ռուլի ինդիրը Գլաղատոնը առաջին գծի վերաց էր դրել. մինչդեռ սպանավանողականները աշխատեցին ընտրողների համակրութիւնը իրանց կողմը դրաւել՝ ընդդիմանալով իրլանդական հոմ-ռուլին և խոստանալով զբաղւել այլ ներքին ինդիրներով և մասնաւորապէս ինդիրներով վերաբերեալ բանւոր դասակարգին: Մասնաւորապէս բանւոր դասակարգի սպաշտանութեան վերաց պահպանականները յոյսեր էին դրել այն հիման վերաց, որ Գլաղատոննը, ընդունելով բանւորների կորպորացիաների ներկայացուցիչներին, յայտնել էր նրանց որ խոստաներ չի կարող տալ բանւորներին և

որ այն մի քանի տարիները որ իրան վիճակւած կը լինի անցկացնել այս աշխարհում (Գլազստոնը 83 տարեկան է), նա մոաղիք է իրանդական խնդրի լուծմանը նւիրել։ Եւ, չը նայած գորան, ընտրութիւններից յետոյ երեաց, որ բանտորները իբրև մի մարդ իրանց ձայնները տւել էին Գլազստոնի կուսակից պատգամաւորական թեկնածուներին, որոնց մէջ, ընտրւածներից կան ի հարկէ թէկւ թւովքիւ (9 հոգի) զուտ բանտորական պատգամաւորներ։

Անդլիական ոլարլամենտի անդամների թիւն է 669. գոյանից 355 հոգի ընտրւած են յօդուտ Գլազստոնի հոմ-ռուլական ծրագրի, 314-ը ընտրւած են հոմ-ռուլի հակառակորդներից։ Յօդուտ հոմ-ռուլի են բոլոր զուտ գլազստոնեան ազատամիտները, որոնց անդայման պարագլուխն է Գլազստոնը, ապա արմատական կուսակցութիւնը, որի պարագլուխն է Լաբուշերը, ապա 9 հոգի բանտորական ներկայացուցիչներ և 79 հոգի իրանդական պատգամաւորներ։ Իրանդիան ընդամենը ունի 103 ներկայացուցիչ անդլիական պարագամենտում, բայց այդ երկրի ազգաբնակութիւնը միայն  $\frac{3}{4}$ -ով իրանդացի է, իսկ մօտ  $\frac{1}{4}$ -ը՝ անդլիացի կամ շոտլանդացի լինելով՝ հակա-իրանդական զգացումներ ուներ և նորա մի մեծ մասը շարունակում է զեռ ունենալ. այդ ոչ իրանդական ազգաբնակութիւնը ներկայ պարլամենտի համար հետևապէս ընտրել է 24 պատգամաւորներ, որոնք հոմ-ռուլի ընդդէմ են։

Հոմ-ռուլի ընդդէմ ընտրւած են 314 հոգի, որոնք բաղկացած են երկու տարրերից. բուն պահպանողականներից, որոնց պարագլուխն է լորդ Սոլսբրի, և ազատամիտ-ունիոնիստներից, որոնց պարագլուխն է լորդ Հարդինդատոն։ Այս վերջինները, ինչ-պէս աւելի ընդարձակօրէն ընթերցողները պատմած կը դանեն սոյն համարում տպւող մի այլ յօդւածում, <sup>1)</sup> մինչ 1886 թւականը կազմում էին Գլազստոնի կուսակցութեանը, բայց բաժանեցին սարանից 1886-ին Գլազստոնից յայտարարած իրանդական հոմ-ռուլի պատճառով, կազմելով մի առանձին ազատամիտ կուսակցութիւն որը միայն է պահպանողականների հետ միմիայն իրանդական խնդրում։ Բայց հէնց գորա պատճառով Հարդինդատոնի ունիոնիստ-

<sup>1)</sup> Գաղափարի մի չաղթանակ Անդլիակում։

ազատամիտ կուսակցութիւնը, պաշտպանում էր պահպանողական մինչառութիւնը:

Նոր տօմարով Օգոստոսի 12 (հին տոմարով 31 յուլիսի) նոր պարլամենտը արդէն յայտնեց իւր անվտանութիւնը Սոլսբրիի մինչառութեան, որով վերջինս այդպիսով հարկադրւեց հրաժարական տալու:

Այդ առիթով պէտք է նկատել, որ Անդլիայում վերջին քառորդ դարում գրեթէ հաստատւած սովորութեան համաձայն, մի մինհստարութիւն որ ընդհանուր ընտրութիւններին պարտութիւն է կրում, հրաժարական է տալիս, այլ ևս չսպասելով պարլամենտի բացմանը, չսպասելով որ պարլամենտը իւր անվտանութիւնը յայտնի: Այդպէս վարւեց 1868-ին Նիզրահիլին (որ յետոյ լորդ օֆ Բիկոնսֆիլդ), այդ օրինակին հետեւեց Գլադստոնը 1874-ին, և այսպէս շարունակ նաև 1886-ին, երբ Գլադստոնը պարտութիւն կրելով՝ խորյն իւր հրաժարականը տւեց: Բայց Առաքը երևի հիմնելով այն հանգամանքի վերայ, որ Գլադստոննեան մեծամասնութիւնը միայն շուրջ 40 հոդի է, և թերեւս ցանկանալով այդ մեծամասնութեանը առիթ տալ արտայացուելու, խորյն չհեռացաւ պաշտօնից, այլ սպասեց պարլամենտական առաջին քւեին:

Խոդիրը այժմ այն է թէ պիտի կարողանայ արդեօք Գլադստոնը իրլարդական հոմանուլի մասին օրէնքը անցկացնել պարլամենտում թէ ոչ: Որ պատգամաւորների ժողովում զորա համար մեծամասնութիւն կայ, այդ արդէն անկասկած է: Բայց պարլամենտը բաղկացած է ոչ միայն պատգամաւորների ժողովից (Անդլիայում նա կոչում է Համայնքների ժողով Chambre of commons), այլ և լորդերի ժողովից: Հաստատ է որ լորդերի ժողովում համայնքների ժողովից ընդունւած իրանդական հոմանուլի բիլի համար մեծամասնութիւն չկայ, իսկ առանց լորդերի ժողովից ընդունւելու բիլը չի կարող ներկայացնել թագուհու առորագրութեանը. հետեւապէս նա օրէնքի զօրութիւն չի կարող ունենալ: Նատ կարելի է ուրեմն որ այս տարի Գլադստոնի մինհստարութեանը չի յաջողուի իրանդական հոմանուլի բիլը իրագործել: Համաձայն Գլադստոնի յայտարարութեան՝ եթէ այդպէս պատահի, նա գալ տարի նորից կը ներկայացնի իւր օրինագիծը: Եթէ նաև գալ տարի

Ճը յաջողւի, անկասկած է որ կ'սկսւի մի կռիւ համայնքների ժողովի և լորդերի պալատի մէջ, որ սակայն ծայրահեղութեան հասցնել չի վճռիլ լորդերի պալատը, քանի որ այժմեանից հոմառուի խնդիրը, մեր կարծիքով, վաստակած խնդիր պէտք է համարել, և նոյն իսկ վասնգի մէջ կը զնի իւր քաղաղական դոյտմիւնը, եթէ լորդերի պալատը շարունակ ընդդիմադրութիւն անելու լինի մի այդպիսի բէ՛փորմին:

Ընտրողական մանրամասնութիւններից մենք առաջ կը բերենք մի քանի կարևոր կամ հետաքրքրական կէտէր:

Գլագոտնը ինքը ընտրւել է Շոտլանդիալի Միլլոթիան վիճակում: Իւր պարլամենտական երկար կեանքի ընթացքում նու իւր ընտրողական վիճակները փոփոխել է մի քանի անդամ: ամենից սկզբում նա ընտրւում էր 0քսֆորդում, ասպա և անկաշիրում, յետոյ և ոնդոնի արւարձան Փրինչէ՛ում, իսկ 1880-ից դէս Շոտլանդիայի Միլլոթիան վիճակում: Այդ վիճակում ձայն տալու համար նշանակւած են 14 տեղեր, որոնցից երկուսը դժանւում են Եղինքուրդ քաղաքում (բայց ինքը Եղինքուրդը չի պատկանում այդ վիճակին):

1880-ին Գլագոտնը ստացել էր 1579 ձայն, իւր հակառակորդ էարլ օֆ Նելկէ՛թը՝ 1368 ձայն:

1885-ին (ընտրողական բեֆորմից յետոյ, որով ձայնառուների թիւը աւելացա) Գլագոտնը ստացաւ 7889 ձայն, հակառակորդը, սըր Զարլս Դալուիլլը՝ 3248 ձայն:

1886-ին Գլագոտնը իւր վիճակում հակառակորդ չունեցաւ: Ազատամիտ կուսակցութեան պատկանողներից և ընտրւածներիցն է այս անգամ նաև սըր Զարլս Դիլլը, որ վերջին տարիներս հեռացած էր քաղաքական ասպարիզից, կարծեմ անձնական պատճառներով: Այսպիսով Դիլլը, այս ամենահարուստ ընդունակութիւններով օժտւած մարդը, նորից վերադարձեց հասարակական կեանքին և ազատամիտ կուսակցութեանը:

Իրանդական պատգամաւորները, որպէս յայտնի է, հանգուցեալ Պարնելի կուի պատճառով Գլագոտնի հետ, որի հետեանքները տեսում են մինչ այսօր, բաժանւած են պարնելականների և հակասպարնելականների, որոնք սակայն լոլորն էլ իրանդական քաղաքական ծրագրի նկատմամբ մի են: Արդ այդ հակա-պարնելա-

կանների մէջ, որոնք թւով շատ աւելի են պարնէլականներից, ընտրւած է այս անգամ մի նշանաւոր մարդ, Եղուարդ Բլէկ, որ դորանով առաջին անգամ մոնում է անզիւական քաղաքական աստվարէզը: Բլէկը կանադացի է, երկար տարիներ նա պարագլուխ էր ազատամիտ կուսակցութեան կանադայում, ուր նա 31 տարեկան հասակում, թագաւորական խորհրդատուի կոչում ստացաւ. 1876-ին մտաւ կանադական պարլամէնտ, 1871—72 եղաւ առաջին մինիստր Օնտարիօ նահանգի, յետովւայ տարիներում դառաւ արդարադատութեան մինիստր և մինիստրութեան խորհրդի նախագահ:

Ընտրւածների մէջ է, նոյնպէս ազատամիտ կուսակցութեան պատկանող, Հնդկաստանի մի պարս՝ Պաղաբհարի Նաօրոջի, որ ուղարկւել է պարլամէնտ 1.մարտի Ֆինսբրի քաղաքամասի կողմից, միայն երկք ձայն առաւելութեամբ իւր հակառակորդի վերայ Քաղաքական առանձին նշանակութիւնից սակայն զուրկ է ացդ գէպքը:

Գլադստոնի կուսակցութեան ծրագրի մէջ, իրլանդական հոմոռուլից յետոյ այս անգամ նշանաւոր տեղ է բռնում խմիչքեղէն վաճառելու խնդիրը, մի հանգամանք որ մեծապէս պէտք է ազդած լինի ընտրութիւնների վերայ: Ազատամիտ կուսակցութիւնը պահանջում է որ խմիչքեղէն, այն է սպիրտ, արագ, գարեջուր խմելու տեղերը, որպէս են հիւրանոցները, դուխանները և այլն, այսուհետեւ բացւեն ամեն մի վիճակում միայն այնքան թւով, որքան այդ կ'որոշի ինքը տեղական միճակը և ոչ աւելի: Այդ է որ կոչում է local option: Թէև պահպանողական կուսակցութիւնը, որքան մեզ յացնի է, local option-ի գէմ չէ, բայց նա պահանջում է որ այժմեաց բուֆէտատէրերից նոքա, որոնք ապագայում, նոր օրէնքից յետոյ, կը մերժեն, փողով որոշ վարձատրութիւն ստանան. ազատամիտները դէմ են այդ վարձատրութեան:

Ենորհիւ այդ խնդրում բռնած արմատական դիրքին, ազատամիտ կուսակցութեան գէմ են գործել սպիրտի, գարեջրի գործարանների ակցիոներական զօրեղ ընկերութիւնները և բուֆէտատէրերը: Եւ արդէն Գլադստոնի կուսակցութեան մօտալուս յաղթութեան զզացմունքը, գեռ ևս ընտրութիւններից առաջ, վայր գցեց այդ ընկերութիւնների ակցիաների արժեքը:

Բայց ահա և Գլագուտնի մինիստրութիւնը. Գլագուտնի առաջին մինիստր (Նախագահ մինիստրութեան) և գանձարանի առաջին լորդ (Փինանսների մինիստր). լորդ Հերշել-լորդ կանցլէր-լորդ Կիմբերլէց—պետական քարտուղար Հնդկաստանի. լորդ Ռուբըրի—մինիստր արտաքին գործերի, լորդ Ռիպոն—մինիստր կոլոնիաների, Ասկուխտ (Asquith)—մինիստր ներքին գործերի, Բաններման—պատերազմական մինիստր, կոմս լորդ Սպենսեր—առաջին լորդ Տովային կառավարութեան (Տովային մինիստր), Զոն Մորլէյ—իրլանդական աւագ քարտուղար, լորդ Հակառն (Houghton)—փոխարքայ Հընդկաստանի. Մունիցիալա—առևտր. մինիստր, պոստը յանձնւած է՝ Արնոլդ Մորլէյին, դպրոցները՝ Ակադեմին:

Դոյցանից Ասկուխտը նա է, որ Սալսբրիի մինիստրութեան դէմ գրեց անվատահութեան առաջարկութիւնը: Նա դեռ միայն 40 տարեկան է. նա յայտնի է իբր շատ տեղեակ և տակուով մարդ, որին նոյն իսկ իւր հակամատողները մեծ ապազայ էին գուշակում: Զոն Մորլէյ յայտնի է իբրև Գլագուտնի մաներիմը և արդէն առաջ, Գլագուտնի մինիստրութեան ժամանակ, Իրլանդիայի աւագ քարտուղարն էր: Նա յայտնի է իբր արտասովոր բարեխիղճ մարդ: Կարեւոր անձնաւորութիւն է արտաքին գործերի մինիստր լորդ Ռողբըրի, որի մասին այս կարծիքը կայ որ ընդհանուր առմամբ նա հաւանում է Սոլսբրիի արտաքին քաղաքականութիւնը և որ հետևապէս նա քարեկամ կը մնայ միջին եւրոպայի եռամբնական դաշնակցութեան: Բայց առհասարակ Գլագուտնի մինիստրութիւնից սպասում են աւելի մեծ բարեկամութիւն դէսպի:

---

Իելզիայում, որպէս անցեալ ամսուայ տեսութեան մեջ պատմեցինք, նոր ընդհանուր ընտրութիւններ եղան յառկապէս երկրի սահմանադրութիւնը վերափոխելու համար: Իելզիայում սահմանադրութիւնը չի կարող վերափոխել սովորական պարլամենտի վճռով ու թագաւորի համաձայնութեամբ, այլ դորա համար պէտք է որ պարլամենտը ցրւի, նոր պարլամենտ կազմւի, որի գործը պէտք է մինի միայն սահմանադրութիւնը վերափննելը (այդ պատճառով այդպիսի ժողովը կոչում է սահմանադրող ժողով, Chambre constituante), որից յետոյ նա պէտք է ցրւի և ապա, նոր սահ-

մանադրութեան հիման վերայ, նոր ընտրութիւններ կառարւեն պատգամաւորների ժողովի համար: Այսպէս չէ Անդլիայում, Ֆրանսիայում և այլն: Օրինակի համար այն, ինչ այժմ մտադիր է անելու Գլադատոնի մինիստրութիւնը, ոչ թէ մի սովորական գործ է, այլ անդլիական սահմանադրութեան փոփոխութիւն է: Սահմանադրութիւնը փոփոխող մի օրինագիծ Անդլիայում ներկայացնում է սովորական պարլամենտին, ինչպէս և ամեն մի ուրիշ օրինագիծ, մինչդեռ Բելգիայի սահմանադրութեան համաձայն՝ սահմանադրութիւնը կարող է փոխւել միմիացն յատկապէս զորա համար ընտրւած պատգամաւորների ժողովով: Ֆրանսիայում սահմանադրութիւնը փոփոխելու համար պարլամենտի երկու ժողովները՝ պատգամաւորների ժողովը և սենատը զումարում են միասին և կազմում միմիակ ժողով, որ կոչւում է կոնգրես, ուր ձայների առաւելութեամբ վճռուում է խնդիրը: Հետեւապէս Ֆրանսիայում յատկապէս և միմիացն սահմանադրութիւնը փոփոխելու համար նոր ընտրութիւններ չեն լինում և ոչ էլ սովորական օրէնքների պէս է կառարւում սահմանադրութեան փոփոխութիւնը:

Ընտրողական օրէնքը փոփոխելը այժմեայ սահմանադրող ժողովի առաջուց որոշած գործերից մէկն է. բայց մի բան, որ նոր է, այդ թագաւորական ռեֆերենցումն է, որի մասին Բելգիայի թագաւորը ինքն է առաջարկութիւն անում սահմանադրող ժողովին:

Ուեֆերենդումը ազգին զիմելն է: Եթէ մի որևէ շատ կարեւոր լինդի համար օրէնք է տրւում սովորական ձեռվ (պարլամենտի ու թագաւորի կամ առհասարակ պետութեան պետի համաձայնսւթեամբ), բայց օրէնք գարձնելու համար հարկ է դատաւում որ այդ օրէնքը ենթարկեի ազգի լնդունելութեանը կամ ոչ լնդունելութեանը, այդ նշանակում է զիմել ռեֆերենդումի: Այսպիսի բան կայ միմիացն Շվեյցարիայում: «Ուեֆերենդումը, ասում է Հիլտի (Hilty) իւր «Ուեֆերենդումը շւեյցարական պետական իրաւունքի համաձայն» աշխատութեան մէջ, <sup>1)</sup> ռեֆերենդումը այն սահմանա-

<sup>1)</sup> Hiity.—Das Referendum im schweizerischen, Staatsrecht (Archiv für öffentliches Recht, հատոր II, էջ 167 և շարունակութիւն).

դրական կարգն է, որը սպարտաւորացնում է կամ յայտնի սպազման-ներում թոյլ է տալիս որ ներկայացուցչական մարմինների (կան-տոնների) մեծ խորհուրդների կամ շւեցարական միութեան ժողովի) վճիռները ներկայացւեն ձայնատու քաղաքացիների լնողամնրու-թեանը՝ ընդունել կամ չընդունել տալու համար:

Ահա մի այսպիսի կորդ Բելզիայի թագաւորը ուզում է մացրւած լինի բելզիական սահմանադրութեան մէջ, այն զանազանութեամբ սակայն, որ ուեֆերենգումին դիմելու իրաւունքը միայն թագաւորին պատկանի, և երկրորդ, որ թագաւորը ոչ թէ պարտաւորւած լինի ուեֆերենգումին դիմելու, այլ միայն իրաւունք լինի նրան արւած այլ անելու, հետևապէս որ գորանից օգուտ քաղելլ ամբողջապէս իրա կամքից լինի կախւած:

Պէտք է ասած որ ռեֆերենդումի խնդիրը քննելը սահմանադրող ժողովում արդէն մերժեց նախկին պարլամենտի կողմից՝ բայց այժմ ինքը թագաւորն է այդ առաջարկութեամբ զիմողը, և ովէտք է ենթադրել, որ եթէ ռեֆերենդումի խնդիրը բաւարար լուծումն էլ ստանալու շինի, այսուամենայնիւ նա պէտք է զբաղեցնի սահմանադրող ժողովին:

Բելգիական թագաւորական ռեփերենտումի ինսդիրը ունի ոչ  
միայն տեղական, այլ և ընդհանուր նշանակութիւն: Ինչու մի թա-  
գաւոր, որին իրաւունք է տրւած պարլամենտից ընդունւած մի  
օրինագիծ ընդունել կամ ըլնդունելը, ինքնէ ուզում որ նրան իրա-  
ւունք տրւած լինի իւր որոշումից առաջ՝ ազգին ուղղակի դիմել  
և ալդ օրէնքի մասին ձայներ հաւաքել:

Ճիշդ է որ Քելզիական այժմեան առաջարկը շատ տարբեր ւում է շւէյցարական ռեվերենդումից. այստեղ ռեվերենդումը սահմանափակում է ներկայացուցչական մարմինների և երկրի բարձրագոյն իշխանութիւնների իրաւունքները օրէնքներ տալու գուծում, ձայնը տալով նոյն խակ ազդին. իսկ Քելզիական առաջարկութեան համաձայն՝ ռեվերենդումը թագաւորի կամքիցն է կախած գործադրել թէ չգործազրել և կամ համակերպւել թէ չհամակերպւել ազդի մեծամասնութեան, քանի որ այստեղ ռեվերենդումը խորհրդատու և ոչ վճռող է հանդիսանում: Զնայած դորան, սակայն, սլովով է որ ռեվերենդումը բարոյապէս սահմանափակում է թագա-

ւորի իշխանութիւնը, քանի որ չօգտւել ուժվերենդումից և կամ չը համակերպւել ուժվերենդումին՝ վտանգներ կ'առաջացնի թագաւորական տոհմի համար:

Կրկնում ենք՝ ինչո՞ւ Բելգիայում ծաղում է ուժվերենդումի խնդիրը և թագաւորը մամ դէմ է ուղում պաշտպանւել ուժվերենդումով:

Պէտք է կարծել որ ուժվերենդումը պէտք է ծառացի պարլամենտարիզմի թերութիւնները ուղղելու համար: Ճիշտ է, պարլամենտը նոյն այն ազգի ներկայացուցիչների ժողովն է, որին զիմում են ուժվերենդումնվ, բայց անհերքելի է, որ պարլամենտները այնպէս ինչպէս նոքա գոյութիւն ունեն, միշտ և ամեն խնդիրներում չեն ներկայացնում ազգի մէծամասնութեան կարծիքը: Պարլամենտները ընտրում են սովորաբար 4 տարով. իսկ այդ ժամանակամիջոցում ծալում են այնպիսի խնդիրներ, որոնց մասին հետեւապէս ազգը կարծիք չէր կարող յացնել՝ ընտրելով սորան կամ նորան պարլամենտի անդամ: Սովորաբար երբ դա շատ կարեւոր խնդիր է և կառավարութիւնը համաձայն չէ պարլամենտի վճռի հետ, կառավարութիւնը արձակում է պարլամենտը և նոր ընտրութիւններ է նշանակում: Յամենայն դէպս դա լինում է մի կոիւ պարլամենտի և կառավարութեան և երբեմն նոյն իսկ կառավարութեան գլուխ կանգնած պետի միջև Բելգիայում ուրեմն պարլամենտի և թագաւորի միջև. մի կրիւ, որ կարող է կարստաբեր հետեւանքներ ունենալ թագաւորական տոհմի համար:

Պէտք է կարծել թէ դորա դէմն առնելու համար և իւր հեղինակութիւնը ազգի մէջ որոնելու համար է որ Բելգիայի թագաւորը գնում է սահմանադրող ժողովին իւր առաջարկը ուժվերենդումի մասին:

«Մուրճ»-ի ընթերցողների ուշադրութիւն ենք դարձնում, որ 1890 թւականին յուլիսի 2-ին Բրիւսսելում, կատարւած հակասորիկան ակտը վերջանդէս ներկայ 1892 թւականի ապրիլի 2-ին վերջնակապէս վաւերացւեց և միջազդացին օրէնքի զօրութիւն ստացաւ սկսած ներկայ թւականի յունիսի 2-ից: Այդ խնդիրը մենք

իւր ժամանակին շօշափել ենք նոյն այս էջերում։ Այժմ, արդեն կատարւած իրողութեան առիթով հարկ ենք համարում նորից յիշեցնել մեր ընթերցողներին մարդկայնութեան այս երևելի ակտի մասին, որ դարիս պարծանքներից մէկը կը ցիւի ապագայում։ Յայսնի է որ մարդկանց վերայ որսալը՝ նոցա բոնելու ու վաճառելու նպատակով, հետեւալիս զերեվաճառութիւնը և իբր դորա հետեւանք ստրկութիւնը աշխարհքիս վերացից դեռ ամբողջապէս վերացւած չէ։ հաստատ է այս անուելի իրողութիւնը, որ սորկութիւնը գեռ ևս գոյութիւն ունի մանաւանդ Աֆրիկացի խորքերում, ուր մարդորսութիւնը կատարւում է արաբ վաճառականների ձեռքով, էլ չխօսած այն աֆրիկական վայրենի պետութիւնների մասին, ուր ցեղապետների կամ թագաւորների համար իրանց հապատակները կամ հարևանները միայն կենդանի մներ են։ Լուսաւոր Եւրոպացին մի դար ջանք էր նստել որ խսպառ կորւի գերեվաճառութիւնը Աֆրիկացից ծովի վերացով դէպի ուրիշ աշխարհներ, բացի Աֆրիկացի արևելեան մասից, ուր գեռ ծովով գերեվաճառութիւնը կատարւում էր մինչ վերջին տարիները։ Բայց Աֆրիկացի խորքերը, ուր Եւրոպան դեռ ևս հաստատ ոտք չէր կոխել, գերեվաճառութիւնը մինչ այսօր շարունակում է հինաւուրց անդժութեամբ և առևտրական մի ծաղկած ճիւղ է կազմում։ Այդ դրութեան վերջ է ուղղում տալ Իրիւսսելի Հակա-սորկական ախտը համերաշխ գործակցութեամբ բոլոր պետութիւնների։ Այդ մասին առաջին միջազգացին խորհուրդը կամ կոնֆերենց սկսւեց 1889 թ. նոր տոմարով նոյեմբերի 18-ին Բրիւսելում և տևեց մօտ եօթն ամիս։ ապա 1890 թ. նոյեմբերին նորից կայացաւ մի ժողով կոնֆերենցի անդամների։ Ներկայացւած էին այբբենսական կարգով՝ Անգլիան, Աւստրա-Աւստրալիան, Բելգիան, Գերմանիան, Թուրքիան, Իտալիան, Իսպանիան, Կոնգոի պետութիւնը<sup>1)</sup> Հոլլանդիան, Պարսկաստանը, Պուրատագալիան, Ռուսաստանը, Եւեղիս-Նորւեգիան,

<sup>1)</sup> Կոնգոի պետութիւնը գտնւում է Աֆրիկայում, Կոնգո հակազական գետի ընթացքով։ Նա ստեղծեց Եւրոպական պետութիւնների վճռով, Բերլինի կոնֆերենցիում 1885 թվին։ Այդ պետութեան պետը Բելգիացի թագաւորն է, և Կոնգոի պետութեան կենտրոնական կառավարութիւնը Քրիստոնէն է։

Ֆրանսիան, Հիւսիսային Ամերիկայի Միացած-Նահանգները — և վերջապէս Զանզիբարի սուլթանութիւնը: <sup>1)</sup> Ակտը ստորագրելու համար նախ դժւարութիւններ յարուցեց Հոլանդիան, որ կոնֆերենցի ակտի մի քանի որոշումները աննպաստ էր գտնում իւր համար. բայց երկար տատանւելուց յետոյ նա, ի նկատի առնելով զործի վեհ նսպատակը, ստորագրեց: Ապա մի փոքր դժւարութիւն եղաւ Թիւրքիայի սուլթանի կողմից ակտը ստորագրել տալու, քանի որ յայտնի է, որ ստորկութիւնը Վուանում թույլատրւած է: Բայց նա ևս ստորագրեց: Բայց ամենից ուշ դժւարութիւնների հանդիպեց զործը Ֆրանսիայի կողմից, որի պատգամարուների ժողովը 25 յունիսի 1891 թ. մերժեց լնդունել այդ ակտը մի կէտի պատճառով, վերաբերեալ նաւերի հսկողութեան, բայց արդէն միաձն լնդունեց նոյն ակտը դեկտեմբերին 1891 իւր վերապահումն անելով նոյն կէտի մասին: Նման խոչնդունների հանդիպեց զործը նաև Պորտուգալիայում, բայց այդ բոլորը դրամուեց այնպէս, որ ներկայ 1892 թ. ապրիլի 2-ին համաձայնութեան զործը հրատարակեց Բելգիայի պաշտօնական Moniteur belge թերթում, որ օրից 60 օր յետոյ, ուրեմն 2 յունիսի ակտը միջազգային օրէնքի զօրութիւն սլիտի ստանար:

Մենք հարկ չենք տեսնում ակտը իւր ամբողջութեամբ ներկայացնել մեր լնթերցողներին, բայց աւելորդ չենք համարում նորա բոլանդակութիւնը հաղորդել, աւելի կանգ առնելով կարևորագոյն կէտերի վերայ:

I. Ստրուկների առեւարի երկիրները: Միջոցներ որ պէտք է գործադրւեն այն աեղերում, ուր գերեվաճառութիւնը իւր սկիզբն է առնում: — Բրիտանիայի հակա-ստրկական դլիաւոր ակտը ցոյց է տալիս իբր ամենաազդու միջոց դերեվաճառութեան դէմ՝ լուսաւորւած ազգերի ամբուկական կալոնիաների և նոցա հովանաւորութեան ներքոյ գոնուած երկիրների (ուր ի հարկէ գերեվաճառութիւն չկայ) բարգաւաճումը: Կամաց կամաց յետոյ պէտք է ամուր

<sup>1)</sup> Զանզիբարը մեծ կրպի է Աֆրիկայի արևելեան ալիից մի նիդուցով բաժանուած: Մինչ ազգ ժամանակ Զանզիբարը մեծ շուկաէ էր Աֆրիկայի ցամաքից բերւած զերիների համար:

ու լաւ պաշտպանւած կայարաններ շինւեն այն տեղերում, ու ը յաճախում են զերիներ որսողները: Երկրի մէջ գտնւած մեծ լճերը և գետերի վերին հոսանքները, որոնք ընդհատում են ջրիչներով, պէտք է միացնել Աֆրիկայի եղբների հետ ճանապարհներով և մանաւանդ երկաթուղիներով, օդուելով նաև նաւազնացութիւնով, որպէս զի այժմեայ բեռներ տեղափոխելու սովորական ձեզ՝ բեռնակիրների ուսերի վերայ՝ կարելի լինի վերացնել: Նաւազնաց լճերի վերայ շոգենաւերը, ափերի վերայ շինւած ամրութիւնների հետ միասին պէտք է նոյն նպատակին ծառայեն: Ի հարկէ որ այդքան հեռու ամրութիւնները պէտք է ծովափերի հետ հեռագրաթելերով միացնել: Թռչող գնուկեր պէտք է նոցա միջև եղած ճանապարհները ազատ պահեն: Հրացանների և նոցա մթերքների (մունիցիոն) ներմուծումը արգելած է, առ այժմ 12 տարով՝ բոլոր երկիրների համար 20 աստիճան հիւսիսային լայնութեան և 22 աստիճան հարաւային լայնութեան միջև: <sup>1)</sup> Արգելած երկիրներից հրացաններ անցկացնելը դէպի այլ տէրութիւնները կախւած է ձեռնհաս տէրութեան թուլուութիւնից:—Այն վերը ցիշած ամրացրած կայարանները պէտք է նաև կողմնակի նպատակիների ծառայեն. նոքա պէտք է ապաստարան լինեն տէրերից փախած սորուկների համար, գառաստանատեղի լինեն, տեղացիների համար ուսումնարան լինեն—նաև երկրագրծութեան և առեւտրի վերաբերեալ, — լինեն յենակէտեր առեւտրական ձեռնարկութիւնների և կրօնական առաքելութիւնների համար ու միաժամանակ պէտք է պահեստների տեղ լինեն առողջապահ միջոցների համար: — Ստորագրող պետութիւնները իրար պէտք է օգնեն սորուկների առեւտրի դէմ ուղղած բոլոր ձեռնարկութիւնների մէջ: — Ազատւած սորուկները, եթէ կարելի է, պէտք է իրանց հայրենիքը հասցնեն, թէ չէ երկրում բնակւեն:

Այնուհետև գալիս են որոշութեր հետեւեալ կէտերի վերաբերեալ.  
II. Քարւանների ճանապարհները և սորուկների տրամսպորտը  
ցամաքով:

<sup>1)</sup> Ընդամենը ուրեմն 42 աստիճան, մի աստիճանը հաւասար է 105 վերստի:

III. Խափանումն սորկութեան ծովի վերաց Միջոցը այն է որ կասկածաւոր նաւերը կարելի լինի խուզարկել: Այդ իրաւունքը սակայն պէտք է բանեցնեի միայն այն նաւերի նկատմամբ, որոնք 500 թոնն կամ պակաս չուր կարող են պարունակել, որովհետեւ ենթադրում են թէ լուսաւորւած ազգերը ծովը ուղարկում են միայն գորանից աւելի մեծ նաւեր, որոնց նկատմամբ սորուկներ տեղափոխելու կասկած չի կարող լինել: Բացի գորանից խուզարկելու շրջանը որոշւած է միայն Հնդկական ովկիանոսը, որ շփում է նաև Աֆրիկայի արևելեան ափը:

IV. Այն երկիրները, որոնք թոյլ են տալիս տնային սորկութիւնը: Երիւսելի կոնֆերէնցը շէր կարող զբաղւել նաև տնային սորկութիւնը վերացնելու խնդրով. զորա համար հարկաւոր կը լինէր որ Եւրոպան յանձն առնէր մի անողորմ պատերազմ՝ Պուանի կրօնական որոշումների դէմ և բացասէր գործակցութիւնը Պարսկաստանի և Թիւրքիայի, որոնք կարեւոր դեր են կատարում աֆրիկական սորուկների արտահանման գործում: 1890 թւականին այդ կողմից զեւ զեր էր կատարում Զանգիբարի «սուլթանութիւնը», որ այժմ՝ արդէն այլ ևս զեր չի կատարում, քանի որ անցեալ տարւանից դէս նա ընկել է Անգլիայի գերիշխանութեան ներքոյն նաև գերմանական «Արևելեան Աֆրիկայում» տնային սորկութիւնը օրէնքով ճանաչւած հաստատութիւն է: Բայց այդ չիշեալ պետութիւնները պարտաւորւել են սորուկների ներմուծումը, միջանցումը և արտահանումը, մի խօսքով գերեվաճառը, մանաւանդ երեխաների անդամախեղութիւնը իրանց երկիրներում թոյլ չը տալ: Ամեն մի սորուկ, որ իւր երկրի սահմանը անցնում է, ճանաչւում է որպէս ազատ: Նկատենք նաև որ Թիւրքիայում գերեվաճառութիւնը արգելեց սուլթանի հրամանով առ 4 դեկտեմբերի 1889 թ.:

V. Այս ակտի իրագործումը ապահովող սարք ու կարգեր: Այսուեղ գլխաւորն է մի «Միջազգային ծովային բիւզրօխ» հաստատումը Զանգիբարում, որ պէտք է լինի տեղեկութիւնների կենտրոնաւել և որտեղից պէտք է հաղորդւեն ցանկացած տեղեկութիւնները:

VI. Միջոցներ՝ ոգելից խմիչքների առեւտրի սահմանափակման վերաբերեալ: Դորանով որոշւում է որ 20 աստիճ. հիւսիս. լայնութիւնները:

թեան և 22 աստիճանն հարաւային լայնութեան միջև գտնւած երկիրների համար կամ բոլորովին արգելել կամ դժւարացնել սպիրացին խմիչքների ներմուծումը:

ՎԻ. Վերջնական որոշումներ: Որոնցով վճռուում է՝ վերացրած համարել այս ակտից առաջ եղած այն համաձայնութիւնները պետութիւնների մէջ, որոնք ներկայ ակտին հակառակ են. այս ակտից այլ և այլ կէտերը կարելի է առաջացում փոխել ընդհանուր համաձայնութեամբ. թոյլ է արւում նաև ուրիշ սեպութիւններին մասնակցել:

Թէ այս ակտի շնորհիւ երբ վերջին ստրուկը Աֆրիկայում ազատւած կը լինի—այդ գեռ ի հարկէ միայն ժամանակը կը տայ պատասխաննը: Բայց մի բան կ'ուզենք ցիշել այս իննդրի մասին այս անդամ վերջացնելու համար: Ներկայ գարի սկլոզբներում ստրկութիւնը իրանց կոլոնիաներում վերացնելու դէմ հակառակում էին ցեռ ևս այնպիսի կոլոնիական պետութիւններ ինչպէս Խաղանիան, Պորտուգալիան. իսկ այսօր ստրկութեան, գլխաւորապէս գերեվաճառի, վերացումը համարում է նախնական պայման ամեն մի կոլոնիական գործունէութեան: Տեսարանը հետեւապէս շատ փոխւել է: Այդ պատճառով այդ կոլոնիզատորական գործունէութեան ամենակատաղի թշնամիները Աֆրիկայում՝ արաբական մարդուներն են և ովքեր միայն կապւած են նոցա հետ: Բայց որ զլսաւորն է աւելի խիւալական հայեցողութիւնը այսօր յաղթանակը տարաւ ստոր շահախնդրութեան վերայ: Խնդիրը այժմ նրանումն է որ կուլտուրան տարածելով՝ պարապ հողերը մարդկութեան օգախն ծառայացնեն և մարդավայել յարաբերութիւններով այժմ վայրենի աեղերում հասարակութիւններ ստեղծւեն, և ոչ թէ աւելի ստոր գտնւած ազգերը կոսկիտ ոյժով հարատահարւեն:

---

Մեր անցեալ անդամնայ յօդւածում ցիշառակեցինք այն մեծ ընդունելութիւնների մասին, որոնց արժանացաւ իշխան Ռիսմարկը Վիեննայում, Դրեզդէնում և Միւնխէնում: Այդ ձանապարհորդութիւնը, որ Ռիսմարկը արաւ իւր որդու ամուսնութեան առիթով, պատեհ առիթներ տևեց նրան կարծիքներ յացնելու գերմանական

այժմեայ կառավարութեան վերայ, որով նա վերջինիս դրգեց իւր դէմ մինչ այն աստիճան, որ քիչ էր մնացել նիսմարկը գատի կանչւէր: Այդ բոլորը սակայն ոչ մի կերպ չը խանգարեց որ նիսմարկը նորանոր և չը տեսնւած ծաւալով ովացիաներ լնդունի այլ և այլ քաղաքներում և հրաւէրքներ լնդունի ուրիշ տեղեր ևս այցելելու: Յիշած քաղաքներից յետոյ նիսմարկը սակայն կարողացաւ լնդունել միայն կիսմարկը ևնա քաղաքացիների հրաւէրքը: Մենք ի հարկէ չենք կարող այն բոլոր, անթիւ-անհամար ցոյցերի նկարագրութիւններն անել, որոնց մեծ քաղաքագէտը և հայրենասէրը առարկայ եղաւ. և ոչ էլ թարգման լինել այն բոլոր ճառերի և խօսքերի, որ նա արտասանեց: Բայց նորա խօսածներից մէկին մենք առանձին կարեւորութիւն ենք տալիս. այդ այն է որ նա արտասանեց Ենայում մեծ բազմութեան առաջ: Դա մի քաղաքական ճառ է, որ հետաքրքրական է իւր բոլոր մանրամասնութիւնների մէջ, բայց մանաւանդ ուշադրութեան արժանի է ճառի այն կտորը, որ վերաբերում է իւր կարծիքին՝ պարլամենտի նշանակութեան մասին Գերմանիայում, որի հետ նաև սերտ կապ ունի անշուշտ նիսմարկի ապագայ գործունէութեան բնաւորութիւնը: Այդ նշանաւոր ճառը մենք առաջ ենք բերում իւր ամբողջութեամբ, ծանօթութիւնների մէջ լուսաբանելով շատերի համար թերես մութը պատմական կէտերը.

«Իմ լարգելի համաքաղաքացիք Թիւրինդեան երկրի! Նախ ես սրտանց չնորհակալութիւն եմ յախնում այն սրտանց ընդունելութեան համար, որ ես գտաչ Ձեղ մօտ, և ես չեմ կարող ինձ լուզող մոքերը աւելի լաւ տրտակալու քան Ձեզ նկարագրելով իմ չարարերութիւնները աս երկրի հետ անցած ժամանակներից: Իրեւ երեխաչ ես ալտոեղ առաջին անգամ ծանօթայալ ժայռերի, սարերի և բուրգերի հետ իրանց պատմական վիշատակներով.— աշնանդ, բրանդենբուրգի և Պոմերանիալի հիւսիսալին տափատանի տեսարանը բոլորովին այլ է: Մանկական այս առաջին տպաւրութիւնները հիւսեցին իմ մէջ Թիւրինդիալի գաղափարի շուրջը ոռամանտիամի մի նիմբուս, որ մնուցանւում էր մանաւանդ վշողութիւններով Վարտարուրգի, նորա նախակին ժամանակների, Լութերի եկեղեցական վերանորոգութեան և մեր գերմանական լեզվի զարգացման վերաբ: Լութերի Աստւածաշնչի թարգմանութիւնը առաջի մինչըն է մեր լեզվի միութեան, որ մինչ այն ժամանակ բարբառների վրա էր ցրւած: Աւելի հասուն երիտասարդութեանս ժամանակ պէտք է սովորեի թէ մեր ողեկան

ու ազգավին զարգացման համար ինչ նշանակութիւն է ունեցել Թիւրին-գեան աշխարհը իւր Վէկմուրտվ և Ենալով և սորա համալսարանով, ուր Շիլերը պրոֆեսոր էր և որ երկար ժամանակ եղել է Գեօթէի դեկանացութեան ներքոց: Նուա անունը ինձ՝ որպէս պրուսական մի զինուորական գերդաստանի զաւալի համար ցաւեցնող և ճիլով ձայն ուներ: <sup>1)</sup> Դա բնական էր, և ես հասուն տարիներումս միայն կարողացաւ հասկանալ թէ աստւածալին Նախախնամութեան շղթավ մէջ ինչ օդակ է կազմել ննավի ճակատամարտը մեր գերմանական հալբենիքի զարգացման համար: Իմ սիրտը զորա վիրա ուրախանալ չի կարող, իսկըս ուսկան առում է ինձ եթէ չինէր ննան, թերեւ Սեփանն <sup>2)</sup> էլ չինէր (Հաւանութիւն): Ֆրիդերիկեան պրուսական միապետութիւնը <sup>3)</sup> մէծ և իւր մէջ միացած մի ստեղծագործութիւն էր, բայց նա իւր ժամանակը ապրած պրած էր: Եւ ես չեմ կարծում որ եթէ ննավի մօտ նա չաղթող լինէր՝ մնաք մտած լինէինք ազգավին գերմանական զարգացմար ուզիդ ճանապարհը: Ես ազդ չդիտեմ: Բայց արդէն ժանգոտած չինքի աւերումը—ժանգոտած, ինչպէս որ ազդ ապացուցանում են այն ժամանակաւ ամենաաւադ և չարգւած գիներաների անձնատուր լինելը—ազատ տեղ բաց արաւ նոր չենքսի համար և հին պրուսական միապետութեան փշրած երկաթը ծանր և ցաւ պատճառող մուրճի ներքոյ գարբնւեց այն պողպատի, ուր 1813 թւականին օտարի լուծը զօրել առածգութեամբ չետ չպատեց: Առանց կատարելապէս ձեռք քաշելու անցեալից՝ անկարելի կը լինէր Պրուսիայում ազգավին գերմանական զգացմունքի զարթումը, որ իւր առաջին սկզբնաւութիւն ները զուր է բերել օտարի իշխանութեան խորը ամօթանքից: Թէ ինչու ազդ երկիրը պէտք է անցնէր tot discrimina rerum, ազդ ես չեմ կարող Ձեղ մասրամասն պարզաբանել, առանց որ նորից մեղաղըէին ինձ պառաւական շատախօսութեան մէջ: (Մեծ ինդութիւն): Ես ուզում եմ միայն վիշտակել որ ես 1832 թւականին մտալ համալսարան աւելի բուրշեն-շափտալին <sup>4)</sup> քան կալածատիրոջ զգացմունքներով, որ արտաքին հանգա-

<sup>1)</sup> Նուալի մօտ Նախալէոն Առաջինը 1806 թւականին վճռողական ճակատամարտով ջարդ տուեց պրուսացիներին:

<sup>2)</sup> Սեղանում 1870 թւականին Նախալէոն III մեծաքանակ զօրքով գերեց գերմանացիներից:

<sup>3)</sup> Ֆրիդրիխ II կամ Մեծը, որ Եօթնամեաւ պատերազմից (1758-65) զրեթէ ամբողջ Եւրոպակի դէմ դուրս եկաւ լաղթող և Պրուսիան մոցրեց մեծ պիտութիւնների շարքը: Ֆրիդրիխ Մեծի նման հանձարեղ պիտական անձն Պրուսիան և սորա չետ ամրող Գերմանիան ունեցել է միայն չանձին Բիսմարկի, սա որպէս քաղաքագէտ, նա գլխաւորապէս որպէս զօրավար:

<sup>4)</sup> Բուրշենշափտ որ և և ելլապարութիւնը կազմող ուսանողութիւնն է իւր չատուկ շորով և բարք ու վարքով: Յատուկ է միայն գերմանական ուսանողութեան:

մանքներ միայն ինձ ազատ պահեցին բուրշենչաֆտավին գործունէութեան մէջ խրելուց: Մարկեան (պոմերանեան) աւազավին հողին էլ այն ժամանակ այնքան օտար չէր գերմանական աղդանութեան դգացմունքը, որ մի որքան և իցէ կենդանի ոգի իւր մտքով դգար և գործէր:

Այդ դգացմունքի զարգացման մէջ ես լաւոնի չափով խաճդարւեցի 1848 թւականի անցքերով, Բերլինի փողոցներում մղած կռիւը մեր իսկ երկրացիների դէմ, այն գոկների դէմ, որ ես հպարտութեամբ կրում էի որպէս սպաս, լետաղարձ զառն հարւած տւեց իմ զգացմունքին, որ ես իմ մէջ գեռ ամբողջապէս չէի մեռցրել: Երբ մենք առաջին անգամ Երփուրտի պարլամենտում հաւաքեցինք, աճնաեղ ես առաջին անգամ երկար ժամանակով նորից տեսաւ Թիւրինգինը, եթէ հաշելու լինենք աճն կարճ մնալս Ենակում, որ աւելի կարացնելու հարկատորութիւն ունեցաւ աճն ժամանակաւ սենատը (Խնդութիւն): Գերմանական միութեան պտուղը գեռ ևս հասուն չէր Երփուրտում: Քանի որ մենք ապրում էինք Աւստրիակի հետ դուալիսմի մէջ, այդ դուալիսմի զարգացումը շատ շատ կարող էր Գերմանիաի Հիւսիսին և Հարավին իրարից բաժանելուն հասցնել: Երգի վերջը եկած կը լինէր, եթէ դուալիսմի հանգուցը սրով չը լուծւէր: Ես վիշեցնում եմ այդ պնդելու համար, որ այն ներքին պատերազմը, որ մենք 1866 թւականին վարեցինք, միանդաման անխուսափելի էր: Սենք պէտք է գերմանական ճեռով ու զիտաւորութիւնով իրար հետ ծեծւէինք մեզ առտածալին դատաստանին լանձնելով իմանալու համար թէ որ կողմը կը լինի վճիռը բարձրագուն իշխանութեան նկատմամբ:<sup>1)</sup>: Այդ

<sup>1)</sup> Գերմանական անկախ պետութիւնների թիւը 25-ից անց էր. դոցա մէջ երկուար մեծ պետութիւններ էին՝ Աւստրիան և Պրուսիան: Բոլորի մէջ մի ընդհանուր քաղաքական կապ ստեղծելը մի իդէալ էր, որին ձգուում էին բոլոր հայրենասէրները: Երփուրտի, ապա Ֆրանկֆուրտի, պարլամենտները, որ ընդհանուր գերմանական էին, ծնունդ էին այդ ձգումների: Այդ ընդհանուր գերմանական խորհուրդներում զլխաւոր աղ-զեցութիւն ունենալու խնդիրը երկպառակտում էր Աւստրիակին և Պրուսիակին և կուսակցութիւնների բաժանում միւս մանր պետութիւններին: Այդ անկերջանալի հակառակութիւններին և երկպառակտումներին վերջ տրւեց 1866 թւականին Պրուսիաի և Աւստրիաի իրար հետ մղած մեծ պատերազմով, որի վճռողական ճակատամարտը եղաւ աատրիական կեօնիկսդրէց քաղաքի մօտ և ուր վերջացաւ պատերազմը լոգուս Պրուսիաի: Քիւմարկը այդ ժամանակ Պրուսիաի արտաքին գործերի մինխատըն էր: Պրուսիան իւր այդ լաղթութիւնից օգտւեց մի նոր միջաղդգավին կաղմակերպութիւն ստեղծելով գերմանական պետութիւնների համար: Աւտրիան գուրս գցւեց ընդհանուր գերմանական խորհրդից, իսկ մնացած բոլոր գերմանական պետութիւնները Պրուսիաի հետ և որա գլխաւորութեամբ կազմեցին «Հիւսիսավին գերմանական միութիւն» անունով մի զաշնակցական պետութիւն ընդհանուր պարլամենտով (ռավիսաստակ) Բերլինում և մի-

կատարւեց, և կատարւեց չափաւորութեամբ, ինչպէս վաւել է հաւրենակից-ներին: Մեր այն ժամանակւակ հակառակորդի մէջ մենք չթողլինք անհաշտելի տրամադրութիւն: Մեզ լաջողւեց Աւատրիալի հետ նոխափիսի լարաբերութիւնների մէջ մանել, ինչպէս որ Ֆրանկուրտի սահմանադրական ծրագիրներ կազմողները ձգտում էին սուանց իրազործել կարողանալու Պէտք է ուրեմն բարի Աստուծուն ժամանակ Ռողնել որ Նա իւր գերմանական աղջը անապատի միջով անցկացնի և սպասել որ հասցնի աւետեաց աշխարհը, որի մէջ ենք մեզ կարծում արգէն (Յոնդութիւն): Տացի աւստրիականից, մենք անհրաժեշտօրէն պէտք է վարէինք Նաև Փրանսիական պատերազմը, որտիշեան մեր նոր հիմնարկութիւնների համար մենք կարու էինք ոչ միան Աւատրիալի ազ և Եւրոպական սենիորների կոնւենատի համաձանութեանը: Ազդ պատճառով մենք կարիք ունինք որ Ֆրանսիալի հետ պատերազմը առանձնապէս կարողանալինք վարել: Ամրաց Եւրոպալի մի կոսլիցիալի դէմ, մի կոսլիցիալի, որպիսին Եօթնամեակ պատերազմի ժամանակ եղաւ, մեր գործը շատ ամելի դժւար և անաջող կց լինէր: Գերմանական ազգի աստւածավին առաջրզութեանն է պատկանում, գէպի որը ևս նաև առաջալի համար հաւատ ունեմ, որ անպիսի քաղաքական պատճարներ, որ ոչ ոք չէր կարող նախատեսնել, Ուստաստանի և Աւատրիալի մէջ ունեցած կազը կործանեցին և այն էլ անչպէս, որ Օլմիւցեան կազմակցութեան բաժանամից մեր ազգալինք քաղաքական նպատակների համար օգւել կարողացանք: Եթէ 1866-ին Աւատրիան և Ռուսաստանը նոյն միութեամբ մեզ դէմ կամոզնած լինէին, ինչպէս Օլմիւցի օրերին—միան Աստւած գիտէ թէ արդիօք մեր լաջողութիւնը նոյնը կը լինէր և թէ մենք նոյն աստիճանի վերակ կանգնած լինէինք: Ֆրանսիալի գէմ կուի մէջ, որ խօմ պէտք է վարէինք, ինչպէս որ ամեն գարում երկու կամ երեք անգամ պատահել է, մենք ամելի թուլ կանգնած կը լինէինք և թերևս բաղդաւոր չլինէինք:

---

ութիւն կազմող պետութիւնների ներկազացուցիչների մի ժողովով՝ նախագահութեամբ Պրոտիվալի թագաւորի կամ սորա ներկայացուցչի: Ազդ «Հիւսիսակին գերմանական միութիւնն» էր, որ 1870-71 թւականին պատերազմ մղեց Ֆրանսիալի դէմ և լազմեց նորան: Դեռևս պատերազմը շներջացած, 18 լունարի 1871 թւականի հումանակութեամբ միութիւնը կազմող բոլոր պետութիւնների ազ միութիւնը հռչակեց «կապսերութիւն» և կապսեր տիտղոսը տրեց Պրոտիվալի թագաւորին: Ազդ ամենում զլսաւոր գործիչը մինխատր Բիսմարկն էր: Կապսերութեամն սահմանադրութեան զլսաւոր հիմքը կազմեց նախկին «Հիւս Գերմ. Ֆիութեան» սահմանադրութիւնը, բաց նորա մանրամատնութիւնների մէջ մտնելը ակտի տեղը չէ: Ազդ գործը զլսւիս բերելուց վետով Բիսմարկը լաջողացրեց 1879 թւականին Գերմանիալի սերտ և զաշնապրով ամրապնդած բարեկամութիւնը Աւատրիա-Ռուսականին Պրատիա-Ռուսականի հատ:

Z.

Այդ պատերազմները անհրաժեշտ էին, բայց մի անգամ որ նոքավական պարագաների մեջ առաջակա է առաջակա պարագաները, այլ ևս ևս հարկ չեմ տեսնում նոր պատերազմներ վարելու Մենք նոցա մէջ որոնելու այլ ևս բան չունենք: Ես զատարկ կամ անձարապիկ բան եմ համարում, եթէ մենք նոր պատերազմներ մղելու դրութեան մէջ մեղ դնենք, առանց ստիպւած լինելու օտարների լարձակումներից: Այն ժամանակ ի հարկէ մենք անքան ուժեղ կը լինենք, որ քան Գերմանիան է Ներոպակի մէջ տեղում, Այդ նշանակում է թէ իւր հարեւաններին հստուն լինել եթէ նոքա միանան անդամ, բայց միան պաշտպանողական դիրքում: Յարձակուղական կարինետավին պատերազմներ մենք չենք կարող վարել: Ամեն մի ազգ, որ կարինետավին պատերազմ վարելու հարկի մէջ է զնում իրան, իսկական սահմանադրութիւն չունի: Մի պատերազմ, նոյն խոկ լաղթանակը, բարերար հետեանքներ չունի մի ազգի համար: 1870-ից մենք աշխատել ենք պատերազմներից խոչ տալ, և ամենից առաջ նոր գերմանական կամերութեան համար խաղաղութիւն պահպանել, որովհետեւ նորա ներքին շինքաք մեր գործունէութիւնը ամբողջապէս կլանում էր, այն, մինչեւ անգամ պահանջւում էր մի տեսակ դիքտատորական գործունէութիւն, որ ևս իբրև մի մեծ պետութեան մշտական հաստատութիւն չի մ ցանկանում:

Մենք մեր ամբողջ ուշադրութիւնը զարձրինք պետութեան հիմնարկութիւնների հաստատման վերաց այն մտքով որ բոլոր զերմանացիք այդ հիմնարկութիւնները սիրէին, որպէս մի սեպհականութիւն, որ պաշտպանելու համար նոքա բոլորը պատրաստ կը լինէին (Ոգերուած հաւանութիւն), Ֆերես գործը զեռ ևս պատրաստ չէ. Բայց նա կարող է պատրաստ լինել եթէ մենք ունենանք մի ուժեղ պարլամենտ, որպէս վառող կէտ ազգապետին միութեան զգացմունքի (Հաւանութիւն). Մի պարլամենտ չի կարող ուժեղ լինել, եթէ նա կուսակցութիւններով պատուած է: Այն յամանակ ամեն մէկի ճեռքում կը լինի՝ եղած Փրակցիաները և սոորագրակցիաները իւր համոզմունքի և ճանաւատութեան համար շահեցնել, և մի դժբաղութիւն է, եթէ մենք Փրակցիաների մրցումների և կուսակցութիւնների—ծօ ստ դէս տենդենցիալի—մէջ ընկնենք. Առանց մի ռայսուազի, որ չնորմիւ իւր գողում ունեցած մի մշտական մեծամասնութեան կարողանալ ժողովրդական ներկայացուցչութեան պարտքը այնպէս կատարել որ նա կառավարութեան քննադատէ, վերահսկէ, զգուշացնէ, նաևած հանդամանքներին նաև առաջնորդէ, մի ռայխստազ, որ կարողանաց այն հաւասարակշուութիւնը իրավործել, որ մեր սահմանադրութիւնը ուղեցնել է ստեղծել կառավարութեան և ժողովրդի ներկայացուցիչների մէջ: Առանց այդպիսի մի ռայխստազի ես հոգսի մէջ եմ մեր ազգային հիմնարկութիւնների տեղականութեան և հաստատութեան նկատմամբ (Ոգերուած հաւանութիւն): Այժմեակ օրս մենք չենք կարող մի զուտ զինաստիհական քաղաքականութեան նվիրել մենք պէտք է ազգային քա-

դաքականութիւն ունենամք, եթէ ուզում ենք գորութիւն ունենալ Արդ բանը հետևանք է այն քաղաքական գարգացման, որ այս վերջին կէս գարսւմ և սրոպակում կառարւել է: Բայց որպէս զի ազգավիճ քաղաքականութիւն անենք, մենք պէտք մի ազգավիճն ներկայացուցչութիւն ունենամք, որի գործը ամենից առաջ պէտք է լինի ազգի կարիքները և ցանկութիւնները ինկատի ունենալ: Մենք չենք կարող կառավարւել գորութիւն ունեցած Քրակցիաներից որ և է մէկի զեկավարութեամբ, իսկ ամենից քիչ հենարոնի<sup>1)</sup> զեկավարութեամբ (Ոգեգորւած հաւանութիւն): Ես կարծում եմ, որ կաթոլիկական խնդիրներում մենք կարող ենք աւելի հեշտութեամբ գործը տանել, եթէ հոգմանական կուրիալի հետ բանակցենք մի նույնութիւնը՝ միջնորդութեամբ Բերլինում, քան եթէ Կուցիուսի անդը բանի պատի ազգեցութիւնը կենարոնի միջոցով<sup>2)</sup>:

Այս վերջինը ես գտնում եմ աւելի վտանգաւոր մեր ազգավիճն նպատակների համար, քան ինչ կարող էր լինել մի նույնցիուս: Դրանով ես չեմ ուզում բարեխօսել որ մի նույնցիուս կոչվի մեզ մօտ. ես այս խօսքերը առում եմ միան իր արտաքանչութիւն մի դաստիարակութեան, որ ես շրջում եմ հետո կենարոնի ավժմեակ զեկավարութեան պատճառով: Ես այդ կենարոնը վտանգաւոր եմ համարում, ոչ միան դաստիարական խնդիրներում, այլ զիսաւրապէս ազգավիճն խնդիրներում: Նա քանզում է այն ամենը, ինչ որ մենք մեր արենելան սահմանների մօտ կենաստանում զերմանական բան ենք շնուր: Ամբողջ կուլտուրկամպֆը աւելորդ կը լինէր, եթէ զորանից կախ ընկած չը լինէր լեհական խնդիրը: Բայց նա կախւած էր նրանից: Այն ժամանակ աշակէս կոչւած կաթոլիկական բաժանմունքի խնդրում նույնցիուսը մի օտար գիտլումատ չէր, այլ նա սրբուստիան մինիստրութիւնն միջումն էր,—մի բաժանմունք, որ սկզբում հիմնաւծ էր թագաւորի իրաւունք: Ները պաշտպանելու համար եկեղեցու դէմ, բայց որ այն տեղը հասաւ, որ իրապէս պաշտպանում էր եկեղեցու և լեհացիների իրաւունքները թագաւորի դիմաց: Դա անցեալի մի տեսութիւն է: Գեղնից ոմանք պատութիւնն ուստանելու: Ես չէի կարող այս չը լրաւաբանուած թողնել: Բայց մի բան կարող էինք սովորել կենարոնից, —գա կարգավահութիւնն է և բոլոր կողմնակի և կուսակցական նպատակների գոհարերումը մի մեծ նպատակն: Դուք անսնում էք կենարոնում (կաթոլիկ կուսակցութեան) ամենահեռաւոր քաղաքական տարրեր միացած: Իմ չիշողութեամբա՝ բոլոր ժամանակներում նորա մէջ կալին միանգամազն ու էակացիոնէր (լիտագնաց):

<sup>1)</sup> Կենարոնի կուսակցութիւնը Գերմանիակում կոչւում է կաթոլիկ պապական կուսակցութիւնը, որի գլուխն էր մինչ 1891 թւականը լուսակացնակի վիզ վիճակուստ: Վերջինիս մասին տես մեր լուրածը «Մուրճ» 1891 թ. № 4:

<sup>2)</sup> Նույնցիուս նշանակում է Հոգմի պատի զեսպան:

ազնւականներ, միահեծաններ (աբսոլյւտիստ), պահպանողականներ և մինչ-չե անսպամ աղաստամիտներ (Փրէգիննիդ), մինչև իսկ սոցիալ-դեմոկրատներ, և նոքա բոլորը իր մի մարդ ձախ են տալիս այն բաների մասին երբ նոցա խելքը ասում է թէ եկեղեցու շահերը այդ պահանջում են, Դէմ չենք կարող մենք եռ, քանի որ մենք մի ազգավին եկեղեցի չունենք, կուսակցութիւններից վեր մի ազգավին գերիշտող համոզմունքից պինդ բռնել այն է վճռած վրա այն ամենի օգտին ձախ տալ ինչ պահանջում է մեր ազգավին հաստատութիւնը և ապահովութիւնը, և այն ամենի դէմ վրա ամեն է մենք վրա, ինչ այն թաղում է և խանգարում: Աւ պարզ չէ որ Փրակցիաների զանազանութիւն չը պէտք է վիճի այն Փրակցիաների մէջ, որոնք առհասարակ դերմանական պետութեանը օգնել և նրան պահպանել են ուզում—և ամեննեին բոլորը չեն ազգակա, —այլ որ նոքա պէտք է մի կարտել (միութիւն) կազմեն: Մենք ուզում ենք հայրենիքի շահերը շատ վեր դասել և ամեն մի խնդիր այդ տեսակետի ներքոյ զնել, ինչպէս որ կենտրոնն է ամեն ինչ հոռմանական—կաթոլիկական տեսակետաց քննում<sup>1)</sup>: Կենտրոնից կարելի է սպասել ամենամեծ հակասութիւն և ամենամեծ անհետեղականութիւն: Բայց հինգ որ այն ձեւնասա աւտորիտետը լավանում է թէ այդ են պահանջում եկեղեցական շահերը, էլ նոքա մի ակնթարթ չեն տատանում—և սա սահմանափակ է սեղման ամենամեծ հակասութիւնը և ամենամեծ անհետեղականութիւնը: Բայց հինգ որ այն ձեւնասա աւտորիտետը լավանում է թէ այդ են պահանջում ապարեկի վերաց ինչու չը պէտք է մենք մեր աղդամին համոզմունքներին նոյն եռանդով և բացառապէս ծառակենք, ինչպէս որ կենարոնի անդամները ուստաձ կիբէրից և Հիւցէից մինչև պարսն փառ Շորեմէրը (ծիծաղ), որոնք ամենքը մի սանրի վերակ են բուրդ խուզում: Այդ բանը նոյն չափով սպասելի չէ մեր բարեկամներից նոցանից, որոնք անկախ են ուզում մնալ, բայց այդ միշտ պէտք է աչքի առաջ ունենալ: Թշնամուց պէտք է սովորել, և ես որպէս առաջ, նոյնպէս և աչտմ համարում եմ կենարոնը գերմանական պետութեան թշնամի իւր հակամներով (տեսդէնց) և ոչ չանձին նորա բոլոր անդամների: Եիտակ գերմանացիք նոցա մէջ կան ահազին թւով, բայց առաջնորդող ուղղութիւնը (անդէնցը) ախպէս է, որ ես գերախոսութիւն և վտանգ եմ համարում պետութեան համար, երբ կառավարութիւնը իւր զեկավար խորհրդատուները վերցնում

<sup>1)</sup> Մեր ընթերցողներին աւելորդ չէ ասելը, որ այնքան մեծ ուշադրութիւն որ նվիրում է Բիստարկը կենարոնին, այսինքն հոռմանական-կաթոլիկ կուսակցութեան, նրանով է բացառուում, որ գերմանական ոչխոստապում եղած բոլոր կուսակցութիւններից, առանձին-առանձին վերցրած, կենարոնի կուսակցութիւնը թւով և գիսցիսլինով ամենից ուժեղն է: մինչդեռ կենարոնին հակառակ կուսակցութիւնները բաժանւած են և իրար հալածում են: Բիստարկի չաջորդ պետական կանցլէր կոմս Կապրիւին զգալապէս զանուռմ է կենարոնի ազգեցութեան ներքով: Հ.

է Կենտրոնից և երբ իւր ուղղութիւնը սրում է զլխաւորապէս աճն կողմը, որ կենտրոնին դուրեկան լինի: Կենտրոնը տեղական էնսարան չի կարող լինել: Ես ուզում եմ հաշտ ապրել իմ կաթոլիկ համաքաղաքացիների հետ, քայլ ես չեմ ուզում նոցա զեկավարութեան տակ մտնել: (Բուռն հաւանութիւն), Ես երդեմ եմ մի աւետարանական կատերութեան մի աշխարհական զեկավարութեանը (Ich bin eingeschworen auf eine weltliche Leitung eines evangelischen Kaiserthums) և գորան ես հաւատարմութեամբ կամած եմ. և եթէ ինձ, երբ ամեն անգամ որ իմ 50-ամեաւ փորձառութիւնից և քաղաքանութիւնից լետով, կարծիք եմ չափառում թէ իմ թագաւորի խորհըրդապուտները աւելի լաւ կանեն եթէ ուրիշ շաւզով ընթանան, չանդիմանում են թէ ես հակամոնարխսիական քաղաքականութիւնն եմ անում, այն ժամանակ ես դէս վերջապէս ձեր ուշաղրութիւնն եմ դարձնում մեր ներկայ սահմանադրութեան վերայ, որի համաձանութեան բոլոր կառավարչական կարգադրութիւնների համար պատասխանառութիւնն ընկնում է ոչ թէ միապետի վերայ, այլ պետական կանցլէրի և մինիստրների վերայ: Քայլ դորանից ես ձեր ուշաղրութիւնն եմ զարձնում աճն բանի վերայ որ այդ հակացքը—ես չեմ ուզում ասել մի հին գերմանական է—քայլ մեր մարմնի ու արիւնի մէջ հաստատած է զեռ շատ աւելի առաջ քան երբ մենք սահմանադրութիւններ ունենք: Ես ուզում եմ ձեր մտքին բերել միայն մի օրինակ այն մեծ ոգու զրածներից, որի չորրինքները (Manen) պատեղ ապ վայրում, մեզ շրջապատում են<sup>1)</sup>: Գեօթէն իւր Գեօց Փոն Բերլիսին զէն դրամակի մէջ ներկայացնում է մեզ կատար հաւատարիմ մի ասպետ, որ իւր կատար համար այնքան չարգանք և հաւատարմութիւն ունի, որ մի կատերական խորհրդատուն սպառնաց ապ խօսքերով՝ Ախ, թէ որ միայն դու կրում չը լինես կատար պատկերը, որին ես նոյն իսկ չետեից (Konterfei) պաշտում եմ! Ազդ ասպետը, որի անձնատուք լինելն էր պահանջում այդ կատերական խորհրդատուն, մկի փիքը չարաւ ու պատճանի բարձրութիւնից նորա դէմ սուլք քննազատութիւն չպատեց (Մեծ ծիծաղ): Դա ցուց է տալիս որ Գեօց Փոն Բերլիսինդէնը և Գեօթէն երկու բաները իրար հետ չեն խառնել և չեն նոյնացնել: Կարելի է հաւատարիմ կողմնակից լինել տոհմին, թագաւորին ու կատարին, առանց—ինչպէս Գեօց՝ ում առած է՝ նորա կոմիսարների իմաստութեան մասին համոզած լինելու: Ես այս վերջինից չեմ և այդ իմ համոզմունքը ես ի՞ս չեմ պահելու: (Բուռն հաւանութիւն և ոգեսրած գոչումներ իշխանին):

Բիսմարկի այս ճառը, որ իւր պատմական քաղաքական հաստատ հիմունքով և իւր ամբողջութեամբ յիշեցնում է մեզ իշխանի հեշտանաւոր ճառերը պարլամենտում՝ պետական կանցլէր եղած ժա-

<sup>1)</sup>) Գեօթէի անունը մերտ կապւած է Ննակի և Անգմարի հետ: Z.

մասնակ, առաջին մեծ քաղաքական խօսքն է որ նա արտասանել է իւր պաշտօններից հեռացրած օրից 1890 թ. մարտի ամսից։ Այս ճառը ցոյց է տալիս, որ Բիսմարկը աներկբաց կերպով զբաղւած է նախագծով՝ այն ազգային մեծ դրուժը, որ նա մեծամեծ դժւարութիւնների մէջ յաջողութեամբ սկսել է ստեղծել իր մինիստր և կանցլեր, այժմեանից արդէն պետութեան պարլամենտի միջոցով է ու գումար առաջ տանելը Պէտք է ասած որ իւր երկարամեայ պաշտօնական զիրքում Բիսմարկը իւր զիքսատորութեան հասնող իշխանութիւնը շարունակ պարլամենտի հետ կոխւ տալով էր պաշտպանում։ Խոկ այժմ իւր յոցերը նա պարլամենտի վերաց է զնում։ Բոլոր այն երկիրների թերթերը, որոնք գերմանական նոր պետութեան ստեղծելով և Բիսմարկի քաղաքականութիւնով իրանց զգում են նեղացած դրութեան մէջ—ամենից առաջ աշխատեցին չարախնդաց կերպով մատնանիշ լինել Բիսմարկի այս առերևոյթ հակասական վարմունքի վերաց բացց այդ մաքով աւելին արին Բիսմարկի թըշնամի գերմանացի թերթերը, որոց անձնական հաշիներին անտեղեակները միամտաբար աշխատեցին արձագանք լինել նաև այլ երկիրներում։ Բայց արժէ միայն ցանկութիւն ունենալ ըմբռնել քաղաքական էւոլյուցիական երևոյթները, և մենք կ'անէինք այսպիսի դատողութիւն։ Բիսմարկը որպէս զլիաւոր աշխատակից գերմանական նոր պետութիւնը ստեղծելու գործում, որպէս այդ պետութեան գաղափարի ամենահեղինակաւոր և միենո՞ն ժամանակ ամբողջ աշխարհից վկայւած ամենակարող ներկայացուցիչը, աշխատում էր մինիստր և կանցլեր եղած ժամանակ, որքան որ տեսեց հաւատը դէպի նա իւր մոնարխների կողմից, ամբապնդել նորահաստատ պետութեան հիմունքները այն եղանակով, որ ողարտիկուլարիստական ձգտութները և այլ հանգամանքները չկարողանան ծաւալ ստանալ և հաստատւած միութիւնը խախտել։ Բիսմարկը, տեսնելով իւր այդ նախագծած և անհրաժեշտ ծրագրի դէմ այլ և այլ խոչնպոտներ գերմանական պարլամենտում, վախենալով որ իւր հակառակորդների ձեռքում ամբողջ գործը կարող է թերի մնալ և խորառակւել, մարտնչում էր ողարլամենտի այլ և այլ նոյն խել իրար հակառակ կուսակցութիւններից կազմող մեծամասնութիւնների դէմ։ Այդ անելով նա ունակով չէր անում սահմանա-

զրութիւնը, այլ հենց ինքը օգտւում էր սահմանադրութիւնից տւած իրաւունքներից, և երբ իւր խօսքը չէր աղջում իւր համար մեծամասնութիւն գոյացնելու համար՝ նա դիմում էր ծայրահեղ բայց և սահմանադրական միջոցին, նա արձակել էր տալիս պարլամենտը, դիմելով ազգին նոր ընտրութիւններ անելու համար; Եթէ ազդը միշտ առելի ձայն էր տալիս յօդուա նիսմարկի նախադիմներին, ինչով էր ազդուել մեղաւոր նիսմարկը; Եւ եթէ այսքան տարիների ընթացքում գերմանական սլարլամենտում շը կարողացաւ կազմել մի կոմիտայտ և տեղական մեծամասնութիւն ընդդէմ նիսմարկի ժամանակւայ կառավարութեան և որր կարողանար սորան դէմ դնել մի այլ, ազդի մեծամասնութեան հաւանութիւնը զատած ծրագիր, միթէ միայն նիսմարկն էր որ տէոք է յարդէր գոյութիւն ունեցող կուսակցութիւնները և զլուխ խոնարհէր նոցա առաջ, և այդ անէր այն մարդը, որի իւր ազգին ու հայրենիքին մասուցած ծառայութիւնները իսկի չի կարելի համեմատել անդամ որ և է ժամանակակից մարդու իւր ազգին ու հայրենիքին մասուցած ծառայութիւնների հետ, այն աստիճան նիսմարկինը անհամեմատելի գերազանցութիւն ունեն: Նիսմարկի վարած կոխները պարլամենտի մեծամասնութիւնների դէմ մի անձնասուսան մարդու կամակորութիւնիցը չէր, այլ այն մեծ վստահութիւնից, որ ունէր նա զէպի գերմանական ազգը: Զը լինէր այդ հանգամանքը, կայսր Վիլհելմ I չէր պնդիլ նորա մինիստր մնալու վերայ, թէ չէ նա իւր դէմ կը զինէր ամբողջ ազգը: Մի խօսքով քանի որ սկեսութեան զեկավարը նիսմարկն էր, երկրի քաղաքականութեան նժարի ծանրութիւնը ոչ թէ պարլամենտի բիսմարկի կողմն էր, լոկ այն պատճառով որ հասարակաց կարծիքում նիսմարկի անձն աւուր ու թիւնը անհամեմատ մեծ կշիռ ունէր, իսկ այդ կշիռը ունենալու պատիւը նա վաստակել է ազգին մասուցած գերազանց ծառայութիւններով: Անէր նոյն մարդը պարլամենտի անդամ, հաւանական է որ պարլամենտը առելի մեծ նշանակութիւն ունենար: Գործին ծառայած լինելով մինիստր եղած ժամանակ՝ նա նոյն գործին կը ծառայի նաև իրեւ պարլամենտի անդամ: Երէկ նա գործը ազատելու համար կուռում էր պարլամենտի կուսակցութիւնների դէմ, որոնք իրան հակառակ էին, այսօր նա նոյն գործի համար կուռում է կառավարութեան դէմ: որ իւր

կարծիքով լաւ չէ վարում պետական գործերը, և վտանգաւոր է համարում մանաւանդ կաթողիկ կուսակցութեան հաճոյանալը կառավարութեան կողմից։ Միւս կողմից այն պարլամէնտի դէմ, որի գէմ երեկ էր կուտում, Բիսմարկը կուտում էնակ այսօր, քանի որ նա համոզւած է, որ այժմեաց կուսակցութիւններից մի զօրեղ յառաջարար մեծամասնութիւն կազմել անհնարին է, և այդպիսին մէկը խիի չկաց էլ։ Եւ, որպէս պէտք է ենթադրել, Ենայում խօսած ճառով, որ ամբողջապէս առաջ բերել մենք հարկ համարեցինք, Բիսմարկը ակնարկում է, իւր մոտզրութեան վերայ՝ յեղաշրջում կատարել Դերմանիացի քաղաքական կուսակցական կեանքի մէջ, գլուխ կանգնելով մի կուսակցութեան, որի նմանը նա զուր էր որոնում իւր կանցլեր եղած ժամանակի։ Եւ թէ չի կարելի հաւասար կերպով ասել թէ Բիսմարկին իւր այդ նոր ձեռնարկութիւնը լիովին կը յաջողւի, բայց միայն հիանալ պէտք է թէ ինչպէս այնքան տարիներ զբեթէ զիքտաստրական իշխանութիւն բանեցրած հոչակառոր մարզը իւր խորը ծերութեան հասակում այնքան սրտին մօտ է առնում իւր հայրենիքի ճակատագիրը, որ իւր ազգին մի մէծ ազդացին պետութիւն առեղծելուց յետոյ՝ այսօր նա այդ պետութեան մէջ ներքին քաղաքական նոր կեանք առեղծելու փշերով լի գործին է ձեռնարկում։ Կարելի է Բիսմարկի ամեն մի քայլին հաւանութիւնը լուալ, անցելում նորա ձգտումներից մանաւանդ այն որ լեհացիներին է վերաբերում, որի առիթով իւր «Առանց զաւաննքի» վէպի մէջ (տես «Մուրճ»-ի ներկայ համարը) դառն ծիծաղով դանգատում է Սենկեիչը. բայց այնքան ճահճացին է վերմանական քաղաքական կեանքը, որ միայն ուրախանալ պէտք է, եթէ Բիսմարկին յաջողւի կերպարանափոխել և քաղաքական հզօրութեան հասցնել կուսակցական կեանքը Գերմանիայում։ Դորանով նա կը հիւսի մի նոր պսակ իւր փառքով փայլող ճակատը նոր զարդով պսակելու համար։

---

Եւրոպայի միջաղդային բարձր քաղաքականութեան վերաբերեալ այս ամիսներս մի քանի նոր զծեր սկսեցին սպարզել նիբը թէ սպազ ԱՀ Խլլ գործօն զեր է կատարել և շարունակում է

գործել Ֆրանսիայի և Ռուսիայի բարեկամութեան գործում; Խընդիրը սակայն պարզւած չէ: Միայն թէ պապի բռնած որոշ բարեկամական գիրքը գէպի ֆրանսիական հանրապետութիւնը, որի մասին մենք մեր անցեալ տեսութիւնների մէջ արդէն «քանից» խօսել ենք, հաւանական է գարձնում որ պապը իւրովսանը աշխատած լինի միջին Եւրոպայի եռապետական ղաշնակցութեան դէմ, որի անդամներիցն է իւր թշնամի Խոտլիան, Ֆրանսիային ծառայել:

Յիշատակելու արժանի է նաև Պարիզի յայտնի Figaro լրագրի մի յօդուածը Alliance ou flirt խորագրով, որտեղ առաջարկւում է Ֆրանսիայի և Ռուսիայի մէջ գրաւոր դաշնակցութիւն: Այժմ արդէն հաստատ է որ նոցա մէջ գրաւոր պայման չկայ և դատելով ռուսաց մայրաքաղաքային լրագիրների կծու պատասխաններից «Ձիգարօի» յօդւածին, պէտք է ընդունել որ այդպիսի պարտաւորիչ պայմանի մասին գէթ մօտիկ ապագայում խօսք չի կարող լինել:

+

Բաւականում ենք միայն յիշատակելով, որ Բոլդարիայի յայտնի առաջին մինիստր Ստամբուլով ներկայ օգոստոսին ընդունւեց Կ. Պոլսում սուլթանի կողմից: Անկասկած է որ դա քաղաքական հետեւանքներ է ունենալու Բոլգարիայի համար: Այդ գէպքը ընդունւեց որպէս ցոյց Ռուսիայի դէմ:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

† ՌԱՅԱՅԵԼ, ՊԱՏԱԼՈՒՅԵԼՆ, ՆՈՐ-ՆԱԽԱԲՀԵՆԻ ՍԱՎԱՐԱՆՔ հետևեալ տիտուր  
լուրը. «23 օգոստոսի ժամ 1 և 37 րոպէ կէս զիշերից վետու.  
Խմբագրութեան «Մուրճ» ամսագրին.  
Խափառէլ Պատկանեանը վախճանեց. թաղումը քսանուչորսին:  
Քաղաքացի ըստի Բաշտանեանու:

Խափառէլ Պատկանեանը այն մեծութիւններիցն է, որտնց  
մասին խօսք գրելը պատկանում է «Մուրճ»-ի ազ աւելի կա-  
րեւոր բաժիններին: Թողնելով հանդուցեալի զործքերի գնահա-  
տութիւնը, որ աշուհետե զեւ երկար տարիներ մեր քննական  
զրականութեան կարեւոր թեմաներից մէկն է կազմելու, բաւա-  
կանանում ենք ասելու, որ հանդուցեալը, առանց որ և է կաս-  
կածի, հավակալան նոր բանաստեղծութեան մէջ ամենանշանա-  
տոր քանքարն էր:

Ցաւում ենք, որ Պատկանեանի մահամ մասին վերը  
առաջ բերած հետագիրը մեր ձեռքը հասաւ միան օգոստոսի  
25-ին, հանդուցեալի թաղումից վետու—Հարց ենք սալիս, ար-  
դիօք Պատկանեանի մասմինը չը պէտք է փոխադրել Թիֆլիսի  
Մալրեկեղեցու գաւիթը, կամ նոյն խոկ էջմիածնի մօսերքը:  
Հարցոց զրականութեան մի այնքան մեծ աստղ, որպիսին է  
հանդուցեալը իւր հալբենական երգերով պէտք է հանգչի հազ  
ժողովրդի սրախն աւելի մօտ մի տեղում:

Դ. Ա.Պ.Յ.Յ.Յ.Յ. Դ.Ա.Ս.Գ.Ի.Բ.Բ.: Վրաստանի և Խմերեթի հակոց եկեղեցիա-  
կան դպրոցների թեմական տեսուչ նղիչէ քհկ. Գեղամեանից  
սահացած ենք հետևեալ շրջաբերականը «Մուրճ»-ում տպագրե-  
լու խնդիրքով.

«Այսու բախտում եմ ի գիտութիւն Վրաստանի և Խմե-  
րեթի թեմի եկեղեցական ձխական ուսումնարանների պատ-  
աւագ ուսուցիչներին և մեծարելի աւագ ուսուցչութիւններին, որ  
Ա. Էջմիածնի Մալր.Աթոռի Ուսումնական-Վարչական Յանձ-  
նաժողովի հրամանագրութեամբ, որ՝ ՚ի 14 սովոր ցոլիսի № 27,  
նորից թուլատրւած է պ. Ղազարոս Աղականի «Ուսումն մակենի

Եղիշ» դասագրքերի կիրառութիւնը մեր ուսումնարաններում:  
Թեմական Տեսուչ Եղիշէ քահ. Գեղամեանց:

՚ի 21-ն լուլիսի 1892 ամի, ՚ի Սաբունչիու:

Մեր ընթերցողներին համեանալի դարձնելու համար Ու-  
սումնական Յանձնաժողովի այս կարգագրութիւնը, պիտի է  
վիշեցնենք որ պ. Ազատեանցի դասագրքերը արգելած էին  
դպրոցական գործածութեան համար միմիան այն սպառառով,  
որ նա վատահացել էր զեռ ևս մինչ ավեմ ափրող խառնաշփո-  
թութեանը ա-ի, Գի և ու-ի ուղղագրութեան մէջ՝ միակերպու-  
թիւն և կանոնաւորութիւն մտնցնելու իւր դասագրքերում, ըն-  
դունելով այն ուղղագրութիւնը, որին ի միջի ալլոց հետեւում է  
«Մուրճ»-ը, ալսինքն հնուց մնացած երեք տեսակ բաղաձայն ա-ե-  
րից դէն գցելով ոչ ոքին հարկաւոր ռ ձեւ:

Էջմիածնի ուսումնական, վարչական մասնաժողովին կա-  
րող ենք միան չորհաւորել պ. Ազատեանցի դասագրքերի  
առիթով արած վճռի համար, պաշտօնական սանկցիա տալով  
մի ուղղագրութեան, որ չարմարութիւնից զատ՝ հաւանու-  
թիւն է զտած մեր գրականութեան ներկայացուցիչներից  
շատերից և որի կենսունակութիւնը ապացուցած է աղ ուղ-  
ղագրութեամբ տպւած և ծողովրդականացրած բազմաթիւ գրքե-  
րով ու երեք պարբերական հրատարակութիւններով:

«Արարատ» ամսագրի լուլիսի տետրում տպւած օրադրու-  
թիւնից իմանում ենք ի միջի ալլոց, որ Ուսումնական-վարչական  
յանձնաժողովը 1871 թւին (Երեկ 1891 թ.) լուլիսի 16-ին թեմերի  
առաջնորդներին ուղղած է եղել մի շրջաբերական, ուր ի միջի  
ալլոց հետեւալն է ասւած. «Պարտաւորեցուցանել զաւագ ու-  
սուցիչս և զաւագ ուսուցչուհիս, զի ի զանազան բաժանմունս  
ինքեանց կանձն եղեալ ուսումնարանաց պահպանեսցին վմիա-  
կերպութիւն ուղղագրութեան լեզուի Խստիւ արգելու  
զգործածութիւն այնոցիկ դասագրենոց, որք տպագրեալք  
են նորանար ուղղագրութեամբք, նոյնպէս և զգու-  
շանալ լազգեցութենէ նոյն օրինակ ուղղագրու-  
թեամբ տպագրեալ գրենոց և պարբերական  
հրատարակութեանց»:

Մեր նկատողութիւնը աղ մասին կ'անենք «Մուրճ»-ի  
հետեւալ համարում:

«ՀԱՅՐԵՆԻՔ» լրագիրը, որ վերջին ամիսներս արգելած էր հրատարակելու,  
ավեմ նորից սկսել է հրատարակւել և նորա համարները սկսե-  
ցինք կանոնաւորապէս ստանալ. «Հայրենիք» լրագրի խմբա-  
գիրն է պ. Արքիմար Արքիմարեան:

† ՄԱՄԲԲԵԼ ԵՇԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ. Ներկաէ օգոստոս ամսի 2-ին  
վախճանւեց Թիֆլիսի մօս կոչոր ամորանոցում երկարառուե  
հրանդութիւնից լիտոյ Թիֆլիսի (Վրաստանի և Խմերեթիակի)  
հայոց թեմական առաջնորդ սրբազն Մամբրէ եպիսկոպոսը:  
Հանգուցեալը իւր առաջնորդութեան պաշտօնում փոխարինեց  
Արքատակիւ եպիսկո. Սիդրակեանին 1889 թւականի դեկտեմբեր  
ամսում, հետեւապէս Թիֆլիսի առաջնորդն եղաւ մօտաւորապէս  
2 տարի ութ ամիս Հանգուցեալը ուստամով ու կրթութիւնով  
անպատրասա լինելով՝ չիմացաւ առաջնորդութեան գումարնը  
վարել ժամանակիս նոր և աւելի միծ պահանջների համեմատ:  
Միակ բանը, որ թերես խրախուս էր գանում հանգուցեալ  
առաջնորդից՝ եկեղեցական ծխական ուսումնարաններն էին,  
որանց թիւը, թէև պաշտօնապէս մեզ անչափ, բայց պէտք է որ  
զգալի կերպով աւելացած լինի նորա հովառութեան ժամանակ:

ԲԺՇ. Ն. ՈՒՄԻԿԵԱՆԻ «ՍՆՆԴԱՊՈՒԹԻՒՆ և կերակուր» վերնագրով զօդւածի  
այս համարի երես 1130-ի ծանօթութիւնը պիտի լինի հետեւ-  
մալը. «Նոյնը կարելի է ապացուցանել և սուամոքսապին զեղ-  
ծերի վերաբերեալ: Նոերի սուամոքսալին արհեստական կեղան-  
կավն վերքի (Փաւուլ) միջոցով կարելի է տեսնել զեղծի չան-  
կարծակի երեւալը սուամոքսի մակերեսովթի վերաբ»:

ՎՐԻՊԱԿՆԵՐԻ «Մուլճ»-ի անցեալ № 6-ում:

Ն.	Ումիկեանի չորւածում՝	ՊՊԱՆՁ է	ՀԱՂՑՆ է
Էջ 910,	վերեից տող 14.	{ Rischoff	Bischoff
Էջ 914,	ներքմից տող 13.	Գրախօսութեան մէջ Գ. Խալաթիւնցի՝	
		Խաւունիք	
Էջ 939	վերեից տող 39.	Խաւունիք	
Էջ 947	ներքեից տող 6.	հեշտութեամբ	հմտութեամբ
		Երաժշտական քրոնիկոս՝	
Էջ 982	ներքեից տող 2.	իդէալական	իտալական
Էջ 983	վերեից տող 3.	բոմաններ	բոմանսներ
		Քաղաքական Ժեսութեան մէջ՝	
Էջ 987	ներքեից տող 8.	Ներկակացրած էր	աչդ օրինագիծը ներկակացւած էր
Էջ 993	ներքեից տող 5.	հօթը տարի է	վեց տարի է

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

# „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

## ԱՐԺԱՆԱՑԱԺ



աշխարհի մեջ կարևորագույնաների լոլոր ցացահանդէսներում

### ԱՄԵՆԱԲԵՐՉՐ ՊԱՐՊԵԽՆԵՐԻ

Կարհոր ընկերներ առն ամպինների և աղճիւ օղնականներ բոլոր արհեստաւորների համար

### ԳՏՆԻՌԻՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիվ թիւսում. Զինդերի ընկերութեան կենդրոնական պահեստում՝ Գովինսկի պրոսպեկտի վերայ, Միջեմանովի առն և նրա բաժանմունքների մէջ:

Բագւում. Միջայէլեան վորզուում, Պրցում. Կուզուորի տ.  
Միջայ Աւագեանի տ.  
Քութայսում. Բուլվարի դէմ.  
Զերեկովի տ.  
Բաթումում. Լոռի Մելիքեան վո-

րցում. Կուզուորի տ.  
Ասխարհապում. Իսուսիննի գւոր №  
2, Տ. Ափանասուկի  
Երևանում. իմ ճամեսորդ գործակալների մօտ:



և նրանց ճանապարհորդող գործակալների հօռ  
Միջին և Հինգիսանոցի Երազում ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ՆԻ ԸՆԿԵՐ  
ԳԼՈՒԽՈԲ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՈՏ


արտանութիւն ստացած



առևտրական գրոշմբ.

Գ. Ն է Յ Դ Լ ի ն Գ և Բ  
Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շարաթով կամ  
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ զրամականով զրամը վճարելու համար:  
Յ. Գ. Զինգերի և ընկ. լոլոր ապահստաներում զանուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են  
սեղաներ, թել, մետաքս և ապլ մեքենային պատկանելի իրեղիններ ամենաչափաւոր զնելով:





# Մ Ո Ւ Բ Շ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻՎԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ Է

Տարեկան գիւղ է 10 դ.

Բաժանորդագրութեան համար զիսկել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ. { Տիֆլիս. Въ редакцію журнала „МУРЧЪ“.  
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական դրավաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումեանց, Սիօնի փողոց № 27:

ԲԱԲՈՆ. — պ. Աւետիս Գաւթեանց (Մարգար. ընկ. ընթերցարան):

» պ. Ստեփան Առևլյանեանց („Հաճճա“ ընկ., Նաբերջոյալ):  
ՌԱՍՏՈՎ. — ՆՈՐ-ՆԱՅԻՉԵՒԱՆ. — եղբ. Պ. և Գ. Ռւնանեաններ:

ԲԱԲՈՒՄ. — պ. Մարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Յովհանների):

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. — պ. Ստեփան Արամանեանց:

ՄՈՍԿԻԱ. — պ. Վարդան Թումաննեանց (Կատե Ա. Տյունիչա

» պ. Ստեփան Վարդագարեանց, (Բ. Խարովյան, № 6):

ՕԴԵՍԱ. — պ. Միքայէլ Մորագեանց (գրասեն. եղբ. Յովհանների):

ԹԱԻՐԻՉ. — պ. Աստուր-բէկ Միքայէլեանց:

ԶՄԻՒՐՆԻԱ. — պ. Յ. Տէր-Միքաքեանց (Մեսրոպ. վարժարան):

ԱՆՔԱՆԴԻՐԱՊՈԼ. — պ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՄԵՅԼ. — պ. Սիմէոն Միքայէլեանց: Rue St Jacques № 86:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վելեմինեան փողոց, տուն № 8: